Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18578
18579

18580

891.99
S-74

ԱՐԱՔՍԻԱ

ԿԱՄ

ՎԱՐԺՈՒՀԻՆ

ԳՐԵՑ

ՍՐԲՈՒՀԻ ՅԻՒՍԱՔ

.....

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ,

ԲԻԼԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

معارف عمومیه نظارت جلیلهسنك رخصتیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ

—

Ի Տպարանի «Արեւելք» Օրագրոյ

—1887—

891.99
ակ

ԱՐԱՔՍԻԱ

ԿԱՄ

ՎԱՐԺՈՒՀԻՆ

ԳՐԵՑ

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՄԱՔ

.....

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ

ԲԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتی طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ

—

Ի Տպարանի «Արեւելք» Օրագրոյ

—1887—

4985

7922.57

Հեղինակին ստորագրութիւնը չ'կրող օրինակ-
ներն անվաւեր են։

ՁՈՆ

Առ սիրեցեալդ իմ Տօնին.

Դո՛ւստր իմ, քեզ կը նուիրեմ այս երրորդ եւ գուցէ վերջին երկս։ Տղայ հասակէդ սկսէ սիրել զաշխատութիւն՝ իբրեւ զԱրաքսիա. լուսաւորէ՛ միտքդ միշտ, կոխէ՛ աներկիւղ ընկերական նախապաշարմանց վրայ, լե՛ր արդար սկզբանց պաշտպան, բարեկամ տկարին, թըշնամի գոռոզին։ Լե՛ր դու, քեզմով եւ սեռիդ արժանապատուութեամբը. բարոյապէս գոյն մ՚ունեցիր, ու այդ գոյնով ապրէ՛ մինչ ցվերջ կենացդ։ Յայնժամ պիտի գտնեմ ի քեզ փոխարինութիւնն այն անբաւ մայրենի սիրոյն զոր ձօնած եմ քեզ, զաւակդ իմ սիրելի։

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՄՕԱԲ

ԱՐԱՔՍԻԱ

ԿԱՄ

ՎԱՐԺՈՒՀԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

188 . . . տարուան Բարեկենդանի օր մ'էր։ Բերայի փողոցաց մէջ տարօրինակ շարժում կար։ Անհամար դիմակներ խումբ խումբ կ'անցնէին զիրար ընդհարկանելով, իրարու գրգռիչ խօսքեր ուղղելով, խնդալով, գլորելով, երգելով, ճիչեր արձակելով։

Բարեկենդանը կարծես մասնաւորապէս կարգադրուած է ի սիրոյ ընկերային խոնարհագոյն դասուց, որպէս զի իրենց աննպաստ վիճակը ճանաչելով անոնք ջանադիր լինին ուրանալու զայն, պահուելով վայրիկ մի այլ և այլ զգեստուց ներքեւ, և առժամանակեայ տարբեր վիճակ մի փոխ առնելով՝ ուրիշ անձնաւորութիւն մի ձեւանան, և այսպէս իրենց աղքատութիւնն ու դժբաղդութիւնը մոռնան կեղծ երանութեան դիմակին ներքեւ։ Ուստի Բարեկենդանի նիւթական կատակերգութեան մէջ բարոյականի կատակերգութիւն մ'ալ կը գոյանայ, այնչա՛փ մարդիկ իրենց եղածէն այլ և այլ տարբեր երեւոյթներ կը ներկայեն։

Եթէ նոյն պահուն և սահմանեալ ժամանակի համար միայն աղքատն իւր տխուր վայրկեաններ-ը կը մոռնայ կենդանութեան և խրախճանաց հոսանքէն մղեալ, հարուստը կենաց ճոխ միօրինակութիւնը կը ճգնի ընդհատել, իւր ձանձրոյթը փարատել, և պարապոյ նեղանալի ժամերը գոնէ ձայնիւ, աղմկով, նուագարանով, հացկերոյթով, պարով, շարժմամբ և տարօրինակ կենդանութեամբ կը աղեցնել։

Մինչ փոխ առնուած անշուք զգեստուց ներքեւ աղքատը իւր չքաւորութիւնը կը ծածկէ, ինչպէս և դէմքը կ'սքօղէ կեղտոտ դիմակի ներքեւ, նոյն միջոցին գեղեցիկ տիկնայք, փայլատակող աչօք, գոհ իմն կերպարանօք զոր կ'ազդէ իրենց դիմական շնորհաց գիտակցութիւնը, և հանդերձեալ զուարճութեան մօտալուտ յուսով, այլ և այլ խանութներ կը խառնին. մին ծաղիկ մի կը գնէ, միւսը մետաքսեայ կերպասներ, երրորդ մի՝ ծպտուելու զարդեր, և չորրորդ մի՝ դիմական աղքատութիւնը ծածկելու և կամ շքեղութիւններն աւելցնելու արուեստական միջոցներ որոնելու համար, երեկոյթի և կամ այլ և այլ ազգային ու տարազգային պարահանդէսից մէջ փայլելու ու գոհեր ընելու տրամադրութեամբ։

Հո՛ս՝ որմին վրայ կպած Ազդ մի՝ նոր հան-, դէս մի, նոր զուարճութեան աղբիւր մի կ'աւետէ յագեցած հարուստին։ Հո՛ն, նոր թատերական ներկայացում մի կը խոստանայ գրգիռ տալ հիւծեալ ու մաշած կրից և զգացմանց։ Երրորդ Ազդ մի վիճակահանութիւն մի կ'իմացնէ ճակա-

տագրին զոհից ի նպաստ։ Այդ հանդէսին մէջ բազմաթիւ չքնաղ և շնորհալի տիկնայք իրենց սրտին գանձուց վսեմ թելադրութեանց անսա-լով՝ ժպտով, քաղցր բառով, ոգնուական և քըն-քոյչ ձեւով ի պայքար կը մտնեն զիրար գերա-զանցելու յօժարութեամբ, ի պէտս թշուառաց ստուարացնելու համար այն լումաներն որք հա-րուստին գրպանէն պիտի ելնեն, և կամ գթոտ սրտերէ պիտի բղխին։

Երկնային է արդարեւ կնոջ նազանքը՝ երբ այն կը ծառայէ աչքէն լեղի արտօսր մի ջնջելու, անօթութենէ ծնած հառաչը խափանելու, և կամ մայրենի սիրտը կրծող վիշտը թեթեւցնե-լու։ Ցայնժամ գթութիւնը գեղեցկութեան ու շնորհաց ներքեւ անձնաւորեալ կ'ապաստանի։ Գթութիւնն անթառամ ծաղիկ մ'է որ կը ծլի մարդկային՝ մանաւանդ կնոջ սրտին արտին մէջ։

Մինչ ուրեմն ամեն կողմ գոհունակութեան աղմկալից ձայներ, շաչիւն կառաց, շարժում և երթեւեկութիւն կային, ընդհակառակն Բե-ռայի առանձնացեալ ու անշուք փողոցի մէջ ե-րեք փոքրիկ սենեակներէ բաղկացեալ կիսաւեր տան մի մէջ՝ արտասուաց ու հառաչանաց բա-ռեկենդանը կը տևնուէր։

Ո՛վ սրտաճմլիկ հակապատկեր կեանց. մերձ այնչա՛փ խնդութեան ու խրախճանաց՝ այնչա՛փ սուգ և յուսահատութիւն։

Այդ տնակին մէջ կը բնակէր տարաբաղդ Վարսամեան ընտանիքը՝ երեք անձերէ բաղկա-ցեալ։ Հայր մի կաթուածահար՝ ոչ այնչափ ամաց բեռէն ճնշուած, որքան բաղդին հալածանքէն։

Այդ մարդը բարեսիրտ, զգայուն և քաղցրաբարոյ էր, բայց մտաւորական կարողութեամբը սովորական կարգի անձերէն շատ վեր չէր բարձրանար։ Փառք գործունէութեան ու խնայողութեան՝ յաջողած էր գոհացուցիչ հարստութիւն մի հաւաքելու։ Բայց զայն կրկնապատկելու տենչն դրդեց զՊ. Վարսամեան՝ Պօրսայի խաղերուն դիմել։ Մեծամեծ յոյսերով մտաւ նա յայդ դրամական վայր անիծից՝ ուր մէկ վայրկեանի մէջ ահագին հարստութիւնք կը քայքային, և ուսկից ընչաւէտը դուրս կ'ելնէ կատարեալ աղքատ՝ հոգւոյն մէջ մահը կրելով. և յայնժամ նա իւր անդորրաւէտ ընտանիքը ճոխութեան և առատութեան մէջէն հանելով՝ յանկարծ կը գահավիժէ պայն զրկանաց և անօթութեան գոգը։

Նոյն տխուր բախտին վիճակուեցաւ և Պ. Վարսամեան, յոյսերը փշրուած, քսակը պարպուած, պարտաւորեցաւ ունեցածները վաճառել պարտքերը գոցելու համար. և այսպէս զիւր ընտանիքը մատնեց կատարեալ աղքատութեան, ինչպէս և զիւր անձ անգործութեան՝ կսթուածահար լինելով յուսահատութեանն սաստկութենէն։

Բայց ինչ որ Պ. Վարսամեանի վիշտը կը զայրացնէր՝ այն գաղափարն էր որ կնոջը մերձաւոր ազգականաց մին, ի մահիճ մահու, իրեն յանձնած էր իւր որբ որդւոյն նիւթական շահուց վրայ հսկելու նուիրական պաշտօնն. և ահա պատանեկին հարստութեան մէկ մասը կ'ոչնչանար Պօրսային մէջ երբ ինքն ի կորուստ կը դիմէր։ Սակայն գումարին մեծագոյն մասը ազատելու

յաջողելով, Պ. Վարսամեան փութացած էր յանձ-
նել զայն Սիսակ երիտասարդին որ ի Փարիզ կը
գտնուէր նոյն պահուն՝ ուսմունք առնելու համար,
և որ հարկ եղած տարիքն ունէր իւրշահուց վրայ
ինքն անձամբ հսկելու համար վերջապէս։

Բայց այդ տառապելոյն կինը թէեւ աղքա-
տութեան զաւակ էր այլ մեծամիտ և ամբարտա-
ւան բնութիւն մ'ունէր։ Ուստի յուսահատու-
թեամբ կը մաշէր առանց համակերպիլ ուզելու
այն տխուր վիճակին որ դէպքերը պատրաստած
էին իրեն։ Ոչ ամուսնոյն դժնդակ դիրքը, և ոչ
ալ աղջկանը տառապելի կացութիւնը կարող կը
լինէին յաղթել իւր գոռոզութեան, և դրդել
զինքը աշխատութեան մէջ ապրուստի միջոց մ'ո-
րոնելու։

Իսկ այս երկու ամոլից դուստրն՝ Արաքսիա,
կարծես չնաշխարհիկ ծաղիկ մ'էր որ օդէ և լոյ-
սէ զրկուած տեղւոյ մի մէջ կը բողբոջէր գեղա-
նազ և կը բուրէր անոյշ։

Բնութեան հրաշալեաց մէջ ընտրելագոյնն է
կոյսն որ գեղով ու պարկեշտութեամբ կը փայ-
լի։ Երբ Արաքսիա կը նայէր՝ աչերէն արեւ կը
ցոլար. իսկ երբ կը ժպտէր՝ կարծես թէ շրթուն-
քը կոկոն մ'էր որ ի լոյս կը բացուէր։ Իսկ գը-
լուխը ծռած սեւ երկայն մազերն երբ կուրծքէն
վար կը կախուէին, կարծես թէ սգոյ արձան մ'էր
տխուր ուռենեաց սքօղեալ, ա՛յնքան իւր ճերմակ
կանոնաւոր գծագրութիւնը այդ մութ շրջանա-
կէն առաւել պայծառ դուրս կը ցայտէր։ Երբ
կոյսն կը քայլէր՝ թուէր թագուհի մի որ կ'ընթ-
անար ի գահակալութիւն սրտերու, այնչափ

իւր բարձր հասակը յինքն ունէր վեր պարզութիւն։

Սքանչելի ինչ է ըստ ինքեան գեղեցկութիւնը. բայց կրկին յարգ կ'ստանայ այն՝ երբ կինը կ'անգիտանայ իւր առաւելութիւնը և կը ներկայանայ զուտ պարզութեանը մէջ, առանց արուեստական սեթեւեթի խօսքերու, շարժմանց և նայուածոց, ինչպէս որ էր մեր օրիորդը։ Բայց որպէս զի նա բնութեան կատարեալ հրաշալիք լինէր, օժտուած էր խելքով և սրտով նաեւ, ինչպէս և զօրաւոր կամքով. իրեն համար ուզելը՝ կարենալ էր։

Էակներ կան որք դաստիարակուած կը ծնանին կարծես. հետեւաբար մտաւորական կամ բարոյական որ և է խնամք այնպիսի զարմանալի արդիւնք կ'արտադրեն այնպիսեաց վրայ որ անհամեմատ կերպիւ կը գերազանցեն չափն իրենց մատակարարուած խնամոց։

Արաքսիայի ծնողքն՝ երբ տակաւին իրենց նիւթական կարողութիւնը կը ներէր, ջանադիր եղած էին տալ իրենց դստեր այն դաստիարակութիւնը որ սովորական ինչ եղած է արդի ժամանակ, այսինքն ոչ թէ միտքը ստուգապէս ճոխացնելու նպատակաւ, այլ լոկ արտաքին զարդ մի տալու համար։ Հայերէն գրել և կարդալ չափաւորապէս, նոյնպէս և դաղղիերէն՝ այդ բաւական համարուած է ի մեզ պանծալու համար թէ օրինաւոր դաստիարակութիւն մի շնորհուած է օրիորդի մի։

Բայց ոչ այնպէս մտածեց Արաքսիա, զի անոր խոհուն միտքը անյագ էր ուսման մասին։

Գիտութիւնը հանք մ'էր իրեն համար որ հետզհետէ անոր խաւերը պեղելով եւս քան զեւս կ'ուզէր խորն իջնել. ու որչափ խորը թափանցէր՝ նոյնչափ կը ճգնէր յառաջ երթալ, մերձենալ գիտութեան անյատակ յատակին որ շարունակ խոյս կուտար իրմէ։

Ցետ աւարտման մայրենի լեզուին հետեւեցաւ դաղղիերէնին, օգնութեամբ գիտուն դասատուի մի որ ուսման ովկիանը կը ծաւալէր անոր հետաքրքիր մտաց առջեւ։ Օրիորդն ուսումնասիրեց մանաւանդ հին և նոր փիլիսոփայութիւնը. բաղդատեց, քննեց, մտածեց, և վերջապէս այդ ընթերցուածն նպաստեց իրեն, փոխանակ բոլոր հաստատուած սովորութեանց, կարծեաց և նախապաշարմանց կուրօրէն հետեւելու, ինքնիրեն ազդու կամք մը գոյացնելու և այլոց վրայ ներգործելու։ Գծեց անձին շաւիղն ուր պիտի ընթանար. մտածելու և գործելու ազատութիւնն ուզեց ունենալ, և նոյն ազատութեան մէջ սակայն արժանապատուութեամբ վեր կանգնիլ իբր կին առաքինի, և անգոսնել ընկերային զանազան ներն որք յօրիորդս կը պարսաւեն՝ մտածելու, խօսելու և սրբութեամբ սիրելու ազատութիւնն, քանի որ մարդս ազատութիւն և սէր վայելելու համար ծնած է։

Արաքսիա կ'ուզէր բնութենէն շնորհուած իրաւունքն պահել անձին. կ'ուզէր օգտակար անհատ մ'ըլլալ՝ առանց իբր լոկ ընկերային զարդ հանդիսանալու. թէեւ մօրը հետ հակապատկեր մի կը ձեւացնէր կարծեաց և զգացմանց մասին, սակայն առանց բնաւ վհատելու կը մրցէր

մօրն ընդդէմ և անդեղեւուն քայլիւք կը յարատեւէր նոյն շաւղին մէջ որ գծած էր ինքզինքին։

ԳԼՈՒԽ Բ.

Ոչինչ այնչափ մարդս կը ճմլէ որչափ ուրախութեան ձայները յուսահատութեան մէջ։ Հոգին կ'զգայ տարբերութիւնն այն որ կը տիրէ գոհ էակաց և իւր նսեմ վիճակին մէջ, և այդ բաղդատութիւնն առաւել եւս ցաւոց բեռը կը ծանրացնէ։

Բարեկենդանի երկարաձիգ վանկերը երբ Վարսամեան ընտանեաց ականջը կը հասնէր՝ իրենց հոգւոյն վէրքն առաւել եւս կ'արիւնէր։ Մէն մի հառաչ սրտի՝ փոխանակ ազատօրէն դուրս ելնելու դոյզն սփոփանք պատճառելով, ընդհակառակն իւր ընթացքին մէջ կիսատ մնալով յետս կ'ընկրկէր, և այն հառաչը՝ իւր չիթ տառապանաց, սրտին վրայ սառելով անոր շարժումը կը դանդաղեցնէր։

Զգայուն հայրը կը լսէր այդ խրախճանաց հնչիւններն, և ցաւալից ակնարկ մի կը նետէր իւր սիրելի դստեր վրայ, որուն ոչ միայն ուրախութիւն չէր կրնար պատճառել այդպիսի ուրախառիթ տօներու միջոցին, այլ և նոյն իսկ սեղանի պարզ խնջոյք մի անկարող էր մատակարարել անգամ։ Գորովագութ հայր մի առ ոչինչ կը համարի իւր ցաւերը, ամէն բանի կարող է համբերել, միայն թէ իւր սիրոյն ծնունդը զերծ մնայ վշտերէ և զրկանէ։

Պ. Վարսամեան իբր յանցաւոր կը նայէր կընոջը, և իբր թէ ինքն կամաւոր պատճառ լինէր իրենց թշուառ կացութեան, ոչինչ կը համարձակէր ըսել և ոչ իսկ ողբալ բացարձակապէս։ Ինքն իրեն կը հիւծէր, և դստերը սիրոյ նայուածքին և գուրգուրալից խնամոց մէջ կը գտնէր մխիթարութիւն, մանաւանդ այն դառն պարապոյից մէջ որք հետեւանք էին կնոջը կծու յանդիմանութեանց։

Կան այնպիսի կանայք որք գոգցես կ'ուզեն բաղդակից լինել իրենց ամուսնոյն բարեբաստ աւուրց, և չեն ներեր որ և է դժբաղդութիւն ուսկից իրենք բաժին պիտի ունենան։ Իբր ընտանեաց սատան սրտմտութիւն և դառնութիւն կը շնչեն, և դժգոհութեան թոյն կ'արձակեն իրենց շուրջը։

Այդ կարգի կանանց կը վերաբերէր և Տիկին Վարսամեան։ Հակակրութեամբ կը նայէր ամուսնոյն առանց ի նկատ առնելու այդ հէքին թշուառ կացութիւնը։ Նա մանաւանդ այդ հակակրութիւնն առաւել եւս կ'արծարծէր հաստատելով իւր անկարողութիւնը զաւակին մատակարարելու կենաց անդորրն ու շքեղութիւնը։ Տիկինը եթէ անսիրտ ամուսին էր, ընդհակառակն մայր էր գորովագութ։

Կինը շատ հակառակորդներ, թշնամիներ, զրպարտիչներ ունեցաւ. բայց ո՞վ արդեօք համարձակած է մօր սուրբ անունը սրբապղծելու։ Կինը ամբողջ իւր սիրտն ու հոգին մայրենի զգացման մէջ բովանդակած է, այսինքն իւր էութիւնը ուրիշ փափուկ էութեան մէջ ամփոփած

է, և անով վսեմ անձնուրացութեան պատկերը հանդիսացուցած է։ Անոնք որ չար մայրեր են պարզապէս մայրութեան ճիւաղներն են, անարժան ծոչ սրբազան անունը կրելու։ Հրէշներ են սոսկ որք կը յղանան և ծնունդ կուտան։

Տիկին Վարսամեան կը լսէր ցնծութեան աղաղակները փողոցին մէջ, և անոնք նոյնչափ խայթոցներ էին իւր մայրենի սրտին, և նոյնչափ սլաքներ իւր սրտմտութեան։ Անընդատակ կ'երթար կուգար մէկ սենեկէն միւսը յուզեալ կերպարանօք և քայլիւք։ Վերջապէս իբր թէ ընկճեալ ցաւոց սաստկութենէն, նստաւ աթոռակի մը վրայ իրենց գրեթէ կիսամերկ սենեկին մէջ ուր բաղմած էին այրն ու դուստրն, և աչերը յառելով աղքատիկ սեղանի մը վրայ որ մաքուր բայց հին ճերմակ կտաւով ծածկուած էր, յուսաբեկ ըսաւ.

— Արաքսիա՛, ահա՛ և քու Բարեկենդանդ. ահա՛ քեզ մեր տրտունջներն և սրտասուքը իբր զուարճութիւն և խնջոյք... կանգ առաւ, կլլեց հեծկլտանք մի, և ապա յարեց. ահա՛ քեզ, դո՛ւստր իմ քիչ մը հաց ու պանիր, սեղանը ցոյց տալով։

Արաքսիա հօրը քովէն ելնելով ի հապճեպ դէպ ի մօրն ընթացաւ, և ձեռքը բռնելով ու համբուրելով զայն, ըսաւ.

— Մա՛յր, բաւ է ինձ որ դուք ողջ առողջ լինիք և լաւագոյն Բարեկենդան չեմ խնդրեր։ Ես երիտասարդ եմ, քսան տարի ապրած եմ տակաւին, կեանքն ինձ համար է, ժամանակ ունիմ վայելելու զայն։ Բայց դո՛ւք, մա՛յր իմ, դո՛ւք պէտք ունիք կենաց վայելմանց։

— Զայդ հարդ ըսէ, որդեա՛կս։

— Մա՛յր, մի՛ ընդ վայր յանդիմաներ հայրս։ ինքը չեղա՞ւ արդեօք առաջին զոհն իւր տարապայման վիճակին։

— Թո՛ղ առաւել լրջամիտ լինէր, և իւր դըրամներն ընդ վայր վտանգի չենթարկեր։

— Բայց, մայրի՛կ, այնչա՛փ գործունեայ և կարող անձինք նոյն դժբաղդութեան չհանդիպեցա՞ն արդեօք։

— Թող աւելի զգոյշ լինէր, և խաղի երազոց չմատներ իւր հարստութիւնը։ Պարզամիտ մարդուն վերջն անշուշտ այս կը լինի։ Անոնք որ անկարող են իրենց ընտանեաց յաջող ապագայ մի պատրաստելու գոնէ չամուսնանան և շատ մը անմեղներ դժբաղդութեան թող չդատապարտեն։

— Սակայն, մա՛յր, փառք հօրս՝ բազմաթիւ տարիներ երջանիկ ապրեցանք։ Եթէ ինքն անկարող է արդ մեր ապրուստը հոգալու, իմ պարտքս է աշխատիլ՝ և ըստ կարողութեանս, հանգիստ կացութիւն մ'ապահովել ձեզ։

— Դարձեա՞լ աշխատութեան խնդիրն յառաջ կը բերես, Արաքսի՛ա։

— Մի՛ նեղանար, մա՛յր, բայց այս պիտի լինի հանապազօրեայ խօսակցութեան նիւթս մինչեւ որ թոյլ տաս ինձ մեր առօրեայ ապրուստը հոգալու։

— Ցաւօք կը նկատեմ մինչեւ այդ աստիճանի նուաստանալու յօժարութիւնդ, Արաքսիա։

— Արք՝ որք երկրային իշխաններ են, կը նուաստանա՞ն արդեօք գործելով, մա՛յր։

— Բայց այդ տարբեր խնդիր է. զի արք ծնած են իշխելու համար։

— Ուրեմն աշխատութիւնը ոչ մ'է քանի որ անով զօրաւոր եղած է հակառակ սեռը։

— Բայց անոնք մեծ պաշտօններու կիրառութեամբն է որ մեծ հանդիսացած են, աղջի՛կս։

— Եթէ արանց ամենքն ալ բարձր դիրքերու ձկտէին, որո՞նց արդեօք սահմանեալ պիտի լինէին անշուք պաշտօնները, մա՛յր։ Մարդկութիւնը սանդուղ մ'է որ ամենէն ստորին աստիճանէն կ'սկսի մինչեւ ցբարձրագոյնն հասնելու համար. առաջին աստիճանը արհամարհելի չէ քանի որ միւսներուն ներդաշնակութեան կը ծառայէ։

— Դո՛ւստր իմ, դո՞ւ կ'ուզես լինիլ ուրեմն այդ առաջին աստիճանը ուսկից մարդիկ արհամարհոտ քայլիւ անցնին երթան բարձրագոյն կէտի մ'ելնելու համար։ Դու ուրեմն կը կամի՞ս անգոսնելի լինիլ, եպերելի լինել, այլոց հրամաններն ընդունիլ և անոնց քմահաճոյից խաղալիք լինել։

— Եթէ մտաւորական կարողութիւնքս կամ գիտութեանս չափաւորութիւնը զիս համեստ աշխատութեան կը հրաւիրեն, ինչո՞ւ իմ բուն արժէքս ճանաչելով արժանաւորագունից գերազանցութիւնը չընդունիմ։ Ինչո՞ւ կ'ուզես որ նուաստանամ այլոց հրամանատարութեան ներքեւ լինելով։

— Զայդ, չգիտեմ, դո՛ւստր իմ։

— Դի՛տէ մա՛յր, ամեն աստիճանի պաշտոններն պատասխանատուութեան մ'ենթարկուած են, նա մանաւանդ գործին կարեւորութեան

աստիճանին կը համապատասխանեն մարդկանց ստանձնած պատասխանատուութիւնը։ Թագաւորներէն անգամ հարար կը պահանջուի. կը տեսնես ուրեմն որ ոչ ուրեք կայ կատարեալ անկախութիւն դիրքի։

— Բայց դու ինչպէ՞ս կը խորհիս. չե՞ս զգար որ եթէ ընտանեաց մէջ դասատուութեան երթաս, աղախնոյ մ'աստիճանին պիտի իջնաս։

— Նախ, մա՛յր, ուսեալ միտք մի որ ուսմունք կը սովրեցնէ, ոչ երբէք կը նուաստանայ։

— Եւ սակայն քանիներ՞ն կ'արհամարհեն զայն տրուած թոշակն ի նկատի առնելով։

— Ինչ որ օրինաւոր վարձատրութիւն մ'է խղճամիտ աշխատութեան, պատուաւոր է ամեն ժամանակ յաչս իմաստուն և լրջամիտ անձանց։ Իսկ բթամտաց դատողութիւնը կ'անդոսնեմ, մա՛յր։

— Եւ սակայն ամենքը իմաստուն չեն, և տկարամիտք կը կազմեն մարդկութեան ստուարագոյն մասը։

— Ինչ որ խելացի անձանց հաւանութեան և ծափահարութեան արժանի է, անմտաց հակակրութեան և թշնամանաց առարկայ է ընդհանրապէս։ Քանի որ կա՛մ առաջին կա՛մ երկրորդ տեսակ մարդկանց ջատագովութեան կամ պարսաւանաց պէտք է վերջապէս ենթարկուիլ, անտարակոյս որ նախապատիւ կը համարիմ գովուիլ յառաջիններէ և չհաւնուիլ երկրորդներէն։

— Բայց չե՞ս մտածեր որ տունէդ դուրս այլուր բնակելովդ ընկերային վիճակդ կը խոնարհի, հետեւապէս՝ եթէ հարկ է որ ազատո-

րէն խօսիմ քեզ, անշուք ամուսնութիւն մի կըրնաս երազել միայն։

— Մա՛յր, չեմ փափաքիր ամուսնանալ ինձ ապագայ մի ապահովելու համար միայն. ես կարող եմ աշխատութեամբս թէ՛ զքեզ և թէ զիս ապրեցնել։ Այլ թոյլատուր ինձ յայտնել քեզ թէ ոչ երբէք բաղդակից կը լինիմ անձի մի որ փոխանակ յարգելու զիս, գործելու և աշխատելու տրամադրութեանցս համար ընդհակառակն կ'արհամարհէ զիս։ Այդպիսի գաղափարաց տէրերն ես կ'այպանեմ, որով անհնարին է ինձ ամուսնանալ այնպիսեաց հետ, մա՛յր։

— Ինչ որ կ'ուզես ըսէ, ես չեմ ներեր որ մեր ընտանեաց անունն իբր վարձկան ստանձնելով՝ տնէ տուն շրջիս։

— Անօթութենէ կ'ուզե՞ս օր մի մեռնիլ ուրեմն, մա՛յր։

— Մինչեւ ցարդ չմեռանք փառք այն դոյզն օգնութեան որ մեր բարեկամուհին կը հասցընէ մեզ։

— Նախ, մա՛յր, այդ տիկինը բաւական հարուստ չէ, հետեւաբար անհնար է անոր օգնութեան վրայ փստահիլ միշտ։ Երկրորդ՝ մի՛ մոռնար թէ ճշմարիտ մուրացկանի դեր կը խաղանք քանի որ դրամ կ'ընդունինք առանց որ և է ծառայութիւն մատուցանելու ի փոխարէն։

— Բայց ո՞վ պիտի իմանայ թէ մենք այլոց օգնութեամբ կ'ապրինք քանի որ այդ տիկինը չի յայտներ զայդ մէկու մի։

— Մա՛յր, ի՞նչ հարկ որ ուրիշները գիտնան երբ մենք գիտենք թէ ապօրինաւոր օգնութեան

առարկայ ենք. մեր լսիլքը, մեր արժանապատուութիւնը բողոք չի՞ բառնար արդեօք։ Բաժին կ'ունենանք ուրիշի գոյքէն, առանց արդարացի իրաւունք մ'ունենալու այդ գոյքին վրայ։ Պարգեւատու տիկնոջ առջեւ մեր դիրքը նուաստ չէ՞ արդեօք երբ կարող ենք գործելու և կը վարուինք իբր թէ անկար լինէինք։ Դու ինքդ դատէ և վճռէ։ Ցիշէ՛, որպիսի՛ խոնարհ ձեւ մի կ'առնուս մէն մի անգամ որ մեր բարերարուհին իւր լուման ձեռացդ մէջ կը սպրդէ։ Պարգեւատուին փափուկ և ազնուական ընթացքը արդեօք մեր խոնարհիլը կրնա՞յ քօղարկել նոյն միջոցին։

ԳԼՈՒԽ Գ.

Մինչ այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար, ահա ստուար խումբ մի դիմակաւոր մարդկանց որք փողոցէն կ'անցնէին զուարթ աղաղակներով օդը թնդացնելով։

Օրիորդն բնազդմամբ պատուհանէն դուրս հայելով տեսաւ յանկարծ թէ իւր ընկերուհիներէն մին դէպ՝ իրենց տունը կ'ուղղուէր, և զայդ փութացս մօրն իմացնելու։ Տիկինը յուզուելով ընթացաւ ի հապճեպ դէպ ի սեղանն ուր դրուած էր հացն ու պանիրը, և զանոնք մէջտեղէն վերցնելով ընդ փոյթ՝ զուարթ դիմօք ընդունեցաւ զՀիւր իւր դստեր։

Սա՛ պարզ ու սիրուն երիտասարդուհի մ'էր, խարտեաշ և թարմ, խօսքերուն և զգացմանց մէջ

անկեղծ։ Բաղդն այնչափ իրեն ժպտած էր մանկութենէն ի վեր որ կարծես թէ պէտք չէր ունեցած երբէք ստել կենաց ու մարդկանց։ Գոհ կոյսն էր որ լիաթոք կը վայելէ գարունը իւր բուրմունքով և կը հրճուի նորա երգերով ու գոյներով. ինչպէս և կը վայելէ կեանքն իւր հանդարտ զուարթութեամբ։ Միակ զաւակ հարուստ ծնողաց՝ նոցա յոյսն էր և լոյսը։ Անդորր կենաց և գոհունակութիւն, չափաւոր ծիրքեր մտաց և տաստ գանձեր սրտի, միշտ զուարթ կերպարանք մի, ահա պատկերացած կը լինիմ սամբ մեր աչաց՝ օրիորդ Վարդանոյշ Երանեան։

Մանկութեան ընկեր Արաքսիայի՝ բարեկամութիւնն աճած էր իրենց հետ։ Երբ Վարդանոյշ բացառիկ զուարթ օր մ'ունէր տօնելու առաջին հրաւիրեալն Արաքսիան էր։ Եւ երբ սա տխուր էր, բարեսիրտ կուսին աչխոյժ կերպարանքին վրայ վայրկենական մութ քօղ մի կ'անցնէր։

Հոգի մի որ չէ տառապած չ'ըմբռներ ըստ բաւականի այլոց ցաւը քանի որ հազիւ անոր մակերեւութին կը հասնի։ Ո՞ւր գուշակէ նա թէ մէն մի ծալք սրտի վշտով ձեւացած է, թէ փոխանակ լուսատու և հարթ յատակի՝ սիրտը խաւար և խորունկ խոռոչներ կը պարունակէ, քարանձաւներու նման ուսկից բանտարկեալ հոգին սաստիկ սուլելով դուրս կը ցայտէ, նոյնպէս և բանտարկեալ հառաչը սեւ խորշերէն վիժելով, մռնչելով շուրջ կը ժայթքէ։

Թէեւ Տիկին Վարսամեան ամեն ճգամբ կը ջանար ծածկել իրենց չքաւորութիւնը օտար աչ-

քերէ, սակայն խիստ անկատար կերպիւ կը յաջողէր. զի աղքատութիւնն հրէշ մ'է որ իւր սոսկալի գլուխը կը ցցուէ ակռաները կրճտելով, այնչափ զրկանք և նօթութիւնը կը գրգռէ զայն։

Բայց եթէ նշմարելի էր ամենուն սոյն ընտանեաց նեղ վիճակը, ոչ ոք կը գուշակէր սակայն թէ յետին աղքատութեան հասած էր այն, այնչափ Տիկինը մեծամեծ խօսքերով ջանադիր էր իւր բուն վիճակը ծածկել։

Ուստի Օրիորդ Վարդանոյշ ընդոստ քայլով սենեկէն ներս մտնելով, և Տիկինը ու իր ամուսինը բարեւելէ վերջը, մօտեցաւ իւր ընկերուհւոյն անհամբեր լինելով անոր հաղորդելու ուրախութիւնն որ միապէս գրաւած էր իւր սիրտը։

— Գիտե՞ս, սիրելիս, ինչու եկած եմ, ըսաւ.

— Ոչ, պատասխանեց Արաքսիան։

— Ուրեմն կ'իմացնեմ քեզ թէ այս գիշեր մը տերմական երեկոյթ մ'ունինք ուր երեսուն կամ քառասուն անձինք ներկայ պիտի գտնուին, և եկայ այժմէն զքեզ տուն տանելու, եթէ Տիկին մայրդ չ'ընդդիմանայ։

— Մանաւանդ որ սիրով կ'ընդունիմ հրաւէրդ, աղջիկս, ըսաւ Տիկինը։ Արաքսիան ոչինչ ունի ընելիք հոս, ազատ է նա. թո՛ղ երթայ զուարճանայ, զի մենք իւր հօրը հիւանդոտ վիճակին պատճառաւ ոչ հացկերոյթ տալու և ոչ երեկոյթ մ'ունենալու կարող ենք։

— Որչա՞փ ուրախ եմ, գոչեց Վարդանոյշ, ուրեմն պիտի ընկերանա՞ս ինձ արդ, Արաքսիա։

— Գիտես, սիրելիս, յարեց խեղճ կոյսն, որչա՞փ հաճելի է ինձ հետդ գտնուիլ ոչ թէ այ-

Ֆ 22-57

լոց ընկերութիւնը վայելելու համար, այլ պարզապէս քուկինդ, բայց անհնար է ինձ սիրուն հրաւէրդ ընդունիլ այսօր, քանի որ հայրս անկարող է տեղէն շարժիլ, և մայրս ինձ ընկերանալ։ Այսպիսի խորհրդաւոր գիշեր մի անպատշաճ է որ աղջիկ մի իւր ծնողքը թողու առանձին՝ այլուր զբօսանք որոնելու համար։

Հայրն ու մայրն միաբերան բողոքեցին, Վարդանոյշ բիւրիցս կրկնեց իւր աղերսանքը, բայց Արաքսիա հաստատ մնաց իւր որոշման մէջ։

Վերջապէս երբ Վարդանոյշ տեսաւ թէ անհնար է իւր բարեկամուհւոյն միտքը փոխել՝ տխուր դիմօք ելաւ տեղէն մեկնելու դիտաւորութեամբ։ Կը հիանար անոր ծնողասէր զգացմանց վրայ իրօք, բայց կը ցաւէր զայն մասնակից չընելուն իւր ուրախութեան։

Մինչ հրաժեշտի ողջոյնը կուտար երիտասարդուհին, Տիկին Վարսամեան ըսաւ անոր.

— Եթէ հրաւիրեալներ չունենայիք այս գիշեր դքեզ վար կը դնէի մեզ հետ Բարեկենդան ընելու։

Օրիորդն շնորհակալ եղաւ այդ քաղաքավարական բառերուն համար առանց մտքէն անցընելու թէ իւր սիրելի ընկերուհին հանդերձ ընտանեօքն միայն պանիրով ու հացով պիտի հանդիսադրէին Բարեկենդանի վերջին գիշերը։

ԳԼՈՒԽ Դ.

Երբ առանձին մնացին, հայրն քաղցր կշտամբանօք մեղադրեց զիւր դուստր զբօսանաց գընացած չլինելուն համար, և յայտնեց թէ իւր տխուր հոգին պիտի ցնծար գիտնալով թէ իւր սիրելի զաւակը գոնէ նոյն գիշերն ուրախ ժամեր կ'անցընէր։

Յայնժամ տառապելոյն կինը ոտք ելնելով և իւր վաղրուհի անոր առջեւ կանգնելով ըսաւ անգութ եղանակաւ.

— Եթէ կ'ուզէիր զաւակդ գոհ ու երջանիկ տեսնել, թո՛ղ ջանայիր այսպիսի աղքատութեան չմատնել զմեզ։ Ի՞նչպէս կուզէիր որ մեր աղջիկը երեկոյթի երթար երբ այլոց զգեստուց չըքեղութեան չէր կրնար հաւասարիլ իրենները։

Երկու լուռ արտասուք սահեցան խեղճ մարդուն աչերէն, և գլուխը խոնարհեցնելով կուրծքին վրայ անխօս մնաց, ինչպէս սովորութիւն ունէր ընելու. զի մէն մի անգամ որ կնոջն առջեւ խօսելու փորձ կ'ընէր, նա կը պապանձեցընէր զիւր բերան խիստ յանդիմանութեամբ։

Արաքսիա դէպ՝ իւր հօրն ընթանալով անոր գլուխը բազկացը մէջ առաւ ըսելով.

— Հա՛յր, վստահ եղիր որ զգեստուցս պատճառաւ չէ որ չընդունեցայ ընկերուհւոյս հրաւէրը. զի իմ զարդուցս պարզութիւնը ինձ ամօթ չբերեր, ընդհակառակն կը պարծիմ անով. այլ եթէ մերժեցի՝ պատճառն այն է որ չուզեցի ձեզմէ հեռու անցընել այսպիսի գիշեր մի։

— Այսպիսի՞ գիշեր մի, պանիր հա՞ց ուտե-

լու համար, աղջի՛կս, գոչեց մայրը դառնութեամբ, մինչ աչերն տարօրինակ կերպիւ կը փայլէին, և այտերն կարմիր էին իբր զհուր։

— Մա՛յր, մեր համեստ տեղանը նախապատիւ կը համարիմ քան այլոց մեծահաց կոչունքները։ Սնունդն որ ձեզ կը բաւէ՝ ես առաւել կը բաւէ ինձ։

Այս խօսքերն արտասանելէն վերջը կոյսը գըլուխը կռթնցուց հօրը ուսին վրայ ուսկից վերուցած էր խօսելու համար, և զգաց թէ լուռ արտօսր մի՝ իբր շիթ լուռ ցաւի, իւր դէմքին վրայ կը գլորէր լռին։

— Հա՛յր, հա՛յր. ո՛հ մի՛ լար, հոգիս կը ճըմ. լես, գոչեց յուսահատօրէն աղջիկն, նորա պարանոցին վրայ իյնալով։

Իսկ տիկինը քթին տակէն քանի մի խօսքեր մրմռալով հեռացաւ, և ուրիշ սենեկի մէջ առանձնանալով անկողնոյն վրայ տարածուեցաւ։

Արաքսիա քիչ մի ետքը մօրը ետեւէն գնաց տեսնելու համար թէ ի՛նչ կ'ընէր նա։ Բայց սենեկին դուռը կիսաբաց լինելով տեսաւ զիւր մայր տարածուած, և կարծելով թէ կը ննջէր, առանց բնաւ ձայն հանելու հօրը քով վերադարձաւ։

Տառապեալ մարդը նօթութենէ նեղուելով սակաւ ինչ ուտեստ խնդրեց։ Արաքսիա փութաց անմիջապէս բերելու պանիրն և հացը զորս իւր մայրը մէջտեղէն վերուցած էր օտար աղջկան այցելութիւնն իմանալով։ Եւ մինչ այդ համեստ ճաշը հօրն առջեւ կը զետեղէր, կոյսն կարեվէր հոգւով, բռնի ինն զուարթութեամբ

գոչեց. «Հայրի՛կ, փոյթ չէ եթէ մենք եւս այլոց նման մեծափարթամ սեղան չունինք այսօր. բաւ է որ ողջ լինինք և ամեն ինչ լաւ է ու գոհացուցիչ։ Բայց վստահ եղիր որ հետեւեալ տարին՝ եթէ ապրիմ, լաւագոյն Բարեկենդանի գիշեր մի կ'անցընեմ։»

Խեղճ մարդն ոչինչ պատասխանեց, այլ անխօս և անհառաչ, իրեն ներկայացուածը կերաւ, մինչ իւր դուստրն ամեն ճիգ կը թափէր զուարթադէմ երեւալու, ու կատակներովն ջնջելու նոյն պարագային տխուր ազդեցութիւնը։

Տիկին Վարսամեանի բացակայութիւնն երկարելով՝ օրիորդն վերստին գնաց ակնարկ մը նետելու մօրը սենեկին, ամենայն զգուշաւորութեամբ սակայն զինքը չ'արթնցնելու համար եթէ ի քուն էր։ Բայց մեծ եղաւ իւր զարմանքն երբ ականջին հասան խեղդուած կոծեր ու ձայներ։ Սիրտ ի թունդ խեղճ աղջիկը մօրը քով ընթացաւ և յուզեալ եղանակաւ «Մա՛յր, գոչեց, դու կը տառապի՞ս առանց զիս կոչելու։»

— Բաւական չէ՞ դատապարտութիւնդ այդ ծերը խնամելու, և հարկ է քեզ ուրի՞շ ծանրութիւն մ'ալ արդ։

— Ա՜հ, մա՛յր, պարտքս չէ՞ արդեօք հոգալ զձեզ. դուք ինձ համար որչա՛փ զոհեր կատարեցիք. ամեն ծառայութիւն և ամեն սէր փոխարինութիւն չի՞ պահանջեր արդեօք։

ԳԼՈՒԽ Ե.

Տիկինը սաստիկ մարմնական ցաւերովն ու գալարմամբը, խօսակցութիւնն ընդհատեց։ Խեղճ Արաքսիա ամեն խնամք կը մատակարարէր հիւանդին, զինքը կը շփէր, կը ծածկէր, կանացի դեղեր կը պատրաստէր։ Բայց ի՞նչ են այդպիսի տկար միջոցներ ախտի մ'առջեւ, որ զօրաւոր և էական դարմաններու կը կարօտէր։

Բժշկի ստիպողական պէտքը զգալի կը լինէր. բայց զնա վարձատրելու միջոցը կը պակսէր։ Արաքսիա անմիջապէս իրենց բարերարուհին յիշեց, և երկտող մ'ու ղղելով անոր իրենց անհնարին վիճակն իմացուց։ Բայց նամակն ապարդիւն մնաց, զի այդ տիկինը բացակայ էր, և ազգականի մը տան մէջ կը տառապէր այնպիսի հիւանդութեամբ իմն որ զինքն մէկ շաբթուան մէջ ի մահ տարաւ, բոլորովին անպաշտպան թողլով Վարսամեան ընտանիքն՝ անոնց յուսոյ վերջին նշոյլն ևս շիջուցանելով։

Սակայն տառապելոյն վիճակը կը ծանրանար տեղդ, զառանցանք, ոչինչ կը պակսէր ողբմելի Արաքսիան սարսափեցնելու համար։ Վերջապէս երիտասարդուհին դիմեց իւր սիրելի բարեկամուհւոյն, և Վարդանոյշ մօրն ի միասին սուրաց յօգնութիւն ահաբեկ կուսին։

Այս վերջինը առանց իրենց աղքատութիւնը ծայրայեղ լինելն յայտնելու՝ իմացուց թէ նեղը կը գտնուին։ Եւ եթէ այդպիսի զգուշաւորութեան կը դիմէր՝ ոչ թէ մեծամիտ խորհուրդներէ դրդեալ էր առ այդ, ոչ թէ աղքատութե-

նէն ամաչելուն համար էր, այլ մօրը գոռոզ խորհրդոց հպատակելու մտօք էր պարզապէս, թէեւ ներքնապէս պարսաւելով՝ կը յարգէր զանոնք։

Բաւական օրեր տեւեց հիւանդին ծանր կացութիւնը։ Բայց փառք Վարդանուշի անձնուէր օգնութեան, Արաքսիային ծառայութեան բեռը կը թեթեւնար, զի նա հիւանդ տիկնոջ մօտ գիշերները կը տքնէր, և ցերեկները ամեն խնամք թէ՝ Տիկնոջ և թէ՝ անոր կաթուած հար ամուսնոյն կը մատակարարէր։

Եթէ կայ ինչ վսեմ աշխարհիս վրայ՝ ճշմարիտ բարեկամութեան պատկերն է, յորում երկու աղնիւ հոգիներ հանդարտ և միօրինակ հուրով կը վառին առանց փայլատակաց, առանց շըընդիւնի և առանց ցոյցի։ Բարեկամութեան տեւողութիւնն հնարաւոր է նոյն իսկ չափաւորութեանը պատճառաւ, զի ինչ որ անչափ է և տարօրինակ՝ կ'սպառի իւր սաստկութեամբն իսկ, ինչպէս է զոր օրինակ բուռն և այլանդակ սէրը։

Բարեկամ մի կը նուիրէ զիւր զգացում անձի մի մասնակցելով նորա ուրախութեան ինչպէս և վշտին։ Իսկ սիրահարեալ սիրտը կը միանայ պաշտած անձին հետ, անոր հետ կը ձուլուի, այնպէս որ իւր պաշտելոյն համար գործելովն՝ անձին համար կը գործէ դարձեալ։ Բարեկամութեան մէջ կատարեալ անձնուիրութիւն կայ, իսկ սիրոյ մէջ վսեմ անձնասիրութիւն։

Վարդանուշի մօր թափանցող աչքը շուտ վերահասու եղաւ այն աղքատութեան սոսկալի աստիճանին, որուն քօղին ներքեւ կը մաշէր տա-

բաբաղդ ընտանիքն Վարսամեան։ Տիկին Երանեան առանց զգացնել տալու հոգաց ամեն պիտոյքը սոյն չքաւոր անձանց՝ իբր թէ իւր հաստատուած դրամական օգնութիւնը պարզապէս փոխատուութիւն լինէր և ոչ թէ ողորմութիւն։

Եթէ մեծ է ողորմած սիրտը, եւս առաւել մեծ է իւր նուէրը մատուցանելու ազնիւ եղանակաւը, երբ կը ջանայ չվիրաւորել այն դիւրազգած հոգին որ նուաստանալը կ'իմանայ շընորհապարտ մնալու ժամանակ։

Արաքսիա ոչ եւս կարենալով ծածկել ընտանեկան գաղտնիքը զոր Տիկին Երանեանի փափուկ ընթացքն անգիտանալ կը ձեւացնէր, խոստովանեցաւ վերջապէս իրենց գտնուած թշուառկացութիւնը յայտարարելով իւր հաստատ դիտաւորութիւնն ընտանեացն ապրուստը հոգալու, քանի որ բնաւ յուսոյ նշոյլ չկար իրենց համար ոչ ուրեք։

— Ո՜հ, գոչեց Վարդանոյշ, ինչո՞ւ գանձեր չունիմ քու վրադ թափելու համար, Արաքսի՛ա։

— Սիրելի՛դ իմ, պատասխանեց երիտասարդուհին, կրնա՞ս հաւատալ թէ ես այդ գանձերը կ'ընդունէի քեզմէ առանց փոխարինութեան։ Արդէն սրտիդ գոհարներն առատապէս կը վայելեմ, բայց ստոյգ է որ ի մասին դորովոյ կատարելապէս վարձատրուած ես ինձմէ։

— Արաքսիա՛. ի՞նչ է իմ ըրածս երբ դու այդչափ դիւցազնութեամբ կը հանդուրժես անտանելի վիճակիդ։ Երբէք գանգատ մի չեմ լսած քու բերնէդ, և հակառակ այն մտերմութեան որ կը տիրէ մեր մէջ, դու ծածկեցիր ինձ-

մէ մինչեւ ցարդ քու բոլոր տառապանքդ և զբաղումներդ։ Վստահութեանդ արժանի չի համարեցի՞ր զիս արդեօք։

— Վարդանո՛յշ, մի՛ այդպիսի ծանր մեղադրանօք հոգիս վիրաւորեր։ Եթէ լուռ կեցայ մինչեւ ցարդ մեր ներքին դառն վիճակին վրայօք՝ պատճառն այն է որ ընտանեկան գաղտնիքն ինձ չվերաբերիր։ հետեւապէս իրաւունք չունիմ երեւան հանելու ինչ որ իմս չէ։

— Բայց, յարեց Տիկին Երանեան, գաղտնիքդ հաղորդելով մեզ մատնութիւն մ՚ըրած չէիր լինէր, քանի որ լաւ կը ճանաչես մեր բարեկամական տրամադրութիւնքն ձեզ նկատմամբ։

— Տիկի՛ն, ոչ երբէք կասկած մ՚ունեցած ենք այդ մասին, և ձեր արդի ընթացքը շատ իսկ յայտարարեց ձեր խօսքերուն ճշմարտութիւնը։ Եթէ մայրս իւր վիճակը ծածկելու ջանադիր եղած է, գուցէ իւր բարեկամաց տագնապ չպատճառելու համար լինէր, ըսաւ, եղանակաւ մի՝ որ իւր համոզման հակառակ խօսիլը կը մատնէր։ Բայց ներելի էր այդ ընթացքը, զի խեղճ աղջիկն իւր մօրը վարմունքն արդարացնելու կ՚աշխատէր։

Տիկին Երանեան այդ փշոտ նիւթին վրայ ընդ փոյթ տանելով քաջալերեց զօրիորդն ապագայ բարեբաղդութեան յոյսը փայլեցնելով աչացը։

— Տիկի՛ն, պատասխանեց Արաքսիա, լաւ կ՚ըմբռնեմ թէ մայրենի սրտի մ՚ամեն փափկութեամբ կ՚աշխատիք զիս յուսադրելու։ Բայց ես բնաւ վհատեալ չեմ՝ քանի որ առջեւս կը պարզի աշխատութեան ասպարէզը։ Ուստի հարկ է որ

գործունէութեամբս փրկեմ ծնողքս անպատճառ։

— Հիանալի՛ աղջիկ, մրմնջեց Տիկինը յուզուելով, և վայրիկ մի լռելէ վերջը հարցուց գոբուվանոք։

— Բայց ի՞նչ կը խորհիս ընել. խօսէ՛ անկեղծապէս, որպէս զի գոնէ ջանամ քեզ օգտակար լինելու։

— Դժբաղդաբար, Տիկի՛ն, որոշում մի տալու համար հարկ չկայ միտքս յոգնեցնել, վի ասպարէզն աշխատութեան խիստ սահմանափակ է կանանց մասին։

— Իրաւացի է ըսածդ, պատասխանեց Տիկինը։

— Տոմարակալութեան մէջ բաւական յաջողակ եմ, յարեց Օրիորդը. և եթէ ընկերային պայմանները ներէին՝ հաշուակալութեան կը հետեւէի, քանի որ մասնաւոր ձկտումն ունեցած եմ այդ ճիւղին համար։ Բայց իմ սեռս կը խափանէ ամեն երաշ այնպիսի ասպարէզի մէջ մրցանելու ուր յառաջադիմութիւնը չէ արդարացի վարձատրութիւն խղճմտաւոր և կանոնաւոր աշխատութեան, այլ պարզապէս խնդիր մ'է սեռի։

— Ով չգիտեր քու յաջողակութիւնդ ոչ միայն հաշուակալութեան այլ և գիտութեանց մէջ, յարեց Վարդանոյշ։ Կը յիշեմ որ դասատուդ որ իմն էր նաեւ, իբր նախանձելի օրինակ իմն ցոյց կուտար զքեզ, ու կը հաստատէր թէ լաւ ապագայ մի կարող էիր ունենալ եթէ հակառակ սեռին վերաբերէիր։ Մինչ ես . . . աւելորդ է խօսիլ այդ մասին, ըսաւ խնդալով։

— Դո՛ւ, սիրելիս, պատասխանեց Արաք-

սիա, դրական էակ չես. դու բանաստեղծ ես, համայն սէր ես, անձնուիրութիւն և վսեմ երազ։ Հո՛ն թիւերը ու հաշիւը գործ չունին։

— Այսինքն բանաստեղծ եմ զգացմամբ ու խանդիւ բայց ոչ տաղանդիւ։

— Բանաստեղծ հոգի ունենալը գեղեցկին և ճշմարտին հարազատ զաւակը լինելը կը հաստատէ. այսինքն կը յայտնէ ունենալն այնպիսի նուրբ և ազնիւ թելեր որք շատ առաւել ընդունակ են թրթռալու լաւին ու վսեմին ցնցմամբ՝ քան թէ հասարակ հոգիները։

— Ուրեմն եթէ կ'ուզես որ այնպէս լինի, ընդունէ և դու այն առաւելութիւնն որ ունիս իմ վրա բանաստեղծ հոգւոյ մի դրական միտք մը միացնելու։ Դու գեղեցկին իրականութեանը մէջ կ'ամփոփիս առանց անոր երեւակայական ձեւեր տալու և անոր փայլն աւելցնելու ջանադիր լինելու սին երազներով։

— Բայց չգիտե՞ս, սիրելիս, թէ գաղափարականն երիտասարդ հոգւոյ սնունդն է և թէ ոսկեզօծ երազներով կը սնանի ու կ'աճի։

— Մի՞թէ դու երիտասարդ չե՞ս Արաքսիա։

— Դժբաղդութիւնը ծերացուց զիս արդէն. զի դժբաղդութիւնը ծանր դպրոց մ'է ուր ժամանակ չկայ երազելու, և ուր իրականութեան դասը կը տրուի միայն։ Հո՛ն կեանքը կը ներկայանայ մեզ զուրկ իւր բոլոր զարդերէն սոսկալի մերկութեամբ կմախքի կերպարանաց ներքեւ։ Այդ կմախքն երկրայութեան տեղի չտար, զի մեր աչաց առջեւ կը պարզէ իւր ծալքերը, խառնչ-

ները ու սեռութիւնները։ Հո՛ն աչքը կը վարժի այդ խիստ ու դժնդակ տեսարանին, հոգին կ'ա-բրիանայ, և իբր քաջ զինուոր՝ կենաց ճակատա-մարտին մէջ կը յառաջանայ։

Տիկին Երանեան ըմբռնելով այդ արի բայց կարեվէր աղջկան հոգւոյն դառնութիւնը, խո-սակցութեան տարբեր ուղղութիւն մի տուաւ հարցնելով անոր թէ աշխատութեան ո՞ր ճիւղն կ'ընտրէր վերջապէս անձին։

— Տի՛կին, յարեց պատանուհին, կ'ընտրեմ ա՛յն միակն որ կը ներկայանայ ինձ արդ. այ-սինքն պատուաւոր ընտանեաց մի քոյր դաստ-տուութիւն ընելը։

— Երանի՜ թէ փոքրիկ մի քոյր ունենայի, գոչեց Վարդանոյշ, որպէս զի անոր դաստիա-րակութեան հոգը քեզ յանձնուէր։

— Առանց այդ պայմանին՝ Արաքսիա մեզի հետ կրնայ բնակիլ իբր զաւակս, յարեց Տիկին Երանեան, ու կերպով մի օգնել իւր ծնողաց իսկ։

— Դուք երկու թանկագին հոգիներ էք պա-տասխանեց Արաքսիա, լիովին յուզեալ երախ-տագիտական զգացումներէ։ Բայց ներեցէք որ մերժեմ ձեր աղնիւ առաջարկն զի կը փափա-քիմ արժանաւորապէս վարձատրուիլ իմ ծառա-յութեանցս համար, և ոչ թէ մարդասէր սրտի ողորմութեան լու�՝ ընդունիլ։

— Որչափ խիստ ես քեզ նկատմամբ, Արաք-սի՛ա, ըստու Վարդանոյշ վշտացած ինն կերպա-բանօք։

— Խիստ չեմ՝, այլ արդար, բարեկամուհի՛ս, զի ով որ կարող է գործել և ընդհակառակն

ուրիշի ձրի օգնութեան կը դիմէ՝ ա՛յն, կը յափշտակէ անկարող աղքատաց իրաւունքը, ընկերային գողութիւն մի կը գործէ։

Վարդանոյշ լռեց զի հասկացաւ թէ անհնարին էր անոր խորհուրդներն այլայլել։

Իսկ Տիկին Երանեան յարեց.

— Լսեցի թէ հարուստ ազգային ընտանիք մի՝ որուն հետ բնաւ յարաբերութիւն չունիմ սակայն, ուսեալ վարժուհւոյ մի կը կարօտի, խոստանալով ըստ արժանւոյն վարձատրութիւն հատուցանել։

— Տիկի՛ն, խնդրեմ առանց ժամանակ կորսընցնելու առաջարկել տուէք գիս, թախանձեց Արաքսիա։

— Բայց մ՚օրդ հաւանութիւնն ստացա՞ծ ես, աղջիկս, հարցուց Տիկինը։

— Պարագայ կայ, Տիկի՛ն, որ ընդվզիլն առաքինութիւն է, և հնազանդութիւնը վատութիւն։ Որոշած եմ առաքինի լինել։

— Ուրեմն անհոգ եղիր. ըսաւ բարեսիրտ Տիկինը, և այս խօսակցութիւնն որ տեղի կունենար հիւանդին քունին միջոցին՝ ընդհատուեցաւ բժշկին այցելութեամբը։

Բժիշկը զՏիկին Վարսամեան լաւ քննելէ և ամեն սովորական հարց ու փորձերը կատարելէ վերջը, յայտնեց թէ հիւանդին վիճակը բաւական ծանր էր, առանց սակայն վարանմունք ցոյց տալու անոր բժշկուելուն վրայօք։

Արաքսիայի վախերը փարատուելով մ՚օրը ընկատմամբ սիրոփարար չունչ մ՚առաւ, եւ փառք Երանեան Տիկնոջ դրամական օգնութեան, հի-

ռանդն ամեն նիւթական և բարոյական սփոփանք վայելեց։

Երկու շաբաթ վերջը Տիկին Վարսամեան ապաքինութեան վիճակի մէջ մնալով՝ Վարդանոյշ յանձն առաւ վերջապէս վերադառնալ իւր տունը, հետը տանելով բարեկամուհւոյն անկեղծ երախտագիտական արտայայտութիւնքն՝ ղոր առաւել արտասուքը կը յայտնէր քան թէ խօսքերովը։

ԳԼՈՒԽ Զ.

Տիկին Վարսամեան անգիտանալով զմահ իւր բարեկամուհւոյն՝ անոր վերագրած էր այն առատութիւնն որ շուրջը կը տեսնէր։

Արաքսիա կը պատրաստէր աստիճանաբար զիւր մայր՝ ընդունելու այն հարուածն որ իւր ամեն յոյսերուն վերջ կը դնէր։ Եւ երբ այդ տխուր լուրը գուժեց անոր ականջին,

— Ո՜հ, գոչեց Տիկինը յուսահատօրէն, երբ մեր վերջին ապաստանը կը լքանէ զմեզ, ոչ այլ ինչ կը մնայ բայց մեռնիլ։

— Այնպէս չէ՞, մա՛յր, յետին նեցուկ մ՚ունիս ցորչափ ես ողջ եմ և առողջ, ըսաւ կոյսն։

— Դո՞ւ, որդեա՛կ։

— Ե՛ս, մայր։

— Դարձեալ աշխատելու առաջարկդ մէջ տեղ պիտի դնե՞ս արդեօք։

— Այսինքն պիտի գործադրեմ զայն վերջնական կերպիւ այս անգամ։

— Շնորհիւ հօրդ, ահա որպիսի՛ դիրք մ'ե-բաղելու կը դատապարտուիս։

— Մա՛յր, կը թախանձեմ քեզ, մի՛ յարձակիր հօրս վրայ, ինքը բաւական թշուառ է արդէն, որով աւելորդ է իւր վիճակը առաւել ծանրացնել կշտամբանօքդ։ Ցիշէ, սի՛րելի մայրս, որ բաղում տարիներ գոհ և հանգիստ ապրեցանք անոր շնորհիւ. եւ եթէ դժբաղդութեան մէջ անկանք անդարմանելի չէ այդ վիճակն. ընտանեաց անդամոց մէջ համերաշխութիւն կայ, զի կարողը միշտ անկարողին յաջորդելու է ապրուստի միջոց հոգալու համար։

— Կրնա՞ս հաւատալ թէ ես ճակտիդ քրտամբը քաղած հացն ուտեմ առանց խղճի խայթ զգալու, աղջիկս։

— Եւ սակայն այդպէս պիտի լինի. արդէն ամեն ինչ պատրաստ է, եւ աշխատութեանս օրն ընդ փոյթ կը հասնի։

— Ի՞նչ կ'ըսես, հաստատապէ՞ս կը խօսիս։

— Այո՛, մայր։

— Չեմ հասկնար թէ ինչ կ'ուզես ըսել։

— Բացատրեմ ուրեմն։ Հարուստ տան մի մէջ, գոհացուցիչ պայմաններով իրր վարժուհի պիտի երթամ երկու փոքրիկ աղջկունք դաստիարակելու համար։

— Ո՛հ, ի՞նչ ըրիր, որսո՞ւ հաղորդեցիր մեր գաղտնիքը, որպիսի՛ յիմարութիւն ըրիր, գոչեց սրտմտեալ մայրը։

— Մի՛ նեղանար խնդրեմ այլ անսա՛ խօսքերուս, մա՛յր։

— Ըսելիքդ գիտեմ։

— Երբ դու հիւանդանալով վիճակդ օր աւուր ծանրացաւ եւ սպառնացող կերպարանք մ'առաւ, դիմեցի մեր սովորական օգնութեան աղբիւրին։ Բայց բարեպաշտ Տիկինը մերձ ի մահ լինելով յոյսերս փշրուեցան. հետեւապէս պարտաւորեցայ դիմել Երանեան ընտանեաց որ փոխատուութեան եղանակաւ մեր պիտոյքն հոգաց։

— Վա՛յ ինձ, անոնք մեր գաղտնի՛քն իմացան. ուրեմն անոնք մեզ ողորմութի՞ւն տուին։

— Հանգիստ եղիր, մայր, ընդունածս պիտի հատուցանեմ՝ օր մի։

— Ի՛նչ դժբաղդութիւն է այդ ինձ համար այսպէս խայտառակութեան առարկայ լինելը։

— Ամաչելու պատճառ մի չունինք, մայր, զի աղքատութիւնը անպատուութիւն չէ։

— Ըստ քեզ դուցէ։

— Այո՛, մայր, ըստ իս աղքատութիւնը փշոտ ճանապարհ մ'է ուր արիաբար մարտնչելու է ընդդէմ խոչնդոտից որք մէն մի քայլի կը ներկայանան։

— Զքեզ լսողը պիտի կարծէ թէ չքաւորութիւնը կը պաշտես։

— Ոչ, մայր. չեմ՝ պաշտեր զայն քանի որ զրկանաց կը դատապարտէ զձեզ, այլ կը պատրաստուիմ դիմադրել անոր՝ վիճակ մ'ապահովելով մեզ։

— Վստահ եմ՝ որ այդ մասին եւս Երանեանց դիմեցիր դարձեալ։

— Անշուշտ, մայր։

— Ո՞վ գիտէ որչափ արհամարհեցին զքեզ։

— Ընդհակառակն Տիկինը հիացաւ։

— Կը փափաքէի ուրեմն որ անոնք եւս մեր վիճակն ունենային օր մի բացարձակապէս յայտնելու համար քեզ որ քու քաջութիւնդ չպիտի ունենային ընկերական սանդուղներէն վար իջնելու համար։

— Մա՛յր, երբ անոնք այնչափ հիանալի ինն անձնուիրութեամբ մեզ օգնելու փութացին, դու անէ՞ծք կը կարդաս իրր փոխարինութիւն։

— Այո՛, նպաստեցին՝ զմեզ խոնարհեցնելու մտօք։

— Ո՛հ, ինչ կ'ըսես, մա՛յր, խնդրեմ լռէ՛։

— Դու պարզ աղջիկ մ'ես, և չգիտես տակաւին ո՞րչափ չարութիւն կայ մարդկանց սրտին մէջ։

— Մա՛յր, կը հայցեմ զքեզ, դադրէ՛ այդպէս խօսելէ զի հոգւոյս մէջ անոնց նկատմամբ իրաւացի երախտագիտութիւն մի կայ որ ընդդէմ խիստ խօսքերուդ կը բողոքէ։

— Կը տեսնեմ որ դու ինձ դէմ ըմբոստ կերպարանք մի կ'առնուս։

— Ե՞ս, մայր։

— Այո՛, դու։ Զոր օրինակ առանց իմ հրամանիս կը պատրաստուիս տունէս հեռանալու։ Ուսկի՞ց յառաջ կուգայ այդ բաղձանքդ անկախ դիրք մ'առնելու արդեօք։

— Մայրի՛կ, նոյն իսկ յորդիական սիրոյս յառաջ կուգայ · զի զգացի թէ քաջութիւն ունենալու եմ ընդվզելու ընդդէմ քեզ՝ սիրելի ծնողքս փրկելու և դոյզն ինչ հանգիստ մատակարարելու համար անոնց։

Եւ զայս ըսելով կոյսը մօրը գիրկն անկաւ և լալով գոչեց ։

— Մա՛յր, մի՛ մեղադրեր զիս և հաւատա՛ որ զքեզ պատուելով կը սիրեմ։

Մայրն իւր արտասուքը աղջկան արտասուաց խառնեց, սեղմեց զայն հոգւոյն վրայ և ապա յարեց ։

— Ո՛հ, դո՛ւստր իմ, ամենքն զմեզ պիտի արհամարհեն այսուհետեւ։

— Մա՛յր, կը կրկնեմ քեզ թէ խելացի և զգօն անձինք առաւել եւս պիտի յարգեն զմեզ, զի աշխատութիւնը մղիչն է ընկերութեան և յառաջադիմութեան։

ԳԼՈՒԽ Է.

Հասաւ վերջապէս օրն յորում Արաքսիա պարտաւորեցաւ ընտանիքէն բաժնուելու։ Իւր խեղճ հայրն այդ բաժանման դառնութիւնը սաստկապէս կ'զգար, զի կնոջը խիստ վարմունքը աղջկանը գորովագութ խնամօքը կը մեղմանար դոյզն ինչ։ Ամեն ծանր խօսք, ամեն անիրաւ կշտամբանք գրգիռ մ'էր միշտ կուսին սրտին գանձերէն նոր սիրոյ ապացոյց մի երեւան հանելու։ Ուստի դիւրին է երեւակայել թէ թշուառ մարդուն համար որքա՛ն տառապեցուցիչ էր առանձին մնալու հարկն ամուսնոյ մի հետ, որուն համար ինքն անհանդուրժելի բեռ մ'էր։

Զայդ լաւ կ'ըմբռնէր Արաքսիա, կը ցաւէր հօրը վրայ, արգահատանք կ'զգար, և կը ջանար

նոյնն զգացնելու և իւր մօր, բայց ի զո՛ւր։ Այո՛ կը մեկնէր, և իւր հոգին կ'արիւնէր ոչ այնչափ զիւր մայրն թողլուն համար՝ որչափ իւր տառապեալ հայրն, որուն դժբաղդ կացութիւնը յոդ մ'աւելի էր զիւր սիրտ առաւել եւս գորովով կաշկանդելու։ Բայց չկար ուրիշ միջոց ապրուստի և հարկ էր մեկնիլ անպատճառ։

Բաւական չէր հէք հօր համար տեսնել զիւր որդին որ կը թողուր հայրենի յարկն՝ այլ դատապարտուած էր անսալ և իւր կնոջ որ անընդհատ զինքը կը յանդիմանէր իբր իրենց դժբաղդութեան պատճառ։

— Այր մարդուն պարտքն է, կ'ըսէր կինը, դրամ վաստկիլ և ընտանիքը խնամել։ Իսկ դու ոչ միայն զայդ անկարող ես գործելու այլ և կը պարտաւորես իմ միակ զաւակս տունէն դուրս ելնելու։ Քեզ նման այրեր լաւագոյն է որ չի ծնանին, զի պարզապէս բեռ մ'են աշխարհիս վրայ։

Ողորմելի զոհը կը լռէր ընդհանրապէս։ բայց օր մի ոչ եւս կարողանալով տոկալ այդ հանապազօրեայ յանդիմանութեանց, յիշեցուց կնոջ թէ անցեալ դիւրակեցիկ օրերն իրեն կը պարտէր, և թէ ինքն ճոխութեանց վարժ չէր իւր հայրենի յարկին ներքեւ մինչ աղջիկ էր տակաւին։

Ցայնժամ գոռոզ կինը մարդուն վրայ յարձակեցաւ բոցավառ աչերով, փրփրալից բերնով, որոտացող ձայնիւ, ու պատասխանեց թէ իւր գեղեցկութեամբն իրաւունք ունէր ամենէն շքեղ բաղդերու ակնկալել, և թէ նա պատճառ

եղած էր հետն ամուսնանալով որ ամեն պեր-
ճանքէ ու մեծութենէ զուրկ մնայ, և այժմեան
տխուր կացութեան մէջ ինքն զաւակովը տա-
ռապի։

Երբ ոք արդարութենէ չեղի ի՞նչ կշտամբա-
նաց կարող չէ։ Վա՛յ անոր որ տկարութեամբը
կամ պարագայից բռնի զօրութեամբը սահման-
ուած է անիրաւ մեղադրանաց հպատակ լինե-
լու։

Երկու ամուսնոց խաւարապատ աշխարհին
մէջ լուսաւոր թել մ'էր Արաքսիա, որ կը ջանար
յոդ միութեան լինելու նոցա մէջ։ Գնաց կոյսն,
բեկաւ թելը, չիջաւ լոյսն։ Այդ կնոջ սիրտը
կ'ամոքէր միայն մայրենի ցնցման ներքեւ։ Արա-
բածն այն որ կարծես ամեն արգահատական
զգացումէ զուրկ էր երբ ամուսնոյն կը վերաբե-
րէր խնդիրը, ընդհակառակն գորով էր և անձ-
նուիրութիւն իւր որդւոյն նկատմամբ։

Ուստի նոյն օրն յորում Արաքսիա մեկնեցաւ
սաստիկ հարուած մի կրեց Վարսամեանի կնոջ
հոգին ու անձնասիրութիւնը։ Տիկին Երանեան
ու աղջիկը ներկայ էին ողջերթի վայրկենին։

Տիկին Վարսամեան մասամբ յաջողած էր ցոր-
չափ աղջիկն իւր մօտն էր, տեսակ մ'անվրդով
կերպարանք մի պահելու՝ շնորհիւ իւր գոռոզու-
թեան։ Բայց երբ կոյսն՝ դիւցազնուհւոյ մ'ան-
խնդրով դիմաք, հօրն և մօրը ձեռքերը անհուն
գորովանաք համբուրելէ յետոյ, և ակնածու ձե-
ւով զՏիկին Երանեան ողջունելէ ու զիւր բարե-
կամուհին սրտին վրայ սեղմելէ վերջը տունէն
դուրս ելաւ, յայնժամ անմխիթար մայրը յոր-

դառատ արտասուք սկսաւ լալ դառնապէս։

Նոյն վայրկենին ո՞րչափ դժուարին էր Տիկին Երանեանի դիրքը, որ կ'զգուշանար զգայուն կամ սիրտարար բառով իմն այդ կնոջ գոռոզութեանն ընդհարկանելու։ Ի՞նչ ըսեր, երբ նա կը կրկնէր անդադար թէ զաւկէն կը բաժնուէր ամուսնոյն մերձաւորութենէն հեռացընելու համար զայն միայն։

Անմիտ գլուխներ կան որք կը կարծեն խաբել զուրիշներն երբ իրաց բուն վիճակին տեղեակ են անոնք։ Գուցէ մարդս իւր անձը խաբելուն մէջ վայելչութիւն մի կ'զգայ։

Նոյն միջոցին հայրն՝ ըստ իւր սովորականին, անխօս կը գալարէր իւր անկեան մէջ, և երախտագիտութեամբ կը հանդիպէր համակրալից նայուածոց Տիկին Երանեանի՝ որ առաւել աչերու�ն քան թէ բերնովը կը համարձակէր մխիթարել թշուառ մարդը ի ներկայութեան իւր կնոջ։

Իսկ Արաքսիա՝ մոռնալով բոլոր իւր դիւցազնական արիութիւնը, կը կարծէր թէ ճամբուն վրայ պիտի նուաղէր։ Սիրտը իւր բաժինը կը պահանջէ միշտ. և եթէ վայրիկ մի կ'ընկճի խոնարհելով քաջութեան առջեւ, ընդ հուպ յաղթահարելով՝ իւր վսեմ տկարութեամբը կը ներկայանայ դարձեալ։

ԳԼՈՒԽ Ը.

Պ. Ադգարեան հարուստ վաճառական մ'էր։ Իւր մատաղ տիոց մէջ գաւառէն Պոլիս եկած էր, ու հայրենակցի մօտ ապրելով վաճառակա-

նութեան արուեստին հետամտած էր, վարժութեամբ զայն ուսումնասիրած, յառաջացած սոյն ասպարէզին մէջ, և տիրոջն օժանդակութենէն ու պաշտպանութենէն օգտուելով՝ յաջողած էր անկախ և յաջող դիրք մ'ապահովելու անձին։

Մարդուս առաջին մտածութիւնը՝ երբ բարքերը խանգարեալ չեն, ամուսնութեան մէջ հանգիստ վիճակ մի վայելել է։ Մարդս կարծես ընկերոջ մի կը կարօտի թէ՝ երանութեան և թէ՝ թշուառութեան մէջ։ Երանութենէն երբ ուրիշ մի եւս բաժին ունենայ՝ թուի թէ կը կրկնապատկուի այն, կ'ընդլայնի, կը զարգանայ և կ'ուռճի։ Իսկ թշուառութիւնը կը թեթեւնայ ուրիշի վրայ յենլով, և իւր ընկճող ծանրութիւնմասամբ կը կորսնցնէ։

Պ. Արգարեան համեստ և պատուակիր ընտանեաց միածին դուստրն առած էր ի հարսնութիւն։ Սա անձ մ'էր առանց նշանաւոր գեղեցկութեան, բայց բնութեամբ ազնիւ էր, պարկեշտ, և լրջամիտ։ Նա կը վայելէր անձայն և անշշուկ ամուսնոյն վիճակն՝ որ օր աւուր զարմանալի կերպիւ կը զարգանար, և ընկերակցին երջանկութիւնը կ'ապահովէր իւր հանդարտաբարոյ ընթացքովն ու անընդհատ ջանիւքը զինքը գոհացնելու։ Ողորմած էր հոգւով, ձեռքը միշտ պատրաստ ընկերային վէրք մի բուժելու, արտասր մի սրբելու, կարեվէր սրտի մի օգնելու։ Զայս ամենայն կը գործէր ոչ թէ իւր անունը ամենուրեք հնչեցնելու համար, այլ պարզապէս, վասն զի բարեգործութիւնը իւր հոգւոյն անունդն էր։

Կան այնպիսի չնաչխարհիկ արարածներ որք իրենց անձը կը մոռնան որպէս զի այլոց համար ապրին։ Իրենց գործած բարեաց բնաւ կարեւորութիւն չեն ընծայեր զանոնք անբաւական համարելով, բայց կը յիշեն ամեն ծառայութիւն՝ նոյն իսկ աննշանը, զոր ընդունած են իրենք։ Մատուցած բարեաց փոխարէն ապերախտութեան կը հանդիպին, և զայն իսկ կը ներեն առարկելով թէ բարեգործութիւնն նպատակ ունենալու է լոկ մարդկութեան ծառայելու յօժարութիւնը, առանց վարձատրութեան բաղձանքը տածելու։

Ուստի Տիկին Աբգարեան ոսկիներն առատապէս կը բաղէր իւր ամուսինէն ի պէտս թշուառաց, ու կ'ապրէր գոհ ընդ մէջ իւր բարեգործութեանց ու ընտանեկան անդորրաւէտ կեանաց, երբ ահա արու զաւակի մի ծնունդը ամբողջացուց իւր երանութիւնը։

Մանկիկ Ներսէսը ծնողացն յոյսն էր և երջանկութիւնը։ Գեղեցկագէմ, առոյգ, աշխոյժ, հաճայն կեանք էր և չնորհք։ Ո՞րն է արդեօք մայրն այն՝ որ երբ այդպիսի արարած մի սրտին վրայ կը սեղմէ, աքանչելի բացառիկ երաշներ չտեսներ անոր նկատմամբ։ Մեծագործութիւն, փառք, հռչակ, այս ամենայն կ'ուրուագրուի շլացուցիչ կերպիւ մայրենի աչաց առջեւ։ Եւ մայրը կը ժպտի ապագային, մինչ մանուկը կը ժպտի իւր մօր։ Մայրն ու զաւակը մէկ հոգի կը կազմեն և կ'ամբողջանան երկրորդ անձով մի որ ամուսինն է միայն, ու՞հայրն երկրորդին։

Տարիները դիւրաստահ կ'անցնէին և յանդգաստս՝

իբր բարեբաստ տարիներն. կ'աճէր Ներսէս գեղեցկութեամբ, առողջութեամբ և իմաստութեամբ, ու կը յառաջանար խելացի և գորովագութ մօր մ'առաջնորդութեամբ։ Մայրը զաւակին սիրտը կը կրթէր հաստատուն սկզբանց հիմունքը դնելով, իսկ ընտիր դասատուաց կը թողուր անոր միտքը մշակելու հոգը։

Երբ Ներսէս տասն և ութ տարեկան եղաւ, կը ներկայանար իբր հրաշագեղ պատանեակ, ծանրաբարոյ, ազնուասիրտ, լրջամիտ, և ուսմանց մէջ յառաջացած։ Կը սիրէր զիւր հայր, կը պաշտէր զիւր մայր, կը հիանար լաւին ու բարւոյն վրայ։

Մայրը կը նայէր անոր իրաւացի հպարտութեամբ իմն, մտածելով թէ այդ չնաշխարհիկ արարարածն իւր սեփականութիւնն էր։

Մեծ գոհունակութիւնը կարծես ճակատագրական օրինաց հակառակ է։ Աբգարեան կենաց հորիզոնը խիստ պայծառ էր երկարատեւ շարունակութիւն մ'ունենալու համար, հետեւապէս մթագնեցաւ։ Ահարկու սեւ ամպ մ'անցաւ այդ ընտանեաց վրայէն, որոտաց, փայլատակեց, ու շանթահարեց վերջապէս զՏիկին Աբգարեան։

Ազնուասիրտ կինն ութ օրուան միջոցին մէջ հիւանդացաւ ու մեռաւ բժշկական ամենայն ազդու միջոցաց դէմ ըմբոստ մնալով։ Մեռնելու ժամանակ Տիկինն իւր գորովալից երախտագիտութիւնն ամուսնոյն նուիրեց, իսկ վհատայն հոգին՝ իւր որդւոյն։ Այդ սիրոյ փարոսը նուաղեցաւ հանդարտօրէն ինչպէս փայլած էր երբեմն մեղմիկ և անշշուկ։

Մեռաւ Տիկին Աբգարեան մինչ երեսուն երեք տարեկան էր, տակաւին իւր ամուսինն անմոռանալի կ'երեւար, և մէն մի անգամ որ կնոջը բարեմասնութեանց յիշատակութիւնը կը լինէր ցաւը կը սաստկանար ու չարաչար կը յուսահատէր։

Իսկ Ներսէս՝ որ նոյն միջոցին տասն և ութերորդ տարին լրացուցած էր, առանց հոգւոյ մարմին մի դարձաւ։ Իւր մօրն աչքերէն ու հոգիէն կը քաղէր եռանդն աշխատութեան ու բարեգործութեան։ Երբ նա մեռաւ՝ ինքը ջըլատեցաւ, վհատեցաւ, գոգցեց դիակնացաւ։ Ջախջախուած էր ելեքտրական թելն որուն մէկ ծայրը մօրը սրտին կապուած էր և միւսն իւր սրտին, և ուսկից սիրոյ և խրախուսանաց յորձանք մի կ'անցնէր անդադար։ Պարապ մի կը նկատէր տան մէջ, պարապ մի սրտին մէջ՝ որ մէն մի օր կ'ընդլայնէր։

Քանիո՜ն դառն է սիրամաշ հոգւոյ համար չտեսնել ու չփայփայել զանձն այն որ համայն գութ էր իրեն համար, որ սէր էր, ներշնչումն և անձնուիրութիւն։ Ոչինչ կայ իւր տեսութեան համար, ոչինչ՝ իւր լսողութեան համար։ Եւ սակայն նայուածքն է որ զմեզ կ'ոգեւորէ, ձայնն է որ «Յառաջ» կը գոչէ։

Յիշատակ մի կար միայն Ներսէսի համար, և այդ յիշատակն իւր վրայ կը ներգործէր իբր սրբանուէր թանկագին պատկեր մի որ մութ գոյներով նկարուած է, և որ առաւել տխուր քան թէ սփոփարար ազդեցութիւն մ'ունի։

Աշխարհ անապատ մի դարձած էր մեր երիտասարդին համար, օրն ի բուն գրեթէ առան-

ձին կ'անցնէր իւր գրեանց մէջ նստած, մեծ մարդկանց օրինակաւն ջանալով յաղթել իւր վրէ-տին։ Բայց դիւրի՞ն է արդեօք յաղթահարել թշնամւոյ մի՝ հանգոյն վշտի՝ որ մինչ ընկճեալ կը թուի, վեր կը կանգնի յանկարծ ու զհոգին վերստին գալարելով կը վիրաւորէ։ Համակերպիլ բաղդին հարուածոց բժշկուիլ չի նշանակեր, այլ պարզապէս սգոյ հետ եղբայրանալ է՝ և լռութեան մէջ շոյել՝ ինչ որ զհոգին կը մաշեցնէ անընդհատ և անձայն։ Այդ վիճակին մէջ կը գտնուէր Ներսէս։

ԳԼՈՒԽ Թ.

Պ. Աբգարեան, հայր էր գորովալից, պատրաստ ամեն ինչ կատարելու զաւակը գոհացնելու համար։ Կը տառապէր երիտասարդին տըխուր կերպարանքը նկատելով, կը փափաքէր մըխիթարել զնա, բայց անկարող էր հաստատել այն սքանչելի յարաբերութիւնքն որք ընդ մէջ երկու հոգիներու տիրած էին երբեմն՝ այսինքն մօր ու իւր զաւկին, և կամ լաւ եւս է ըսել, ընդ մէջ երկու հոգիներու ի մի ձուլած։

Սիրելու զգացումն նոյնչափ նրբութիւններ կը պարունակէ որչափ երաժշտական ներդաշնակութիւնը։ Գորովոյ մէն մի բաբախում մաս մ'է սիրոյ, ինչպէս մէն մի գեղեցիկ մեղեդիք մաս մ'է ընդհանուր ներդաշնակութեան. և սակայն ամենքն իրարմէ կը տարբերին, կը զանազանին, նոր ձեւերու, նոր գոյներու, նոր նրբութեանց

ներքեւ հանդիսանալով։ Զայներն երբ իրարու հետ համաձայնին ներդաշնակութիւն մի կը կազմեն. նոյն է և զգացմանց մասին։

Պ. Արգարեան կը սիրէր բոլոր սրտովն զիւր որդին, առատապէս փոխարինուած լինելով անկէ։ Բայց քանի որ զգալու, մտածելու և դատելու ահագին տարբերութիւն կար երկուքին միջեւ՝ անհնարին էր հաստատել հոգիներու և մտաց կատարեալ համաձայնութիւն։ Երկու մեղեդիք էին որուն մին կարգաւորեալ էր և ըստ կանոնի յօրինեալ, իսկ միւսն աւելի թարմ էր, աւելի խորունկ, աւելի վսեմ ներքութիւններ կը պարունակէր։ Մին էր սովորականը, միւսն՝ անսովորը։ Ինչ որ միոյն համար բաւական էր, միւսին համար անբաւական էր։ Ինչ որ էր հօրն համար կանոնաւոր աշխատութիւնը, որդւոյն համար էր օգտակարը, լաւը և սէրը։

Պ. Արգարեան կը հայթհայթէր որդւոյն ամեն խնամք, ամեն արգահատանք և ցոյց սիրոյ։ Զայդ ամենայն կ'ընդունէր Ներսէս երախտագիտութեամբ, բայց կ'զգար միշտ պարապ մի շուրջը որ իրեն անհնար էր լեցնել. առանձին կ'զգար իւր անձն երկրիս վրայ, և յինքն ամփոփուելով, ուսման մէջ կ'ուզէր գտնել սփոփանք իւր սրտին՝ ու մտացը ճարակ։

Պ. Արգարեան դառնապէս զգաց նախ կնոջը կորուստը, բայց վերջապէս մտածեց թէ մեռեալը ետ չէր կարող բերել վշտովն, հետեւապէս ջանաց մխիթարուիլ և ստուգապէս մխիթարուեցաւ։ Ուստի հազիւ երկու տարիներ անցած էին իւր այրի կացութեան վրայ, և ահա մտադիր

էր յաջորդ մի տալ իւր հանգուցեալ կողակցին։

Բնական օրէնք դարձած է գոգցես, որ այրի մարդիկ կրկին ամուսնութեան ձեռնարկեն։ Եթէ բարերաստ էին առաջին ամուսնութեամբ, կը կրկնեն զայն վերստին երջանիկ լինելու սըրամադրութեամբ։ Իսկ եթէ դժբաղդ՝ լաւագոյն ամուսնութեան յուսով երկրորդ պսակադրութեան կը դիմեն։

Պ. Աբգարեան որուն ամուսնական երանութեան վրայ տարակոյս չունէինք, երբ սգոյ պատշաճողական ժամանակը լրացաւ, և օրինաւորապէս ու ամենայն խղճմտութեամբ ողբաց զիւր հանգուցեալ ընկերուհին, երկրորդ անձ մ'որոշեց իրբ տիրուհի իւր բաղդին։

Ցոյս ունէր թէ բաղդը նոյնչափ նպաստաւոր պիտի լինէր իրեն երկրորդ անգամ որչափ առաջինն։ Հետեւապէս հաւանեցաւ առնուլ ի կնութիւն չքնաղ որբ երիտասարդուհի մի որ անշուք ընտանեաց կը վերաբերէր, առանց որ և է խուզարկութիւն մ'ընելու անոր բնաւորութեան վրայօք։

Երբ իմացաւ Ներսէս հօրն ամուսնանալու ըրած որոշումն կարծես թէ յիմարեցաւ։ Զէր բաւեր իրեն զմայրն իւր կորսնցնել, և ահա օտարական մի կուգար անոր տեղը գրաւել։ Սաստիկ սրտմտութիւն զգաց հօրն ընդդէմ, և իւր անձը հիւանդ դաւանելով առանձնացաւ խուցին մէջ յայտնելով հարկաւորութիւնը զոր կ'ըզգար բնաւ մարդ չընդունելու։ Հայրը հպատակեցաւ որդւոյն կամացը զի լաւ կ'ըմբռնէր այդ հակառակութեան պատճառը։

Երբ ամուսնութեան օրը մօտեցաւ, Ներսէս իբր թէ օդափոխութեան մտօք տունէն հեռացաւ, բնաւ ակնարկութիւն չընելով հօրն ամուսնական խորհրդոց։

Պ. Աբգարեան իրօք կը ցաւէր յոյժ որդւոյն յայտնած հակառակութեան վրայ առանց սակայն իւր դիտաւորութիւնն այլայլելու։ Նա մանաւանդ կը մտածէր թէ ամեն ինչ ժամ յառաջ կատարելու էր որպէս զի նոր տիրուհին տան մէջ իւր տեղը գրաւելով հարկադրէ զերիտասարդն հպատակելու լմնցած իրողութեան մ'առջեւ։ Ուստի մեր յիսնամեայ փեսան փութացուց ամուսնութեան խորհուրդը քսան և հինգ տարեկան հարսին հետ, և ի պատիւ հանգուցեալ կողակցին և որդւոյն՝ անշուք կերպիւ կատարեց զայն՝ հակառակ կամացն իւր հարսընցուին։

ԳԼՈՒԽ Ժ.

Նոր Տիկին Աբգարեան չքեղապէս գեղեցիկ անձ մ'էր։ Մորթին փափկութիւնն ու սպիտակութիւնը, դիմական գծերուն կանոնաւորութիւնն և հասակին վայելչութիւնը զինքը նշանաւոր կը հանդիսացնէին։ Իւր սեւաթոյր վայրենի աչերն առաւել կամք և յանդգնութիւն կը յայտնէին քան թէ քաղցրութիւն։ Ուսմամբ գըրեթէ ոչինչ էր, և զուրկ ամեն նուրբ ու ազնուական զգացումէ։ Հնարամիտ էր, ճարպիկ և հեշտասէր։

Նոյն վայրկեանէն որ ամուսնացաւ՝ տիրող դիրք մ'ստացաւ իւր հեզաբարոյ ամուսնոյն վրայ. և սա խոնարհելով այդ իշխող ձեւերուն առջեւ՝ հպատակի կերպարանք մ'առաւ իսկոյն։

Ոչինչ զկին այնչափ յանդուգն կ'ընէ՝ որչափ ամուսնոյ մի բնութեան տկարութիւնը։ Յայնժամ մէն մի օր նոր քմահաճութեան ծնունդ կուտայ. և անոր գործադրութիւնն ապահովելու համար կինը մերթ հրամայական ձեւերու կը դիմէ և մերթ փաղաքշանաց։

Այր մարդն որ վայրիկ մի քաջութիւն ունեցած էր կնոջը դիմադրելու՝ զամեն ինչ կը մոռնայ հանդէպ նազելանաց գեղանւոյն, կը թուլանայ կատարելապէս, և կինն օգուտ քաղելով այդ տկարութեան վայրկեաններէն՝ իւր իշխանութիւնն եւս քան զեւս կը հաստատէ։ Մարդս նոյն դիւրութեամբ կը վարժի բռնութեան ինչպէս հպատակութեան. առաջին պարագային մէջ գոհունակութիւն կայ, իսկ երկրորդին մէջ կամաւոր համակերպութիւն։

Տիկին Աբգարեան իւր ունեցած իշխանութենէն օգուտ քաղեց ստանալու համար գեղեցկագոյն զարդերը, ադամանդները և կարասիները։ Բերայի բնակութեանն այնպիսի չքեղ կերպարանք մի տուաւ որ ճոխութեամբը կրնար մրցիլ ընտրելագոյն տանց հետ։ Սպասաւորաց բազմութիւնն և մանաւանդ կառաց չքեղութիւնը զինքը նշանակելի կ'ընէին ամենուրեք։

Զարալեզու վերջին ծայր՝ այդ կինը կը մեղադրէր այլոց վրայ ինչ որ անձին առատորէն կը ներէր, ու արուեստաւորեալ պարկեշտու-

թեան քաղին ներքեւ ջանադիր կը լինէր ծածկել բոլոր թերթեւութիւնները։ Գլխաւոր հաճոյքներէն մին էր զարդարուիլ, զարմացողացն թիւը ստուարացնել, ու սրտի զոհեր կատարել։

Իւր խօսակցութեան հաճոյական նիւթն էր նորաձեւութիւնն։ Երբ տիկնոջ մի հանդիպէր, գլխէն մինչեւ ոտքն աչքէ կ'անցնէր զայն, նոր քննադատութեան նիւթ հայթհայթելով անձին. զգեստուց խնդիրն էական պայման մ'էր իրեն համար, ու կնոջ մի արժանապատուութեան աստիճանը հագածներէն կը դատէր ինչպէս և ունեցած ընկերական վիճակէն։

Իսկ Ներսէսի գալով՝ երբ հօրը թախանձանքէն շարժեալ հաճեցաւ վերստին հայրենի յարկը վերադառնալ, անզուսպ հակակրութիւն մ'զգաց մօրուին դէմ, և այդ աննպաստ զգացումն եւս քան զեւս սաստկացաւ, թէեւ երբէք քաղաքավարական պահանջմանց դէմ չգործեց։ Ստոյգ է որ դժգոհ լռութեամբ ինն կը դատապարտէր հօրը տկարութիւնը կնոջը նկատմամբ։

Երիտասարդին ծանր և վայելուչ վարմունքն առաջի օրէն պատկառանք ազդեց Տիկին Աբգարեանի, և տարիներ բոլորելով Ներսէսին ազդեցութիւնն եւս քան զեւս սաստկացաւ անոր վրայ։

Պ. Աբգարեան երկու էգ զաւակներ ունեցաւ երկրորդ կնոջմէն, որոց երիցագոյնը տասն երկու տարեկան էր, և կրտսերը՝ ինն՝ նոյն ժամանակին որ Արաքսիա կոչուած էր անոնց հետ ծանօթանալու։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Արաքսիա՝ յաղթելով հետզհետէ այն յուզման որ գրաւած էր զինքն ընտանիքէն բաժնուելէն յետոյ, մինչ կը քայլէր փողոցին մէջ ջանաց մը-տացը տարբեր ուղղութիւն մի տալ, ու պատ-բաստուիլ իւր նոր կացութեան։

ԶՏիկին Աբգարեան բնաւ չէր ճանաչեր, նոյնպէս և անոր շուրջը գտնուած անձինքը։ Թէեւ արի էր նա բնութեամբ, հանդերձ այսու սիրտը թունդ եւլած էր և սաստիկ բաբախում մ'զգաց երբ տան դրան մօտեցաւ զայն բախելու համար։ Կանկ առաւ վայրիկ մի հոն, ձեռքը սրտին տարաւ իբր թէ անոր թրթռալն արգիլելու մտօք, ճիգ մ'ըրաւ հանդարտ կերպարանք մ'առնելու, զանգակը քաշեց, և երբ դուռը բացուեցաւ՝ տեսաւ հանդէպ իրեն լաւ հագուած սպասաւոր մի որուն գոռոզ ձեւերը շատ իսկ կը յայտնարէին թէ նա կ'արհամարհէր իւր զգեստուց անշքութիւնը։

— Տիկին Աբգարեանի տունը ա՞յս է արդեօք հարցուց, օրիորդը։

— Այո՛, պատասխանեց սպասաւորը սէգ կերպիւ։

— Տիկինը կրնա՞յ ընդունիլ զիս արդեօք։

— Ո՛վ գիտէ։

Իմացուցէք իրեն թէ Օրիորդ Արաքսիա իւր տրամադրութեան ներքեւ է։

— Սպասուած վարժուհին դուք էք։

— Այո՛։

— Իմ ետեւէս եկէք։

Սպասաւորին առաջնորդութեամբ անցաւ օրիորդն մարմարիոնէ ընդարձակ բակէ մը որ լի էր ծաղկօք զարմանազան և երիներանգ. վեր ելաւ լայն շքեղ սանդուղքէ մի նոյնպէս մարմարեայ. հիասքանչ սրահի մի մէջ մնաւ ահագին հայելիներով և ոսկեզօծ կարասեօք զարդարեալ, և որոնն որմերէն վար կախուած էին երեւելի հեղինակաց նկարներն, ու ձեղունին մէջտեղ կը ցոլար ճաճանչալից փառաւոր ջահ մի.

Արաքսիա գոհունակութեամբ նայեցաւ բոլոր այդ ճոխութեանց, զի կը գնահատէր ինչ որ արդիւնք էր յաւ ճաշակի, և մանաւանդ ինչ որ երեւելի հանճարի մտաց արտադրութիւն էր։

Փոքրիկ վայելուչ սեղեկի մ'առջեւ հասան. սպասաւորն հրաւիրեց զինքը ներս մտնելու և սպասելու մինչեւ որ, կ'ըսէր, Տիկինը հրամանները տայ իրեն, և ապա մարդն անյայտ եղաւ։

Տիկին Աբգարեան երջանիկ էր մէն մի անգամ որ կրնար իրը թագուհի ներկայանալ խոնարհագունից աչաց, շլացնել զանոնք իւր հարստութեամբն, ու պատկառանք ազդել ձեւերուն գոռոզութեամբը։

Հետեւապէս երբ սպասաւորն ներկայացաւ Տիկնոջ իմացնելու համար վարժուհւոյն գալուստը, նա սէգ եղանակաւ պատասխանեց.

— Թո՛ղ սպասէ։

Գրեթէ կէս ժամ անցաւ և ապա Տիկինն ոսկեզօծ արեւելեան կերպասէ առաւօտեան զգեստ մի հագած տարածուեցաւ սրսկապանին (boudoir) մէջ գտնուած բազմոցներէն միոյն վրայ՝ որ նոյնպէս արեւելեան ճաշակին համեմատ կարմիր ու

գեղին մետաքսեայ կերպասով շինուած էր։ Որ-
մերն զարդարուած էին թանկագին գորգերով
որոնց վրայ սփռուած էին կլորաձեւ փոքրիկ
արծաթապատ հայելիներ, նոյնպէս և գետինը
ծանրագին գորգ մի տարածուած էր։ Ատ և
անդ փոքր սեղաններ՝ արուեստակով զարդարուած՝
հնութեան վերաբերող այլ և այլ նիւթերով բեռ-
նաւորուած էին. միոյն վրայ արծաթեայ խըն-
կաման մի կար որ անուշարոյր հոտեր կը ծա-
ւալէր շուրջ, հեշտութեան զարմանալի ազդե-
ցութիւն մը ներգործելով։

Սենեկին մէկ անկիւնը չափաւոր մարմարիոնէ
աւազան մի կը շողշողար. հո՛ն կը լուացուէր
Տիկինը, երեսը սրբելով բարակ կտաւներով ոս-
կեզօծ ջուրքերով բանուած։

Բայց այս արեւելեան ոճով սենեկին գեղեց-
կագոյն զարդն՝ բնական մեծութեամբ Տիկնոջ
կենդանագիրն էր որ անմիջապէս սենեկին դը-
րան հանդէպ կախուած էր։ Անդ Տիկինը ներ-
կայացուած էր տաճկական կապոյտ զգեստով մի,
վիզն ադամանդեայ մանեակ, և գլուխը նոյնպէս
ծանրագին ադամանդեայ պսակ մի կրելով։
Ցոտն կեցած էր որպէս զի հասակին գեղեցկու-
թիւնն ի հանդէս բերէ։ Նկարին մութ յատակը
ի լոյս կը բերէր ամբողջ գեղեցկութիւնը կնոջ
դիմաց ու զարդուց։

Անդ բնաւ հետք չկար որ և է գրեանց.
կարծես թէ խորան մ'էր Աստղկան նուիրեալ,
այնչափ ամեն ինչ աչքերը շլացնելու և զգայա-
բանքը գրգռելու կը նպաստէր։

Երբ Արաքսիա սրսկապանին դրան առջեւ

հասաւ, բոլոր ուշադրութիւնը գրաւուեցաւ այդ շքեղ կենդանագրէն։

Տիկին Աբգարեան գոհունակութեամբ նկատելով զայդ հիացում մինչդեռ երիտասարդուհին կը նայէր սքանչացմամբ պատկերին առանց ներկայացնող անձը տեսնելու, պատրաստուեցաւ թագուհւոյ ձեւեր առնուլ այն անձին նկատմամբ զոր արդէն իբր իւր հպատակը կը նկատէր։

Բայց երբ օրիորդը նշմարեց յանկարծ զՏիկին, նկարին նմանութենէն անմիջապէս հասկցաւ թէ կենդանագիրն զնա կը ներկայացնէր։ Յայնժամ երիտասարդուհին ազնուական ձեւովը մօտեցաւ Տիկնոջ ու բարեւեց զայն ամենայն արժանապատուութեամբ առանց որ եւ է խոնարհութեան նշան տալու։

Տիկին Աբգարեան որ գոհունակութիւն զգացած էր նախ աղջկան յայտնած զմայլմանէն ի տես իւր կենդանագրին, յանչափս դժգոհ եղաւ հաստատելով անոր անտարբեր ձեւերն այնչա՛փ ճոխութեան առջեւ, ինչպէս և անոր մեծանձն դիրքն հանգէպ իրեն։

Անշուշտ այդ անտարբերութեան եղանակը կը նեղացնէր զՏիկին քանի որ անկար էր նախանձու զգացում մի զարթուցանել, և հետեւապէս իբր ստրուկ խոնարհեցնել զօրիորդն իւր առջեւ։ Բայց այդ կնոջ գոռոզ հոգին փութաց յայտնել այն մեծ ընկերական անջրպետն որ կար իրեն և աղքատ աղջկան միջեւ, ուստի արհամարհոտ եղանակաւ մ'ըսաւ.

— Դուն յանձնարարուած ես ինձ արժանա-

հաւատ անձէ մի. ջանա՛ զիս գոհ ընել զաւակացս պէտք եղած խնամքը տալով։ Աւելորդ է ըսել թէ քեզ համար մեծ բաղդ մ՚է այսպիսի հարուստ տան մի ծառայելով,

Եւ ապա դառնալով սպասարկու կնոջ մի՝ յարեց,

— Այս աղջիկը առաջնորդէ տղայոց սենեակը։

Ողորմելի Արաքսիան սաստիկ հարուած մ՚ըզգաց ի լուր այդ գոռող խօսքերուն, և անմիջապէս վերահասու եղաւ որպիսի անձի հետ գործ ունենալուն։ Բայց ի՞նչ կրնար ընել. իւր ծնողքը նպաստի պէտք ունէին որով պարտական էր համակերպիլ իւր նոր վիճակին, մանաւանդ երբ խիստ գոհացուցիչ նիւթական վարձատրութիւն մի խոստացուած էր իրեն։

Տարին զինքն ընդարձակ սենեակ մի ուր կարասիք պարզ էին, մաքուր և վայելուչ, և ուր երեք անկողին կային՝ որոց երկու փոքրիկներն մակաբերեց թէ ներկայ գտնուող երկու տղայոց կը վերաբերէին. իսկ երրորդ մեծը՝ իրեն յատկացեալ էր անշուշտ։ Երկու աղջկանց համակրելի դէմքերը լաւ տպաւորութիւն մ՚ըրին վրան, ջնջելով մասամբ իրենց մօրն ըրած աննպաստ ազդեցութիւնը։

Իրեն առաջնորդող կինն երկու տղայքը ցոյց տալով ըսաւ.

— Օրիո՛րդ, ահա աշակերտուհիներդ, նայէ որ աղէկ հոգ տանիս անոնց։ Այս մեծ տուն մ՚է, մեզի պէս՝ դուն ալ բաղդ ունեցար հոս մտնելու։

Ի՞նչ զգաց խեղճ Արաքսիա երբ տեսաւ զանձը՝ իւր դատապարտուած աղախնոյ մ՚ատիճանին հաւասարելու երբ այնչափ եզական դատիարակութիւն մ՚ստացած էր։ Բայց ինքը որդիական սիրոյ զոհն էր, հետեւապէս ամեն ինչ յօժարութեամբ պիտի տանէր։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Երկու տղայոց քաղցր և անմեղ կերպարանքը վարժուհւոյն վրայ ախորժելի տպաւորութիւն մ՚ըրաւ։ Մին էր խարտեաշ ոսկեթել մազերով, ճերմակ մորթով, ու կապոյտ երազուն աչերով։ Կարծես երկինք կը ցոլային այդ երկու վճիտ աղբիւրներուն մէջ։ Այդ մանկան ձայնն երաժշտութիւն մ՚էր, շարժումը նազելանք, և նայուածքը՝ փայփայանք։ Իտէական այն երեւոյթներէն մին էր որ ծնած էր կարծես սիրելու, սիրուելու, տառապելու և մեռնելու համար։ Այդպիսի բնութիւնք խիստ ազնիւ են այս աշխարհիս վրայ ապրելու համար, զի դառնութեանց թեթեւ ընդհարումը կը բաւէ զանոնք տառապեցնելու, ճնշելու և հալածելու համար ի սպառ։ Այդ գողտրիկ էակին անունն էր Աղաւնի։

Իսկ երկրորդն՝ Արմինէն, հակառակն էր ըստ ամենայնի իւր երիցագոյն քրոջ։ Թուխ էր կերպարանքը, աչերն հրավառ, բնութեամբ աշխոյժ, անհանդարտ, չարաճճիկ, զուարթ, շատախօս իբր գիռչուն գարնանային, բարի և սիրուն։ Կարծես սա ծնած էր ընդհակառակն

բաղդին հարուածոց դիմադրելու և նոյն իսկ յաղթելու անոնց։

Երկու ներհակ տեսակներ կը ներկայէին այդ երկու փափուկ և համակրելի արարածներն որք աղախիններու ձեռաց էին մատնուած՝ զուրկ մայրենի ամեն հոգատարութենէ։ Ճաշի ժամանակ միայն տղայք սեղանակից կը լինէին իրենց մօր, և ի ներկայութեան անոր բոլորովին երկիւղիւ համակուելով, մին իւր նայուածքին քաղցրութիւնը կը կորանցնէր, և միւսը իւր աչխոյժը։ Կարծես թէ երկու յանցաւորք էին որ լռին կ'աշխատէին մայրենի դատապարտութեան վճռոյն խստութիւնը մեղմացնելու։

Հայրն՝ թէեւ լի էր գորովով տղայոց նկատմամբ՝ սակայն կնոջմէ վախնալով, չէր համարձակեր զանոնք իւր սիրոյն բացարձակ առարկան ընել։ Անմիջապէս որ երկու քոյրերն իրենց ճաշն աւարտած էին կը փութային իրենց խուցը քաշուիլ ընկերակցութեամբ խնամակալ կնոջ մի, փոխանակ ծնողաց շուրջը կենդանութիւն, շարժում և նուագ տարածելու։

Վա՛յ այն կնոջ որուն հոգին զուրկ է մայրերենի բանաստեղծութենէ, և որ անկարող է կարդալ որդեկացը սրտին մատեանին մէջ, հո՛ն՝ ուր մէն մի օր՝ նոր տառ մի կը գծագրուի ժամանակին, պարագայից և դաստիարակութեան ազդեցութեամբը։ Այդ տառը մերթ պայծառ է, մերթ սեւ, մերթ յստակ, մերթ ծածկուած, բայց կաթոգի մօր մի համար միշտ իմանալի։

Սակայն ուրիշ անկախ ազդեցութիւն մի կը տարածուէր այդ մանկանց վրայ, այն էր ազդե-

ցութիւնն Ներսէսի որ կը ջանար իւր լրջութեամբն այդ երկու մատաղ տունկերուն ուղղութիւն մի տալ։ Շատ անգամ տղայոց սենեակն երթալով անոնց կ'ընկերակցէր, ու խօսքերովն կ'ախատէր այդ թարմ մտաց մէջ զարթուցանել նշոյլ մի բանականութեան, և անոնց սրտին մէջ արծարծել սիրոյ կայծն։ Երկու քոյրերը կը ներկայանային հանդէպ իրենց եղբօր ինչպէս էին իրօք, այսինքն իբր զոյգ մի հրեշտակ։

Զրկել տղայն ազատ դիրքովն հանդիսանալու իրաւունքէն, զրկել է գարուն իւր ծաղիկներէն, առուակը իւր մրմունջէն, երգինքը իւր լոյսէն։ Եւ երբ երկու մանկունք կը տեսնէին իրենց եղբայրը, մին կը վարձատրէր զայն երկարատեւ անոյշ նայուածքովը, և միւսն օրուտալից ճիշովը։

Բայց Ներսէս նկատելով թէ ինքն առանձին անկարող էր ստանձնել հոգը կրթելու իւր երկու նազելի պաշտպանեալներն, առաջարկեց մօրին արժանաւոր վարժուհւոյ մի յանձնել անոնց դաստիարակութեան փափուկ պաշտօնը, աղատելով այդ դողրիկ էակներն անկիրթ աղախիններու թունաւոր ազդեցութենէն։

Տիկինն՝ որ սովոր էր անսալ Ներսէսի խրատուց, հաւանութիւնը տուաւ, որով վարժուհի մը փնտռուելով իբր այդ ներկայացաւ մեր Օրիորդ Արաքսիան։

Ուստի նոյն միջոցին որ երիտասարդուհին տեսաւ իւր երկու աշակերտուհիներն, ինչպէս ըսինք արդէն մխիթարիչ ազդեցութիւն մ'ու-

նենալով, մօտեցաւ անոնց, գգուեց զանոնք, անոյշ ձայնիւն ու ժպտուն աչովը խօսեցաւ, այնպէս որ կարծես յանկարծական լուռ դաշնադրութիւն մի համակրանաց գոյացաւ անոնց միջեւ։

Հազիւ հազ երկու օրեր անցած էին, և արդէն սիրոյ երրորդութիւն մի կը ներկայէին մանուկներն իրենց վարժուհւոյն հետ։ Երկու քոյրերը՝ զուրկ ի գորովոյ մայրենի, գաան յանկարծ ինչ որ կը պակսէր իրենցմէ, տկար պատկերը մայրենի սիրոյ։

Գթոյ կարօտ մանկան համար կնոջ սէրը անհրաժեշտ է։ Արանց անձնուիրութիւնը կը կորուսի մանկան սրտի նրբութեանց մէջ զորս կանացի հոգին կ'ըմբռնէ ամբողջովին, և զգուշաւորութեամբ ուղեւորելով այդ նրբութեանց մէջ առանց ոչինչ աւրելու և քանդելու, կը հասնի մինչ ցհոգին մանկան զայն սնուցանելու համար կազդուրիչ սիրով։

Տիկին Աբգարեան և ոչ իսկ կ'ուզէր իմանալ թէ որոնք էին յարաբերութիւնքն զաւակացն իրենց վարժուհւոյն հետ։ Տղայոց դաստիարակ մի պէտք էր, զայն շնորհեց անոնց, ուստի առաւելն հոգալու հարկ չէր համարեր։

Մայրեր կան որք կը կարծեն իրենց պարտականութիւնը կատարած լինել երբ որդւոցն նիւթական պէտքերը հոգացած են։ Տիկին Աբգարեանի աղջիկները միշտ լաւ զարդարուած էին, արժանաւոր շքով շրջագայութեան կ'երթային, ահա դաստիարակ մ'ալ իրենց, ի՞նչ կրնար գործուիլ առաւել քան զայս՝ ըստ Տիկին

Աբգարեանի։ Բայց եթէ հարկ լինէր այն տիկնոջ սրտին խորը թափանցել գուցէ հաստատուէր թէ բոլոր այդ նիւթական խնամքը ցուցամոլութեան հետեւանք էին՝ և ոչ թէ մայրենի սիրոյ։

Բայց Ներսէսի հետաքրքրող նայուածքը շուտ թափանցեց օրիորդին բարոյական հանգամանաց, որով ապահովուեցաւ թէ իւր սիրած քնքոյշ էակներն արժանաւոր ձեռաց յանձնուած էին։ Մեծ էր շնորհաց ներգործութիւնն Արաքսիայի մեր երիտասարդին վրայ, նա մանաւանդ կը սատկանար այն օր քան զօր անոր բարոյական և մըտաւորական ձրիցն առաւելութեամբը։

Թէեւ երիտասարդն ոչ այնչափ յաճախ կ'երթար մանկանց սենեակն որպէս յանցելումն այլ և այլ անախորժ ենթադրութեանց տեղի չտալու համար, սակայն ամեն առթէ օգուտ կը քաղէր վարժուհւոյն հետ տեսնուելու, և անոր թէ՛ իմաստալից խօսակցութեամբն և թէ՛ պարկեշտ ներկայութեամբը կենդանանալու։ Թուէր Ներսէսի թէ վիւր մայր կը գտնէր վերստին, և թէ օրիորդին մօտենալ փափաքելով իւր անցեալ օրերուն յիշատակը կը նորոգէր։

Միթէ ոք կրնա՞յ միշտ ուսումնասիրել ծագումն իւր զգացմանց։ Ինչ որ Ներսէսի համար սրբազան յիշատակի կենդանութիւնը կը թուէր, ոչ այլ ինչ էր բայց պարզապէս նորածիլ սիրոյ սկզբնաւորութիւնը։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Շաբաթները բաւական դիւրասահ կ'անցնէին մեր վարժուհւոյն համար։ Եթէ իւր ծնողացը հեռաւորութեան դառնութիւնը, կամ անոնց երկուքին յարաբերութեանց մասին զգացած երկիւղը, ինչպէս և հօրն համար ունեցած արգահատանքը չլինէր, կրնար ըսուիլ թէ նա բաւական գոհացուցիչ կացութիւն մի ապահոված էր անձին, նա մանաւանդ որ ընդունած թոշակաւն կրնար չափաւոր հանգստութիւն մի վայելել տալ ընտանեացը, և այդ էր իրեն համար գլխաւոր կէտն իւր բաղձանաց։ Աշխատութիւնն այն զոր կ'երազէր՝ թոյլ կուտար վերջապէս իրեն իրակացնել գործելու սկզբունքը, և այնչափ գոհացուցիչ կերպիւ վայելել անոր արդիւնքը ի նպաստ իւր սիրելեաց։ Թուէր իրեն թէ ինքն նոր անձնաւորութիւն մ'էր, թէ օգտակար անհատ մ'էր ընկերութեան, թէ վերջապէս կարող էր ըսել անձին «Ես եւս ի հաշիւ կրնամ մտնել ես ինձմով, զի կամեցայ, կարողացայ, աշխատեցայ։»

Բայց եթէ այդպիսի գոհունակութիւն իմն կ'զգար օրիորդն, ոչ այնպէս էր անոր մօրն նկատմամբ։ Տիկինն անկարող էր համակերպելու այն հարկին որ կ'ստիպէր զիւր դուստր օտար իշխանութեան հպատակելու, նա մանաւանդ կ'անգիտանար գոռոզ և արհամարհոտ ձեւերը Տիկին Աբգարեանի իւր դստեր նկատմամբ, զի Արաքսիա՝ ի մխիթարութիւն ծնողացն, իւր վիճակը նկարագրած էր միշտ իբր մին ի լաւագունից։

Բայց եթէ օրիորդն գրեթէ սեղանի ժամանակ տեսնելով զիւր տիրուհին կ'ենթարկուէր անոր արհամարհանաց, ունէր ի փոխարէն ամեն վայրկեանի գողտրիկ սէրը իւր աշակերտուհեաց՝ որոնց համար ստիպողական պէտք մի դարձած էր ինքն։

Իսկ Պ. Արգարեանի վարմունքը քաղցր էր վարժուհւոյն նկատմամբ բայց խիստ զգուշաւոր։ զի եթէ սովորականէն աւելի քաղաքավարութիւն մ'ընէր՝ Ցիկնոջ խոժոռ նայուածքը կը հրամայէր շուտով վերջ տալ այդ ընթացքին։

Իսկ Ներսէս պատկառ համակրութեամբ կը շարունակէր իւր վարմունքը երիտասարդուհւոյն հետ, նոյն համակրութեամբ փոխարինուելով անոր կողմանէ։

Թուէր Արաքսիայի թէ Ներսէսի վայելուչ ձեւերն ու իմաստալից խօսակցութիւններն էին պատճառ իւր զգացած գոհունակութեան ի ներկայութեան անոր, ու կ'անգիտանար թէ սէրն իւր հիմունքը հաստատորէն կը ձգէր իւր անարատ սրտին մէջ։ Երբեմն երիտասարդին հետ խօսած ժամանակը յանկարծական ջերմութենէ դէմքին ողողուիլը կ'զգար, ինչպէս և թեթեւ շփոթութիւն մի։

Ներսէս կը նշմարէր զայդ, և ինքն իւր կողմանէ կը յուզուէր։ Երբէք երկուքն առանձին չէին գտնուած ազատորէն խօսելու համար, և գուցէ յանգէտս փոփոխակի իրենց սրտերուն վիճակն իրարու յայտնելու։ Երկու հրեշտակներըն որք միշտ իրենց վարժուհւոյն անբաժանելիներն էին, կարծես պատուարն էին որք երկու

հոգիներու սիրոյ ընդհարումը կ'արգիլէին։ Բայց պիտի հասնէր վերջապէս օրն՝ ուր երկու երիտասարդներն փոփոխակի իրենց դիրքն պիտի զգային։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Տիկին Աբգարեան ընդունելութեան մասնաւոր օրեր ու երեկոյթներ ունէր, ուր ինքը կը գահակալէր իբր թագուհի գինքը պաշտող անձանց ու խնկարկուաց մէջ։ Իւր գլխաւոր հաճոյքն էր երիտասարդաց սիրտը վրդովել, անոնց մէջ նախանձու սերմեր սփռել, և մերթ միոյն և մերթ միւսին շնորհել քաջալերիչ ժպիտներն ու նայուածքներն։ Ասոնց մէջէն ոմանք կը խոնարհէին անոր քմահաճութեանց առջեւ, և իբր ստրուկ կը վարուէին, այնպէս որ Տիկինն իբր խաղալիք գործածելով զանոնք անխիղճ կերպիւ կը նկատէր անոնց սրտին արիւնիլը։ Գեղեցկութեան այդ երկրպագուաց մէջ կային սակայն այնպիսի ճարպիկ անձինք որ արուեստաւորեալ անտարբերութեամբ կը պատասխանէին Տիկնոջ փոփոխամիտ ձկտմանց, և ամեն առթէ օգուտ կը քաղէին անոր սրտմտութիւնը շարժելու և նախանձը բորբոքելու՝ ի վրէժխնդրութիւն այն կանացի մեքենայութեանց որոնց ենթարկուած էին իրենք։

Աշնան եղանակն էր, Աբգարեան ընտանիքը վերադարձած էր գիւղէն ուր անցուցած էր ամառուան եղանակը։ Տիկինը հացկերոյթ մ'առա-

ջարկեց երիտասարդաց խումբի մի, որոնց թըւոյն աւելցուց քանի մի տիկնայք բանբասանաց առիթները խափանելու մտօք։ Այդ տիկնայք ոչ միայն իրեն հետ ի պայքար մտնելու անկարող էին գեղեցկութեան մասին, այլ ընդհակառակն առաւել եւս զայն ի լոյս բերելու կը նըպաստէին։ Մութ յատակն էին մանաւանդ ուսկից Տիկին Աբգարեանի գիմական առաւելութիւնքն դուրս պիտի ցայտէին յաղթական կերպիւ։

Տան Տիկնոջ հաշուոյն մէջ չկար ոչ իւր ամուսինն և ոչ իւր զաւակները մասնակից ընել այդ դաշտային խնջոյքին։ Բայց Ներսէս այլօրինակ մըտածեց, որով անտարբեր մայրը պարտաւորեցաւ միատեղ առնուլ երկու աղջիկներն իրենց վարժուհւոյն հետ ի միասին։ Իսկ Պ. Աբգարեան ընդդիմացաւ տղուն թախանձանաց, գուցէ կնոջ լուռ հրամանացն հպատակելու համար։

Թէեւ շլացուցիչ էր Արաքսիայի գեղեցկութիւնն, այսու հանդերձ Տիկինը կ'արհամարհէր զայդ. զի կը մտածէր թէ ի՞նչ էր վարժուհի մի որպէս զի անձն ի նկատի առնուի, մանաւանդ ի ներկայութեան իւր, երբ այնչափ շքով և զարդով կը փայլէր ինքն։ Հետեւապէս և ոչ իսկ ուշադրութիւն ըրաւ անոր՝ ըստ իւր սովորականին։

Զուարճութեան իբր վայր ընտրուեցաւ Ֆըլորիան՝ Սան-Սթէֆանոյի զբօսավայրը, որ Մարմարայ ծովուն վրայ կը տարածուի։ Այդ սիրուն դաշտը հովանաւորեալ է ալեւոր ծառերէ, և անոնց մրմունջը յարատեւ պատմութիւնն է գոգ-

ցեռ այն նշանաւոր պատմական արկածից որոնց ականատես եղան իրենք։ Ծառոց շքոյն ներքեւ ընդարձակ աւազաններ իրենց խաղաղ ջուրերը կը տարածեն, և հո՛ն ի խաղ կը մտնեն թափառական անհամար տերեւներ՝ երիտասարդ և փախչոստական սերունդ ալեւոր ծառաստանին Հոյլք թռչնոց կ'ապաստանին այդ տերեւազարդ շարժուն շէնքերուն մէջ, ծառոց խորհրդաւոր բարբառին միացնելով իրենց քաղցրալուր վանկերն ու յօրինելով սիրոյ ներդաշնակութիւնը։ Նուագ և թռիչ թռչնոց յարատեւ կենդանութիւն կը կազմեն այդ ծառաստանին մէջ որ նախասահմանեալ է լինելու բոյն անմեղ զբօսանաց։

Մինչ խուռներամ բազմութիւն մի մարդկանց, կանանց և տղայոց կը խռնին դալարեաց վրայ իրենց խնջոյքը կատարելու, երգելու և պարելու համար, յանկարծ կը լսուի մօտակայ պայթիւնը հրացանի մի որ կ'ուղղուի ընդդէմ անմեղ թռչնոց՝ երկիւղ ազդելով խաղաղասէր հանդիսականաց։

Արեգակն ամառն ի բուն պայծառ ճառագայթներովը փայլելէ յետոյ, և բնութեան վրայ տարած յաղթանակէն յոգնած, թանձր ամպերով կը վարագուրէր իւր փայլուն երեսը։ Ծառերը՝ դալկահար ու կորագլուխ իրենց անցեալ երիտասարդութիւնը կ'ողբային, մինչ իրենց ոտիցն առջեւ դօս տերեւները՝ որք երբեմն լուսով և կեանքով թրթռացած էին, հովուն խաղալիք եղած կը հալածուէին իրենց բնիկ ոստէն հեռու, ի սպառ անհետանալու համար զերթ օրհասական պանդուխտք։

Երբ դաշտն Ֆլորիայի՝ աշնանային տխրաբերանութեամբ համակուած, կ'ողբայ իւր կորուստեալ թարմ դալարեաց և զարմանազան ծաղկանց վրայ, յայնժամ խուռներամ զինեալ բազմութիւն մ'որսորդաց սոյն վայրէն անցնելով որոտացող կենդանութիւն մի կուտան իրենց շուներուն հաջիւններովն ու հրացաններուն պայթմամբը։

Գերուկ լորամարգը մինչ օդին մէջ իւր ճարտար և օձապտոյտ թռիչը կը փորձէ յաղթանակի ճիչեր արձակելով շուրջ, ահա զարնուած անգութ որսորդին գնդակէն՝ իւր երգն կ'ընդմիջէ ու բարձրէն գլորելով դաշտին չորցած խոտերուն մէջ կ'իյնայ։ Շուները զուարթ աղաղակներով թռչնոյն մահը կ'աւետեն իրենց սեգ տիրոջն որ խրոխտալով գետնէն կը վերցնէ իւր աւարը, ու նոյնչափ կը փառաւորուի որչափ մեծ յաղթութեան մի վրայ։

Ուրեմն կիրակի աշնանային գեղեցիկ բայց մելամաղձային առաւօտ մի իբր քսան հրաւիրեալք մասնաւոր կառքերով մեկնեցան Բերայէն Պոլիս երթալու համար, ուսկից շոգեկառք մըտնելով հասան ի Ֆլորիա։

Ամենքն առաւել կամ նուազ զուարթութեամբ դաշտին այլ և այլ մասանց մէջ շրջագայեցին, վայրիկ մի իրարմէ հեռացան զանազան ճամբաներէ իրարու միանալու համար դարձեալ խնդալով և խօսելով։ Տիկին Աբգարեան աղու կամ խիստ նայուածքով կամ գրգռիչ բառով յոյս մի կ'ոգեւորէր կամ կը փարատէր։ Տիկնոջ այդ ընթացքը նախանձորդներու մէջ եղած հակառակութիւնը կամ նախանձը վառ

պահելու դիտաւորութեամբ էր պարզապէս։

Արաքսիա ծառի մի ներքեւ նստած էր երկու աշակերտուհեացն հետ առանց այդ ընդհանուր շարժման մասնակցելու, մտածելով թէ գուցէ տհաճոյ լինէր տիրուհւոյն իւր հրաւիրելոց ընթացքին հետեւելովն։

Երիտասարդներէն ոմանք նկատելով հրաշագեղ գեղեցկութիւնը աղջկան ինչպէս և համեստ ու վայելուչ վարմունքը, մօտեցան աստիճանաբար անոր ու սկսան հետը խօսակցիլ։ Վարժուհին՝ առանց զանոնք քաջալերելու և սակայն առանց անքաղաքավարութիւն մի գործելու, աղնիւ բայց համառօտ կերպիւ պատասխանեց, և օգուտ քաղելով վառվռուն Արմինէի խաղերուն յարուցած աղմուկէն, թողուց երիտասարդներն ու ոչ եւս անոնց մօտեցաւ, իբր թէ աշակերտաց վրայ մօտէն հսկելու դիտաւորութեամբ։

Ներսէս առանց օրիորդին քովն երթալու կը դիտէր զայն ի հեռուստ։ Երբ երիտասարդները շրջապատեցին զվարժուհին՝ նախանձու խայթուածք մ'զգաց, ինչպէս և սիրտ ունի անոր հեռանալը նշմարելով, ու ինքնիրեն զարմացաւ այդ տարօրինակ զգացմանց վրայ։

Իսկ երիտասարդներէն մին՝ ի վրէժխնդրութիւն տիկնոջ բռնաւոր ընթացից իւր նկատմամբ, յարմար առիթ դատեց արտասովոր հիացում մի յայտնելու օրիորդին շնորհաց ինչպէս և անոր խօսակցութեան եղանակին վրայօք, և այսպէս յաջողեցան սէգ կնոջ նախանձը շարժելու։

Ի խոր խայթուելով այդ գովասանութիւնքն

լսելով՝ այլագունեցաւ, ակռաներովը շրթունքը չարչարեց և ապա արհամարհոտ եղանակաւ մ'ըսաւ Տիկինը.

— Կը զարմանամ որ կը խոնարհիք վարժուհ-ւոյ մի վրայ աչք դարձնելու։

— Կը կարծէ՞ք, պատասխանեց երիտասարդը, թէ կին մի շնորհալից ու ախորժելի չէ վարժուհի լինելուն պատճառաւ։ Ընդհակառակն աղջիկն այն որ իւր աշխատութեամբը կ'ապրի նոր փայլ մի կ'աւելցնէ անձին։

— Գուցէ, ըսաւ սրտմտեալ կինը, ձեզ նման անձանց համար վարձկանի վիճակը հրապոյր մ'ունենայ, իսկ իմ մասիս կը խոստովանիմ որ մեծութեանց և ճոխութեանց մէջ ապրելու վարժ անձինք պարզապէս կարեկցութիւն կրնան զգալ, և պատառ մի հաց հայթհայթել անոնց՝ որպէս զի անօթութենէ չի մեռնին։

Երիտասարդը սաստիկ բարկանալով այդ ուղղակի ակնարկութենէն իւր հաւեստ ընկերական վիճակին, ըսաւ բորբոքելով.

— Տիկի՛ն, խոստովանեցէք սակայն որ ձեր շնորհած հացի պատառը ոչ թէ արդահատական փափուկ զգացումէ յառաջ եկած է, այլ պարզապէս վարձատրութիւն է այն թանկագին խընամոց համար որ օրիորդը կը մատուցանէ ձեր զաւակաց։

— Սպասաւորուհիներէս առաւել ի՞նչ կը գործէ նա արդեօք։

— Զարմանալի՛ նմանութիւն։ Ի՞նչպէս կ'ուզէք, Տիկին, որ անուս գլուխ մի նոյնչափ օգտակար լինի որչափ մշակուած միտք մի և սիրտ

մի որք տղայոց թէ՛ մտաց և թէ՛ սրտին ուղղութիւն կուտան։

— Եթէ, յարեց Տիկին Աբգարեան, եւս առաւել բորբոքելով, եթէ դաստիարակութիւնն այդչափ օգտակար ինչ լինէր՝ պէտք չէր որ այդ աղջիկը հրամանատարութեանս ենթարկուէր իբրեւ աղախին։

— Տիկի՛ն, ուսմունքը հարստութեան դուռ չի բանար միշտ. այլ զմարդ կ'ազնուացնէ, անոր սիրտը կը կրթէ, միտքը կը բարձրացնէ, և զգօն ու խելացի անձանց համարման արժանի կ'ընէ։

Տիկինն այդ խօսքերուն մէջ իւր ուսման չափաւորութեան ուղղակի ակնարկութիւն մի նշմարելով կը պատրաստուէր դառնապէս պատասխանելու՝ երբ դիտելով թէ վարժուհին քանի մի քայլ հեռու նստած՝ երիտասարդի մը հետ կը խօսակցէր, բոլոր իւր սրտմտութիւնը անմեղ աղջկան վրայ թափելով ըսաւ.

— Օրիո՛րդ, գքեզ հոս բերած եմ որպէս զի զաւակաց ծառայես և ոչ թէ երիտասարդաց հետ խօսակցիս։

Աղջիկը չանթահար եղած այդպիսի անակնկալ ու անիրաւ կշտամբանքէ որ զիւր արժանապատուութիւնը կը քարկոծէր, ոտք ելաւ և մեծանձն եղանակաւ մ'ըսաւ.

— Տիկի՛ն, կարծեմ թէ տղայոց նկատմամբ պարտազանց չեմ գտնուած քանի որ անոնք իմ քովս են. իսկ եթէ այս պարոնին քանի մի խօսքերուն կը պատասխանէի՝ բնական հետեւանք է այն ակնածութեան զոր հարկ է ինձ զգալ նկատմամբ այն ընտանեաց որուն հետ կը բնակիմ։

— Մի՛ մոռնար սակայն, ըսաւ գոռոզ կինը, որ քու պաշտօնդ տանս մէջ սպասաւորել է և ոչ թէ հիւրերս մեծարել. այդ վերջին հոգը ինձ կը պատկանի միայն։

Ներսէս՝ ի լուր այդ արհամարհոտ բառերուն իւր մօրուին, զգաց որ արիւնը գլուխը կ'ելնէր, նկատելով մանաւանդ յուզեալ վիճակը վարժուհւոյն՝ առաւել եւս բորբոքեցաւ և Տիկնոջ մօտենալով ըսաւ դառնութեամբ.

— Տիկի՛ն, իրաւունք չունիք այդպիսի անարգանօք վարուիլ օրիորդին հետ։ Նա ձեր տունը եկած է իբր դաստիարակ և ոչ իբր աղախին. ապացոյցն ալ այն է որ ձեզ ընկերակից և սեղանակից է. հետեւապէս իրաւունք ունի ձեր հիւրերուն հետ խօսակցիլ ցորչափ վայելչութեան կանոնները կը ներեն։ Իսկ այս մասին կրնամ ապահովել զձեզ թէ օրիորդն ամենայն արժանապատուութեամբ վարուեցաւ մինչեւ ցարդ։

Տիկնոջ արիւնը սկսաւ եռալ երակացը մէջ նկատելով թէ Ներսէս այդչափ եռանդեամբ կը պաշտպանէր զվարժուհին։ Անկարող լինելով անոր վրայ արձակելու գոռոզութեան ու դժգոհութեան հարուածները, կռնակը դարձնելով հեռացաւ մրմռալով հետեւեալ խօսքերը,

— Զգիտէի թէ այս անամօթ վարժուհին այսչափ լաւ սորված էր երիտասարդները շահելու արուեստը։

Այդ նախատական բառերն ամենուն իմանալի եղան։ Արաքսիայի դէմքը կարմիր ներկուեցաւ։ Իսկ Ներսէս արձակեց իւր մօրուին արհամար-

հանաց ակնարկ մի զոր չտեսաւ նա սակայն. և ապա օրիորդին դառնալով նայեցաւ անոր այնպիսի զորովով որ կարծես թէ փոխարինեց զկոյսն նոյն պահուն կրած բոլոր հալածանացն համար։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Բարեբաղդաբար ոպասաւորին գալուստը նախաճաշը պատրաստ լինելն իմացնելու համար տարբեր ուղղութիւն մի տուաւ շփոթ մտաց։ Ամենքը ստամոքսին անհրաժեշտ տուրքը մատուցանելու պէտքն զգալով՝ դիմեցին դէպ ի ընդարձակ սեղանն որ դարբեաց վրայ կը տարածուէր, և որ արեգական ջերմութենէն հովանաւորուած էր թաւուտ ծառոց շուքէն։

Տիկին Ամդարեան այդ գիւղային կոչունքին ճոխ կերպարանք մի տուած էր արծաթէ ամաններ ու այլ և այլ սեղանի թանկագին սպասներ քաղքէն հետը փոխադրել տալով։ Բազմաթիւ ընտիր խորտիկեր հետզհետէ իրարու կը յաջորդէին, ու սպասաւորաց կարգաւորեալ ծառայութիւնը կը յայտարարէր թէ Տիկինը ատէպ հացկերոյթներ տալու սովորութիւնն ունէր։

Յայդ վայր գտնուող օտարականք որք նոյնպէս եկած էին զբօսանաց օր մ'անցնելու մտօք, զարմացմամբ կը նայէին այդ չափ ճոխութեանց վրայ. և այդ զարմացումը գոհունակութիւն կ'ազդէր Տիկնոջ փառասիրութեան, որով մասամբ կը ջնջուէին ի նա քիչ յառաջ զգացած ցասման հետքերը։

Կերակուրներն, գինին և աչխոյժ խօսակցութիւնք հետզհետէ ընդհանուր կենդանութիւն ազդեցին ամենուն, այնպէս որ իւրաքանչիւր ոք զուարթ բառի զուարթագոյնը յաջորդել տալու կը ճգնէր։ Տիկին Աբգարեան սքանչելի էր իւր սիրուն ձեւերով, նայուածքներով և խօսքերով. վագրուհին տեղի տուած էր նազելի կնոջ որ կը ջանար ուրիշ գեղանուոյ մ'ըրած ազդեցութիւնը ջնջել ի սպառ։

Մանաւանդ Տիկնոջ մասնաւոր ուշադրութեան և քաղաքավարութեան առարկան էր երիտասարդն այն զոր գոռոզ խօսքերովը վիրաւորած էր քիչ յառաջ։ Բայց նա շատ ի խոր խոցուած էր այնչափ շուտ մոռնալու համար արհամարհանաց այդ ցոյցերը։ Եւ որչափ իւր անտարբերութեամբը կը պատժէր Տիկնոջ քաղցր ու ազդու ձեւերը, նոյնչափ այդ քմահաճ արարածը եւս առաւել կը սրէր ղէնքերն՝ երիտասարդին սրտին զօրաւոր սլաք մ'արձակելու համար։

Երկուքին միջեւ լռին մրցում մի կար։ Երիտասարդը կը պաշտէր այդ կինն, ու մինչեւ նոյն վայրկենին շատ անիրաւութեանցն հանդուրժած էր, գանգատած էր, վշտացած էր, վայրիկ մի հեռացած՝ բայց միշտ վերադարձած էր առ նա իւր հաւատարիմ ստրուկ։ Նոյն օրն այդ վիրաւորեալ հոգին մտադիր էր վերջնական կերպիւ հեռանալ այդ հարստահարիչ զօրութենէն, բայց հեռանալ՝ այդ գոռոզ և անխիղճ էակին սիրտը նախանձով չարչարելէն վերջը Արաքսիայի շնորհիւ։

Երիտասարդը թէեւ չէր համարձակեր սեղա-

նի վրայ վարժուհուն խօսք մ'ուղղել՝ անախորժ պատահարի մի տեղի չտալու համար դարձեալ, սակայն խիստ ստէպ ակնարկներն դէպ անոր ուղղեց սքանչացման եղանակաւ մի։ Զայդ ամենայն լաւ նշմարեց Տիկինն։

Այդ վիրաւորեալ երիտասարդին անտարբեր ձեւերը այնպէս սիրելի ըրին զինքն յանկարծ բռնաւոր դեղանուն, որ ուզեց անպատճառ իւր լուծին ներքեւ պահել զայն։ Եւ յաջողելու համար ոչինչ խնայեց. բոլոր իւր զէնքերը շարժեց, ամբողջ գրաւելու զօրութիւնն ի մի կէտ ամփոփեց, լեզուին նոր անուշութիւն, խօսքերուն նոր հրապոյր տուաւ, աչերուն կրկին անդիմադրելի հուր, շարժմանցը տարբեր նազելանք. վերջապէս այնպէս դիւթեց, կաշկանդեց զխեղճ երիտասարդն որ սա անհնարին տրիփով այրիին զդաց վերստին, իբր թէ առաջին անգամի համար սիրած լինէր այդ կինն։

Երբ Տիկին Աբգարեանի սիրտն այդ կողմանէ վերջապէս հանգստացաւ, սկսաւ ուրիշ երիտասարդաց եւս մաս մի շնորհել իւր ժպիտներէն, նայուածքներէն և հառաչանքներէն։ Այդ արուեստաւորեալ արարածին համար բնաւ դըժուարութիւն չկար՝ ըստ քմաց և կամ ըստ բերմանց պարագայից, փափուկ թէ խիստ, տըխուր թէ ժպտուն երեւալու։ Ուստի օրուան մընացորդ մասն անցաւ ծառոց ներքեւ հանգչելով, ասա և անդ շրջելով, խօսելով, երգելով, մինչեւ որ հասաւ վերջապէս ժամն վերադարձի պատրաստութիւններն ընելու համար։

Արաքսիա ճնշող ծանրութիւն մի կ'զգար սըր-

տին վրայ նոյն վայրկենէն որ հրապարակաւ տի-
րուհիէն անգոսնեցաւ։ Իւր արժանապատուու-
թիւնն ոտից կոխան եղած էր, և սակայն ինքն
ոչ այլ ինչ կարող էր ընել եթէ ոչ լռել, համ-
բերել, և գուցէ հանդիսականաց արդահատու-
թեան առարկայ լինել իբր անձ ողորմելի։ Իւր
արիւնը կ'եռար, գլուխը կ'այրէր, արժանա-
պատուութիւնը բողոք կը բառնար. կ'ուզէր նոյն
պահուն թողուլ զամեն ինչ, հեռանալ, վերա-
դառնալ ընտանեացը գոգը։ Բայց յանկարծ ա-
նոնց թշուառ վիճակն աչացն առջեւ ներկայա-
նալով՝ կը տեսնէր անոնց զրկումներն, անոնց
յուսահատեցուցիչ վիճակը, կը յիշէր մօրն հա-
կառակութիւնն աշխատելու սկզբան դէմ, կը
մտածէր թէ նոր ոյժ պիտի տար այդ հակա-
ռակութեան, կը խորհէր իւր ստանձնած փոր-
կարար պաշտօնին վրայ, ու ձեռնթափ կը լի-
նէր, կը մաշէր ընդ մէջ իւր սրտմտութեան և
որդիական պարտականութեանց։

Օրիորդն գրեթէ ուտելիքներէն բան չճաշա-
կեց. և եթէ քիչ մի բան կերած էր բռնագբա-
սիկ կերպիւ՝ անձին ձեւ մի տալու և այլոց ա-
չերէն ծածկելու նպատակաւ էր՝ զգացած ներ-
քին պատերազմը։

Վարժուհին ընդ մէջ երկու տղայոց նստած
էր։ Իրմէ քիչ հեռու էր Ներսէս որ սաստիկ կը
տառապէր օրիորդին տագնապները նշմարելով,
զի սիրահարաց յատուկ նուրբ տեսութեամբը ի-
րեն սիրելի եղած անձին սրտին խորը կը թա-
փանցէր արդէն։

Թէեւ երիտասարդն ամենայն զգուշութեամբ

կը վարուէր Արաքսիայի հետ սեղանի ժամանակ, խորթ մօրը կասկածները չգրգռելու համար, այսու հանդերձ իւր գաղտագողի նայուածքներովը վշտացելոյն կարեվէր հոգին կ'աշխատէր մը խիթարել յայտնելով իրեն թէ յինքն ունէր բարեկամ մի։ Իսկ Արաքսիա երախտագիտութեամբ կը նայէր անոր յիշելով մանաւանդ թէ քիչ յառաջ որպիսի քաջութեամբ զինքն պաշտպանած էր։

Տիկին Աբգարեան եւս զայդ չէր մոռցած. ու թէեւ կը լրտեսէր զՆերսէս, սակայն բաւական ազատ վայրկեաններ չունենալով նշմարելու համար անոր զգուշաւոր նայուածքները, ու մասնաւոր կասկածանաց բան չտեսնելով, մակաբերեց թէ Ներսէս զարմանալի անձ մ'էր, և թէ գուցէ ինքնաբերաբար հնազանդած էր իւր սովորական տրամադրութեան աղքատները ջերմաբար պաշտպանելու։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Ցեռ աւարտման նախաճաշի մեկուսացաւ վարժուհին աշակերտուհեացն հետ, և ոչ եւս կարողանալով համբերել, ազատութիւն տուաւ արտասուացն հոսելու։ Երկու տղայք իրենց սիրեցեալ օրիորդին ցաւը նկատելով գիրկը նետուեցան ու երկուքը լալով միաբերան ջանացին զինքը մխիթարել, իւրաքանչիւրն գգալու եղանակին համեմատ։

Ի տես այդ արդահատական ու համակրա-

լից զգացման Արաքսիայուզուելով, զանոնք ուժգին սրտին վրայ սեղմեց, ու արիանալով և աչերը սրբելով ըսաւ.

— Օ՛ն, սիրուն և սիրեցեալ էակներս, չեմ ուզեր որ լաք. այսօր պէտք է ուրախ լինիլ, զուարճանալ և նոր ոյժ առնուլ ձեր դասերը լաւ եւս շարունակելու համար։ Ես ոչինչ ունիմ, նայեցէ՛ք ես եւս ուրախ եմ։ Ոտք ելաւ, առաւ երկու մանկունքը ու սկսաւ շրջագայիլ դէմքին շինծու զուարթութիւն մի տալով։

Ծառի մի ներքեւ առանձնացած էր Ներսէս իր թէ քնանալու համար, և այսպէս ամեն ընկերութենէ հեռու էր։ Իր սիրտն եւս կ'արիւնէր Արաքսիայի կրած նախատինաց համար, ու կը բաղձար մօտենալ անոր ըսելու համար,

— Օրիո՛րդ, ես քու պաշտպանդ եմ, բնաւ երկիւղ մ'ունենար։

Բայց այդ վարմունքը խոհեմութիւն չհամարելով, հոգին վրայ ընկողմանեալ մնաց, ու կը տեսնէր զվարժուհին ինքն անտես մնալով։ Ուստի նշմարելով սրտաշարժ տեսարանը զոր կը ներկայէին տղայք հանդերձ օրիորդաւն, բնազդմամբ ոտք ելաւ յանկարծ ու սուրաց դէպ այն կողմն ուր կը գտնուէին մեր երեք անձինքն։

Անմիջապէս որ երկու քոյրերն տեսան իրենց եղբայրն, անոր ընդ առաջ երթալով՝ անհամբեր Արմինէն ըսաւ.

— Գիտե՞ս, եղբայր, մեր սիրելի օրիորդը կ'արտասուէր քիչ յառաջ. մեր սիրտն այնպէս ցաւեցաւ որ մենք եւս սկսանք լալ իրեն հետ։

Իսկ Աղաւնի անխօս ու աչերը գետինը յա-

ռած՝ այդ գրոյց հաստատեց արտասուքի շիթով մի որ իւր աչերէն վար գլորեցաւ։

Արաքսիա նկատելով թէ իւր տկարութիւնը կը մատնուէր այդ երկու անմեղ մատնիչներէն, այլագունելով ըսաւ.

— Իրօք յանցաւոր եմ երկու հրեշտակացս ուրախութիւնը խափանած լինելուս պատճառաւ։ Բայց պիտի ջանամ քաւել լիովին իմ յանցանքս։

Նկատելով թէ իրենց սիրելի վարժուհին առանձին չէր, և յորդորանօքն Ներսէսի՝ տղայքը քանի մը քայլ հեռացան դաշտային ծաղկանց փունջ մի կազմելու դիտաւորութեամբ։ Աղաւնին ծռած էր դալարեաց վրայ, բայց հոգին այլուր էր. աչերն խոնաւ էին, դէմքին վրայ տխրութեան հետք մի կար։ Արաքսիայի ցաւոց մանկական հոգի մի երկարաձիգ արձագանգ կուտար։

Իսկ Արմինէ ցնցուեցաւ, զգածուեցաւ, լացաւ իրօք, բայց մէկ վայրկենի մէջ տխրութեան ամեն հետք ջնջուած էր։ Ինքը դարնան ծաղիկն էր որ աշնանային ծաղիկը կը քաղէր։ Եռանդեամբ կը խօսէր իւր քրոջ, ցոյց կուտար թիթեռնիկը՝ որ իրեն նման ընդոստ պարով կ'երթար կուգար մէկ ծաղկէն միւսը, իւր յեղյեղուկ յօժարութիւնները մէկ բոյսէն միւսին տանելով։ Ցոյց կուտար վաղուկ ջուրերն ուր թռչունը՝ հանգոյն իրեն, կ'երթար զանոնք գրգռելու իւր թեւերովը։ Ցոյց կուտար ծառերը, երկինքը, մարդիկը, կենդանիները. վերջապէս լեռուն, աչերը, մարմինը, ամեն ինչ կը շարժէր։

Աղաւնի կը լսէր քրոջը ձայնը, կը նայէր

ծաղկանց բայց սեւ էր իւր հոգին, միտքն այլ-
ուր էր։ Կը յիշէր անընդհատ արտասուքը իւր
պաշտելի վարժուհւոյն, և եթէ կարող լինէր ալի-
տի զայրանար մօրն ընդդէմ նոյն իսկ որ պատ-
ճառած էր զայդ վիշտ։

Տղայք մեռաց զարմանալի նրբութիւն ունին.
կ'ըմբռնեն ակնթարթով, կը հասկնան ինչ որ ի-
րենց չէ բացատրուած։ Թէեւ Աղաւնին կ'իմա-
նար թէ իւր մայրն վիրաւորած էր զօրիորդն,
բայց համայն սէր և քաղցրութիւն լինելով ան-
կարող էր սրտմտելու։

Երբ Ներսէս առանձին մնաց երիտասար-
դուհւոյն հետ կարծես լեզուն պապանձեցաւ։
Եկած էր հոն, տղայքը հեռացուցած էր խօսե-
լու նպատակաւ, և ահա բառ մ'անգամ արտա-
սանելու անկարող էր։

Արաքսիա՝ ոչ նուազ շուարեալ քան զերիտա-
սարդն, ինքն եւս լուռ կը կենար։ Բայց այդ նե-
ղացուցիչ վիճակին վերջ տալու՝ և մանաւանդ
երախտապարտ սրտի մի պարտքը լրացնելու հա-
մար ըսաւ.

— Պարո՛ն, թոյլ տուէք ինձ հաղորդել ձեզ
բոլոր իմ շնորհակալիքս ձեր դիւցազնական
պաշտպանութեան համար ինձ նկատմամբ, երբ
դժբաղդաբար տիրուհւոյս հարուածոց ենթար-
կուեցայ։ Գիտեմ որ աղքատը բարեկամ չունի,
ու արդարեւ մեծ հոգի մի միայն հրապարակաւ
կրնայ պաշտպան կանգնիլ անոր։

Այդ խօսքերն ուժգին ցնցեցին զՆերսէս,
գտաւ վերստին բոլոր իւր կորովը, և արժանա-
ւոր կերպիւ ու ծանր եղանակաւ պատասխանեց.

— Օրիո՛րդ, այս պարագային մէջ ըրածս ոչինչ բան մ'է ըստ ինքեան։ Կը խնդրեմ ձեզմէ չի խնայել զիս մէն մի անգամ որ ինձ պէտք կ'ունենաք։ Ինձ համար աղքատ կամ հարուստ չկայ, մարդ կայ միայն. չարը կ'արհամարհեմ, ազնիւը կը յարգեմ պաշտելով։ Դո՛ւք, օրիո՛րդ, ազնիւն էք, որով պաշտամանցս իրաւունք ունիք։

Վարժուհին կարմրեցաւ, ու առաւել աչերովը քան թէ խօսքերովն յայտնեց իւր շնորհապարտ սրտին զգացումները։

Նոյն միջոցին երկու տղայք իրենց կը մօտենային։ Արմինէ կ'ընթանար ձեռքերն լի ծաղկօք և զանոնք երկու մասի բաժնելով՝ մին եղբօրը տուաւ, իսկ միւսը՝ օրիորդին։ Բայց Աղաւնի ծանրաքայլ կը յառաջանար միայն փոքրիկ ծաղկի փունջ մի հետը բերելով, և զայն մատոյց իւր վարժուհւոյն տխուր աչօք նայելով անոր։

— Ինձ ոչի՞նչ կը բերիս, ըսաւ երիտասարդը, ժպտելով։

— Դո՛ւ թշուառ չես, պատասխանեց տղան, ու Արաքսիայի նայելով աչէն արտասուք մի գըլորեցաւ դարձեալ փափուկ այտիցը վրայ։

Օրիորդն զինքը բազկացը մէջ առնելով ըսաւ.

— Ո՛վ իմ հրեշտակս, զուարթացի՛ր, ես ապերջանիկ չեմ։

Ներսէս այնպէս ի գութ շարժեցաւ, այնպէս յուզուեցաւ որ ինքզինքը մոռնալով գոչեց.

— Ո՛վ իմ կրկին անգամ սիրելի Աղաւնիս, այո՛ իրաւունք ունիս պաշտելու այս օրիորդը։

— Հապա ե՛ս, բողոքեց միւս գողտրիկ էակը, մի՞թէ ես չեմ պաշտեր զինքը։

— Այո՛, դու եւս անշուշտ կը սիրես զնա, սիրուն քուրիկս, ըսաւ երիտասարդն։ Սիրեցէ՛ք զինքն և ես զձեզ կրկին սիրովս պիտի փոխարինեմ։

Ներսէս զղջաց արդէն այդչափ եռանդեամբ խօսած լինելուն համար, ու հեռացաւ ի հապճեպ թէ՛ իւր յուզմունքը ծածկելու և թէ՛ իւր մօրուին ուշադրութիւնն իւր վրայ չգրաւելու մտօք. զի նոյն միջոցին Տիկին Աբգարեան հիւրերովը կը շրջագայէր, և յառաջ քան անոր վերադարձին հարկ կը համարէր երիտասարդն իւր նախնի վայրն դառնալու՝ իբր թէ հանգստեան պէտքն արդարացնելու դիտաւորութեամբ։

Արաքսիա այնչափ յափշտակուած էր լսածէն ու տեսածէն որ անկարող էր խորհելու և զգացմանցը չփոթութիւնն իմանալու։ Բայց հետզհետէ ուշաբերելով՝ Ներսէսի մէն մի բառերը կրկին ու կրկին անգամ յիշեց, երկրորդեց ինքնին, ամեն խօսքին ճիշդ նշանակութիւնն ուսումնասիրեց, և ամեն մէկը սրտին խորը կարգաւ և անջնջելի կերպիւ գրոշմեց։ Իւր կրած արհամարհանքը, ցաւը, թափած արտասուքը, վերջապէս զամեն դառն յիշատակ կորոյս այդ վայրկենին անբացատրելի քաղցրութեան մէջ։ Իւր սիրտը կը գոչէր իրեն թէ սիրուած էր այդ ազնիւ, գեղեցիկ և խելացի երիտասարդէն։ Տարակուսանաց տեղ կը մնա՞ր արդեօք երբ նա այնչափ ազնուութեամբ զինքը պաշտպանած էր, ու նոյն միջոցին դեռ այնչափ քաջալերած էր զտղայս

զինքը սիրելու։ Յայտնի կը լինէր թէ մանկանց միջոցաւ իւր զգացումներն ուզած էր յայտնել։

Մինչդեռ այդ հեշտալի տպաւորութեան ներքեւ էր, ահա սեւ կասկածը իւր երանութեան լոյսը մթագնեց։ Ո՞ գիտէ, մտածեց վարժուհին, թէ այդ երիտասարդին գեղեցիկ վարմունքն արդահատութեան զգացում չէ պարզապէս։ Բ՛ւչ յառաջ ինքն համայն երանութիւն էր, և նոյն պահուն կարծես ջղերը քարացան, սրտին բաբախումները դադրեցան, ու ինքն ալ արձանացաւ սրտին սառոյցներուն մէջ։ Բայց մեծ ճիգ մ՛ընելով այդ մահացուցիչ վիճակէն դուրս ելաւ և գոչեց.

— Ո՛հ, կ՛ուզեմ վայելել այս հեշտագին վայրկեանը, կուզեմ հաւատալ որ սիրուած եմ, կուզեմ ապրիլ աննման կեանքով բոպէ մի յաւիտենական ցաւեր կրելու համար յետոյ։ Այո, կուզեմ հաւատալ հալածելով ամեն տարակոյս։

Ապա յափշտակութեան մի քանի վայրկեաններէ վերջը մօտեցաւ տղայոց որք քանի մի քայլ իրմէ հեռու կը գտնուէին, բուռն եռանդեամբ առաւ բազկացը մէջ զԱղաւնին՝ որուն համակրական արտայայտութեանց կը պարտէր գլխաւորապէս Ներսէսի գորովանաց ցոյցերը։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Օրն կը յառաջանար և Տիկին Աբգարեան բնաւ յօժարութիւն չէր յայտներ վերադարձի նշան տալու, այնչափ ինքն գոհ կ՛երեւար ծա-

ռոց, բնութեան և երիտասարդաց ընկերութենէն։ Մերթ միոյն թեւն առնելով պտոյտ մի կ'ընէր և մերթ միւսինը։ Ոչ կը ձանձրանար և ոչ ալ կ'ուզէր վերջ տալ իւր զուարճութեանց. եթէ կարելի լինէր արեգակն իսկ պիտի կասեցնէր։

Բայց վերջապէս հասաւ ժամն վերադարձին, զի Ներսէս բռնաբարեց կերպով իւիք Տիկնոջ կամքն, յիշեցնելով անոր թէ խոհեմութիւնը ձեռքէ թողլու չէ աշնան եղանակի մէջ, և թէ հարկ է ճամբայ ելնել յառաջ քան արեւուն մայրը մտնելը։ Տիրուհին ակամայ հնազանդեցաւ, որով քիչ մի ետքը ամենքը հանգստարէն նստած էին ընդարձակ նաւակին մէջ զոր չորս առոյգ նաւավարք յառաջ կը վարէին ի ձայն երգոց արանց և տիկնանց։

Այդ ընդհանուր ուրախութեան ցոյցերուն մէջ Արաքսիա և Ներսէս լուռ կը կենային միայն։ Կոյսն խռովայոյզ՝ կը ջանար ցորչափ պարկեշտութիւնը կը ներէր իրեն, կարդալ ըստ կարելւոյն, երիտասարդին աչաց մէջ իւր կեանքը կամ մահը։ Եւ մէն մի անգամ որ երկիւղած աչերն կ'ուղղէր դէպ անոր որ իրեն հանդէպ նըստած էր, կը հանդիպէր նայուածոցն որք անբացատրելի պերճախօսութիւն մ'ունէին, ու կը հաստատէին սիրուած լինիլն անկէ։ Արաքսիա այնպիսի անբացատրելի վայելք մի կ'զգար որ թուէր իրեն թէ իւր գլխոյն վրայ տարածուած կապոյտ անծիրը, ինչպէս և իւր գոգին մէջ գինքն որորող հեղուկ անսահմանութիւնն անբաւական էին իւր հոգւոյն խանդը բովանդակելու։

Արեգակն իբր հսկայ բոցավառ, ջրոց մէջ կ'իջնար հանգչելու համար և ծոնն թուէր իբր ոսկեփայլ մեծատարած անկողին յարդարուած ի պէտս ցերեկուան իշխանին որ հետզհետէ ամփոփուելով իւր փայլուն մեծութեան մէջ, նընջեց յետոյ ջրոցն ի գոգ ինքզինքը ծածկելով։

Լուսինն երեւցաւ երկիւղալից, մերթ թեթեւ և մերթ թանձր ամպերէ քօղարկուած, իբր թէ ապահովուելու համար թէ զինքը նրսեմացնող իշխանն ոչ եւս յերկինս կը տիրապետէր, և թէ ազատ էր ինքն եւս զերթ աստեղաց թագուհի, արշաւել երկնից գիշերամած անջրպետաց մէջ։

Կը սուրայր նաւը միշտ արագընթաց իբր նետ մի ալեաց մակերեւութին վրայէն։ Բայց ծոնն որ հարթայատակ էր, սկսաւ հետզհետէ ելևէջներ ունենալ, ու աստեղազարդ երկնից երեսը պղտորեցաւ։

Նաւավարաց աչերն դէպ ի վեր կ'ուղղուէին անդադար, իրենց նայուածոց մէջ անհանգստութիւն մի կար զոր ի զուր կը ջանային ծածկել։ Իրենց թիավարութիւնն այնպիսի արագութիւն մ'ստացաւ որ յայտնի էր թէ կ'ուզէին քաղաք հասնիլ յառաջ քան փոթորկին պայթումն։

Ամպերն ատելիանաբար իրարու մօտենալով սեւ պատնէշ մի յօրինեցին ընդդէմ աստեղաց, ու այդ պատնէշներն հետզհետէ թանձրանալով սպառնացող մութ զօրութիւն մի կազմեցին։ Հողմն որ մինչ նոյն պահուն բաւական սանձուած էր, իւր ուղղութիւնը փոխելով յանկարծ հիւսիսային կողմանէ սրարշաւ եկաւ, և իբր թէ

իւր հանգոյցները ջախջախելով՝ գազանի նման սկսաւ սուլել, վազել, ջուրերը տակն ու վրայ ընել, ու խնդալ ահարկու կերպիւ ի տես իւր չարագործութեանց։

Երկինք կ'երկնէր որոտալով, ու գալարելով աղիքներն ահագին ճայթմամբ ծնունդ կուտար շանթին՝ որ իբր հրային հրէշ նորածին, ծովուն կատաղի կոհակաց մէջ կը վիժէր խորասոյզ անհետանալով։ Ալեկոծութիւն մ'էր բոլոր իւր սաստկութեամբը։

Նաւակն՝ իբր փրփրադէզ խաղալիք մռնչող կոհակաց, կարծես մերթ ծովուն խորը կ'իջնէր, և մերթ ջրոց ահարկու բարձրութեան վրայ ելնելով՝ վերստին ծովուն անդունդը թուէր թաղուիլ։

Նաւավարաց ճիչերը, յուսահատական բացագանչութիւնները, մթութիւնը, անապատէն վիճակ մի, մահուան տեսարանը, վերջապէս ամեն ինչ սարսափ կ'ազդէր նաւուն մէջ գտնուող անձանց։ Ոմանք յուսահատօրէն ճիչեր կ'արձակէին, ոմանք կուլային, ոմանք կ'աղօթէին, և ամենքն իրենց վերջին վայրկեանը հասած կը համարէին։ Երկու տղայք մանաւանդ իրենց սիրելի օրիորդին կը պլլուէին լալով և իրմէ օգնութիւն խընդրելով։ Աղջիկն չունէր բառ մխիթարութեան դի ինքն նոյն բանի կը կարօտէր։

Բայց ահագին կոհակ մի այնպէս գահավիժեց զնաւակ ծովուն մէջ որ ամենքը միաբերան աղիողորմ ճիչ մ'արձակեցին իբր մեռաս բարեաւ կենաց։ Սակայն նաւը վերստին ջրոց գագաթն ելաւ իբր թէ հրաշիւք։

Յայնժամ Արաքսիա բռնելով աղերսագին Ներսէսի ձեռքերը, լալեօք խնդրեց իրմէ, որ եթէ այդ փոթորկէն կարողանար ազատել շընորհիւ լողալու կարողութեանն, երթայ իւր ծընողաց և յայտնէ անոնց թէ Արաքսիա իրենց նուիրեց իւր վերջին մտածութիւնները։

Նոյն պահուն կրկին անգամ նաւակն թուեցաւ ծովուն ալեաց մէջ իջնալ. դարձեալ աղիողորմ ճիչ մ'ելաւ, և դարձեալ նաւն վեր բարձրացաւ։

Ներսէս որ օրիորդին ձեռքը բռնած էր այդ վտանգի վայրկեաններու մէջ, զայն սեղմելով սրտին վրայ ըսաւ.

— Կամ միատեղ փրկուէինք և կամ միատեղ մեռնինք։

Ահաւոր էր սիրոյ այդ դաշնադրութիւնը մահուան վտանգին մէջ։

Հուսկ յետոյ վերջացաւ մահու և կենաց զարհուրելի խաղը գրեթէ կէս ժամ տեւելէ վերջը։ Հողմն՝ յոգնած էր ծովուն ալիքները խառնակելէն և գալարելէն, ու բաւականացած՝ ազդած սոսկմանէն ու սրտայուզութենէն, հանդարտեցաւ վերջապէս։ Ծովն որ վայրագօրէն կը մռընչէր ու փրփուր կը ժայթքէր, նոյն վայրկենին հեզահամբոյր կը մրմնջէր նաւուն կողերը փայփայելով, իբր թէ ի նշան զղջման իւր գործած անօրէնութեանց համար։ Իսկ երկինք յետ որոտմանցն և պայթմանց կը հանգչէր լռութեամբ։ Մինչ լուսինն որ դէմքը ծածկեր էր կարծես չուզելով իւր վճիտ նշոյլիւքն աւերման ու կործանման տեսարանաց գործակից լինել,

փայլեցաւ ամենայն գեղեցկութեամբ ամպերն իրմէ արտաքսելով։

Երբ ամեն ինչ հանդարտեցաւ և սրտերը հանգչեցան ամենքը միատեղ փառաբանութեան ձայներ արձակեցին։ Ոչինչ այնքան հոգիները կը միացնէ որչափ մեծ վտանգը. և երբէք կեանքըն այնչափ հեշտագին չ'երեւար որչափ մահը խիստ մօտէն տեսնելէն վերջը։

Յորժամ Տիկին Աբգարեան հանդերձ ընտանեօքն հասաւ իւր տունն արդէն գիշերը յառաջացած էր և Պ. Աբգարեան անտանելի մտատանջութեանց ենթարկուած։ Փոթորիկը, խաւարը, բոլոր սիրելեացը վտանգի մատնուած լինելուն գաղափարը զինքը մահուան դուռը հասուցին։ Բայց երբ տեսաւ իւր կինն հանդերձ զաւակօքն, սիրտն անհնարին տագնապէ ազատեցաւ։

Հանդարտելէն անմիջապէս վերջը՝ մարդս բընական բերմամբ կը փափաքի կշտամբանօքն առ հեղինակն իւր չարչարանաց կրած տառապանացը վրէժն առնուլ։ Բայց այդ մխիթարութիւնն ներելի չէր Պ. Աբգարեանի, թէեւ մտադիր եղած էր մանաւանդ զկինն յանդիմանել։ Անմիջապէս որ տեսաւ զնա՝ կորոյս իւր քաջութիւնն և շատացաւ իւր գոհունակութիւնն յայտնելու իրենց յաջող վերադարձին համար։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Նոյն գիշերն Ներսէսի համար անհնարին եղած էր ննջելը, զի Արաքսիայի պատկերն աչացը ներկայ էր անընդհատ։ Վերահասու եղաւ

վերջապէս իւր սրտին բուն վիճակին, և զգաց թէ բուռն սիրով կը սիրէր զկոյսն շնորհալի։ Բայց ինչ որ կը տագնապեցնէր զինքն իւր անորոշ վիճակն էր որուն կուզէր ընդ փոյթ վերջ դնել։ Օրիորդին սիրտն ազա՞տ էր արդեօք, և եթէ ազատ՝ փոխադարձ զգացմամբ պիտի փոխարի՞նէր իւր սիրտը։ Այս այլ և այլ մտածութիւնքն գիշերուան մեծ մասը տառապեցուցին զինքը։ Եւ երբ վերջապէս միտքն ու սիրտը յոգնած՝ թմրեցաւ ու քնոյ մէջ քիչ մի հանդարտեցաւ մէկ կամ երկու ժամ, յանկարծ սրտի բաբախմամբ արթնցաւ և նկատելով թէ արեւն արդէն իւր շրջանն սկսած էր, անկողնէն ելաւ, հագուեցաւ փութով ու անմիջապէս պարտէզ իջաւ ուր վստահ էր գտնել զվարժուհին։

Տիկին Աբգարեան մասնաւոր խնամօք զարդարել տուած էր իւր Բերայի տան պարտէզը։ Թէեւ ընդարձակութեամբն զարմանալի չէր այն, սակայն ծառաստաններովը, կանաչ թանձր հովանիներովն ու մասնաւոր ճաշակաւն, սքանչելի էր ու ամեն հիացման արժանի։

Ամեն առաւօտ վարժուհին պարտէզ կը տանէր տղայքը մաքուր օդ ծծել տալու և սակաւ ինչ մարմնամարզութիւն ընել տալու համար։

Նոյն գիշերն Արաքսիա եւս երկար ժամանակ անքուն մնացած էր մտացն ու սրտին մէջ յերիւրելով օրուան և գիշերուան պարագայները, և բիւրիցս երկրորդելով Ներսէսի խօսքերը։ Կը մտածէր թէ տարակուսանաց պատճառ չկար այլ եւս, քանի որ վտանգի ժամանակ նոյն իսկ երիտասարդն իրեն խոստացած էր ապրիլ

և մեռնիլ իրեն հետ։ Թող թէ Ներսէս ազնուասիրտ անձ մ'էր, այլ անհնար էր կեղծել վտանգի ատեն երբ մահն այնչափ մերձ էր։ Այդ ապահովութիւնը կը բաւէր զԱրաքսիան աղջկանց երջանկագոյնն ընելու համար։ Ի՛նչ երջանկութիւն, կենակից լինել այգպիսի անզոյգ երիտասարդի մի որուն սրտին ու մտաց գանձերն գնահատելու համար վեց ամսուան միջոց ունեցած էր անոր հետ նոյն տան մէջ բնակելով։ Կը խորհէր թէ հոգի մի որ այնչափ հաւատարիմ մնացած էր մօր մի յիշատակին, որպիսի՞ հաւատարմութեամբ ուրեմն և հաստատամտութեամբ պիտի սիրէր կենացն ընկերը։

Ասկէ ի զատ վարժուհին ցնծութեամբ կը մտածէր թէ իւր ծնողացը կենաց բարեբաղդութիւնը պիտի հաստատէր, թէ հայրն ոչ եւս իւր մօր մեղադրանաց առարկայ պիտի լինէր երբ ինքն գեղեցիկ վիճակի մի հասնէր, և այս վերջին պարագայն մանաւանդ զինքն անհուն գոհունակութեամբ կը համակէր։

Արաքսիա կը բաղձար արթուն մնալ իւր երանութեան ամեն մէկ մասը հանդարտօրէն վայելելու մտօք գիշերային առանձնութեան և լռութեան մէջ։ Բայց վիշտն ինչպէս երջանկութիւնը զմարդ թմրեցնելով կը յոգնեցնէ, որով վերջապէս քնոյ մէջ իյնալով կը հանգչի և կը վերականգնի։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Առաւօտեան զարթուցն Արաքսիայի բոլորովին տարբեր եղած էր Ներսէսինէն, զի կոյսն արթնցաւ գեղեցիկ յոյսին ժպտելով։ Որչափ հեշտագին է սիրոյ առաջին մաքուր շողը որ կը լուսաւորէ կոյս սիրտը, ուր ամեն ինչ վճիտ է, հաւատք է և վստահութիւն. ուր պատրանքն իւր սեւ դրոշմը չէ թողած, և ուր զգացման անարատ յատակը սիրոյ ակօսը կ'ընդունի առաջին անգամի համար։

Երբէք արեգակն այնչափ զուարթագեղ չէր փայլած աչացն կուսին։ Երբէք կեանքն այնչափ տենչալի չէր թուած և երբէք այնչափ եռանդ չէր զգացած ծնողացը համար աշխատելու և զանոնք գոհ ու երջանիկ տեսնելու։ Արաքսիա կ'զգար թէ գործելու և սիրելու բոլոր հանգամանքն առաւել եւս զօրացած էին, բայց ոչ այնպէս էին սակայն և իւր խորհելու կարողութիւնքն, զի մտացը մէջ անհնարին չփոթութիւն մի կը տիրէր, ու խորհուրդք խառն ի խուռն իրարու կը յաջորդէին։ Երբ սիրտը կը տիրապետէ՝ միտքը երկրորդական դեր մի խաղալու կը դատապարտուի։

Նոյն իսկ տղայոց նկատմամբ կրկին աշխուժիւ համակուած էր վարժուհին, մանաւանդ Աղաւնիի մասին որ առաջի օրէն ի վեր առաւել եւս սիրելի էր իրեն քան զիւր քոյր։

Ուստի անմիջապէս որ արթնցաւ նա՝ քիչ մի ժամանակ աչքէ անցուց վերստին նախընթաց օրուան սիրային պարագայները, և երբ ոսկե-

զօծ երաշներու ընդ երկար գերի լինելն հաստատեց՝ ճիգ մ'ըրաւ ու ելաւ տեղէն։

Կարծես բնազդմամբ առաջին գործն եղաւ Աղաւնիի անկողնոյն մերձենալ, և նորա այտից կարմրութիւնը նշմարելով ինչպէս և չընչառութեան սակաւ ինչ դժուարութիւնն՝ և բիտասարդուհին յուզեալ՝ ձեռքը մանկան ճակտին տարաւ և զգաց թէ սակաւ ինչ ջերմութիւն կար հոն։

Նոյն միջոցին գողտրիկ արարածն աչերը բանալով տեսաւ որ վարժուհին իւր քովն էր ու կը նայէր իրեն անհանգիստ գորովով մի։ Փոքրիկը ժպտեցաւ անոր յայտնելով թէ ունեցածն ոչ այլ ինչ էր բայց գլխու ծանրութիւն և թեթեւ ցաւ մի։

Արաքսիա սակաւ ինչ սփոփեցաւ տղուն այդ յայտարարութենէն և խնդրեց որ օրն ի բուն անկողնոյ մէջ մնայ իբր խոհեմութեան միջոց։ Սիրով հնազանդեցաւ սիրուն էակն, և ահա վարժուհին որ քիչ մի ետքը նստաւ հիւանդին սնարին մօտ հսկողութեան պաշտօնը վարելու համար, հետեւապէս նոյն առաւօտ Արմինէն աղախնոյ մի խնամոց յանձնուեցաւ պարտէզ իջնալու համար։

Ուստի երբ Ներսէս սրտայուզութեամբ կը դիմէր յայդ վայր վերջնական կերպիւ իւր բաղդը վճռելու համար, մեծ եղաւ զարմանքն երբ փոխանակ երիտասարդուհւոյն աղախին մի նշմարեց։ Իսկ Արմինէ ընդ առաջ երթալով եղբօրն, փութաց իմացնել քրոջն անհանգստութիւնն իւր սովորական անհամբերութեամբը։

Ներսէս սուրաց դէպ ի սենեակն հիւանդին, բացաւ դուռը սակաւիկ՝ առանց բնաւ ձայն հանելու, և տեսաւ զօրիորդն որ գորովանօք կը հսկէր աշակերտուհւոյն քունին վրայ։ Ներս մըտաւ ամենայն զգուշութեամբ, և սենեկին մէջտեղ կեցած սքանչացմամբ կը նայէր այն անձնուէր էակին որ մօր պաշտօնը կը վարէր այնքան անկեղծութեամբ։

Բայց թեթեւ ձայն մի լսելով վարժուհին գըլուխը դարձուց և տեսաւ զերիտասարդն որ հիացմամբ իրեն կը նայէր՝ թեւերը կուրծքին վրայ խաչաձեւ։

Այլայլեցաւ, այլագունեցաւ կոյսն, մինչ սիրտը պայթելու աստիճան սաստիկ կը տրուփէր։

Ներսէս անոր շփոթութիւնն նշմարելով ըսաւ.

— Ներեցէ՛ք, օրիո՛րդ, յանկարծական դալըստեանս և այս դիրքիս։ Ձեզ քրոջս անկողնոյն քով տեսած ժամանակս՝ յիշեցի մանկութեանս այն պարագայներն ուր մայրս քունիս վրայ կը հսկէր այնչափ խանդաղատանօք, և սքանչացած կեցայ անշարժ, զի ի ձեզ զմայրս թուեցաւ ինձ պաշտել։

— Պարո՛ն, պատասխանեց Արաքսիա, իւր հանդարտ կերպարանքն առնելով, խիստ հաճելի է ինձ յիշեցնել ձեզ պարագայ մի որ ձեր որդիական սրտին համար կարեւորութիւն ունի. զի գիտեմ արդէն թէ ո՞րչափ սրբանուէր է մայրենի յիշատակը ձեզ համար։

— Եւ արդեօք թոյլ կուտա՞ք ինձ որ նուիրական մեռեալի մի յիշատակը ձեզ նման ազնիւ անձի մի գաղափարին հետ խառնելով, և եր-

կուքն ի մի ձուլելով պաշտամունքս հանապազորեայ առարկան ընեմ։

Արաքսիա յուզմն սաստկութենէն լուռ կը կենար։

— Ո՜հ, գոչեց Ներսէս ցաւելով, ձեր սիրտը տէ՞ր մ'ունի արդեօք։

Վարժուհին նկատելով անոր վրդովմունքն, և ինքն նոյն չափ վրդովելով պատասխանեց.

— Պարո՛ն, սիրտս ապատ է բոլորովին։

— Ներելի՞ է ինձ յուսալ արդեօք թէ ես պիտի լինիմ անոր բացարձակ տէրը։

Աղջկան սիրտն այնչափ ուժգին կը բաբախէր որ բերնէն բառ չէր ելներ։

— Պատասխանեցէք շուտ, աղերսեց Ներսէս, զի այսչափ անձկութիւն բաւ է ինձ արդէն. խօսեցէ՛ք ապատօրէն առանց խնայելու ինձ։

Վարժուհին աչերը վեր առնելով ու քաղցրութեամբ նայելով անոր ըսաւ.

— Պարո՛ն, խիստ մեծ է պատիւն որ կուզէք ընել ինձ։ Խնդրեմ նկատեցէ՛ք ո՞րչափ անհամեմատ կերպիւ կը տարբերին մեր ընկերային վիճակները։

— Սէրն, օրիո՛րդ, կը քանդէ ամեն ընկերային խտրոց, թո՛ղ թէ ձեր դաստիարակութեամբ արժանի էք ամենէն փայլուն վիճակաց։ Նա մանաւանդ այն ընկերային խտրոցք պարզապէս նախապաշարմունք են և ոչ այլ ինչ։

— Քաջութիւն ունի՞ք ոտնակոխ ընելու ընկերային նախապաշարմունքն որ մտքերու վրայ այնչափ կը բռնանան, դո՛ւք, հարուստ երիտասարդ, անշուք վարժուհւոյ մի բաղդակից լինելով։

— Օրիո՛րդ, նախապաշարման խօսք կ'ընէք երբ ձեր վարմունքն ամեն համարման և հիացման արժանի է։ Դո՛ւք փոխանակ չքաւոր ծընողաց բեռ լինելու՝ ընդհակառակն անոնց դառըն վիճակը կ'ամոքէք ձեր աշխատութեամբ ու ծնողաց գուրգուրանաց հրաժեշտ տալով անսիրտ օտարականաց քամահանաց կ'ենթարկէք ձեր փափուկ անձը։ Դո՛ւք կենաց սեթեւեթից ու ճոխութեանց չէք ակնակառոյց, զի փոխան զարդուց մէջ երանութիւն փնտռելու՝ ձեր պարզութեամբը կը փայլիք և գոհ կը լինիք ձեր ծնողաց հանգստութիւնն ապահովելով։ Արհամարհանաց խօսք կ'ընէք դուք երբ ձեր անձնուրաց վարմունքով պաշտուելու արժանի էք։

Արաքսիա այնպիսի երախտագիտական ու պերճախօս աչք նայեցաւ անոր առանց բնաւ խօսելու, որ երիտասարդը քաջալերուելով այդ լուռ բարբառէն՝ մօտեցաւ անոր, ու ձեռքը ձեռացը մէջ առնելով ըսաւ.

— Ո՛հ, Արաքսիա՛, բերնովդ հաստատէ ինչ որ աչերդ կը յայտնեն ինձ արդէն։ Ըսէ՛ թէ համայն սիրտդ ինձ կը նուիրես յաւէտ.

— Որչափ հեշտին է սրտիս համար այդպիսի խոստում մ'ընելը.

— Ո՛վ հրեշտակային արարած, ո՛վ կենաց լոյսը, ապրինք ուրեմն միատեղ, գոչեց Ներսէս խանդավառ։

Եւ կուրծքէն մանրանկար կենդանագիր մի հանելով ու զայն ցոյց տալով աղջկան ըսաւ.

— Կ'երդնում առաջի մօրս որ ոչ ոք՝ բաց ի քեզմէ, ինձ ընկերակից պիտի լինի, Արիաքսի՛ա։

Եւ սեղմելով սրտին վրայ ձերմակ և փափուկ ձեռքն աղջկան զոր բռնած էր տակաւին, շըրթանցը տարաւ զայն ըսելով.

— Այս վայրկենէս սկսեալ՝ ես կենացդ անբաժանելին եմ։

Ո՛վ Աստուած իմ, մրմնջեց աղջիկն աչերը գոցելով. մարդկային սիրտը բաւական զօրաւոր չէ այսչափ երանութեան տոկալու համար։ Ներսէ՛ս, ընկճիլս կ'զգամ երջանկութեան բեռին ներքեւ։

Նոյն միջոցին Աղաւնին փոքրիկ շարժում մ'ըրաւ։

Երկու սիրահարներն իրարու ձեռք թողուցին, ու վարժուհին ընթացաւ մերձ տղուն անկողնոյն։ Բայց առանց արթննալու իւր քունը շարունակեց գողտրիկ պատանուհին։

— Տե՛ս, ըսաւ Ներսէս, անմեղութեան հրեշտակը մեր սիրոյն վկայն է։

— Կը պաշտեմ այս սիրուն արարածը, Ներսէ՛ս, զի անոր պատճառաւ հնչեցիր ինձ երէկ առաջին խօսքերն որք զհոգիս այնչափ հրճուեցուցին։

Մեր երկու երիտասարդներն իրենց սիրային խօսակցութիւնն բաւական ժամանակ շարունակելէն վերջը՝ Ներսէս մասնաւորապէս խնդրեց որ իրենց խոստումն բոլորովին գաղտնի մնայ, և մանաւանդ Տիկին Աբգարեանի կասկածները չյարուցանելու համար ամեն ճիգ թափուի. վասն զի համոզուած էր որ այդ շար կինն ամեն միջոց ի գործ պիտի դնէր իւր ամուսնութիւնն արգիլելու համար։

Ներսէս մէկ տարի պայմանաժամ տուաւ Արաքսիայի որպէս զի կարողանայ ամեն ինչ կարգի դնել և ըստ արժանւոյն իրենց բնակութեան համար վայելուչ տուն մի եւս պատրաստել։

Երիտասարդը թէեւ հօրը հետ գործողութիւն կ'ընէր, սակայն իւր հաշւոյն համար եւս զատ առեւտրական գրաղմունքներ ունէր, որով անկախ վիճակ մի հաստատած էր անձին։

Բայց ինչ որ զվարժուհին անբացատրելի երախտագիտութեամբ համակեց՝ Ներսէսի խոստումն էր զՊ. և զՏիկին Վարսամեան իրենց տան մէջ բնակել տալու իրենց հետ միասին։ Զգիտէր կոյսն ի՛նչ բառերով շնորհակալ լինիլ այդ ազնիւ հոգւոյն որ իւր ներքին իղձերն այնչափ լաւ կը գուշակէր։ Ինքն արդարեւ կը պաշտէր զՆերսէս, սակայն եթէ հարկ լինէր զոհել իւր սէր ի պէտս ծնողացն՝ զայդ ապահովապէս կը կատարէր աղջիկն առանց վայրկեան մ'իսկ դեղեւելու։

Արաքսիա հաճութիւն խնդրեց իրենց փոխադարձ խոստումն իւր ծնողացը միայն յայտնելու և անոնց օրհնութիւնն ստանալու, զի վստահ էր անոնց հաճելի ինչ գործած լինիլ։ Առ այդ հաւանեցաւ երիտասարդն։

Նոյն իսկ Պ. Աբգարեան պիտի անդիտանար իրենց սիրային դաշնադրութիւնը։ Թէեւ հարց լաւագոյնն էր նա, հանդերձ այսու Ներսէս կը ճանաչէր անոր տկար կողմը կնոջը նկատմամբ, որով կը վախնար թէ յակամայս այդ գաղտնիքը կը մատնէր իւր ամուսնոյն։

Նոյն միջոցին սենեկէն ներս վիժեց որոտալից Արմինէն, և յարուցած աղմուկէն արթնցաւ

քնքոյշն Աղաւնին տեսնելով առ սնարաւն զիւր եղբայր և զիւր վարժուհին։ Ժպտեցաւ երկուքին անոյշ ժպտով ու հաստատեց լաւագոյն վիճակ մ՝ուներնալը։

Քիչ մի ժամանակ երիտասարդը քրոջը մօտ կեցաւ, խօսեցաւ անոր, խնդաց, կատակներ ըրաւ, և մեկնելու ատեն յորդորեց զինքն հանդարտ կենալու օրն ի բուն, և խոստացաւ երեկոյեան վերադարձին ընծայներ բերել իրեն եթէ օրիորդին ամեն կամաց հնազանդէր առանց զինքը նեղելու։

— Միթէ՞ հարկ է այդ վարձատրութեան ինձ նուիրական եղած անձին հնազանդելու համար, պատասխանեց սիրուն արարածը։

Արաքսիա ձեռքը դնելով մանկան ճակտին վրայ անոր ջերմութեան աստիճանը հաստատելու մտօք, և երիտասարդն ալ այդ օրինակին հետեւելով, իրենց ձեռքերը միացան սրբութեան այդ յատակին վրայ՝ իբրեւ ուխտ յաւիտենական միութեան։ Իսկ Արմինէ երգերովն ու զուարթութեամբը կարծես երկու սիրահարաց սրտին տօնը կը խմբէր։

ԳԼՈՒԽ Ի.

Սիսակ որուն վայրիկ մի հանդիպեցանք Պ. Վարսամեանի հարստութեան կործանման առթիւ, Արաքսիայի հետ երկու եղբօր թոռունք էին մօր կողմանէ, և ինչպէս գիտենք արդէն Փարիզ գնացած էր փաստաբանութիւն ուսա-

նելու դիտաւորութեամբ։ Բայց փոխանակ այդ ճիւղին նկրտելու հեշտագոյն գտաւ զբօսանաց հոսանքի մէջ անկանիլ, ու այդ մեծ մայրաքաղաքին հրապուրանաց զոհ լինիլ։ Թատրոններու կողմանոցներէ (coulisse) կ'անցնէր հմայիչ սրբասկապանները (boudoir) ու այդ զեղխութեանց մէջ կը մսխէր ոսկին և կը կորսնցնէր ժամանակը, ուսման նուիրելով այն ժամերն միայն զորս կը յաջողէր գողնալ վայելից վայրկեաններէն։

Այդպիսի շռայլ կենաց համար երկար ժամանակ չէր կրնար տեւել անշուշտ չափաւոր հարստութիւն մի. ուստի մեր հեշտասէր երիտասարդը վաղ ընդ փոյթ մսխեց գրեթէ բոլոր գոյքը, որով փաստաբանութեան շրջանն ընդմիջելով վերադարձաւ ի Պոլիս հետն բերելով փճացած ժառանգութեան մի մնացորդները, անկատար ուսմունք մի ու շատ յաւակնութիւններ։

Նոյն պահուն Սիսակ հազիւ քսան և վեց տարեկան էր. թուխ էր, ազդու և համակրական դէմք մ'ունէր, աչերը հրավառ, գծագրութիւնը կանոնաւոր, հասակը բարձր և վայելուչ։

Սրտովն ու մտքովն օտարացած էր հայութենէն. ազգային գգացումը բառ մ'էր իրեն համար, հայ անունը նախատինք մի և հայ բարբառը բարբարոսական լեզու մի. վերջապէս կ'արհամարհէր ինչ որ հայ էր։ Սքանչացմամբ կը խօսէր ընդհակառակն ամեն նիւթերու վրայ որ օտարազգեաց կը վերաբերէր. կը գովէր անոնց մեծագործութիւնքն, անոնց յատկութիւնքն, ինչպէս և անոնց թերութիւնքն ու մոլութիւն-

քըն։ Զայնն էր ներդաշնակ, և խօսելու եղանակը փայլուն, պերճ և ազդու։

Ամեն նիւթի վրայ կը ճառէր, մատենագրութեան վրայ յախուռն դատաստան կ'ընէր ինչպէս գեղարուեստից և գիտութեանց։ Պոլսոյ իրաւագէտք, բժիշկք, պաշտօնակալք, մասնագէտք, ամենքն ալ ոչինչ էին իրեն համար։ Ինքն Փարիզ գնացած էր և այդ կը բաւէր զամենքն արհամարհելու համար։ Նոյն իսկ արեւելեան գեղեցկութիւնը խստիւ կը քննադատէր, ինչպէս կանանց ձեւերը, խօսելու, զարդարուելու և վարուելու եղանակը։

Տեսակ մի թեթեւ և շողշողուն խելք մ'ունէր նա, այսինքն մասնաւոր ճարտարութիւն մ'ամեն բառի երկդիմի նշանակութիւն տալու, զամեն ինչ հեգնելու, խելք բանեցնելու մտօք, ծանր թէ աննշան իրերը կամ առարկայները անխտրաբար իրեն նիւթ ընտրելով ու այլոց ծաղրը գրգռելով։

Կարգ մ'անմիտ անձանց համար Սիսակ հանճար մ'էր խելքի և ուսման մասին, զի տիեզերական կը նկատուէին իւր հմտութիւնք քանի որ ամեն նիւթի վրայ կը խօսէր գիտութեամբ թէ անգիտութեամբ։

Զտիկնայս շլացնելու համար եւս մասնաւոր տաղանդ մ'ունէր։ Այնպիսի վստահ կերպիւ կը խօսէր Փարիզու ազնուական դասուն վերաբերող գեղեցիկ սեռին վրայ, որ թուէր թէ բոլոր օրերն անոնց հետ անցուցած էր, երբ փողոցաց մէջ հանդիպած էր անոնց միոյն։

Իսկ տիկնայք նկատելով իրենց նկատմամբ

գործածած ծանր բայց քաղաքավարական ձեւերը, ինչպէս և մեծաբարբառ խօսքերը, իրեն հմտութիւնը ճաշակի և հագուստի մասին, վառվռուն ու հեգնող խօսակցութիւնը, տիկնայք ուրեմն գոգցես մագնիսական ազդեցութեամբ երիտասարդէն կը գրաւուէին։

Երբ Սիսակ ընկերութեան մի մէջ կը գըտնուէր՝ կանացի իլձերն առ նա կը ձկտէին։ Գեղանիք գաղտագողի ջանիւք կը ճգնէին անոր ուշը գրաւել և կերպով իւիք կը հպարտանային անոր նոյն իսկ չափաւոր ուշադրութեան առարկայ լինելով։

Ինչ որ նոր է և փայլուն՝ մտաց վրայ անդիմադրելի հրապոյր մ'ունի։ Բայց այդ շողշողուն երեւութին ներքեւ ծածկուած սեւ կէտերն հետզհետէ երեւան ելնելով՝ այդ շլացուցիչ առարկային ազդեցութիւնը կը տկարանայ ժամանակին օգնութեամբ, ինչպէս և խելացի անձանց լուրջ դատողութեամբն և անոնց դատապարտութեամբը։

Սիսակ յետ իւր վերադարձին Փարիզէն արդարեւ կատարեալ յաջողութիւն մ'ունեցաւ ընկերութեանց մէջ, թէեւ զգօն մասը շուտով վերահասու եղաւ անոր ունեցած արժանեաց։

Արաքսիա կը ճանաչէր զՍիսակ տղայ տիոցն ի վեր, ու իրենց միջեւ եղբայրական ընտանութիւն մի գոյացած էր ի վաղուց անտի։ Երբ վերադարձաւ երիտասարդն Եւրոպայէն՝ աղջիկն շուտ իսկ հասկցաւ ազգականին կարողութիւնքն՝ փառք իւր մտաց կորովին ու ստացած հաստատուն ուսման։ Շատ անգամ՝ մանաւանդ լման-

տալից կատակներ կ'ընէր որոնց ներքեւ կծու դասեր կային իւր ազգականին նկատմամբ։ Բայց եթէ Սիսակ կը նեղանար երբեմն աղջկան կատակներէն՝ այդ դատապարտող լեզուն չէր կարող սակայն իրենց փոխադարձ մտերմական յարաբերութիւնքն այլայլելու։

Հանդերձ բոլոր թերութիւններովն՝ Սիսակ սիրելի էր Արաքսիայի, նա մոնաւանդ որ սա կը զուարճանար անոր ծաղրող և գրգռիչ խօսակցութեան ունկն դնելով։ Իսկ երիտասարդն պատկառանք կ'զգար օրիորդին համար ու նոյն չափ համակրանք, թող թէ անոր ազդեցութիւնը կը կրէր շատ պարագայից մէջ։ Երբեմն Սիսակ կ'ըսէր Արաքսիայի.

— Եթէ ամուսնանայի քեզ նման անձ մի կ'ընտրէի։

Իսկ կոյսն խնդալով կը պատասխանէր.

— Շնորհակալ եմ ըրած պատուոյդ համար. բայց վստահ եղիր որ ինձ նման մտածող անձը հետդ ամուսնանալու յանձն չէր առներ երբէք։

Այդ խօսքերը լսելով Սիսակ կը բողոքէր, թէեւ Արաքսիա ըսածին վրայ հաստատ կը կենար դարձեալ։

Շատ անգամ երիտասարդը կը պատմէր ազգականին իւր տարած յաղթութիւնները կանացի աշխարհին մէջ, և աղջիկը կ'ափսոսար այն գեղանիներուն վրայ որք թեթեւաբար իրենց սիրտը կը ձօնէին իրեն։

Սակայն երբ Արաքսիա նշմարեց թէ իւր սիրելի Վարդանոյշն եւս կը կախարդուէր իւր ազգականէն՝ սարսափեցաւ ու ամէն ջանք ըրաւ

անմեղ կուսին սիրտն սպառազինելու մտոք ա-
նոր դէմ։ Բայց Սիսակի հրապոյրներն յաչս Վար-
դանուշի վեր էին քան զամեն իմաստութիւն և
զգուշութիւն։

Օրիորդը բազմիցս առիթ ունեցած էր հան-
դիպիլ երիտասարդին այլ և այլ տեղեր, հետը
պարել ու խօսակցիլ։ Ի բաց առեալ անոր դի-
մական շնորհքներն և փայլուն խօսակցութեան
ազդեցութիւնն ու պարելու մասնաւոր յաջողա-
կութիւնը, կոյսն գրաւուած էր մանաւանդ ե-
րիտասարդին ծանր և անտարբեր ձեւերէն։

Կանայք կը սիրեն ընդհանրապէս ով որ ան-
փոյթ կը ձեւացնէ զանձն իրենց նկատմամբ. և
որչափ անտարբերութիւնը մեծ լինի՝ նոյնչափ
կ'աճի և իրենց եռանդն այդ անձէն սիրուելու
համար։

Ի զուր Արաքսիա կը յորդորէր զիւր մտեր-
մուհին խորս տալու այն վտանգաւոր անձէն։ Ի
զուր կը խնդրէր Սիսակէն որ խնայէ բարեկա-
մուհւոյն իւր անձնասէր թեթեւութեանց այլուր
յաղուրդ տալով։ Յորչափ ինքը ներկայ էր՝ այդ
սիրային յարաբերութեանց յառաջ երթալուն
արգելք կանգնեցաւ։ Բայց Վարդանուշի սիրոյ
զգացմանց արգելք չի մնաց երբ Արաքսիա իւր
տունէն հեռացաւ։

Նոյն ժամանակ որ մեր վարժուհին Աբգար-
եան ընտանեաց քով գնաց, Սիսակ առժամա-
նակեայ կերպիւ բացակայ էր Պոլսէն, որով ինքն
յուսաց թէ չորս ամսուան բացակայութիւն մի
գուցէ կարող լինի ջնջելու նորածին սիրոյ հետ-
քերը. բայց այնպէս չէր։ Այն ինչ վերադարձաւ

Օիսակ ի Պոլիս՝ Վարդանոյշ բեկանելով սանձահար զգացմանը լուծը յախուռն ընթացաւ սիրոյ ասպարէզին մէջ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Արաքսիա փութաց հաղորդել ծնողացն լուրն իւր ապագայ յոյսերուն։ Երբ Պ. ու Տիկին Վարսամեան իմացան խնամութեան մի ապահովութիւնը փայլուն ընտանեաց մի հետ՝ ինչպէս էր Աբգարեան ընտանիքը, կարծես պիտի յիմարէին իրենց չափազանց գոհունակութենէն։

Անկար հայրը քիչ մնաց որ ուրախութեանը զոհ երթար։ Նա կը մտածէր թէ դուստրն այն որ իւր անկարողութեան պատճառաւ աքսորուած էր հայրենի յարկէն պիտի վերադառնար առ ինքն լի մեծութեամբ և պատուով։

Իսկ Տիկին Վարսամեանի դառնութիւնն ընդդէմ ամուսնոյն ոչ միայն ամոքեցաւ, այլ խեղճ մարդը տեսակ մ'արգահատութեան իսկ առարկայ եղաւ։

— Կը տեսնե՞ս, մա՛յր, կ'ըսէր Արաքսիա, թէ աշխատութի՛ւնը փոխանակ զիս նուաստացընելու պիտի բարձրացնէ ընդհակառակն։

— Աղջի՛կս, կը պատասխանէ ուխտութեան թշնամի կինը, Աստուած վարձատրեց քու անձնուէր հոգիդ։

— Ի՞նչ գործեցի արդեօք այդպիսի մեծ վարձատրութեան արժանի լինելու համար։

— Ի՞նչ կ'ըսես Արաքսիա՛ս։

— Անշուշտ, մա՛յր։

— Բայց տեսնենք թէ քու բարեկամներդ պիտի ուրախանա՞ն, երբ դքեզ իբր նուաստ գաստիարակ յանձնարարելէն վերջը, դու պիտի ներկայանաս անոնց աչաց ընկերական դիրքով մի որ իրենցը պիտի գերազանցէ անհամեմատ կերպիւ։

— Մա՛յր, մա՛յր, մի՛ այդպէս անիրաւաբար խորհիր անոնց նկատմամբ զի անոնք մեր բարեկամներն են։

Տիկինը չէր համոզուեր՝ թէեւ վարժուհւոյ պաշտօնը մեծ բաղդի դուռ բացած էր իրենց, ու կը յամառէր պնդելու թէ Երանեանք գիրենք խոնարհեցնելու մտադիր եղած են միշտ, թէեւ ոչ մէկ փաստ մ'ունէր առ այդ։

Տիկին Վարսամեան կ'ատէր Երանեանները զի թուէր իրեն թէ անոնց հանգիստ կացութիւնը կ'անգոսնէր իւր ազքատ վիճակը։ Ուստի դիւրին է երեւակայել թէ որպիսի՞ խրոխտմամբ կը ցնծար նոյն պահուն զանոնք իւր փեսայովը խոնարհեցնելու ակնկալութեամբ։

Իսկ խեղճ հայրը շարունակ զերկինս կը փառաբանէր ըսելով.

— Փա՛ռք քեզ Աստուած, ողորմեցար դու իմ զաւկիս, այսուհետեւ կրնամ հանգիստ սրտով մեռնիլ։

Երբ Արաքսիա հետեւեալ այցելութիւնն ըրաւ հօրը տան, ներկայացուց պիւր խօսնայր ծնողացը՝ որք լիովին գրաւուեցան անոր վայելուչ ու համակիր ձեւերէն և ցոյց տուած ընտանութենէն։

Ներսէս կրկին և կրկին անգամ կատարեալ

լուութիւն խնդրեց իրենց ամուսնական խորհրդոյն նկատմամբ. և զայդ խոստացան Պ. ու Տիկին Վարսամեան, թէ եւ սա վերջինն անհամբեր էր այդ բարձր խնամութեան լուրը տարածել ամենուրեք, նա մանաւանդ Երանեանց հաղորդել զայն։ Բայց պարտաւոր էր զգոյշ լինիլ քանի որ իւր թոյլերանութիւնը կրնար չար հետեւանք ունենալ, թէեւ ստոյգ է որ լռելու դատապարտութիւնը զինքը չարաչար կը նեղէր։

Արդէն հպարտանալով կը մտածէր թէ իւր ընկերական յարաբերութիւնքն բոլորովին պիտի փոխուէին, և թէ զինքն արհամարհող անձինքն իւր առջեւ պիտի խոնարհէին։ Ինքը կանխաւ իւր վրէժխնդրութիւնը կը պատրաստէր, խոստանալով անձին խոնարհեցնել ձեւերովն զանոնք որք իւր նկատմամբ անտարբեր կամ սէգ դիրք մ'առած կը համարէր։

Սիրտն ուրախութեամբ կը տրոփէր մանաւանդ մտածելով թէ Երանեանք՝ հանդերձ իրենց հարստութեամբ, չէին յաջողած տակաւին այդպիսի շքեղ խնամութիւն մի ձեռք ձգել։

Սակայն խիղճ կ'ընէր Արաքսիա պարտաւորուած լինելուն իւր Վարդանոյշ մտերմէն գաղտնի պահելն իրենց ամուսնութեան որոշումը։ Գիտէր թէ նա ո՛ր աստիճան պիտի ուրախանար զայդ լուր առնելով. բայց ի՛նչ կարող էր ընել երբ Ներսէս բացորոշ կերպիւ խնդրած էր իրմէ որ ոչ ումեք իրենց գաղտնիքը հաղորդէ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Արաքսիա երջանիկ էր որչափ հնարաւոր էր լինել մահկանացուի մի։ Անհունապէս կը սիրէր ու սիրուած էր. ընտանիքն երջանիկ էր. երկու տղայքն իւր աւուրց թռչուններն էին որք իրենց սրտագին և ուրախ դայլայլիկներով Ներսէսին անունը բիւրիցս կը հնչեցնէին իւր ականջին օրուան շրջանին մէջ։ Առաւօտուն և երեկոյեան զիւր սիրելին կը տեսնէր՝ ու փոխադարձաբար իրենց սրտին կարօտն ու սէրը կը հաղորդէին իրարու։

Տիկին Արգարեանի գոռոզ ձեւերը միայն զվարժուհին կը նեղացնէին, բայց այնչափ լուսաւոր երջանկութեան յատակի վրայ քանի մի մութ կէտեր շուտով կ'անհետանան։

Մեր երկու սիրահարներն ունէին այն վստահութիւնն որով կ'ապրին սիրահարներն, այսինքն կարծելով թէ իրենց սիրային յարաբերութիւնքն ոչ մէկէ մի նշմարուած են։ Եւ երբ իրարու մերձենալու առիթ մի կը կորանցնեն՝ թուի իրենց գերագոյն կարգի զգուշաւորութիւն մ'ըրած լինիլ։

Եօթն ամիսներ անցած էին արդէն նոյն օրէն ի վեր յորում Ներսէս հաւատարմութիւն ուխտած էր Արաքսիայի։ Ձմեռն անցած էր, և ահա գարուն կը ներկայանար իւր դալարներով, ծաղկներով, թռչնոց երգով ու քաղցրաշունչ սիւգով։

Երբ վարժուհին առաւօտուն պարտէզ կ'ինջնար երկու աշակերտուհիներովը, ի տես բնու-

թեան գեղեցկութեանց իւր հոգին կը գրգռուէր, սէրը կը զայրանար, ու կը փափաքէր զգայման սաստկութիւնը մեղմացնել իւր սիրահարին ներկայութեամբը։ Շուրջը կը նայէր տեսնելու համար եթէ կուգար իւր Ներսէս։ բայց այդ խուզարկութիւնն երկար չէր տեւեր զի երիտասարդը կը հետամտէր իսկոյն աղջկան՝ երբ նորա պարտէզ իջնալը կը նշմարէր։

Մինչ երկու քոյրերը կը վազուրտէին և կամ կը շրջէին՝ մեր երկու սիրահարները թաւուտ ծառերէ վարագուրեալ ու իրարու մօտ նստելով, կ'ըսէին ինչ որ երկու մաքուր ու զգայուն հոգիներ կը խօսին ի սիրոյ և ի բնութենէ ներշնչուելով։

Կը կարծէին մեր երկու երիտասարդներն ազատ լինել բոլորովին Տիկին Աբգարեանի նայուածքներէ, զի նա կէս օրուան մօտ կ'ելնէր անկողնէն։ Եւ արդարասէր լինելու համար՝ խոստովանելու է թէ չունէր նա այն նողկալի սովորութիւնը շատ մի կանանց՝ որք սպասուհիները լրտեսի կը վերածեն իմանալու համար այլոց գաղտնիքը։ Գուցէ իւր գոռոզութիւնն միակ պատճառն լինէր աղախնայց հետ մտերմական ձեւեր չառնելու։ Բայց փոյթ չէ գիտնալ թէ ինչ էր անոր շարժառիթը։ Սա ստոյգ է որ զերծ էր ամենայն հետաքրքրութենէ իւր տան մէջ անցած գացածն իմանալու։

Առաւօտ մի Տիկին Աբգարեան անձնական անհանգստութեան պատճառաւ պարտաւորեցաւ միջոց մի անկողնէն ելնելու։ Պատահմամբ աչե-

բրն ուղղուեցան դէպ ի պարտէզ, և հոն տեսաւ զՆերսէս որուն ընդ առաջ կուգար վարժուհին զգուշաւոր միջոցներ ձեռք առնելով տակայն։ Այդ բաւեց իւր կասկածները զարթուցանելու համար. փոխանակ երթալ տեղն հանգչելու ինչպէս մտադիր էր ընելու, նստաւ պատուհանին առջեւ, ու ի շնորհս փեղկերուն՝ վկայ եղաւ անոնց տեսակցութեան որչափ որ ծառոց խիտ տերեւները կը ներէին։ Ի վերջոյ Ներսէսին հեռանալը տեսաւ, և քիչ մի վերջը հաստատեց վարժուհւոյն իրեն յատկացեալ խուցը քաշուիլը հանդերձ աշակերտօքն։

Տիկին Աբգարեանի կատաղութիւնը չափ չունէր։ Մխալած չէ՛ր ուրեմն Ֆլորիայի զբօսանաց օրը. իրօք Ներսէս զվարժուհին կը սիրէր, և երկուքը յաջողած էին զինքը խաբելու։ Ուստի խորհեցաւ թէ անպատճառ վրէժն պէտք էր առնուլ անոնցմէ։

Զէր ներեր Արաքսիայի աչերն բարձրացնել մինչեւ այն անուան որ ինքը կը կրէր։ Այդ բոկոտն արարածը, իւր վարձկանը, Տիկին Աբգարեան կոչուի. ոչ երբէք, զայդ յանձն չէր առնուր։

Իւր առաջին մտածութիւնն աղջիկը տունէն վանելն եղաւ։ Բայց յետոյ միտքն փոխեց մը. տածելով թէ նախ Ներսէս իրեն թշնամի պիտի դառնար. և երկրորդ որ նաւանձու զգացումը երեւան պիտի ելնէր։ Ինքը շատ հպարտ էր յայտնելու համար թէ որ և է անձ իւր նախանձուն առարկայ կրնար լինել՝ մանաւանդ վարժուհի մի։ Իսկ երրորդ պատճառ մ'ալ ունէր,

ու այն զօրաւորագոյնն էր։ Հաշուեց որ եթէ զԱրաքսիան տունէն հեռացնէր՝ երիտասարդին ունեցած յարաբերութեանց աղջկան հետ անտեղեակ պիտի մնար, ու անոնց սիրային ընթացքը հաստատելու անկարող։ Ուստի խորհեցաւ թէ յարմարագոյն միջոցն էր վարժուհին տան մէջ պահել, կատարելապէս անգիտանալ ձեւացընել ամեն ինչ, հսկել երկուքին վրայ, ու ամեն միջոց գործածել զերիտասարդն աղջկէն բաժնելու։

Բայց հապճեպիւ չգործելու համար և ուզելով կատարելապէս ապահովուիլ երկու երիտասարդաց մտերմութեան ատիճանին վրայօք, քանի մ'օր առաւօտուն կանուխ ելաւ քունը զոհելով, և մէն մի օր առաւել եւս հաստատուեցաւ թէ երկու երիտասարդները գիրար կը սիրէին բուռն կերպիւ։

— Այս բոկոտն, կոչեց դարձեալ Տիկինը սրտմտութեամբ, իմ կրած անուանս կրէ, երբէք, երբէք, ես եմ ապահովողը զայդ։ Մինչ քանի մ'օր միտքը կը տանջէր չար հնարք մի ըստեղծելու Արաքսիայի երջանկութեան չէնքը տապալելու համար, ահա բաղդը ճամբուն վրայ դրաւ Սիսակ երիտասարդը։ Այդ նոր ծանօթը զոր ընկերութեան մի մէջ ճանաչեց, առանց վրէժխնդիր ձկտումներն այլայլելու, Տիկնոջ քըմահաճ սրտին բուռն անուանդ մատակարարեց։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Պ. Երանեանի դստեր զգացումներն օր աւուր սաստկանալով, բոլոր երազներն, յոյսերն ու բաղձանքները Սիսակի բաղդակից լինելու գաղափարին մէջ բովանդակեց։ Սիրակէզ կը տանջուէր, և զգացման սաստկութիւնն յինքն կը ջանար ամփոփել մինչեւ որ փոխադարձաբար սիրուելուն ապահովութիւնն ունենալով թոյլ տար երիտասարդին կատարելապէս իմանալու իւր սրտին գաղտնիքը։

Սիսակ քաջալերուելով Վարդանուշի քաղցր և համակրելի ձեւերէն՝ մտերմութեան աստիճանը հետզհետէ բարձրացուց. և օր մի՝ երեկոյթի մ'առթիւ, երբ իւրաքանչիւր ոք զբաղեալ էր մասնաւորապէս զուարճանալու, փայլելու և յաջողելու, մեր երիտասարդն եւս օգուտ քաղեց այդ առթէն բացարձակապէս յայտնելու համար Վարդանուշին թէ ինքն եղած է իւր սիրոյն առարկայն։ Սիրահարեալ օրիորդն նախ թոթովեց, կարմրեցաւ, շփոթեցաւ, բայց հուսկ յետոյ թէ՝ լռութեամբն և թէ՝ քանի մի բառերով մատնեց այն բուռն զգացումն որով համակուած էր։

Եթէ կը փափաքէր Սիսակ Պ. Երանեանի դստեր հետ ամուսնանալ՝ դրդեալ էր առ այդ պարզապէս շահախնդիր ակնկալութենէ. զի Վարդանոյշ միակ զաւակ էր հարուստ ծնողաց։ Հետեւապէս անոր հետ ամուսնանալով դիւրակեցիկ վիճակի կը հասնէր, թողթէ օր մ'ալ ժառանգ կը կանգնէր Պ. Երանեանի։ Ահա գեղե-

ցիկ ու դիւրամատչելի ապագայ մի որ կը ներ-
կայանար իրեն այնպիսի դիւրութեամբ ։ Ինքն կը
մտածէր սքանչելի առեւտուր մ՝ընել. միթէ
ամուսնութիւնն առեւտուրի խնդիր չէ՞ դարձած այսօր ։ Ահա ինքն պիտի կատարէր ուրեմն
մէկ հարուածով ինչ որ այլք ճակտի քրտամբ
ձեռք ձգելու հազիւ կը յաջողին՝ այսինքն գեղեցի՛կ հարստութիւն մի ։

Բայց դժուարութիւն մի կար որուն յաղթելու էր, այն էր անձին կարեւոր կերպարանք մի
տալ ընկերային դիրք մը ստանալով, որպէս զի
Երանեանց մերժման չենթարկուի ։

Ստոյգ է որ Փարիզէն վերադարձի միջոցին
Սիսակ աղմուկ յարուցած էր իբր անձ բազմահրմուտ. սակայն փորձը շուտով յայտնեց թէ ոյք
էին իւր կատարելութիւնները։ Սկսաւ նախ որոտալից յօդուածներ շարադրել լրագրաց համար
ընդդէմ իրաւապիտաց ։ Բայց տկար և անիմաստ
քննադատութեամբը իւր կարողութեան չափն
յայտնեց, ու տեղի տուաւ այլոց արդարացի և
արժանաւոր դատաքննութեան իրեն նկատմամբ։

Թէեւ ինքզինքն ուզեց ծանօթացնել իբր մեծ
փաստաբան, անշուշտ յաճախորդաց բազմութիւնը չէր որ զինք անհանգիստ կ՝ընէր. զի մերթ
ընդ մերթ միայն փոքրիկ դատերու համար իրեն կը դիմէին ։ Դատերուն զմանս կորոյս, ու
զմանս յաջողեցաւ շահելու, որով իւր յաղթանակն ի ձայն թմբուկի հռչակեց՝ պարզամտաց
վրայ տպաւորութիւն ընելով սակայն ։

Առանձին սենեկի մէջ կ՝ապրէր Սիսակ ընտանիք չունենալուն պատճառաւ, ու իր ժա-

ռանգութեան փչրանքներն հազիւ կը բաւէին անձնական պիտոյիցը։ Միշտ լաւ ճաշակաւ զարդարուած էր, և ջանադիր էր փայլիլ առատաձեռնութեամբ այն պարագայից մէջ որոնցմէ անկարող էր խոյս տալու։

Պ. Երանեան դրական մարդ էր, խաբուսիկ յոյսերէ չէր շլանար, զայդ լաւ գիտէր Վարդանոյշ, ուստի յորդորեց զիւր սիրահար համբերելու մինչեւ որ յաջողութեամբը վստահութիւն ազդէր իւր հօր։

Այդ հարկը լաւ կ'ըմբռնէր մեր երիտասարդը, որով աղջկան տուած խորհրդոյն կատարելապէս հաւանիլն յայտնելով՝ մտադիր եղաւ սակայն կուսին զգացման աստիճանն այնպիսի սաստկութեան հասցնել՝ պարտաւորելու չափ առնոր ծնողքը զինքը փեսայ ընտրելու առանց ի նկատի առնելու իւր դրամական տահմանին անձկութիւնը։

Եթէ հմտութեան մասին հրաշալիք մի չէր Սիսակ, կանացի սրտերն որսալու կէտին համար մ'էր սակայն։ Ուստի նոյն օրէն յորում Վարդանոյշ հաւատարմութիւն խոստացաւ երիտասարդին՝ իւր սիրահարական զգացումն ծայրայեղ տրիսիի կերպարանքն առաւ։ Ոչ ուրուք իրենց գաղտնիքն հաղորդելու դաշինք ըրած էին մեր երկու երիտասարդները, միայն թէ Արտաքսիայի նկատմամբ բացառութիւն մի կար։

Խորհրդապահ վարժուհին երդմամբ խոստացաւ պահել զիւր մտերմին գաղտնիքն, որ և է ստիպողական առթի մէջ անդամալուծիւն ցահելու պայմանաւ։

Արաքսիայի խիստ անհաճոյ էին յոդերն որք գոյացած էին երկու երիտասարդաց միջեւ. բայց ի՞նչ կարող էր գործել, նա մանաւանդ երբ քիչ ժամանակ վերջը ինքը եւս լաւ ճանչցաւ սիրահարութեան անբռնաբարելի իշխանութիւնը։

Հազիւ հազ քանի մի շաբաթներ անցած էին մեր վարժուհւոյն բերանացի նշանտուութենէն ի վեր, երբ օր մի՝ ի մեծ իւր զարմանս, հեռուէն նշմարեց Սիսակի գալուստն Սրգարեան ընտանեաց տան մէջ։ Անբացատրելի դժգոհութիւն մ'ունեցաւ առանց կարենալ բացորոշ կերպիւ անոր պատճառը մեկնելու։ Գուցէ կը կասկածէր Տիկնոջ ապդեցութենէն կամ իւր աղգականին թեթեւամտութենէն. կամ թերեւս նախազգումամբ վտանգ մի կ'ընդնշմարէր ի վնաս իւր սիրելի բարեկամուհւոյն։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Սիսակի շնորհալի կերպարանքը, քաղաքավար ծանրութիւնն, իւր սովորական ճարտար և արուեստաւորեալ անտարբերութիւնը գեղեցիկ սեռին շնորհաց արժանանալու, ինչպէս և անոր փայլուն խօսակցութիւնը զարմանալի տպաւորութիւն մ'ըրին Տիկին Արգարեանի վրայ։ Սա միտքը դրաւ որսալ զերիտասարդն, ու նոյն իսկ անոր հանդիպած առաջին գիշերն երեկոյթի մէջ հրաւիրեց զնա այցելել իւր տունը։

Սիսակի թեթեւ փառասիրութիւնը կը գոհանար նկատելով թէ մեծափարթամ անձ մի

հանգոյն Տիկին Աբգարեանի, կը փափաքէր իւր ընկերութիւնը վայելել։ Ուստի առաջին և երկրորդ պաշտօնական այցելութիւններէն վերջը Տիկինն առաւել մտերմական ձեւ մ'առնելով խնդրեց երիտասարդէն որ յաճախ այցելէ իւր տունը։ Մեր երիտասարդը խօսքով հաւանեցաւ այլ ոչ գործով, զի չափաւոր կերպիւ շարունակեց իւր յարաբերութիւնները։ Տիկին Աբգարեան շուտով հասկցաւ թէ ճարտար հակառակորդի հետ էր իւր սրտին կռիւը, որով սկսաւ ինքն եւս՝ իրր կարող ռազմագէտ, բոլոր կանացի միջոցներն ի գործ դնել լռելեայն։ Այդ գաղտնի կռուոյն մէջ երկուքն ալ կը յառաջանային հետզհետէ իրենց ճարտարութիւնը կորսնցնելով սիրոյ լուծին ներքեւ. երկուքն ալ ընկճեցան վերջապէս ծայրայեղ կերպիւ՝ ինքզինքնին կատարելապէս մոռնալով։

Տիկին Աբգարեան մեկուսի թողլով բոլոր միւս սիրահարները, իրրեւ անձ արբեալ տրփանաց մոլեգնութենէն, ոչինչ՝ կը տեսնէր շուրջը, ու ոչինչ կ'ուզէր իմանալ, մէկ անշարժ գաղափարով համակուած էր լիովին։

Պ. Աբգարեան կատարելապէս անտեղեակ էր կնոջը ամսթալից ընթացից։ Առաւօտուն խիստ կանուխ գործին կ'երթար, ուշ ժամանակ տուն կը վերադառնար, առանց համարձակելու ամուսնոյն հարցնել իւր ժամանակին գործածութիւնը։ Եթէ Տիկին Աբգարեան հաճէր ժըպտուն դիմաք ներկայանալ իրեն՝ նա երջանկագոյնն էր արանց։ Եւ զայդ սիրուն կերպարանք կ'առնուր խորամանկ կինը մէն մի անգամ որ

պէտք ունէր ամուսնէն ծածկելու կենացն անվայել ընթացքը։

Թէեւ տկար էր բնութեամբ Պ. Արգարեան, սակայն իւր պատուոյն խիստ նախանձախնդիր էր, ու զայդ լաւ գիտէր իւր կինն, որով սա ամենայն զգուշութեամբ կը գործէր ամուսնոյն նկատմամբ։

Խեղճ մարդը կը նկատէր զիւր կուլակից իբր կանանց պատուաւորագոյնն, ու անոր կը ներէր զարդուց և զուարճութեանց սէրը, երիտասարդութեանը վերագրելով զայդ ճաշակ։

Հասակաւոր ամուսիններն չափազանց բարեսրտութեամբ կը ջանան մոռցնել տալ իրենց տարիքոտ լինելը, որով իրենց կանանց քմահաճ ձկտումներն կը քաջալերեն, և ի վերջոյ անոնց հպատակները կը դառնան։ Նոյնը հանդիպած էր Պ. Արգարեանի։ Բայց սա հոգւով չափ կը սիրէր զիւր կին, ու չափազանց հպատակութեամբն իսկ զոհ կ'ապրէր։

Սակայն ոչ այնչափ դիւրին էր խաբել բոլորովին նաեւ զՆերսէս, թէեւ Տիկինն ամեն զգուշութիւն կ'ընէր անոր կասկածները չյարուցանելու։ Երիտասարդը գործողութեան գնացած ժամանակ բնաւ տեղեկութիւն չունէր տան յաճախորդաց ու տիկնոջ վարմունքի մասին։ Սակայն լաւ իմացած էր անոր սնապարծ ու թեթեւսոլիկ լինելը։ Բայց քանի որ ապացոյց մի չունէր հօրը պատուոյն արատաւորած լինելուն վրայ՝ անպատշաճ կը դատէր մահացնել ծնողքը անոր կասկածներն արթնցնելով կնոջ մի վրայ զոր կը պաշտէր։

Արաքսիա թէեւ Տիկին Աբգարեանի հետ նոյն յարկին ներքեւ կը բնակէր, ոչ երբէք հետաքրքրութիւն ունեցած էր գիտնալու թէ ո՞յք էին տիկնոջ մասնաւոր բարեկամներն ու բարեկամուհիները. ատոյգ է որ այս վերջիններն ստուար թիւ մը չէին ներկայացներ։ Պչրանոյշ(1) կինը կ'զգուշանայ ընդհանրապէս կանացի պարիսպ մ'ունենալէ շուրջը. մէն մի կին՝ յաչս իւր, թշնամի մ'է որ իւր վարմունքը կը քննադատէ ու խորհուրդները կը խափանէ շատ անգամ տանելու յաղթանակաց՝ ընդդէմ արդելք կանգնելով։

Արաքսիա որ միշտ անփոյթ եղած էր Տիկնոջ կեանքն ուսումնասիրելու՝ սկսաւ ոչ այնչափ անտարբերութեամբ նկատել Սիսակի խիստ յաճախ այցելութիւնները։

Տիկինը գիտէր թէ իւր սիրահարն ազգական էր վարժուհւոյն. և ի պատիւ անոր ոչ միայն չքամահեց զօրիորդն ի ներկայութեան անոր, այլ տեսակ մի քաղաքավարութիւն մ'ալ ունեցաւ նկատելով մանաւանդ պատկառելի վարմունքն երիտասարդին աղջկան նկատմամբ։

Արաքսիա կը մահանար հաստատելով Սիսակի այցելութեանց բազմանալն օր աւուր, մինչեւ գրեթէ հանապազօրեայ դառնալու աստիճան։

Ներսէս ոչինչ գիտէր այդ յարաբերութեանց մասին, և ոչինչ՝ երիտասարդին ունեցած կապերուն վրայօք Վարդանոյշի հետ։

Մէն մի անգամ որ վարժուհին կը հանդի-

(1) Coquette։

պէր իւր ազգականին՝ կ'ուզղէր նմա ակնարկ մի լի դառն ու պերճախօս յանդիմանութեամբ։ Երիտասարդը կ'զգուշանար ենթարկուելէ այդ լուռ կշտամբանաց, զի թէեւ տնսանձ սիրոյ յորձանաց մէջ էր ալեծուփ, հանդերձ այսու ներքին տկար ձայն մի կը բողոքէր մերթ ընդ մերթ Վարդանոյշի նկատմամբ ըրած անհաւատարմութեանը դէմ, և զնա կերպով մի լքման դատապարտած լինելուն համար։ Իսկ Արաքսիա կը ներկայանար իւր աչաց իրբ անձնաւորութիւնն իսկ դատապարտութեան։

Վարժուհին հոգւոյն կը փափաքէր առանձին տեսութիւն մ'ունենալ Սիսակի հետ. բայց ի՞նչ եղանակաւ կրնար յաջողիլ առանց Տիկնոջ կասկածներն զարթուցանելու, նա մանաւանդ երբ յանցաւոր երիտասարդը խոյս պիտի տար անշուշտ այդ տեսութեան առթէն։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Անակնկալ պարագայի մի բերմամբ Տիկինը պարտաւորեցաւ օր մի դուրս ելնել տունէն, և յիւր վերադարձին իմացաւ թէ իւր սիրահարն եկած էր, և թէ նոյն միջոցին պարտէզն էր՝ օրիորդին հետ միատեղ։

Տիկինը դժգոհութիւն զգաց այդ տեսակցութեան մասին, թէեւ ոչինչ ուզեց յայտնել իւր տարփածուին։ Մօտեցաւ անձայն դէպ յայն վայր ուր երկուքը միատեղ նստած էին ծառի մի ներքեւ՝ հեռու երկու տղաքներէ։ Եռանդոտ

ու յուզեալ կերպիւ կը խօսէր աղջիկը, մինչ Ե-
րիտասարդն ակնկոր լուռ կը կենար։

Արաքսիա իւր սրտին համայն պերճախօսու-
թեամբը սիրոյ դատը կը պաշտպանէր, ազգա-
կանին խղճին կը խօսէր, անյոյս զգացման մ'ան-
հաստատութիւնն երեւան կը հանէր, ու կը մե-
ղադրէր զինքն հաւատարիմ և սուրբ զգացման
դէմ ըրած անհեթեթ ոճրոյն համար։

Երիտասարդն ի խոր խոցուած էր, մտայոյզ
էր, և երերածուի երկու տարբեր զգացմանց
մէջ։ Մին էր սէրն իւր սաստկութեամբն և ա-
լեկոծութեամբն. իսկ միւսն էր պարզ համակրու-
թիւն մի փայլուն և ապահով ապագայով մի։

Վարժուհին կը յուսար վերջնական պատաս-
խան մ'առնելով հեռացնել գուցէ զերիտասար-
դը այն վիճէն որուն եղերաց վրայ արքեալ կը
տարուբերէր։ Մտադիր էր վերջապէս կամ զին-
քը վերադարձնել Վարդանուշի, և կամ հեռա-
ցընել բոլորովին իւր բարեկամուհիէն։

Տիկին Ա.րգարեան ծառէ մի ծածկուած, ա-
նոնց շարժումները կը տեսնէր, աղջկան այլայ-
լութիւնը կը նշմարէր ինչպէս և իւր տարփա-
ծուին ճնշեալ դիրքն, առանց անոնց ամբողջ
խօսակցութիւնը ճշդիւ իմանալու։ Այս չափը
գուշակեց լսած խօսքերէն միայն՝ թէ իւր վար-
ժուհին ուրիշ աղջկան մի դատը վարելով ջանա-
դիր էր զերիտասարդն հեռացնել իրմէ։

Իրր վագրուհի որուն ձեռքէն կ'ուզեն յափշը-
տակել իւր աւարը, այդ կինը մռնչեց ներքնա-
պէս երդում ընելով կրկին վրէժ առնուլ այն
աղջկէն, որ դառնութեան ու դժգոհութեան

պատճառներ հայթայթած էր իրեն։ Զուզելով առաւել երկար ժամանակ ենթարկել զիւր սիրահար ազգականին ազդեցութեան, ու սրտմտութիւնը ծածկելով իբր թէ ոչինչ լսած լինէր, մօտեցաւ անոնց ու ժպտուն դիմօք բարեւեց զՍիսակ։

Վարժուհւոյն սիրտն արիւնեցաւ նկատելով իւր ջանից և յորդորանաց ապարդիւն մնալը։ Հեռացաւ վշտաբեկ, ու տղայոց խաղացած տեղին մօտենալով նշմարեց զՆերսէս ի մեծ զարմանս իւր։

Ստիպողական պատճառաւ մի Արաքսիայի խօսնայրը տուն վերադարձած լինելով՝ ուղած էր օգտիլ այդ առթէն զիւր սիրելին բարեւելու համար։ Ուստի պարտէզ երթալով օրիորդն հոն գտնելու մտադրութեամբ՝ հանդիպած էր տըղայոց ու անոնցմէ իմացած իրենց վարժուհւոյն Սիսակին հետ գտնուիլը։

Ներսէս՝ կարծես օձէն խայթուած, փոխանակ յառաջ կամ ետ երթալու, արձանացաւ կեցաւ, ու ի վերջոյ ծառի մի ներքեւ նստելով՝ նախանձալից անձկութեամբ Արաքսիայի գալըստեան սպասեց։

Սիրահարաց համար ոչ ազգականութիւն կայ և ոչ ալ բարեկամութիւն։ Ամեն ոք թշնամի մ'է որ իրենց պաշտած անձին սիրտը գողնալու կը յառաջադրէ։

Ի զուր Ներսէս կը մտածէր թէ Արաքսիայի նման սուրբ և վսեմ հոգի մի անկարող էր զիւր ուխտ դրժելու։ Ի զուր կ'արդարացնէր հարկն զՍիսակ ընդունելու քանի որ իւր մերձակայ ազ-

գակիցն էր։ Միւս կողմանէ կը մտածէր, թէ տղայքն ինչո՞ւ այնչափ հեռու էին անոնցմէ։ Անշուշտ իրենց խօսակցութեան վկայներ չունենալու մտօք էր. ինչո՞ւ ուրեմն առանձնանալու այդ պէտքն։ Այս տարբեր մտածութեանց մէջ կը տարուբերէր մեր երիտասարդն երբ նշմարեց Արաքսիայի գալուստն։

Եթէ քիչ յառաջ նեղացաւ աղջիկը Տիկին Արգարեանի վրայ հասնելուն համար, նոյն միջոցին շանթահար եղաւ Ներսէսի դժգոհ կերպարանքը դիտելով։ Բայց մաքուր խղճի քաջութեամբ վարժուհին մօտենալով իւր խօսնայրին հարցուց.

— Ինչո՞ւ չ'աւետեցիր ինձ այս առաւօտ թէ սովորականէն յառաջ պիտի վերադառնայիր այսօր։

— Եթէ զայդ գիտնայիր, պատասխանեց Ներսէս սակաւ ինչ դառնութեամբ, գուցէ ուրիշները հիւրընկալելու չէիր փութար։

— Ներսէ՛ս, ըսաւ աղջիկը յուզուելով, եթէ ճանաչէիր խօսակցութեանս նպատակը՝ գուցէ զիս պաշտէիր։

Այդ խօսքերն արտասանելու պարզ ու անկեղծ եղանակն ապահովութիւն ազդելով երիտասարդին, ու անոր սրտին բեռը թեթեւցնելով, ըսաւ սիրայորդ ակնարկով.

— Եւ մի գուցէ զքեզ յանչափս չե՞մ պաշտեր արդէն. առաւելի՞ն կը փափաքիս արդեօք։ Ինչո՞ւ չես գանգատիր ուրեմն արեւուն լոյսին անբաւականութենէն, և անծիրին սահմանափակ լինելէն։ Մէն մի բաբախում սրտիս՝ զսէրն իմ

ունի իբր շարժառիթ, ամեն մտածութիւնս առ քեզ ուղղեալ է, ամեն բաղձանաց առարկայն դու ես, Արաքսի՛ս, և տակաւին չե՞ս բաւականանար։

— Այդ մասին անհոգ եմ, Ներսէ՛ս։ Սէ՛ր, սէ՛ր, սէ՛ր. այդ բառին մէջ ամփոփուած է բոլոր էութիւնս։

— Եւ դու կը կարծես թէ ես տարբե՞ր կերպիւ կ'զգամ արդեօք. և կ'ուզես որ առաւե՞լ եւս պաշտեմ զքեզ։ Լաւ ուրեմն պատմէ՛ ինձ խօսակցութեանդ նիւթն, և եթէ ստուգապէս այնչափ հիացման արժանի ես, ինչպէս որ քիչ յառաջ հաստատեցիր, ամեն ճիգ կը թափեմ, ըսաւ կատակով, զքեզ քիչ մ'ալ աւելի պաշտելու։

— Լուր ինձ, Ներսէ՛ս, քեզ նկատմամբ անձնական գաղտնիք մ'ունենալս ոճիր կը համարիմ. բայց ինչ որ այլոց կը վերաբերի թոյլ տուր ինձ որ գիտնամ յարգել զայն խորհրդապահութեամբ։

Ներսէսի դէմքը կասկածանաց ամպովք մըթագնեցաւ դարձեալ. բնաւ բառ չ'արտասանեց, այլ լռութեամբն իւր դժգոհութեան սաստկութիւնն յայտնեց։

Վարժուհին իւր նշանածին ձեռքը բռնեց ու արտասուաթոր աչօք ըսաւ.

— Զիս մեռցուր՝ բայց մի՛ կասկածիր ինձմէ, մի՛ նուաստացներ զիս անվայել ընթացք մի վերագրելով ինձ։ Կ'երդնում քեզ առաջի երկնից թէ կը սիրեմ զքեզ ծայրայեղ սիրով և հաւատարմութեամբ, ու կը հաստատեմ թէ անկարող եմ որ և է պարագայի մէջ քեզ ուխտածս

դրժել։ Բայց յարգէ՛, Ներսէ՛ս, կը հայցեմ քեզմէ, գաղտնիք մի որ իմն չէ, և զոր ուխտած եմ և ոչ մէկու մի հաղորդել։

— Ինչո՞ւ ուրեմն ինձ նկատմամբ բացառութիւն չ'ըրիր։

— Կրնայի՞ գուշակել յայնժամ թէ դու հոգւոյս իշխանը պիտի լինէիր օր մի, այդպիսի բացառութիւն մ'ընելու համար։

Ներսէսի սիրտն ապահովուելով Արաքսիայի անմեղութեան մասին, անփոյթ եղաւ այնուհետեւ այլոց գաղտնի խորհուրդներն իմանալու։ Յորդորեց զիւր սիրելին ոչ եւս նեղուելու ինքզինքն արդարացնելու համար ու խնդալով յարեց։

— Երբ այսուհետեւ լռելու խոստումն ընես, մի՛ մոռնար յիշել թէ դու և ես մէկ հոգի կը կազմենք։

— Հարկ չկայ այդ յանձնարարութեան, պատասխանեց միւսն, զի սիրտս մէն մի վայրկեան կը յիշեցնէ ինձ զայդ արդէն։

Ի վերջոյ երկու նշանածները խաղաղութեամբ բաժնուեցան, Տիկին Աբգարեանի ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրելէ վախնալով։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Օրերն օրերու կը յաջորդէին ու շաբաթներն շաբաթներուն, Արաքսիայի կենաց հորիզոնին վրայ մաքուր սիրոյ շողն արձակելով։ Իսկ տան տիկինն իւր վրիժառու հոգւոյն սեւութիւնը

ծածկելով հանդարտ կերպարանքի ներքեւ, ամենայն անձկութեամբ կ'սպասէր այն յարմար առթին ուսկից կ'ուզէր օգտիլ վարժուհւոյն բաղդին վճռողական հարուածը տալու համար։

Մայիսի գեղեցիկ առաւօտ մի մինչ վարժուհին պարտէզին մէջ կը շրջագայէր հանդերձ աշակերտներովն, տեսաւ որ Ներսէս դէպ՝ իրեն կը յառաջանար։ Երկու երիտասարդաց կերպարանքն ու սիրտն այնչափ գոհ ու զուարթ էին որ կարծես անոնք եւս սիրոյ մայիսը կը տօնէին հանդէպ բնութեան որ իւր շքեղութիւնները կը հանդիսադրէր։

Նոյն վայրկենին վարդենիի մի մերձ կեցած էին որուն վրայ երկու կարմիր կոկոններ մէկ ճիւղի վրայ գեղանազ կը ծածանէին, Արաքսիա անոնց նայելով ըսաւ.

— Տե՛ս, Ներսէ՛ս, ահա մեր սէրն անձնաւորեալ իրարու կցորդ այս երկու կոկոններուն մէջ։

— Արդարեւ, պատասխանեց Արաքսիայի խօսնայրը, մին դուն առ պահէ ի յիշատակ այս հեշտագին վայրկեաններուն, իսկ միւսն ես կ'առնում՝ յառաջադրելով զայն պահել մինչեւ ցվերջ կենացս իբր առհաւատչեայ իմ սիրոյս։

Մինչ Ներսէս կը փորձէր երկու կոկոնները քաղել, մեծկակ փուշ մի մատին մէջ մտնելով արիւն հոսեց անկէ։

Արաքսիայի դէմքը տխրութեամբ վարագուրեցաւ։ Մեծ դժուարութեամբ կ'աշխատէր փուշը հանել. մասամբ յաջողեցաւ միայն, որով զգացած վարանմունքը սաստկացաւ։

Ներսէս նկատելով աղջկան յուզմունքը՝ ժըպտելով ըսաւ.

— Զգիտե՞ս արդեօք որ առանց փշոյ վարդ չկայ։

Այդ կատակն հազիւ կարողացաւ փարատել այն անհանգստութիւնն որ յառաջ կուգար այն գաղափարէն թէ փուշին մէկ մասը մատին մէջ մնացած էր։

Ի զո՞ւր Ներսէս կը ջանար ապահովել զինքը թէ ոչ եւս կ'զգար զայդ։ Վարժուհւոյն դէմքը տրտում մնաց. կարծես թէ բնազդմամբ կ'իմանար թէ տառապանաց աշխարհ մի ընդ հուպ պիտի բացուէր իրեն համար։ Այդ տրամադրութեամբ բաժնուեցաւ իւր նշանածէն՝ տղայոց հետ դասարան մտնելու համար։ Հազիւ հազ ժամէ մ'ի վեր աշակերտուհիներովը կ'զբաղէր նա, երբ ահա նամակ մի կը բերեն իրեն ուղղեալ։ Կը բանայ զայն, կը կարդայ, և կը հաստատէ հոգւոյ մի յուսահատական ճիչն որ առ ինքն կը դիմէր անյապաղ օգնութիւն խնդրելով։ Հոգւոյ այդ հառաչքն Վարդանուշէն կ'արձակուէին։

Արաքսիա՝ անհնարին ցաւով համակուած՝ փութաց իւր տիրուհիէն հրաման ուղելու օրն ի բուն գուցէ տունէն բացակայ լինելու համար, առանց բնաւ այդ բացակայութեան պատճառ մի վերագրելու։

Տիկին Աբգարեան թոյլտուութիւն ըրաւ այդ մասին մտածելով թէ Սիսակի հետ չպիտի կարողանար տեսնուիլ եթէ նոյն իսկ այդ լինէր իւր նպատակը, զի երիտասարդն իրեն պիտի

նուիրէր օրուան մեծագոյն մասն։ Իսկ եթէ նա խոստմնազանց գտնուէր՝ յայնժամ առիթ մ'էր երիտասարդէն բացատրութիւն խնդրելով իրեն դէմ եղած մեքենայութեանց տեղեկանալու։

Բայց օրիորդին մեկնելէն քիչ մի առաջ Սիսակ ներկայանալով տիկնոջ սիրտն հանգստացաւ, որով բնաւ հարկ չեղաւ աղջկան բացակայութեան ակնարկութիւն ընելու, և ոչ իսկ խօսք մ'արտասանելու անոր վրայօք։

Իսկ Արաքսիա սիրտ ի թունդ և շնչասպառ ընթացաւ դէպ ի բնակարան իւր բարեկամուհւոյն։ Հոն առաջին անձն որուն հանդիպեցաւ Տիկին Երանեանն եղաւ. ողբմելի մօր վշտագին կերպարանքը շատ իսկ կը յայտարէր իւր ներքին մտայուզութիւնը։

Տիկինն առաջնորդեց օրիորդին, ու դստերը սենեակը տանելով գնա՝ ցոյց տուաւ արտասուալից աչօք գվարդանոյշ որ անկողնոյ վրայ տարածուած էր այլակերպեալ դիմօք։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Արաքսիան անկեղծ ու խորունկ վշտակցութեամբ մօտեցաւ հիւանդին, ու ձեռքն անհուն արգահատութեամբ սեղմելով՝ իւր շարշարանաց տեսակն հարցուց։

Տառապեալ աղջիկը շինծու պարագայից վերագրեց իւր նեղութիւնն, անհամբերութեամբ

— Ե՞ս, պատասխանեց հէքն, գիտութեամբ յանցանք չի գործեցի անոր դէմ. եթէ սակայն յակամայս զինքը վիրաւորեցի, պատրաստ եմ յանցանքս քաւելու։

— Ես հետը կը խօսիմ, անփոյթ եղիր, սի՛-րելիս։

— Կը հայցեմ, մի՛ դատապարտեր զիս եթէ հակառակ կամացդ յարուցեցայ Սիսակի և արդ միջամտութիւնդ կը խնդրեմ։

— Ի՞նչպէս կուզես որ մեղադրեմ զքեզ երբ սէրն անդիմադրելի զօրութիւն մ'է որուն դէմ մրցելով հանդերձ կը յաղթուինք մեր տկարութիւնն երեւան հանելով։

— Ուրեմն կը ներե՞ս ինձ, Արաքսի՛ա, եթէ ես ըմբոստ լինելով քու խորհրդոցդ՝ այսօր քեզ պաղատիմ վերադարձնելու համար ինձ այն սիրտն զոր կ'ուզէիր հեռացնել ինձմէ։

— Ոչ միայն կ'արդարացնեմ զքեզ, այլ յօժարամիտ եմ քեզ ծառայելու։ Յորչափ կարելի է չարիքը մեզմէ հեռացնելու, պարտինք աշխատիլ յաջողելու։ Բայց երբ անոր հպատակած ենք արդէն՝ դժուարին է հալածել զայն մէկէն ի մէկ. ամոքելով բուժելու ենք զսէր։

— Այսինքն կ'ուզես ըսել, Արաքսի՛ա, թէ տրամադիր ես բուժելու զիս սրտիս հիւանդութենէն։

— Եթէ կարող լինէի՝ անշուշտ առ այդ կ'աշխատէի։ Թէեւ կը ճանաչեմ Սիսակի քանի մի բարեմասնութիւնները, բայց անկեղծօրէն խոսելու համար, նոյնչափ ալ ծանօթ են ինձ և իւր թերութիւնները։

— Ե՞ս, պատասխանեց հէքն, գիտութեամբ յանցանք չի գործեցի անոր դէմ. եթէ սակայն յակամայս զինքը վիրաւորեցի, պատրաստ եմ յանցանքս քաւելու։

— Ես հետը կը խօսիմ, անփոյթ եղիր, սի՛-բելիս։

— Կը հայցեմ, մի՛ դատապարտեր զիս եթէ հակառակ կամացդ յարուցեցայ Սիսակի և արդ միջամտութիւնդ կը խնդրեմ։

— Ի՞նչպէս կուզես որ մեղադրեմ զքեզ երբ սէրն անդիմադրելի զօրութիւն մ'է որուն դէմ մրցելով հանդերձ կը յաղթուինք մեր տկարութիւնն երեւան հանելով։

— Ուրեմն կը ներե՞ս ինձ, Արաքսի՛ա, եթէ ես ըմբոստ լինելով քու խորհրդոցդ՝ այսօր քեզ պաղատիմ վերադարձնելու համար ինձ այն սիրտն զոր կ'ուզէիր հեռացնել ինձմէ։

— Ոչ միայն կ'արդարացնեմ զքեզ, այլ յօժարամիտ եմ քեզ ծառայելու։ Ցորչափ կարելի է չարիքը մեզմէ հեռացնելու, պարտինք աշխատիլ յաջողելու։ Բայց երբ անոր հպատակած ենք արդէն՝ դժուարին է հալածել զայն մէկէն ի մէկ. ամոքելով բուժելու ենք զսէր։

— Այսինքն կ'ուզես ըսել, Արաքսի՛ա, թէ տրամադիր ես բուժելու զիս սրտիս հիւանդութենէն։

— Եթէ կարող լինէի՝ անշուշտ առ այդ կ'աշխատէի։ Թէեւ կը ճանաչեմ Սիսակի քանի մի բարեմասնութիւնները, բայց անկեղծօրէն խօսելու համար, նոյնչափ ալ ծանօթ են ինձ և իւր թերութիւնները։

— Բայց ո՞վ արդեօք թերութիւն չունի, բարեկամուհիս։

— Անշուշտ ոչ ոք կատարեալ է. բայց սա կէտն ի նկատի առնելու է որ բարեմասնութիւնք թէ թերութիւնք առաւել ծաներակշիռ են անձի մի վրայ։

— Մի՛ դատապարտեր զիս, Արաքսի՛ա, բայց այնչափ պաշտելի է ինձ Սիսակ որ նոյն իսկ իւր թերութիւնքն շնորհալի կը թուին ինձ։ Եթէ ոք փորձէր այդ պակասութիւնները ձիրքերու վերածել՝ կ'ընդդիմանայի վախնալով թէ իրմէ մաս մի կը պակսէր, որով ոչ այնչափ սիրուն կը ներկայանար նա իմ աչաց։

— Համարելով որ թեթեւամտութենէ շարժեալ զքեզ լքանէր ուրիշ մի սիրելու համար, ա՞յդ եւս հաճելի պիտի թուէր քեզ արդեօք, Վարդանո՛յշ։

— Ո՛հ, այդ սոսկալի պարագայն բացառութիւն մ'է։

— Եթէ թուարկէի շատ մի մոլութիւններ որք զքեզ կրնան դժբաղդ ընել՝ պիտի յամառէ՞ իր արդեօք զինքը դարձեալ համակրելի գտնելու։

— Սիրտը չի տրամաբաններ, այլ կը սիրէ կուրօրէն. և կարծես որչափ զինքը չարչարեն՝ նոյն հաւատարմութեամբ կը պաշտէ զչարչարողն։

— Եթէ չեմ սխալիր, կ'ուզես յայտնել որ երբէք այնչափ չէիր սիրած զՍիսակ որչափ արդ երբ նա զքեզ կը տանջէ։

— Ստոյգ է այդ, Արաքսի՛ա, զի կ'զգամ որ եթէ Սսիսակ չի վերադարձնես ինձ անյապաղ, կեանքս շուտով կը կնքեմ։

Զայս ըսելով աղջիկն, սկսաւ արտասուել դառն յուսահատութեամբ, ու բազկատարած՝ օգնութիւն խնդրել իւր բարեկամուհիէն։

Մարդս լաւ կ'ըմբռնէ ինչ որ ինքը կը ճանաչէ։ Անշուշտ ոչ ոք այդչափ արդահատանք կրրնար զգալ սիրոյ մասին որչափ Արաքսիան, որուն սիրտը նոյնչափ անսահման կերպիւ ի սիրոյ գրաւուած էր։

Հետեւապէս զՎարդանոյշ բազկացը մէջ առնելով, ու իւր արտասուքը անոր արտասուաց խառնելով, այնպիսի կարեկցութիւն մ'զգաց այդ ծայրայեղ ցաւոց պատկերին առջեւ, որ ազնիւ հոգւոյ բուռն խանդիւ խոստացաւ վշտացելոյն տեսնել ընդ փոյթ զԱիսակ և հետը խօսիլ։

Բայց անհամբերն Վարդանոյշ ուզեց գիտնալ թէ ե՞րբ արդեօք պիտի ունենար իւր պաշտելոյն պատասխանը։

— Կը խոստանամ ամեն ջանք ընել զնա ընդ փոյթ տեսնելու, պատասխանեց վարժուհին։

Վշտահար կոյսն իւր մտերմին երկու ձեռքերն կը համբուրէր եռանդագին, իբր ձեռքերն փրկչի մի որ իւր կորուսեալ դանձը իրեն պիտի վերադարձնէր։ Եւ աչերն աղերսագին յառելով Արաքսիայի երեսին վրայ.

— Ո՛հ, գոչեց անձկութեամբ, խոստացի՛ր ինձ զինքն այսօր իսկ տեսնելու, զի չեմ կարող այլ եւս սպասել։

— Եթէ կարելի է, անտարակոյս։ Բայց խոստացի՛ր և դու հանդարտ լինել, զի այդ արտասովոր այլայլութիւնդ վիճակիդ սաստկութիւնը կրնայ աւելցնել։

— Ես կը խոստանամ քեզ ինչ որ ուզես, բաւ է որ այսօր, գոնէ վաղը անպատճառ ինձ պատասխան մի բերելու յօժարիս։

— Պիտի ջանամ, սիրելի՛ս, զամեն ինչ գործել զքեզ գոհ ընելու համար։

— Ո՛հ, կարծես թէ պիտի մեռնիմ սրտայուզութենէս։

— Տե՛ս, ինչպէ՞ս այտերդ հրաբորբոք են. եթէ չհանդարտիս, հոգիս կը վիրաւորես։

— Ամեն կամացդ կը հպատակիմ, Արաքսի՛ա, միայն թէ վերադարձնես ինձ զՄիսակ։

— Սակաւ ինչ համբերէ։

— Ուրեմն այսօր իսկ զինքն պիտի տեսնես։

— Պիտի աշխատիմ առ այդ։

— Անոր պատասխանը կրնա՞մ ընդունիլ այսօր։

— Այդ անհնար է, Վարդանո՛յշ։

— Իսկ վա՞ղն առաւօտ։

— Գուցէ։

— Կը հայցեմ քեզմէ, ապահովէ՛ զիս, խոստացի՛ր մանաւանդ կանուխ գալու, զի հիւծելս կ'զգամ։

— Ամեն ճիգ պիտի թափեմ վաղը առաւօտ գալու։

— Աւա՜ղ, գոչեց Վարդանոյշ, քանի՛ մաշեցուցիչ ժամեր, քանի՛ մահաբեր վայրկեաններ պիտի անցնին մինչեւ այն տենչալի րոպէն որ զքեզ հոս պիտի բերէ վերստին. պիտի ապրի՞մ արդեօք մինչեւ վաղն առաւօտ։

— Տե՛ս, ըսաւ Արաքսիա, ո՞րչափ յոյսերուդ կատարման մերձենաս, նոյնչափ անհամբերութիւնդ կը սաստկանայ։

— Սիրող սրտի վիճակն է, պատասխանեց կոյան սիրակէզ։

— Սակայն ըսէ ինձ, Վարդանոյշ, ծնողքդ վերահասու չ'եղա՞ն արդեօք քու հիւանդութեանդ բուն պատճառին։

— Ամենեւին, սիրելիս։

— Զարմանալի՛ բան։

— Տե՛ս ինչ կայ մէջ տեղ։ Հարուստ երիտասարդ մի, զոր կը ճանաչեմ, կ'ուզէր զիս ի հարսնութիւն։ Ես բնականապէս մերժեցի զինքը, մայրս ջանաց զիս համոզելու, յամառեցաւ մանաւանդ յաջողելու համար։ Ես մերժմանս մէջ հաստատ մնացի, ու այդ ամուսնութեան ստիպմանց վերագրելով հոգւոյս թախիծն ու ցաւը, ոչ եւս փոյթ ըրի ծածկել սրտիս յուսահատութիւնը։ Վիճակս օր աւուր սաստկացաւ, որով ծնողքս իրենքզիրենք իմ տառապանաց պատճառն համարելով՝ դադարեցան գոնէ առ այժմ այդ երիտասարդին խօսքն ընելէ։

— Ո՛վ Վարդանոյշդ իմ, օ՛րշափ խիղճ կ'ընեմ ծնողացդ տեսութեանց հակառակ գործելու, և այսպէս չար կերպիւ փոխարինելու այն վստահութիւնն զոր կը յայտնեն ինձ անոնք։

— Կը զղջա՞ս արդեօք ըրած խոստմանդ վրայ։ Թո՛ղ ուրեմն զիս նսեմ բաղդիս. թո՛ղ որ մեռնիմ։

Զայս ըսելով հէք աղջիկը դէմքը ծածկեց վերմակովն ու լացաւ կողկողագին։

Արաքսիան անոր մօտենալով հեռացուց վերմակն, ու յուսահատ կուռին դէմքը փայփայելով խոստացաւ անհնարինը գործել հետեւեալ

առաւօտ առ ինքն վերադառնալու համար։

Տառապեալ էակը ժպտեցաւ այնպիսի քաղցրութեամբ մի որ վարժուհւոյն հոգին կատարելապէս ճմլեց։

Որպիսի՛ երկնային սէր անարժան մարդու մի համար, կը մտածէր վարժուհին ափսոսալով։

Երկու բարեկամուհիք զիրար ողջագուրելով, մեկնեցաւ Արաքսիան։ Առաջինը սիրոյ յոյսերով և երկիւղներով էր համակեալ։ Իսկ երկրորդը կը հեռանար մտացը մէջ որոճալով Սիսակի հետ տեսութիւն մ'ունենալու եղանակին վրայ։ Հակառակ իւր տեսութեանց, ձկտմանց և զգացմանց պիտի գործէր, ստոյգ է այդ։ բայց կրնա՞ր արդեօք ձեռնտու չլինել իւր ողորմելի բարեկամուհւոյն, և աջակցութիւնը մերժելովն անոր մահը պատճառել գուցէ։ Մտածութեանցը մէջ խորասոյզ՝ Արաքսիա հասաւ վերջապէս Աբգարեանց տան առջեւ, երբ նոյն միջոցին փողոցի դուռը բացուելով հոնկէ դուրս ելաւ Սիսակ։

ԳԼՈՒԽ ԻԸ։

Վարժուհին տեսնելով զերիտասարդն ցնծաց այդ յարմար առթին համար զոր բաղդը կը հայթայթէր իրեն։

Մարդս կ'ուրախանայ երբեմն երբ կը գործէ հակառակ իւր կամաց, որչափ որ պիտի ուրախանար եթէ իւր անձին հաճելի եղած նպա-

տակի համար աշխատէր իսկ. ա՛նչափ պարագայներն և զգացումները կը ներգործեն իւր վրայ անդիմադրելի կերպիւ։

Ուստի Արաքսիա թէեւ կը փափաքէր ի սրտէ ջախջախել ամենայն յարաբերութիւն Վարդանոյշի և Սիսակի միջեւ, հանդերձ այսու կ'ափսոսէր նոյն միջոցին անոնց յարաբերութեանց յոգերն ամրապնդել։

Տեսնելով ուրեմն զՍիսակ կանգ առաւ անոր առջեւ ու ըսաւ.

— Ես ալ կ'ուզէի քեզ հանդիպիլ հարցնելու համար թէ ե՞րբ արդեօք կրնամ հետդ խօսակցութիւն մ'ունենալ։

— Տրամադրութեանդ ներքեւ եմ, պատասխանեց երիտասարդը, մարմինն և գլուխը ծռելով, շինծու պաշտօնական վայելչութեամբ մի։

— Այդ հրապուրիչ ձեւերդ այլոց պահէ, ըսաւ Սիսա՛կին այնպիսի եղանակաւ մի որ կասկած չէր թողուր իւր դժգոհ տրամադրութեանց վրայօք։

— Ինչո՞ւ այդպէս խոժոռադէմ ես այսօր, Արաքսի՛ա։

— Վասն զի գլխաւոր պատճառներ ունիմ այդպէս լինելու։

— Թոյլ կուտա՞ս ինձ հարցնելու թէ ուսկի՛ց յառաջ կուգան նեղութիւններդ։

— Նոյն իսկ քեզմէ, պարո՛ն։

— Ինձմէ՞, հարցուց Սիսակ անկեղծ զարմացմամբ։

— Այո՛, քեզմէ։

— Ի՞նչ կրնամ գործել քեզ նկատմամբ ակամայ յանցանքս քաւելու համար։

— Առանց յապաղման, և որչափ կարելի է շուտ հայթհայթել ինձ առանձին տեսութիւն մի։

— Նոյն իսկ այս վայրկենիս ուրեմն։

— Բայց ո՞ւր։ Կը փափաքիմ որ մեր տեսութիւնը վկայ չունենայ և մանաւանդ գաղտնի մնայ։

— Խիստ իրաւացի է խնդրածդ։

— Կը խոստանա՞ս ուրեմն բնաւ մէկու մը չհաղորդել մեր ժամադրութիւնը։

— Պատուոյս վրայ կ'երդնում։

— Ուրեմն վաղ առաւօտ խիստ կանուխ կը տեսնուինք։

— Անհնարին է ինձ կէս օրէն առաջ հրաւէրդ ընդունիլ. և դարձեալ ապահովապէս չեմ կըրնար խոստանալ զայդ։

— Բայց ստիպողական հարկ մի կայ, Սիսա՛կ։

Երիտասարդը չփոթած քիչ մի մտածելէն վերջը՝ փութաց ըսել.

— Եթէ կը հաճիս նոյն իսկ այս գիշեր տեսնուինք։

— Ի՞նչպէս, այս գիշեր, հարցուց աղջիկը վարանելով։

— Եղանակը շատ պարզ է։ Երբ ամենքը տան մէջ կը քնանան, ես կէս գիշերէն երկու ժամ վերջը պատուհաններուդ ներքեւէն անցնելով կ'երգեմ եղանակ մի որ ծանօթ է քեզ։ Դու կը պատասխանես ինձ լոյս մի բերելով պատուհանիդ առջեւ։ Ես կանկ կ'առնում փողոցի դրան առջեւ, դու վար կ'իջնես դուռը կը բանաս։

ներս կը մտնեմ ու սենեկի մի մէջ առանձնանալով ազատօրէն կը խօսինք։ Եւ այսպէս հետդ սիրահարի դերը խաղացած կը լինիմ հակառակ քու կամացդ։

— Կատակի ժամանակ չէ արդ։ Զգիտեմ եթէ առաջարկած եղանակդ վտանգի չենթարկեր ղմեզ։

— Ի՞նչ վտանգ։

— Ի՞նչ գիտնամ։

— Բաւ է որ լրտեսուելու երկիւղ չլինի, ըսաւ երիտասարդն, եղանակաւ մի որ կը յայտնէր թէ նոյնչափ և ինքն պատճառներ ունէր իւր կողմանէ անտես մնալու։

— Սովորական օրերն, ըսաւ աղջիկը, տունը կէս գիշերէն յառաջ քնոյ մէջ թաղուած է։ Կը յիշեմ որ մէկ քանի անգամ տղայոց անհանգըստութեան պատճառաւ մինչեւ բակն իջայ, վերըստին վեր ելայ, մի քանի անգամ գնացի եկայ առանց մէկու մի ուշադրութիւնը գրաւելու։

— Ուրեմն ի՞նչ կը վարանիս, ընդունէ՛ առաջարկս։

— Լաւ, քանի որ ուրիշ միջոց չկայ։

— Մի՛ մոռնար, ժամը երկուքին։

— Հանգիստ եղիր իմ մասիս։ Դու միայն ջանադիր եղիր ժամադրութեանդ հաւատարիմ մնալու։

— Կրնաս ապահով լինել եւս այդ մասին։ Եւ եթէ յանկարծ Բերա հուր բոց դառնայ, նոյն իսկ հրակէզ պիտի ներկայանամ քեզ։

— Ամեն պարագայի մէջ կատակն ախորժելի չէ, վատահ եղիր։ Եւ եթէ ներես ինձ՝ խոր-

հուրդ կուտամ քեզ որ առաւել խնայողութեամբ խելք բանեցնելու ջանադիր ու քիչ մ'առաւել սիրտդ կրթելու տրամադիր լինիս։

— Պատրաստում ուրեմն այս գիշեր բարոյականութեան վրայ դասախօսութիւն մի լսելու, ըսաւ Սիսակ քիթը բերանը ծռմռտկելով։

Վարժուհին ընդհատելով իւր ազգականին խօսքերն ըսաւ.

— Ուրեմն այս գիշեր, ի տեսութիւն։

Եւ փողոցին դռնէն ընդ փոյթ ներս մտնելով տղայոց քով գնաց։ Երկու հրեշտակներն զինքն ընդունեցին անհնարին ցնծութեամբ, ու անոնց դգուանքներն սիրեցին մասամբ իւր հոգւոյն տագնապը։

Տղայք արշալոյսն են մարդկութեան։ Բնութիւնն ուրախ լինի թէ տխուր՝ այն կը փայլի անկասկած նոյնչափ կենաց որչափ աւերակաց վրայ։ Կեանքն ինչպէս աւերակը լուսոյ ազդեցութեան կ'ենթարկուին. առաջինն առաւել կը գեղեցկանայ կենսական հանգամանքն, իսկ միւսն առաւել խորհրդաւոր վսեմութեամբ կը տարածուի իւր մահուան մէջ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Սպասե՛լ։ Ի՛նչ անձկութիւն սպասելուն մէջ։ Կարծես թէ մարդս մեծ դղրդմամբ կը ցնցէ բոլոր զանգակներն իւր սրտին և բանականութեան, և թէ յայնժամ արիւնը իւր շրջանը փութացնելով կ'սպառնայ խորասոյզ ընել յախուռն

ընթացքին մէջ ամեն գործիք գործելու և մտածելու, այնչա՛փ սիրտն ուժգին կը տրոփէ, և այնչա՛փ գլուխը չփոթ մտածութեանց անընդհատ յաջորդութեամբը կը կարծէ ցնորիլ։

Սպասե՛լ։ Ժամանակը կարծես խարխսնեռած տարածութեան մէջ կը հանգչի, մինչ անհամբեր հոգին ակնդէտ կը հիւծի, և կ'սպասէ որ ժամերն իրենց կասեցուցած ընթացքը շարունակեն, յառաջ քայլեն, ընթանան, մինչեւ որ հնչէ տենչալի վայրկեանն որ մեր երազոց իրականութիւնն հաստատէ։

Սպասող անձն հանդէպ իրեն կը տեսնէ բարդուիլն ամեն խոչնդոտից, վտանգաց և ակնկալութեանց, որք իբր թումբ կը կանգնին ընդդէմ իւր տենչանաց։ Ալեռանջ հոգին կ'ընդհարկանի այդ թումբին դէմ, յետս կ'ընկրկի վիրաւորեալ, վերստին յառաջ կը դիմէ յուսահատ դարձեալ նահանջելու համար արիւնլուայ, մինչեւ որ այդ կենաց ու մահուան խնդրոյն մէջ՝ ոգեսպառ կենայ հոգին իւր անկարողութեան մէջ թաղուած։

Վարդանոյշ յիմարելով կ'սպասէր. թուէր իրեն թէ կեանքն յինքն կ'սպառէր, ա՛յնչափ արագօրէն կ'ընթանար իւր շրջանին մէջ։ Յորչափ Արաքսիա իւր քովն էր, կը կարծէր թէ նա հաշտութեան ոգին է որ առ ինքն պիտի վերադառնար ձիթենեաց ճիւղն ի ձեռին։ Թուէր իրեն թէ նա աւետաբեր հրեշտակն էր որ պիտի գոչէր «Ահաւասիկ քեզ կը վերադարձնեմ սիրահարդ։»

Բայց երբ Արաքսիա հեռացաւ՝ կասկածն և

վհատութիւնն իրենց մահաբեր իրականութեամբ. ըն եկան կանգնեցան հանդէպ Վարդանուշի։

Աղջկան արիւնն հուր բոց կը թաւալէր պայթում սպառնալով, և յուսահատութեան մէջ կը մխիթարուէր այն դառն մտածութեամբ թէ մահը գոնէ կը մնար իրեն իբրեւ վճռողական դարման, եթէ Սիսակ լքանէր զինքն։

Կ'ուզէր, կը ճգնէր ինքզինքն յանցաւոր հանդիսացնելով իւր աչաց առջեւ՝ զՍիսակ արդարացնել անբացատրելի անտարբերութեանն համար իւր նկատմամբ։ Զանձն իւր կը քննէր, կը դատուէր, կը դատապարտէր, զիւր սիրելին անբասիր ընելու համար։

Անուրանալի է որ սիրահար մի կը մոռնայ զիւր անձ՝ պաշտած էակին համար, քանի որ ոյժը ն ու կեանքն անկէ կը քաղէ։

Վարդանոյշ սիրոյ ալեկոծութեան մէջ կը տարուբերէր ու կը կարծէր թէ իւր բարեկամուհւոյն բերնով կենաց վերջին հնչիւնը պիտի արձակուէր իրեն համար։ Նոյն իսկ երբ կենատու յոյսն անոր սրտին ու մտաց քաոսին մէջ վայրկեան մի լոյս կը տարածէր, այդ սփոփարար շողն անգամ կարծես զինքը պիտի չանթահարէր, այնչա՛փ իւր ներքին վիճակը յուսահատական էր։

Երբ Տիկին Երանեան կը մերձենար աղջկանը, սա կրկին անհանգստութիւն կ'զգար, զի անհանդուրժելի էր իրեն ամեն ճիգ որ կը փորձէր զիւր վարանումնք ծածկելու մայրենի թափանցող աչերէն։

Սիրահարն իւր տաղնապոց մէջ կ'որոնէ այ-

անձը միայն որուն իւր բուն կացութիւնը կը-
նայ յայտնել։ Մօր մի ներկայութիւնն իսկ ան-
տանելի է երբ հոգւոյ հրատապ վիճակը քօղար-
կելու հարկաւորութիւն կը լինի։

Տիկին Երանեան կը մաշէր աղջկանն անդար-
մանելի վիճակը նկատելով. և զայդ քիչ ժամա-
նակ առաջ ըրած ամուսնական առաջարկին վե-
րաբերելով՝ ամեն ջանք կ'ընէր համոզելու համար
զիւր դուստր թէ երբէք իւր կամքը չպիտի բրա-
նաբարէր։

Վարդանոյշ թէեւ կը պաշտէր զիւր ծնողք,
հանդերձ այսու տաժանելի էր իրեն՝ ներկայու-
թիւնն մայրենի։ Հետեւապէս աչերը կը գոցէր
իբր թէ ի քուն լինէր, և այր, եղանակաւ կը
յաջողէր հեռացնել զվշտահար տիկինն, ու ա-
ռանձնութեան մէջ ազատ կը մնար տառապա-
նաց մէջ ընկղմելու լիովին։ Բայց երբ գիշերն
վրայ եկաւ, հէք աղջկան վիճակն առաւել եւս
ծանրացաւ։

Արեգական լոյսը դառնալից և յուսահատ
բոպէներու մէջ անգամ իւր բարերար ներգոր-
ծութիւնը կ'ընէ մեր սրտին ներքին մութ խա-
ւերուն վրայ իսկ, իւր շողը մինչեւ հոն թա-
փանցել տալով կարծես։ Բայց երբ խաւարը կը
տիրէ՝ սարսափահար աչքը սեւ գաղտնի թշնա-
միներ կը կարծէ տեսնել շուրջն, ու սիրտը՝ մը-
թութեան մէջ թաւալագլոր՝ թուի ընդհարկա-
նել աննշմարելի խոչընդոտից, և երկիւղով հա-
մակուելով՝ նոր յիմարեցուցիչ արագութիւն
կ'ստանան վշտերը։

Խաւարն աներեւոյթ հրէշն է որ մեր կոկոր-

դէն ուժգին բռնելով զմեզ խեղդամահ ընելու կ'սպառնայ։ Ողորմելի Վարդանոյշն մթութեան հետ դէմ առ դէմ մնալով՝ ծայրայեղ սաստկութեամբ կասկածանաց ու վարանմանց մատնուեցաւ գիշերն ի բուն։ Եւ երբ առաւօտուն արեգակը փայլեցաւ պայծառ, կարծես թէ տառապանաց անդունդէն վեր բարձրանալով՝ աչերն ի լոյս ցաւոց բացաւ վերստին։

ԳԼՈՒԽ Լ.

Յետ ժամադրութեան Արաքսիա ներքին անհանգստութիւն մի կ'զգար որուն ի զուր կը ջանար յաղթել։ Ստոյգ է թէ կը խորհէր որ սրտի պարտաւորութիւն մ'էր կատարածը, թէ ներելի չէր անապաւէն թողուլ սիրելի բարեկամուհի մի, թէ նուիրական պարտք մ'էր օգնել իրեն. և թէ Ներսէս իսկ յօգնութիւն տառապելոյն պիտի մղէր զինքն անշուշտ եթէ ազատ լինէր խորհուրդ հարցնել անոր։ Բայց այդ խորհրդածութիւններն ոչ միայն զվարժուհին չէին սփոփեր, այլ ընդհակառակն իւր անձկութիւնն անբացատրելի կերպիւ կը սաստկանար՝ որչափ ժամադրութեան վայրկեանը կը մերձենար։ Այդ թաքուն գիշերային հիւրընկալութիւնը խիստ անախորժ տպաւորութիւն մի կ'ընէր իւր վրան, թէեւ ապահով լինէր թէ ոչ ոք տեղեակ պիտի լինէր այդ տեսութեան։ Ինքը վստահ էր որ Սիսակ ոչ միայն չահ չ'ունէր մատնելու այդ գաղտնիքն, այլ նա մանաւանդ այնպիսի յարգալից

համակրութիւն մի յայտնած էր իրեն ամեն ժամանակ որ իրաւունք կուտար իրեն վստահ լինել անոր բարեկամութեան մասին։

Խոր լռութեան ու գիշերային թանձր մթութեան մէջ Արաքսիա սարսուռ կ'զգար, երբ յանկարծ լսեց փողոցէն առաջին խաղերը իրեն հաճելի եղանակի մի, զոր Սիսակ բաղմիցս երգած էր իրեն։

Տղայքն արդէն անմեղութեան քնով կը նընջէին, ամեն շարժում թէ՛ տան և թէ՛ փողոցին մէջ ժամերէ ի վեր դադրած էր։ Իսկ վարժուհին նստարանի մի վրայ տարածուած, ճրագի մի լուսով, ի զուր ջանք ըրած էր կարդալու՝ իւր չփոթած մտացը սակաւ ինչ սփոփում տալու համար։ Գրքին առաջին էջին վրայ կեցած էր երկար ժամանակէ ի վեր աչանց յաջողելու լրացընել զայդ։ Աչերը շարունակ ժամացոյցին կը դարձնէր. ու թէ՛ կը փափաքէր որ վերջապէս հասնի ժամադրութեան բոպէն, և թէ՛ կ'ուզէր խոյս տալ անկէ։ Բայց երբ ժամացոյցը վճռողական և խորախորհուրդ ձայնիւ հնչեցուց իւր երկու վանկերը, քստմնեցաւ կոյսն իբր թէ իւր դատապարտութեան հնչիւնը լինէր այդ։ Նոյն վայրկենին լսուեցաւ նաեւ Սիսակի երգն որ նոյնչափ աղետաբեր թուեցաւ իրեն։

Սարսափելով տեղէն ցատկեց աղջիկն, մոտեցուց ճրագը պատուհանին՝ որոշեալ նշանն ընելու համար, ու յետոյ ամենայն զգուշութեամբ սենեկէն դուրս ելաւ։ Մէն մի քայլին կը թուէր իրեն թէ Ներսէս իւր առջեւ պիտի կանգնէր. կարծեց իսկ անոր դրան ճռնչելը լը-

սել, և բոլորովին զարհուրած ուզեց խոյս տալ, իբր սենեակը վերադառնալ, ու ազգականին հետ տեսնուելու դիտաւորութեան էն եռ կենալ։ Բայց երբ վայրիկ մի ետքն հաստատուեցաւ թէ ոչ շարժում և ոչ ձայն կար իւր շուրջն՝ ոգեւորեցաւ, յուզեալ երեւակայութիւնն հանդարտելով, ու յիշելով խոստումն առ իւր տագնապեալ բարեկամուհին՝ արիաբար վար իջաւ, բացաւ փոքոցին դուռն, ու զ\\իսակ ներս առնելէն վերջը, ամենայն զգուշութեամբ փակեց զայն վերըստին։ Յամրաքայլ մեր երկու երիտասարդները վեր ելան, և մէկ փոքրիկ սենեակ մի մտնելով հոն քովէ քով նստան դուռը կիսաբաց թողլով։

Արաքսիայի սիրտը թէեւ կը տրոփէր ուժգին՝ սակայն հանդարտեցաւ աստիճանաբար նըկատելով թէ իւր բարեկամուհւոյն դատը պիտի վարէր նոյն միջոցին։ Ուստի քաջութեամբ զինեցաւ մարտ մղելու համար ընդդէմ յոդդոդզգացմանց իւր ազգակցին։

Երբ երիտասարդն ինքզինքն ապահով համարեց սենեկին մէջ, յաղթական եղանակաւ մի գոչեց՝ ժամացոյցը ցոյց տալով.

— Դիտէ՛, Արաքսի՛ա, թէ ո՛ր աստիճանի խօսքիս գերին եմ. նայէ՛ ժամը ճիշդ երկուքն է։

— Տայր երկինք որ ամեն պարագայի մէջ նոյն ճշդութիւնը պահէիր, պատասխանեց վարժուհին։

— Կասկածելովս հանդերձ որ կշտամբանացդ պիտի ենթարկուիմ, կը տեսնես որ խոյս չտուի քեզմէ։

— Ուրեմն կ'զգաս մեղապարտ լինելդ։

— Մեղապա՛ռտ։

— Այո մեղապարտ, մանաւանդ թէ ոճրագործ։

— Ո՛հ, ըսաւ Սիսակ խնդալով, բառերն հետզհետէ զօրաւորագոյն բացատրութեամբ կը յաջորդեն իրարու։ Նախ մեղապարտ էի, և քիչ մի վերջը ոճրագործ դարձայ։

— Ժամանակը սուղ է, ըսելիքս շուտ խօսիմ, և դու գործելիքդ փութով վճռէ։

— Մեղք որ դատաւոր չես, Արաքսի՛ա, գործերը կայծակի արագութեամբ պիտի կատարուէին։

— Խնդրեմ, Սիսա՛կ, վերջ տուր կատակներուդ։ Ոչ այս գիշերային ժամն, ոչ իմ տրամադրութիւնքս, և ոչ խօսակցութեանս նիւթը կ՚արդարացնեն ծաղրելու յօժարութիւնդ։

— Ե՞ս, զքեզ ծաղրե՛մ, օրիո՛ր, երբ յանչափս կը սիրեմ ու կը յարգեմ զքեզ։

— Լա՛ւ, լաւ, բայց խօսքի սկսինք։

— Առանց և ոչ իսկ յառաջաբանի. վստահեմ որ խնդիրը Վարդանուշի կը վերաբերի. օ՛ն ուրեմն, ի՞նչ է հրամանդ։

— Հրամանս այն է որ որոշապէս յայտնես թէ որո՞նք են տրամադրութիւնքդ այդ խեղճ աղջկան մասին, որ դժբաղդաբար քու թեթեւութեանդդ մարտիրոսն եղած է։

— Թեթեւութի՛ւն, մարտիրոսութի՛ւն, ի՞նչ բառեր են ադոնք։

— Խնդրեմ, Սիսա՛կ, զգաստ կերպիւ մը-տածէ ու պատասխանէ։

— Պատրաստ եմ ամեն հարցմանցդ պատասխանելու։

— Լաւ, բայց յուսամ որ անկեղծութեամբ կը պատասխանես։

— Ամենայն անկեղծութեամբ, այսինքն որչափ որ կարելի է ինձ։

— Կը գուշակեմ որ այս վայրկենիս եւս խարդախ պիտի լինիս։

— Շնորհակալ եմ, սիրուն ազգակիցս, ինձ շռայլած քաղաքավարութեանցդ համար. և ի նշան երախտագիտութեանս կը յառաջադրեմ անկեղծ լինել։

— Պատասխանէ՛ ուրեմն, քանի՞ օրէ ի վեր Վարդանուշի այցելութեան չես գնացած։

— Կարծեմ տասն և հինգ օրէ իվեր։

— Տասն և հի՛նգ օր։ Եւ ինչո՞ւ այդչափ ժամանակ զինքը լքեալ թողուցիր։

— Ես զինքը չթողուցի, ինքն ուզեց զիս հալածել։

— Ո՞վ, Վարդանո՞յշ ուզեց հալածել զքեզ։

— Այո՛։

— Խոստովանէ, Սիսա՛կ, թէ այս վայրկենիս ճշմարտախօս չես։

— Ինչպէ՞ս կրնաս զայդ գիտնալ։

— Անշուշտ գիտեմ քանի որ ողորմելի աղջիկը զքեզ շարաշար կը սիրէ։

— Եթէ սիրէր զիս ստուգիւ առաջարկս կ'ընդունէր։

— Ո՞ր առաջարկդ։

— Պարզապէս զինքն առեւանգել։

— Աքանչելի խորհուրդ արդարեւ։

— Ինչո՞ւ խորհուրդս կը դատապարտես։ Եթէ Վարդանոյշ զիս իրաք սիրէր, այդ առաջարկս խիստ գործադրելի պիտի թուէր իրեն։

— Գերագոյն մտածութիւն մ'ունեցեր ես իրաք։ Կ'երեւայ թէ քեզ համար պատուոյ խնդիրը բառ մ'է պարզապէս։

— Ինչպէս և քեզ համար սէրը բառդրքի բառերէն մին է և ոչ այլ ինչ։

— Կը բաղձայիր ուրեմն որ Վարդանոյշ անջնջելի արատով մի դրոշմէր թէ՛ ընտանիքն և թէ՛ բոլոր իւր կեանքը։

— Դու ես նախապաշարմանց գերին ես կը տեսնեմ։

— Եմ այդ մասին, և կ'ուզեմ չլինել միշտ։

— Ուրեմն քանի որ զիրար չենք հասկնար, աւելորդ է մեր խօսակցութիւնն յառաջ մղել, ըսաւ Սիսակ ճարպիկութեամբ։

Բայց Արաքսիա առանց այդ խօսքերուն ուշադրութիւն ընել ձեւացնելու՝ երիտասարդին ըսաւ.

— Խոստովանէ՛ անկեղծաբար, ինչո՞ւ այդչափ ջանադիր ես փութացնել ամուսնութիւնդ օրիորդ Երանեանի հետ։

— Վասն զի կը սիրեմ զինքն, և կը փափաքիմ որչափ հնարաւոր է կեանցս բոլոր բոպէներն անոր հետ անցնել։

— Սիսա՛կ, մէկ կողմ թող այդ արուեստաւորեալ խօսքերն, և յիշէ թէ հոգւոյդ խորը կը կարդամ ես։

— Ինչո՞ւ ուրեմն կը նեղուիս հարց ու փորձի ենթարկելով զիս։

— Վասն զի կը փափաքիմ քու վերջին որոշումդ ճանաչել։

— Քանի որ դու չես հաւատար իմ սիրոյս էութեան, ի՞նչպէս կարելի է ինձ որ և է վճիռ տալ։

— Մեծ պատճառներ ունիմ սիրոյդ չհաւատալու, ըսաւ աղջիկը, մասնաւոր կերպիւ նայելով անոր։

Երիտասարդն անմիջապէս հասկցաւ թէ Տիկին Աբգարեանի կ'ակնարկէր, և անտարբեր ձեւ մ'առնելով ըսաւ.

— Ես երիտասարդ մ'եմ, և բնական է որ յուսով միայն չեմ կարող ապրիլ։

— Բայց յոյսերն իրականութեան վերածելու համար կը բաւէ որ նուազ հեշտասէր լինիս ու առաւել աշխատասէր։ Իսկ դու կը փափաքիս տիրանալ հանգիստ վիճակի մի առանց աշխատութեան. և այս է պատճառն որ կ'ուզես ամուսնութիւնդ փութացնել օրիորդ Վարդանուշի հետ և ոչ այլ ինչ։

— Ուրեմն ես չե՞մ սիրեր զՎարդանոյշ, գոչեց Սիսակ, իբր թէ սրտմտելով։

— Եթէ սիրէիր զինքը, չէիր դատապարտեր այդ խեղճ աղջիկն անկողնոյ մէջ տառապելու և կասկածով ու կարօտով մաշելու։

— Սո՞յգ է ըսածդ արդեօք։

— Կրնաս դու անձամբ երթալ և ըսածս հաստատել։

— Դու ազատ ես դատելու զիս ինչպէս որ կը կամիս. բայց սա ստոյգ է որ ճշմարիտ զգացում մ'ունիմ Վարդանուշի նկատմամբ. կը սի-

բեմ գինքն և կ'ուզեմ ստանալ գինքն ժամ յառաջ որ և է կերպիւ, հաւանութեամբ ծնողացն կամ թէ առանց անոնց հաւանութեան։ Եթէ այդ պայմանը կ'ընդունի օրիորդը, պատրաստ եմ նուիրել նմա բոլոր հոգիս։

— Յուսամ թէ առանց այլոց բաժին հանելու սակայն, զի այդ մասին խիստ առատաձեռն ես արդարեւ։

— Ես տակաւին ամուսնացած չեմ։ Հետեւապէս արդարացի չէ կարծեմ հաւատարմութիւն ուխտել առ այն որ տակաւին կինս չէ։

— Եւ սակայն դու չես ներեր որ ամենափոքրիկ համակրութիւն մ'ունենայ Վարդանոյշ ուրիշի համար կարծեմ։

— Անշուշտ։

— Կը տեսնես ուրեմն որչափ անիրաւ լինելդ։ Եթէ հարցնեմ քեզ թէ ի՞նչ բանի վրայ կը հիմնես քու առանձնաշնորհութիւններդ, ի՞նչ պիտի պատասխանես ինձ։

— Պիտի պատասխանեմ քեզ թէ կը վայելեմ պարզապէս սեռիս իրաւունքը։

— Եւ դու կը կարծես այդ անիրաւ խօսքերով արդարութեա՞ն դատը վարել պոդեօք։ Հարցուր խղճիդ և ըստ այնմ խօսէ։ Եթէ դու սիրէիր զՎարդանոյշ, նոյնչափ սրբանուէր պիտի լինէր քեզ նա որչափ օրինաւոր կինդ։

— Միրոյ խնդիրը տարբեր եղանակաւ կ'ըմբռնեն երկու սեռերը։ Կանայք կ'ուզեն որ արք իրենց համար զոհուին և իրենք ոչինչ գործեն փոխադարձաբար։

— Արդարեւ խիստ իմաստալից են խօսքերդ,

ըսաւ Արաքսիա, ծաղրող եղանակաւ։ Դու կը զուարճանաս, կեանքը կը վայելես, մինչդեռ քեզի համար Վարդանոյշ կը տառապի, կը հիւծի սենեկին մէջ առանձին։ Եւ այդ չի բաւեր, ու կ'սկսիս ամենայն յանդգնութեամբ գանգատիլ անկէ։

— Անշուշտ, քանի որ նա կը զոհէ գիս ընտանեկան կամ ընկերական անոտի պատշաճութեանց։

— Գանք բուն խնդրոյն, ըսաւ վարժուհին դժգոհ եղանակաւ։

— Ինչպէս կ'ուզես։

— Վարդանոյշ երբէք չ'ամուսնանար առանց ծնողացն հաւանութեան, զայդ լաւ գիտցիր։

— Եթէ այդպէս է, բնաւ կատարելիք բան չի մնար ինձ Վարդանուշի նկատմամբ. ուրեմն այս վայրկենէն օտար մ'եմ իրեն համար։

— Սակայն չէր այդ քու խոստումդ։ Դու յառաջադրած էիր անձիդ պարկեշտ վիճակ մ'ապահովել. և մինչև այդ խորհրդոյդ գործադրութիւնը, Վարդանոյշ յանձնառու եղած էր սպասել համբերութեամբ։

— Լաւ, բայց եթէ այդ վիճակը ցկեանս ապահովելու չյաջողիմ, հարկ է ինձ ուրեմն սպասել մինչեւ վերջը վտանգի ենթարկելով իմ ապագաս։

— Իսկ ի՞նչ ընէ Վարդանոյշ որ ընտիր բախտեր կը մերժէ քեզ հաւատարիմ մնալու համար։

— Եթէ կ'ուզէ, գինքն արձակեմ ուրեմն իր խոստմանէն։

— Խոստմանէն կ'արձակես, այո՛. բայց սըր-

տին յոդերէն ի՞նչպէս պիտի արձակես զինքն։

— Այդ իրեն գիտնալիքն է։

— Մեկուսի թո՛ղ աւելորդ վէճերը և լուր ինձ դու ու հնազանդէ։

— Խօսէ՛ տեսնենք։

— Քու ընելիքդ այդ աղջկան այցելութեան երթալ է, զի կրնաս հէգ սրարածին մահ պատճառել խիստ միջոցներովդ։

— Պէտք է որ մտածեմ։

— Սաստիկ պիտի վիրաւորես զիս եթէ չխոստանաս բարեկամու հոյս այցելութեան երթալու, զի նա ամենայն սրտայուզութեամբ քեզ կ'սպասէ, իւր լքման պատճառն իմանալու համար։

— Ինքն է պատճառն իմ հեռանալուս և մինչեւ որ չխոստանայ անմիջապէս ծնողացն հաւանութիւնն ստանալու չեմ վերադառնար առ ինքն։

— Կը տեսնեմ որ շահերդ լաւ գիտես պաշտպանել, Սիսա՛կ։

— Մէն մի մարդու պարտէ իւր վիճակն ապահովել։ Հաւանական է որ Երանեանք յաջողին իրենց դուստրն հեռացնել ինձմէ, և ես հետզհետէ սաստկագոյն սիրով համակուելով, դատապարտուիմ օր մի թշուառ լինելու։

— Սիսա՛կ, դու պարզապէս կ'ուզես սիրոյ վաշխառուն լինել, և երիտասարդուհին նեղի դնելով ծայրայեղու վերջնական միջոցներու դիմելու հարկադրել զինքն։ Ըրածդ անօրէնութիւն է ու անարդ պատրուակ մի ապօրինաւոր սէրդ ծածկելու համար։ Եթէ այդ խիստ վարմունքովդ ողորմելի օրիորդն Երանեան ըս-

պաննես, վստահ եղիր որ ես դատախազ պիտի կանգնիմ՝ զքեզ իբր մարդասպան հանդիսացը-նելով ի լուր աշխարհի։

Արաքսիա այնչափ սրտմտած էր որ աչերէն հուր կը ցայտէր և բերնէն փրփուր։

Սիսակ նկատելով որ պահանջողութեան չափն անցուցած էր՝ իւր ազգականին երեսին ժպտելով ըսաւ.

— Ես չեմ հաճիր որ իմ պատճառաւս այդպէս բարկանաս. հանդարտէ՛, ու կը խոստանամ երթալ Երանեանց։ Միայն թէ ամիս մի պայմանաժամ կը թողուս Վարդանուշի որպէս զի յաջողի հանգչելու զիւր ծնողք մեր ամուսնութեան մասին։ Յետ լրման տուած պայմանաժամիս եթէ վերջնական խոստումն չ'ընդունիմ, ես ապահովապէս կը հեռանամ օրիորդէն զի յօժարամիտ չեմ խաղալիք լինել երիտասարդուհեաց ձեռքը։ Դու ուրիշները կը հոգաս, Արաքսիա՛, միայն ինձ նկատմամբ անտարբեր ես, կը դիտեմ։

— Դու ուրիշի պէտք չ'ունիս, աւելորդ է զքեզ հոգալ։

— Անշուշտ, եթէ օր մի սրտիս զոհը լինիմ՝ փոյթ չէ քեզ այդ։

— Այդ կողմանէ երկիւղ չեմ կրեր, վստահ եղիր, Սիսա՛կ։ Միայն թէ ըսէ ինձ եթէ այցելութիւնդ կրնամ իմացնել օրիորդ Երանեանի։

— Եթէ կ'ուզես առաւօտուն իսկ կ'երթամ կամ կէս օրէն վերջը։

— Այդ անհնար է վասն զի ինքն անկողնոյ կը ծառայէ։ Նախապատրաստելու է զնա, ո-

բով ես առաւօտուն կ'երթամ և վաղուան համար այցելութիւնդ կ'իմացնեմ։

— Ուրեմն համաձայն ենք. ես վաղն անպատճառ կ'երթամ, բայց դու քու կողմանէդ պայմաններս մի՛ մոռնար։

— Լաւ, լաւ.

Եւ այս վերջին որոշման վրայ Արաքսիա ոտք ելնելով ըսաւ.

— Ժամանակ է որ մեկնիս արդ։

— Եւ վերստին ճրագն առնելով առաջնորդեց նա երիտասարդին մինչեւ փողոցի դրան առջեւ, և ամեն արարողութիւն դուռ բանալու և գոցելու լրացնելէն վերջը, իւր սենեակը վերադարձաւ սրտի անբացատրելի թեթեւութիւն մ'զգալով, զի կը մտածէր թէ առանց վտանգի յաջողած էր կատարելու իւր հաշտարար պաշտօնը։

Արաքսիա գոհունակութիւն կ'զգար աչացն առջեւ պատկերացնելով այն ուրախութիւնը զոր պիտի զգար իւր բարեկամուհին՝ իմանալով բանակցութեան յաջող ելքը։ Բայց միւս կողմանէ ի սրտէ կը ցաւէր ճանաչելով Սիսակի յողդողդ բնաւորութիւնը ինչպէս և անոր շահախնդիր դիտաւորութիւնները։ Սակայն ի՞նչ կըրնար գործել սիրայորդ և բռնաւոր սրտի մի դէմ որ ամեն զգօն խորհրդոց ականջ կը գոցէր։ Ոգեսպառ եղած տքնութենէ, ու ես առաւել այլ և այլ յուզումներէ այդ գիշերուան, անկողին մտնելով քնացաւ անմիջապէս։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Վարժուհին չէր գիտեր սակայն թէ իւր գիշերային տեսութիւնը վկայներ ունեցած էր։ Երբ նա կ'երթար ընդունիլ զՍիսակ, ոտից քայլերն որչափ ալ թեթեւ լինէին աննշմարելի չ'անցան Տիկին Աբգարեանէ։

Մինչդեռ երիտասարդուհին տան տիկնոջ սենեկին առջեւէն անցնելով կրկին զգուշութիւն կ'ընէր քայլիցը ձայնը եւս առաւել հեղձամղձուկ ընելու, հանդերձ այսու միջոց մի ճռնչիւնը տախտակին որուն վրայ կը կոխէր, ուշադրութիւնը գրաւեց Տիկին Աբգարեանի որ արթուն էր նոյն պահուն, ու անհանգստութեամբ կ'ուսումնասիրէր վարժուհւոյն նախորդ օրուան բացակայութեան պատճառը։ Կը մտածէր թէ գուցէ դաւ մի պատրաստէր նա զիւր հոմանին իրմէ հեռացնելու համար դարձեալ, ինչպէս որ ապացոյցն ունեցած էր մինչդեռ աղջիկը պարտէզին մէջ առ այդ կ'աշխատէր Սիսակի հետ տեսնուած ժամանակը։

Տիկին Աբգարեան հետաքրքիր լինելով ըստուգելու թէ ուսկից կուգար լսած ձայնը, տեղէն ցատկեց անմիջապէս, դուռը բացաւ անձայն, ու տեսաւ վարժուհին որ ճրագ ի ձեռին վար կ'իջնէր։ Սանդուղները բոլորաձեւ լինելով Տիկինը կեցած տեղէն մինչեւ բակը կը տեսնէր։ Հետեւապէս ականատես եղաւ օրիորդին գրեթէ մէն մի քայլին, անոր վերադառնալուն Սիսակի հետ, ու մասնաւոր խուցի մէջ առանձնանալուն։

Երբ Տիկին Արգարեան ճանչցաւ զիւր սիրահար, հոգին մռնչեց վայրենօրէն, և այնպիսի սրտմտութիւն մ'զգաց ընդդէմ աղջկան որ եթէ հնար լինէր յօշ յօշ կ'ընէր զայն նոյն միջոցին։ Անմիջական վրէժ երդուաւ, և խոստումն իրաք կատարեց։

Երբ տեսաւ թէ ո՞ր սենեկին մէջ մտան անոնք, մթութեան մէջ առ խարխափ քայլելով մօտեցաւ փոքրիկ սենեկին ուր երկու երիտասարդք կը խօսէին, ու դուռն կիսաբաց լինելով լսեց անոնց բոլոր խօսակցութիւնն, ու անգամ մի եւս համոզուեցաւ թէ Արաքսիա կը ճգնէր վերջնական կերպիւ հեռացնել իրմէ զիւր հոմանին։

Ուզածն իմանալէն ետքը, և նկատելով թէ անոնց խօսակցութիւնը վերջանալու վրայ էր, հոգւոյն բուռն վրէժէն առաջնորդեալ՝ գնաց զարկաւ սենեկի դրան Ներսէսի որ հեռու չէր ժամադիր երիտասարդաց գտնուած տեղէն։

Ներսէս իմանալով որ իւր դրան կը զարնեն՝ արթնցաւ երկի՝ զալից, ու հարցուց թէ ո՞վ էր զարնողը։

Տիկին Արգարեան պատասխանեց ցած ձայնիւ.

— Ես եմ, փութա՛ գալ շուտ առանց ժամանակ կորսնցնելու, և մանաւանդ առանց շըշուկ հանելու։

Ներսէս տեղէն ցատկեց անմիջապէս և հարցուց եթէ անմիջական վտանգ մի իւր օգնութիւնը կը պահանջէր։

— Գործելու պէտք չկայ, տեսնելու խնդիր

է, ըսաւ չարաթոյն կինը. շուտ եկու կ'ըսեմ, մանաւանդ զգուշացիր լոյս վառելէ։

Ներսէս արագաբար ուսերուն վրայ նետելով վերարկուն որ մերձ էր անկողնոյն, բացաւ դուռը, սրտայոյզ հարցնելով.

— Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ։

— Սպասէ՛ հոս առանց հեռանալու, և անձամբ կը դատես եղածն։

Յայտնի է որ վրէժխնդիր կինը կը փափաքէր որ Ներսէս տեսնէ երկու երիտասարդներն առանց սակայն անոնց խօսակցութիւնը լսելու, զի յայնժամ Արաքսիա անբասիր կը հանդիսանար, մինչդեռ կ'ուզէր զայն արատաւորել։

Բայց Ներսէս անկարող լինելով սպասելու մըթութեան մէջ մանաւանդ այդ անորոշ դիրքին մէջ, ուզեց լոյս վառել ու յառաջերթալ. բայց Տիկինը ձեռքէն բռնելով կասեցուց ըսելով.

— Ո՞ւր կը փափաքիս երթալ։

— Խնացուր ինձ ի՞նչ կայ որ կը բռնադատես զիս հոս անգործ մնալու։ Եթէ գողեր կան չեմ հանդուրժեր որ հոս մնամ առանց անոնց դէմ քայլելու։

— Իրօք գողեր եկած են ոչ թէ մեր ինչքը այլ մեր պատիւը գողնալու։

Մինչ այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար մեր երկու անձանց միջեւ, ահա դուռ մի կը բացուի, ու Արաքսիա դուրս կ'ելնէ հոնկէ ճըրագը բռնած, և Սիսակ կը հետեւէր անոր։ Երկու լրտեսներուն կեցած հակառակ կողմանէն յառաջացան երկուքը միատեղ, ու անյայտ եղան բոլորովին։

Ներսէսի բոլոր արիւնը քամուեցաւ կարծես նոյն վայրկենին. առաւելն տեսնելու կամ հարցընելու հարկ չ'համարեց. իւր սիրտը կատարեալապէս ջախջախուած էր, զի սեւ մատնութեան խաղալիք կը կարծէր զանձն իւր։

Կը ցնծար Տիկին Աբգարեանի հոգին որ օձերու բոյն մ'էր։ Խաւարին մէջ չէր տեսներ զՆերսէս, բայց անոր արձակած հառաչանքէն շուտ ըմբռնեց թէ որպիսի՛ սլաքով ծակած էր երիտասարդին հոգին։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Տիկին Աբգարեան չէր ներած Ներսէսի իրեն դէմ ըրած բողոքն ի պաշտպանութիւն վարժուհւոյն՝ Ֆլորիա եղած օրերնին. բայց լռած էր միշտ առանց երբէք համարձակելու իւր սրտմտութիւնն յայտնել, զի երիտասարդն պատկառանք ու տեսակ մի երկիւղ ազդած էր իրեն ամեն ժամանակ։ Ահա ուրեմն մէկ հարուածով թէ՛ թաքուն դժգոհութիւն մի կը գոհացընէր Ներսէսի մասին, և թէ՛ վրէժը կը լուծէր աղջկան մի նկատմամբ որ զիւր սիրահար կ'ուզէր յափշտակել իրմէ, և զիւր կրած անունը ստանալ։

Վրիժառութիւնը գազանային հեշտութիւն մ'ունի չար հոգւոյ մի համար. և զայդ հեշտութիւն լիութեամբ կը վայելէր Ներսէսի մօրուն։ Այդ վրիժառութեան զգացումը չանթի արագութեամբ ներգործելով իւր վրայ՝ առանց ժա-

մանակ կորսնցնելու ըսաւ կիսամեռ երիտասարդին.

— Ներսէ՛ս, ահա՛ աղջիկն զոր պաշտպանեցիր օր մի ի Ֆլորիա։ Դատէ՛ թէ որպիսի՞ լըրբութեամբ կը յանդգնի ժամադրութիւն ունենալ մեր տան մէջ իսկ։ Կարելի է որ առաջինը չլինի այդ. բայց սա ստոյգ է որ երկրորդ ժամադրութիւն մի պատրաստուած է վաղն առաւօտեան համար, թո՛ղ թէ այսօր օրն ի բուն բացակայ էր այդ անամօթ վարժուհին։

Զըսաւ սակայն թէ գրեթէ ամբողջ օրն Սիսակ իրեն մօտ էր։

— Ես լսեցի, յարեց Տիկինը, իրենց ամբողջ խօսակցութիւնը որ ոչ եւս երկբայութեան տեղի կուտայ իրենց մեղսակից յարաբերութեանց մասին։ Հետեւապէս անհնար է ինձ այլ եւս որդւոցս քով պահել այդպիսի անբարոյական անձ մի։ Սակայն ես ոչինչ գիտնալ կը ձեւացընեմ ի պատիւ տանս, ու ո և է պատճառ առարկելով այդ աղջիկը քովէս կը վանեմ։

Տիկին Աբգարեան իբր թէ ոչինչ գիտէր Ներսէսի յարաբերութեանց վրայօք վարժուհւոյն հետ, և թէ կը գործէր պարզապէս նախանձախընդրութեամբ տանը պատուոյն։

Երիտասարդն այնպէս ապշած, կործանած, մեռած էր գոգցես, որ ոչինչ պատասխանեց, ու իւր սենեակը մտնելով և դուռը գոցելով, անկաւ գետինն, ու հոն մնաց իբր մարդ յորմէ խլած էին զգալու և մտածելու կարողութիւնքն։

Ապագայն որ այնչափ վարդագոյն ներկուած էր իրեն համար՝ յանկարծ սեւ վարագուրով

ծածկուեցաւ։ Քաոսը կը տիրէր սրտին մէջ, քաոսը մտացը մէջ։ Բայց հետզհետէ խառնաշը-փոթութիւնը տեղի տուաւ լուրջ մտածութեանց. տեսաւ աչացն առջեւ պատկերացած սեւ մատնութիւն մի յանձին Արաքսիայի, զդաց զայդ մատնութիւն բոլոր դառնութեամբն հոգւոյ մի որ ամիսներէ ի վեր վարժ էր ծայրայեղ երջանկութիւն վայելելու, և որ երանութեան բարձունքէն կը գահավիժէր դժբաղդութեան վիհին մէջ։ Ոտք ելաւ, գտաւ սեղանն որուն վրայ ճրագ մի կար, վառեց զայն իբր թէ լոյսի ազդեցութեամբ կարողանար չար երազի մի ներգործութենէն ազատիլ։ Բայց լոյսը ոչ միայն ոչինչ ցրուեց, այլ մատնութեան երեւոյթն աստիճանաբար հսկայացաւ։

Սկսաւ անցեալն նայիլ, ու հոն փնտռել և գտնել դատապարտութեան կէտեր ընդդէմ աղջկան։ Յիշեց օրն այն ուր Արաքսիա կը խօսակցէր Սիսակի հետ պարտէզին մէջ. յիշեց անոր չփոթութիւնն երբ զինքն տեսաւ, ինչպէս անոր յանառութիւնը գաղտնի պահելու իրենց խօսակցութեան նիւթը։ Մտածեց թէ նախընթաց իրիկունն իսկ վարժուհին անհանգստութեան մի մատնետել էր զոր ի զուր կը ջանար քօղարկելու. և կը հետեւցնէր թէ այդ անհանգստութեան պատճառն ոչ այլ ինչ էր եթէ ոչ անձկութիւնը զիւր սիրահարն ընդունելու նոյն գիշեր։

Երիտասարդն ընելիքն անմիջապէս վճռեց, այն էր ի սպառ արտաքսել հոգիէն և կեանքէն զԱրաքսիան։ Որչափ ծանր էր հարուածն որով

իւր սիրտը պիտի մեռցնէր, նոյնչափ ալ ուզեց որ արագ լինի եւս գործադրութեան միջոցը։ Բոլոր գիշերն յուսահատութեան բուռն տառապանքն անցուց։ Ի վերջոյ սիրոյ հեշտագին յիշատակներուն վերջին մնաս բարեաւը տալով, մօտեցաւ փոքրիկ տուփի մի, հոնկէ դուրս հանեց չորաբեկ վարդ մի, և զայն թուղթի մի մէջ բոլորեց որուն վրայ գծած էր հետեւեալ տողերը։

«Նոյն օրն, Արաքսիա՛, որ այս վարդն գեղով ու թարմութեամբ կը փայլէր, պահեցի զայն ի յիշատակ մեր սիրոյն։ Նոյն օրն և զքեզ իբր այդ վարդն թարմ, և գեղեցիկ առաքինութեամբ օժտուած կը կարծէի։ Իսկ այսօր գիտեմ որ իբր այս վարդն թարշամեալ ես տգեղութեամբ ու սեւ մատնութեամբ ընդդէմ խոստացեալ սիրոյդ։ Այսուհետեւ ազատ ես, մնաս բարեաւ։»

Պահարանի մէջ դրաւ այդ թուղթը, Արաքսիայի հասցէն գրեց, ու դրաւ զայն գրասեղանին վրայ։ Ամեն ինչ լմնցած էր յաւէտ ուրեմն։

Բայց ծանր էր սիրոյ մարտիրոսին բնակիլ յայդ վայր որ վկայ եղած էր իւր երջանկութեան։ Ուստի միտքը դրաւ յաջորդ առաւօտուն իսկ մեկնիլ տունէն Անգլիա երթալու համար իւր գործողութիւններն պատճառ բռնելով։

Թեթեւ պատրաստութիւններ ըրաւ ճամբորդելու համար, ու առաւօտուն ամեն ինչ պատրաստ էր ուղեւորութեանն համար։

Ինչաւ պարտէզ ուր իւր երկու քոյրերն կը խաղային ընդ հովանաւորութեամբ աղախնոյ, և օ-

ріորդին բացակայութիւնը նկատելով հաստատուեցաւ Տիկին Աբգարեանի տուած տեղեկութեանց ճշդութեան վրայօք՝ այսինքն թէ վարժուհին երկրորդ ժամադրութիւն մի պիտի ունենար նոյն առաւօտուն Սիսակի հետ։

Մօտեցաւ տղայոց, համբուրեց զանոնք կրկին և կրկին անգամ անսովոր գորովանօք, ու իմացուց անոնց իւր ուղեւորելու դիտաւորութիւնը։ Տղայք զայդ իմանալով յանչափս յուզուեցան և սկսան լալ դառնապէս։ Բայց երիտասարդն զանոնք մխիթարելու դիտաւորութեամբ խոստացաւ վերադառնալ շուտով։ Մինչ Ներսէս կը պատրաստուէր հրաժեշտի ողջոյնը տալու, Աղաւնին ըսաւ.

— Եղբա՛յր, մեր օրիորդը հոս չէ, դու չե՞ս սպասեր անոր վերադարձին գինքն բարեւելու համար։

— Ոչ, քո՛յրս, ժամանակ չունիմ. միայն թէ իւր ձեռքը հասցնես այս նամակս, ըսաւ Ներսէս, որուն պարունակութիւնը ծանօթ է մեզ։

Արմինէն յափշտակելով եղբօրը ձեռքէն թուղթը, խնդրեց անկէ որ ինքը կատարէ այդ պաշտօնը, խոստանալով գործել ամենայն ճշդութեամբ ու ապահովութեամբ։

Մինչդեռ երիտասարդն կը վարանէր իւր հաճութիւնը տալու, բարեսիրտ Աղաւնին երաշխաւոր կանգնեցաւ քրոջն համար, իբր թէ բընդդմամբ զգար թէ ինքն սահմանեալ էր իւր սիրելի վարժուհւոյն միայն բարիք ու գոհունակութին աղդելու, և ոչ թէ տխրութիւն ու աղէտք։

Ուստի փոքրիկն Արմինէն նամակը ձեռքը պահելով, ըսաւ.

— Եղբա՛յր, վստահ եղիր կ'ըսեմ որ դայս մեր օրիորդին անվտանգ կը յանձնեմ։

— Լաւ ուրեմն, պատասխանեց երիտասարդն։

Մինչ գողտրիկ էակը կարեւորութեան ձեւ մի կուտար անձին՝ նկատելով իրեն տրուած վստահութեան նշանը, Ներսէս վերատին համբուրելով տղայքը անբացատրելի յուզմամբ, հազիւ կարողացաւ հնչել այս քանի մի բառերը. «Ձիս մի մոռնաք, այլ ամեն օր յիշեցէ՛ք։»

Ընդ փոյթ կը հեռանար Ներսէս այն տունէն որ երբեմն երջանկութեան բոյն եղած էր իրեն համար, և որ նոյն վայրկենին վայր աղետից դարձած էր, կարծես թէ անհամբերութեան տենդն զինքն գրաւած էր, և թէ կ'ուզէր ահագին անջրպետ մի դնել ընդ մէջ իրեն և Արաքսիայի։

Գնաց Պոլիս ի գրասենեակն Պ. Աբգարեանի՝ որ ըստ իւր սովորականին խիստ կանուխ դիմած էր հոն։ Այդ աշխատասէր հայրն առաջիններէն մին էր գործի երթալու, և յետինը իւր գրասենեակը թողլու։ Պ. Աբգարեանի համար կենաց գլխաւոր պայմաններէն մին էր գրաղիլ, յառաջադիմել, հարստանալ։ Որչափ իւր հարստութիւնը կը զարգանար, նոյնչափ ալ իւր արժանաւորութեան վրայ կը հաստատուէր, ու օրինաւոր գոհունակութիւն կ'զգար անդուլ ջանից յաջողութիւնը նկատելով։ Աշխատութիւնն իւր մեծագոյն զբօսանքն էր, անով կը բաւա-

կանանար, ու այլոց կը թողուր կենաց այլ և այլ վայելքը։

Պ. Աբգարեանի որդին պատճառելով նախընթաց օրուան հեռագրալուրի մի գալուստը, իմացուց հօրը թէ իւր ներկայութիւնն անհրաժեշտ էր ի Մանչէսթըր. և խոյս տալու համար գործի վերաբերեալ մանրամասնութեանց վրայօք հաշիւ տալու հարկէն, ու կասկածելի երեւալու վտանգէն, փութաց հեռանալ ծնողքէն առարկելով ուղեւորութեանն համար կատարելիք քանի մի հարկաւոր արարողութիւնները։

Պ. Աբգարեան զարմացաւ իւր որդւոյն յանկարծական ճամբորդութեան վրայ. բայց կատարեալ վստահութիւն ունենալով անոր թէ՛ լրջամիտ խորհրդոց և թէ՛ խոհեմութեան վրայ, մակաբերեց թէ այդ անյապաղ չուն անհրաժեշտ էր անշուշտ։ Ու թէեւ սաստիկ ցաւեցաւ երիտասարդին հեռանալուն համար, մխիթարուեցաւ սակայն մտածելով թէ գործերն ամեն բանէ յառաջ էին։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Մինչդեռ ներսէս ամեն սիրոյ յօդ ջախջախելով՝ Արաքսիայի սիրտը պիտի յօշոտէր, ողորմելի աղջիկն անգիտանալով իրեն հասած աղէտքը, կանուխ գնացած էր Վարդանուշին հոգին կենդանացնելու, Սիսակի մօտակայ այցելութեան լուրն հաղորդելով անոր։

Թէեւ վարժուհին ոչ նպաստաւոր և ոչ ալ

խիստ աննպաստ կերպիւ ներկայեց երիտասարդին հեռանալու պատճառն, օրիորդ Երանեան յաջողեցաւ զԱիսակ կատարելապէս արդարացընելու սիրահարաց յատուկ ճարտարութեամբն, ու մինչեւ անգամ ամուսնութիւնը փութացնելու պահանջողութեան մէջ գորովանաց ապացոյց մի տեսաւ։ Սոյդ է որ ոչինչ գիտէր երիտասարդին ստէպ այցելութեանց մասին առ Տիկին Աբգարեան ու անոնց ունեցած յարաբերութեանց վրայօք բնաւ կասկած չ'ունէր։

Վարդանոյշ իւր ծայրայեղ վհատութենէն և տկարութենէն մէկէն ի մէկ առ կեանս վերադարձաւ։ Մոռցաւ թէ հիւանդ եղած էր, այնչա՛փ մեծ էր յինքն աշխոյժը։ Անկողնէն ելաւ, ու անհամբեր սկսաւ սպասել յաջորդ օրուան որ յատկացեալ էր իւր սիրելւոյն գալստեան։

Իսկ Արաքսիա ուրախ էր ոչ թէ յակամայս կատարած գործին վրայօք, այլ վասն զի կը նըկատէր իւր բարեկամուհւոյն չափազանց երջանկութիւնն։ Ուստի հրաժեշտի ողջոյնը տալէն՝ ու մտերմին խառն երախտագիտական խօսքերն ընդունելէն վերջը, մաքուր խղճի գոհունակութեամբ փութաց վերադառնալ տուն, յուսադիր լինելով հասնելու հոն յառաջ քան զզարթումն Ներսէսի, որով իւր բացակայութիւնն արդարացնելու չէր հարկադրուեր, նա մանաւանդ նոր կասկածներ յարուցանելու առթէ մ'ալ կ'ազատէր, վի լաւ կը ճանաչէր երիտասարդին կասկածոտ բնաւորութիւնը և մեծ զգուշութեամբ կը վարուէր միշտ անոր նկատմամբ։

Կասկածոտութիւնն ու նախանձը յատուկ

ախտերն են բոլոր սիրահարաց։ Ամենէն դրական մարդը բանաստեղծ կը դառնայ երբ սիրահարեալ է, այնչափ զարմանալի իմն յաջողակութեամբ կասկածանաց ծնունդ կուտայ, և գուրգուրալով ու նախանձախնդրութեամբ զանոնք կը սնուցանէ, այլ և այլ գոյներով կը զարդարէ, և ոչնչէն ահագին շէնք մի կը կառուցանէ։

Երբ վարժուհին աշակերտուհեացը սենեակը մտաւ, երկուքը միատեղ դէպ անոր ընթացան, և անհամբերն Արմինէ գոչեց.

— Օրիո՛րդ, գիտէ՞ք մեր եղբայրը մեկնեցաւ։

Արաքսիան այլայլեցաւ չարաչար. ի՛նչպէս, մտածեց, արդէ՞ն Ներսէս արթնցած և տունէն դո՞ւրս ելած է։

Բայց Արմինէն առանց անոր ժամանակ թողլու որ և է հարցում մ՚ընելու, ու տղայոց մասնաւոր նախանձախնդրութեամբ շուտով կատարելու իրենց յանձնուած պաշտօնը, փութաց գրպանէն հանել եղբօրը նամակն, և իւր վարժուհւոյն յանձնելով զայն՝ իմացուց միանգամայն Ներսէսի Մանչէսթրը երթալը։

Երիտասարդուհին առաւ թուղթը ամբողջ մարմնովը դողալով, բացաւ, կարդաց, ու անկաւ գետինը նուաղեալ։

Երկու տղայք սարսափահար եղած այդ տեսարանէն՝ սկսան բարձր ճիչեր արձակել օգնութիւն խնդրելով։

Աղեցին աղախնայք, Տիկին Աբգարեանն իսկ մանկանց յարուցած աղմուկէն արթննալով սենեկէն դուրս ցատկեց, և փութաց այդ արտասովոր այլայլութեան պատճառն իմանալու։

Ի տես ողորմելի վիճակին վարժուհւոյն՝ վագրակերպ սիրտն այդ չար կնոջ տրոփեց բերկրութեամբ, զի շուտ հասկցաւ թէ կարեւոր դէպք մի տեղի ունեցած էր Ներոէսի և անոր միջեւ։ Այդ կարծիքը շուտով հաստատութիւն գտաւ երբ գետնէն բաղելով երիտասարդին նամակը որ նուաղեալ աղջկան ձեռքէն գլորած էր, կարդաց անոր պարունակութիւնն, և իւր տղոցմէն իմացաւ իրենց եղբօրը մօտալուտ ուղեւորութիւնն։

Այդ կնոջ ուրախութիւնն չափ չ'ունէր. նախ կ'ազատէր ամուսնոյն որդիէն, զի կը նկատէր զայդ երիտասարդ իբր տհաճոյ և վտանգաւոր վկայ մի իւր մեղադրելի կենաց, որ լռութեամբը կը դատապարտէր խստիւ իւր հանապազօրեայ վարմունքը։ Յետոյ երկու սիրահարաց ամուսնութիւնը կ'արգիլէր որ մահու չափ ատելի էր իրեն։ Հասած էր ուրեմն վերջապէս ժամն ուր պիտի վանէր զաղջիկն այն՝ որ իւր սիրային խորհրդոց դէմ դաւակցած էր։

Երբ վարժուհին ինքզինքը գտաւ, իւր մօտ տեսաւ երկու քոյրերն որք անմեղ հոգւոյ ամենայն անկեղծութեամբ իրենց մանկական խնամքը կը հայթհայթէին իրեն, ինչպէս և աղախին մի որ դժգոհ կերպարանօք կ'աշխատէր զինքն սթափելու, ժամ յառաջ հեռանալու տրամադրութեամբ։

Աղախնայք կ'ատեն վարժուհիներն, և անոնց չեն ներեր բացարձակ առաւելութիւնն որ ունին իրենց վրայ բարձրագոյն դիրք մի գրաւելով տանց մէջ։ Կը խորհին թէ վարժուհիք ինչպէս իրենք՝ թոշակաւոր անձինք են, ու չեն ու-

զեր ընդունել մշակեալ մտաց հայթհայթած առաւելութիւնները։

Արաքսիա թէեւ քաղաքավարութեամբ կը վարուէր սպասաւորաց հետ, սակայն իրեն դէմ հակառակութեան ոգւով լի էին, և ամեն առթի մէջ այդ հակառակութիւնը կը յայտնէին։

Ուստի անմիջապէս որ օրիորդն սթափեցաւ՝ աղախինը փութաց սենեկէն մեկնիլ մրմռալով, «ո՞վ գիտէ ինչ ունի։» Բայց հէգ աղջկան առաջին մտածութիւնն եղաւ փնտռել այն նամակն որ զինքը շանթահարած էր։

Տիկին Արդարեան առանց ումեք ուշադրութիւնը գրաւելու կարդացած էր զայն և վերջապէս նոյն տեղը թողած, իբր թէ ոչինչ տեսած լինէր։

Ուստի տղայք թուղթը գետնէն վերցնելով մատուցին վարժուհւոյն։ Դողդոջուն ձեռամբ առաւ զայն թշուառ արարածը և պահեց երկիւղածութեամբ։ Իմանալով տան տիկնոջ ներկայութիւնն սենեկին մէջ մինչդեռ ինքն նուաղեալ էր, մեծ անձկութեամբ տեղեկացաւ եթէ կարդացած էր նա իւր նամակը։ Տղայք ոչինչ տեսած էին, որով հաստատեցին թէ իրենց մայրը ոչինչ տեսած էր։

Արաքսիան այնչա՜փ տկարութիւն կ'զգար որ անկարող էր տեղէն շարժելու։ Թշուառ աղջկան կենսական գործիքը փչրուած էր կարծես։ Երկու քոյրերը՝ երկու մաքուր սիրոյ աղբիւրները, իրենց գթոտն և խնամքովը կը ջանային վերակենդանացնել զվարժուհին։ Աղաւնի կը հարցնէր թէ ի՞նչ գուցէ եղբօրը նամակն այդչափ յուզ-

մունք պատճառած էր իրեն, և կը զարմանար որ նա երբ այնչափ բարի էր, կրնա՞ր այդչափ վիշտ պատճառել իրենց սիրեցեալ օրիորդին։

Բայց վարժուհին կը ջանար հաւատացնել անոր թէ չէր Ներսէս պատճառ իւր անհանգստութեան, և թէ առաւօտուն մեծ սրտայուզութիւն մ'ունեցած էր մինչդեռ բացակայ էր, և որուն հետեւանքն էր իւր նուազումն։ Տղայք կը հաւատային այդ զրոյցին, անիծելով իրենց օրհնեալ բերնով նոյն իսկ եղբայրն այն զոր կը պաշտէին։

Բայց Արաքսիա կ'արգիլէր այդ անէծքը վախնալով կարծես թէ անմեղութեան անէծքը չար ներգործութիւն մ'ունենար իրեն այնչափ պաշտելի եղած անձին վրայ։

Ննջելու և լռութեան պէտքն սառարկելով՝ վարժուհին խնդրեց աշակերտուհիներէն որ անցնին իւր գտնուած խուցին կից սենեակն որուն հետ հաղորդակցութեան դուռ մի կար։ Կը փափաքէր առանձին մնալ առանց տղաքներէ բոլորովին հեռանալու։ Կրնա՞ր ննջել երբ սրտին մէջ ահագին ալեկոծութիւն կար։ Կ'ուզէր միայն յինքն ամփոփուիլ մտածելու, խորհելու և Ներսէսին իրմէ հրաժարելուն պատճառն ուսումնասիրելու համար։ Գոցեց աչերն իբր թէ ի քուն լինէր, և խոր լռութեան մէջ աչացն առջեւ բերաւ ամեն դէպք, ամեն պարագայ որ նախընթաց գիշերէն ի վեր տեղի ունեցած էր։

Կրեթէ վստահ էր թէ ոչ ոք իւր ժամադրութիւնն իմացած էր։ Բայց համարելով իսկ, կը մտածէր կոյսն, թէ Ներսէս լրտեսած լինէր գի-

բենք, յայնժամ անցած գնացածը պիտի գիտնար, իրենց խօսակցութեան տեղեակ պիտի լինէր, որով իւր անմեղ վարմունքը բոլորովին կ'արդարանար։

Բայց ընդ հակառակն եթէ լրտես մի իրենց գիշերային տեսութիւնը մատնած էր երիտասարդին, անհնարին էր որ նա կուրօրէն հաւատք ընծայէր այդ զրոյցին առանց իրմէ տեղեկութիւն խնդրելու և գործն ստուգելու. ուստի կը հետեւցնէր թէ գիշերային դէպքը բնաւ շարժառիթ չէ եղած Ներսէսի վարմունքին։

Կը մնար նոյն առաւօտուն տունէն կանուխ և անսովոր ժամանակի դուրս ելնելու խնդիրը։ Գուցէ կասկածելի թուէր երիտասարդին այնպիսի յանկարծական կերպիւ տունէն հեռանալու պարագայն առանց ոչ ումեք բան մի յայտնելու։ Բայց պարզ կասկած մի կը բաւէ՞ր արդեօք այդպիսի խիստ միջոցի դիմել զինքը մատնիչ անուանելով, և ջախջախել անգթաբար սիրոյ ամրապինդ յօդերը՝ դրժելով հաւատարմութեան նուիրական ուխտը։

Ստոյգ է թէ Արաքսիա զգուշացած էր իւր առաւօտեան բացակայութեան վրայ խօսելու Ներսէսի, քանի որ պատճառն անկարող էր հաղորդել անոր. նա մանաւանդ կը յուսար որ ժամանակին տուն վերադառնալով՝ դուրս ելած լինելն աննշմարելի կ'անցնէր։

Խիստ անախորժ էր Արաքսիայի գաղտնիք մ'ունենալը յայտնել շարունակ Ներսէսի, առանց կարողանալու եղածն խոստովանելու։ Արդէն պարտէզին պատահարը չէր մոռցած կոյսը, և

կ'զգուշանար, ինչպէս ըսինք, ամեն առթէ որ նորանոր կասկածներ կրնար յարուցանել։ Եթէ այդ բացակայութեան պարագայէն զրդեալ ներշնչուած էր Ներսէս, զնա դատապարտելի կը նկատէր Արաքսիա։ Հանդերձ այսու սիրահարաց սովորական ներողամտութեամբ՝ նախանձը շարժառիթ համարեց իւր խօսնայրին անիրաւ ընթացքին, առանց վայրկեան մ'իսկ համարձակելու փոփոխամտութեան վերագրելու զայդ։

Ուստի յուսաց նա որ երբ նախանձու առաջին բուռն ազդեցութիւնն անցնէր, նոյն իսկ Ներսէս՝ պիտի համոզուէր կասկածանացն անհիմն լինելուն վրայ, և զղջալով առ ինքն պիտի վերադառնար։ Այդ յոյսը՝ իբր նաւաբեկեալին դիւրաբեկ տաքտակն ընդ մէջ ալեկոծութեան, կ'արգիլէր զԱրաքսիան յուսահատութեան անդունդին մէջ կորսուելու անդարձ։ Վերջապէս զղջացեալ սիրահարի մ'ակնկալութիւնը սակաւ ինչ ոգեւորեց տառապեալ կոյսն, և թոյլ տուաւ իրեն յուսս կանգնիլ իբր թէ քունէն զարթնելով, ի մեծ գոհունակութիւն երկու մանկանց որք շարժելու անգամ չէին համարձակած վախնալով որ Գրիգորդին անդորրը կը վրդովէր։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Տիկին Աբգարեան մակաբերելով որ եթէ իւր սիրահարին յայտնէր դիտաւորութիւնը արտաքսելու զվարժուհին՝ նա ամեն միջոց պիտի գործածէր արգիլելու համար զայդ, փութաց ար-

ձակել զԱրաքսիան յառաջ քան զգալուստն Սիսակի։ Աղախնոյ մի միջոցաւ իմաց տուաւ օրիորդին որ երթայ ծնողացը տունը հանգչի քանի որ անհանգիստ էր։ Բայց օրիորդն յայտնելով թէ վայրկենական նուաղում մ'ունեցած էր տխուր պարագայի մի ներգործութեամբ, և թէ բոլորովին առողջ համարելով զանձն իւր աւելորդ էր հանգստեան դիմելու տղայքն առանձին մնալու ենթարկելով։ Տիրուհին պնդեց ըսածին վրայ, ու վարժուհին պարտաւորեցաւ անոր հրամանին հնազանդելու, ոչ սակայն առանց փոքրիկ կասկած մ'զգալու տի'նոջ յամառութեան ինչպէս և անոր ներքին դիտաւորութեանց վրայօք։

Կրկին և կրկին անգամներ համբուրելէն վերջը երկու քոյրերն և ընդ փոյթ վերադառնալու խոստմամբ, Արաքսիա կառք մի բերել տուաւ ու մեկնեցաւ՝ ծնողացը տունը վերադառնալու համար։

Այն ինչ տեսաւ Տիկին Վարսամեան իւր դստեր նուաղեալ վիճակն այլայլեցաւ ուժգին։ Բայց Արաքսիա իւր քաղցր ժպտովը մխիթարեց զնա հաստատելով թէ զգացածը ծանր բան չէր, ու պարզապէս հետեւանք էր անախորժ դէպքի մի, կ'ըսէր, որ տան մէջ տեղի ունեցած էր և իրեն յուզմունք պատճառած։

Հաւատացին ծնողքն այդ զրոյցին։ Եւ մինչ գրեթէ ժամէ մ'ի վեր մօրը գուրգուրանաց առարկայ էր Արաքսիա, ահա Տիկին Աբգարեանի սպասաւորը նամակ մի կը բերէ, և թողլով զայն կը մեկնի անմիջապէս։

Այլագունեցաւ կոյսն, գուշակեց դժբաղ-

դութիւնն որ իրեն կ'սպառնար, ու անհամբերութեամբ բանալով թուղթը կարդաց հետեւեալ տողերը.

«Տիկին Աբգարեան կ'իմացնէ Արաքսիա վարժուհուոյն՝ թէ իւր անվայել վարմունքին պատճառաւ ոչ եւս կրնայ պահել զնա տանը մէջ, և թէ սոյն վայրկենէն ազատ է նա ուրիշ տեղ փնտռելու։»

Ցանցաւոր կինը կ'ապտակէր զանմեղ աղջիկն, երբ սա ամենայն իրաւամբ կրնար հարուածել զնա պարսաւելի վարուցն համար։ Ինչպէս ամեն թեթեւ կին որ յանդուգն յանձնապաստանութեամբ ուրիշները մեղադրելով զանձն իւր անբասիր ընել կը փորձէ, և պատուոյ ջերմ նախանձախնդիր ներկայանալ կ'աշխատի, նոյնպէս կը հանդիսանար և Տիկին Աբգարեան։ Որչափ մարդիկ խստապահանջ լինին այլոց նկատմամբ, նոյնչափ ներողամիտ են իրենց համար. և որչափ խորամանկ լրջմտութեամբ հասարակաց գործոց դատաւոր կանգնին՝ նոյնչափ կը կարծեն թէ այլք բթամիտ են ու անկարող զիրենք հասկնալու և դատելու համար։

Թէեւ Արաքսիա իւր տիրուհուոյն հետ չէր անցներ ժամանակը, ակայն տեսածներէն կը մակաբերէր թէ բարոյականութեան տիպար մի լինելու չէ անշուշտ նա։ Բայց քանի որ ինքն տիկնոջ հետ գրեթէ վերաբերութիւն չունէր, ու տղայոց նուիրած էր իւր սէրն և Ներսէսի մօտ կ'ապրէր, փոյթ չէր ըներ տան տիկնոջ վարմունքը մանրամասնաբար ուսումնասիրելու, և ոչ ալ խղճմտութիւն կ'ընէր անոր տան մէջ ապրե-

լու՝ քանի որ ընդ հովանաւորութեամբ իւր խօս-
նայրին կը գտնուէր։

Ոչ միայն վարժուհին երբէք ակնարկութիւն
չէր ըրած Ներսէսի իւր մօրուին թեթեւսոլիկու-
թեանց վերաբերմամբ, այլ ծնողացն իսկ ան-
նըպատ խոստովանութիւն մ'ըրած չէր բնաւ։
Զար լեզուի պաշտօնն անշուշտ Արաքսիայի նը-
ման բարի հոգի մ'ունեցող անձի մի դերը չէր
կրնար լինել։

Երբ աղջիկն նամակն կարդաց՝ արձանացաւ։
Զինքը կ'արձակէին ուրեմն անարգանօք իբր նը-
ւաստ և խայտառակ արարած մի, երբ ինքն նը-
պատակ ունեցած է իւր արժանապատուութիւ-
նը ի վեր քան զամենայն նկատելու։ Բայց նոյն
միջոցին մտքէն անցաւ թէ իւր գիշերային հիւ-
ըընկալութիւնը վկայ մ'ունեցած էր գուցէ, և
թէ այդ կրնար լինել Ներսէսի դժգոհութեան
պատճառը ինչպէս և Տիկին Արգարեանի նախա-
տալից ակնարկութեան։ Գանկը կարծես ջախ-
ջախուեցաւ այդ մտածութեամբ, ու քիչ մնաց
որ երկրորդ նուազում մ'ունենար։

Տիկին Վարսամեան նկատելով դատերն ան-
հանգստութիւնը սուրաց առ նա, ու պէտք ե-
ղած հոգն հայթհայթեց անոր, մինչ անդամա-
լոյծ հայրն անկարողութեամբ կը գալարէր։ Երբ
կոյսն սակաւ ինչ ոգեւորելով կարողացաւ խօ-
սիլ, այլայլեալ մայրն ուզեց այդ նամակին պա-
րունակութիւնը ճանաչել, քանի որ ինքն իւր
տգիտութեան պատճառաւ անկարող էր ըն-
թեռնուլ զայն։

Ի՞նչ կրնար յայտնել սրտաբեկ Արաքսիան։

ի՞նչպէս կարելի էր իրեն կատարեալ խոստովանութիւն մ'ընել առանց դրժելու իւր խոստումն առ Վարդանոյշ, նա մանաւանդ երբ մայրն անիրաւ հակառակութիւն մ'ունէր ընդդէմ այն ընտանեաց։ Հետեւապէս յայտնեց պարզապէս թէ իւր տիրուհին զինքն կ'արձակէր օգուտ քաղելով Ներսէսի ուղեւորութենէն. զի կը յարէր կոյսն, ենթադրելի է թէ տիկինը վերահասու եղած էր իրենց սիրային յարաբերութեանց, և ջանադիր էր իրենց ամուսնութիւնն արգիլել։

Արդէն Ներսէսի յանկարծական ուղեւորութիւնն իմացուցած էր Արաքսիա իւր ծնողացն առանց անոր դժգոհութեան վրայօք բան մի խօսելու, մանաւանդ որ կ'զգուշանար անոնց կասկածը զարթուցանելու, յուսադիր լինելով երիտասարդին սիրտը վերստին շահիլ ամէն թիւրիմացութեան հետք ջնջելով, և այսու եղանակաւ աւելորդ սրտայուզութիւն խնայել ընտանեացը։

Վարժուհւոյ ծնողքն ոչ միայն չցաւեցան Տիկին Աբգարեանի կարգադրութեան վրայօք այլ չափազանց ուրախացան իրենց դուստրը քովերնին պահելու յուսով։ Ապահով էին որ իրենց փեսայացուն հրաման պիտի չ'տար Արաքսիայի ուրիշ ընտանեաց քով իբր վարժուհի երթալու, որով իրենց զաւակը պիտի պարտաւորէր ընդունելու այն նիւթական նպաստը զոր միշտ յամառած էր մերժել ընտանեացը համար։

Բայց այդ դոհունակութեան ցոյցերուն շուտով վերջ դրաւ Արաքսիա՝ յայտնելով թէ ինքն ոչ երբէք նպաստ կ'ընդունէր մարդէ մի որ իւր ամուսինը չէր տակաւին։

— Մեծ ենք, կ'ըսէր աղջիկն, ցորչափ մեր աշխատութեամբ կ'ապրինք. զի այնու եղանակաւ անկախ պիրք մի կ'ստանայ մարդն ընկերութեան մէջ ու բարձրայօն կը քայլէ։ Ընդունող ձեռքը կորագլուխ քայլելու դատապարտուած է, և ես, մա՛յր, կ'զգամ որ նոյն օրն որ արժանապատուութեանս վրայ կոխեմ, նոյն օրէն ե՛ս ինքս լինելէ կը դադրիմ։ Եթէ անձս չյարգեմ նախապատիւ կը դասեմ մեռնիլ։ Երբ մարդս իւր ընթացքէն գոհ է, ամեն դժուարութեանց կը դիմադրէ և ամեն ալէտից կը հանդուրժէ։

Արաքսիայի խօսելու եղանակը շատ իսկ կը յայտարարէր թէ իրեն դէմ հակառակիլն աւելորդ էր այս մասին։ Հառաչեց Պ. Վարսամեան, իսկ լուռ կեցաւ տիկինը, զգուշանալով իւր ատելութիւնն յայտնելու վարժապետութեան պաշտօնէն դէմ որուն շնորհիւ շքեղ փեսայացու մի կ'ակնկալէր։

Տառապեալ բայց արի աղջկան առաջին մըտածութիւնն եղաւ Ներսէսի անմիջապէս նամակ գրել իւր վարմունքն արդարացնելու համար և զայդ խորհուրդ գործադրեց իսկոյն։ Ուստի առանց բնաւ յայտնութիւն մ'ընելու Սիսակի ու Վարդանուշի վերաբերող յարաբերութեանց վրայօք, երդումը բրաւ առաջի երկնից որ իւր վարմունքը՝ թէեւ դատապարտելի կրնար թուիլ զանազան պարագայներու մէջ, պատուաւոր էր սակայն և գնահատելի ըստ ամենայնի, և թէ զայդ գուցէ քիչ ժամանակէն ինքն անձամբ կարողանար հաստատել։ Բնաւ գիշերային

ժամադրութեան ակնարկութիւն չէր ըներ նա, մտածելով թէ այդ պարագային գուցէ տեղեակ չ'լինէր երիտասարդն։ Գրեց բուռն սիրոյ արտայայտութեամբ, ու մեծ հոգւոյ արժանավայել մեծանձնութեամբ խնդրեց որ չբեկանէ երկու անկեղծ սրտերու սուրբ և նուիրական յոդերն, և մանաւանդ անյապաղ պատասխանէ՝ մտատանջութեան տագնապներէ զինքն ազատելու համար։

Յետ աւարտելու նամակն, ինքն անձամբ Թըղթատուն տարաւ, Մանչէսթրը ղրկուելու համար։ Առաւօտուն՝ կառքով եկած էր հայրենի բնակարանն, իսկ նոյն պահուն այնպէս ոգեւորած էր որ ամենայն քաջութեամբ մինչեւ Թըղթատուն քայլեց։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Յետ քանի մի ժամերու Արաքսիայի մեկնելէն վերջը Աբգարեանց տունէն՝ ահա Սիսակ որ կը ներկայանայ Տիկին Աբգարեանի իբր բոլորովին անտեղեակ թէ՝ Ներսէսի և թէ՝ իւր ազգակցին վերաբերեալ անցից։

Տան տիկինը դժգոհ կերպարանք մ'առած էր գրգռելու համար զերիտասարդը պատճառն հարցընելու։ Եւ իրօք սա դիտողութիւն ըրաւ տիկնոջ իւր դժգոհ կերպարանքին վրայ։

— Կը ցաւիմ խոստովանելու, պատասխանեց խորամանկ կինը, թէ ազգականդ անպա-

տուութիւն մոցուց տանս մէջ, իբր թէ ոչինչ գիտնար անցած դացածին վրայ։

— Ո՞ր ազգականս, Տիկի՛ն։

— Զգիտեմ եթէ ձեր տոհմային ճիւղագրութիւնը մեծ է, բայց սա ստոյգ է որ շատ գոհ լինելու իրաւունք չունիք Արաքսիայէն։

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատճառը։

— Առանց երկար խօսք ընելու սա չափս յայտնեմ ձեզ թէ այս գիշեր այդ անամօթ աղջիկը մարդ մի հիւրընկալեր է գաղտագողի։ Սպասաւորաց մին տեսեր է մարդն մինչ կը մեկնի եղեր, առանց սակայն ո՛վ լինելը գիտնալ յաջողելու։ Մտածեցէք ի՛նչ անպատուութիւն տանս համար։

— Սովորական բաներ են ադոնք, ըսաւ երիտասարդն, յատուկ նշանակութիւն մի տալով բառերուն։

Բայց տիկինը իբր թէ վերահասու չլինէր այդ ակնարկութեան որ ուղղակի իրեն կը վերաբերէր, ու իւր դառնութիւնը ծածկելով յարեց.

— Բնականապէս այդպիսի գայթակղական դէպքէ մի վերջը ոչ այլ ինչ կը մնար ինձ ընել եթէ ոչ վանել այդ վարժուհին իմ տունէս։

— Վանե՛լ։

— Անշուշտ։

— Արաքսիան ո՞չ եւս հոս է։

— Ոչ եւս։

— Եւ դուք քաջութի՞ւնն ունեցաք անմեղ մի իբր յանցաւոր դատապարտելու և արտաքսելու, գոչեց Սիսակ բարկութեամբ, նա մանա-

ւանդ երբ ինքն էր պատճառն այդ ցաւալի եղելութեանց։

— Ո՞վ կ'ապահովէ զձեզ թէ անմեղ մ'էր այդ աղջիկը։

— Ե՛ս։

— Անմեղութիւնը խաւարին շնորհիւ չգործեր։

— Շատ անգամ, Տիկի՛ն, խաւարն անմեղութեան վրայ կը տարածուի, մինչ լոյսն յանցանքը կը լուսաւորէ։

— Պարո՛ն, պատասխանեց կինն ի մեծ զայրոյթ, եթէ ինձ կ'ակնարկէք, ես ազատ եմ իմ բնակարանիս մէջ գործել ինչպէս որ յարմար թուի ինձ. սակայն պատճառ մի չէ որ վարձկաններ նոյն ազատութիւնն ուզեն վայելել հոս։

— Եթէ կը մտածէք թէ օտարական մի ձեր տան պատիւը պահելու պարտքն ունի, ձեր վրայ առաւել եւս կը ծանրանայ ձեր ամուսնոյն պատիւը պահպանելու նուիրական պարտականութիւնն։

— Ինչպէ՞ս կը համարձակիք, դո՛ւք, պարո՛ն, բարոյական կարդալու, երբ զիս մոլորեցնելու ամէն ջանք ըրիք, ըսաւ կինն, ինքզինքէն դուրս ելնելով։

— Խղճիս վրայ ոչինչ կայ, զի զձեզ մոլորեցընելու համար բնաւ ճիգ չըրի։

— Ի՞նչպէս կը համարձակիք այսպէս խօսելու։

— Ճշմարտութիւնը միշտ համարձակապէս կը բարբառի, և եթէ ներէք, Տիկի՛ն, ձեզ առաւելն ալ պիտի խոստովանիմ։

— Ոչինչ կ'ուզեմ լսել ձեր բերնէն։

— Եւ սակայն պէտք է որ խօսիմ իմացնելու համար ձեզ թէ օրիորդ Արաքսիայի և ձեր մէջ ահագին անջրպետ մի կայ. կ'ակնարկեմ այն անջրպետին որ կայ ընդ մէջ անմեղութեան ու յանցաւորութեան։

— Կ'ուզէ՞ք ուրեմն պնդել թէ այդ աղջիկն իւր սիրահարը չ'ընդունեց գիշերուան մէջ. ի՞նչ փաստ ունիք զայդ ուրանալու համար, ըսաւ կինը խօսքերուն տարբեր դարձուածք մի տալով։

— Սիրահա՞ր մ'ընդունած չ'ինելուն, այո՛, վկայ մ'ունիմ։

— Ո՞վ է այդ վկայն։

— Ե՛ս, Տիկին, ըսաւ Սիսակ, երբ հասկցաւ թէ ինքզինքը ծածկելն անհնարին էր։

— Դո՞ւք, հարցուց տան տիկինը, շինծու զարմացմամբ։

— Ես, այո՛, ես։

— Եւ կը յանդգնի՞ք խոստովանելու զայդ։

— Արդարեւ չեմ ըսեր որ լաւ գործ մ'ըրի ձեր տան մէջ սպրդելով մթութեան շնորհիւ, բայց պէտք էր որ տեսնուէի օրիորդ Արաքսիայի հետ, և այդ միջոցը կը մնար ինձ միայն։

— Խոստովանեցէ՛ք ուրեմն թէ այդ աղջկան սիրահարն էք։

— Ե՞ս, սիրահա՞ր, երբէք։

— Ուրեմն ի՞նչ գործ ունէիք հոս գիշեր ժամանակ, միթէ լոյսի լուսով անոր հետ չէի՞ք կրնար տեսնուիլ։

— Նախ ժամանակը սուղ էր, ստիպողական հարկ մի կար. երկրորդ ի՞նչպէս կրնայի ազգա-

կանիս հետ բանակցիլ առանց ձեր կասկածանաց տեղի տալու։

— Ուրեմն, պատճառնե՞ր ունէիք իմ կասկածներէս վախնալու։

— Տիկի՛ն, յայտնած եմ ձեզ արդէն թէ Արաքսիայի հայրն իբր ազգականս, ինձ բարերարութիւն ըրած է իւր յաջող ժամանակին. թո՛ղ թէ երախտագիտութեան բնական զգացումը կը կրեմ սրտիս մէջ, այլ գիտնալու էք նաեւ թէ զԱրաքսիան միշտ իբր քոյրս նկատած ու սիրած եմ, զինքն յարգելով և արգահատելով։

— Մի՞թէ պատճառ մ'է այդ որ ձեր անվայել ընթացից հանդուրժեմ։

— Կ'երդնում ձեզ պատուոյս վրայ, Տիկի՛ն, որ Արաքսիա տեսնուեցաւ հետս գործոյ մի համար որ բնաւ վերաբերութիւն չունի իրեն հետ։

— Որո՞ւ ուրեմն կը վերաբերի։

— Այդ չգիտեմ։

— Անշուշտ եթէ իրեն համար չէ, ուրիշ աղջկան մի համար կը գործէ։

— Գուցէ։

— Օրիորդ ազգականդ գիշեր ժամանակ այնչափ եռանդեամբ միջամտելու համար, ո՞ գիտէ ինչ ազնուական շահեր ունի։

— Տիկի՛ն, եթէ կ'ուզէք որ հոս կենամ, դադրեցէք պախարակելէ ազգականս, զի կը կրկնեմ ձեզ պատուոյս վրայ, որ օրիորդ Արաքսիա պատուակիր անձ մ'է և ամեն մեծարանաց արժանի։

— Ուրեմն յայտնեցէք ինձ թէ ո՞րն է աղջիկը որուն համար այնչափ երկնային անձնուի-

բութեամբ կը գործէ ձեր պաշտելի աղգականն, ըսաւ կինը հեգնութեամբ։

— Այդ անունն անկարող եմ յայտնելու, պատասխանեց Սիսակ, նախ պատուակիր անձի դիրքն առնելու համար և երկրորդ՝ կասկածելով թէ այդ կինն իւր ամուսնական առեւտուրը կրնար աւրել, զի բնաւ մտքէն չէր անցներ թէ իւր գաղտնիքը անոր համար գաղտնիք մի չէր։

— Կը տեսնէ՞ք ուրեմն որ անկարող էք այդ անունը ինձ յայտնելու։

— Տիկի՛ն, մի՞թէ ձեր վստահութեան արժանի կրնամ լինիլ եթէ թոյլատրանութեան օրինակ մի տամ, ըսաւ երիտասարդն, շար ակնարկութեամբ։

Տիկին Աբգարեան շրթունքները շարշարեց ակռաներուն և ապա յարեց։

— Բայց գոնէ խոստովանեցէք թէ այդ անանուն աղջիկն ի՞նչ կը պահանջէ ձեզմէ։

— Հետս ամուսնանալ, պատասխանեց սնապարծ երիտասարդն հպարտութեամբ։

— Հետեւապէս կը սիրէ զձեզ։

— Կը զարմանա՞ք։

— Ամենեւի՛ն։

— Ուրե՛մն։

— Բայց դուք մտադի՞ր էք հետն ամուսնանալու։

— Չգիտեմ։

— Զարմանալի՛ պատասխան։

— Ի՞նչ կայ զարմանալու։

— Գուցէ սակարկութեան խնդիր կայ, և

առ այդ անշուշտ կ'աշխատի ձեր առաքինի աղ-
գականը։

— Զգիտեմ. սակայն եթէ առ այդ իսկ աշ-
խատէր օրիորդ Արաքսիա, ոչ միայն պախարա-
կելի գործ մի չէր կատարեր այլ ընդհակառակն
կը նպաստէր երիտասարդուհւոյ մի երջանկու-
թիւնն ապահովելու։

— Այդչա՞փ ստիպողական հարկ մի կար
մինչեւ գիշերային ժամադրութեան կարօտե-
լու։

— Այո՛, Տիկի՛ն, խիստ ստիպողական։

— Կը սիրէ՞ք դուք այդ աղջիկը։

— Եթէ սիրէի ուրիշի չէի կապուեր։

Տիկին Աբգարեան այդ պատասխանէն գոհ
եղաւ, սիրտ առաւ, ու վերստին իւր հրապու-
րիչ ձեւերուն դիմելով ըսաւ.

— Խոստացէ՛ք ուրեմն վարժուհւոյն յորդո-
րանաց չ'անսալու, կամ լաւ եւս զինքն չ'տես-
նելու, ու նոյնչափ խոստացէ՛ք ամուսնական
խորհուրդէն հրաժեշտ տալու։

— Տիկին, անհնար է զօրիորդ Արաքսիա
չտեսնել. չբաւեր որ թշուառ աղջիկը կը զրկեմ
իւր ապրուստի միջոցէն, այլ կ'ուզէ՞ք որ իրմէ
ու իմիններէս հրաժարիմ. ոչ։

— Կը մերժէ՞ք ուրեմն թախանձանքս։

— Այսինքն ինչ որ ազգականիս կը վերաբե-
րի։

— Բայց չ'ամուսնանալ կը խոստանաք։

— Նոյնչափ այո՛, որչափ ո՛չ։

— Մինթէ գիս կը ծաղրէ՞ք։

— Երբէք։

— Ուրե՛մն։

— Եթէ խոստանաք հետս ամուսնանալու, ըսաւ չարաճճի երիտասարդը, յայնժամ կը խոստանամ և ես ուրիշ ընկերակից չ'ընտրել անձիս։

— Կ'ուզէք որ կրկնամուսնութի՞ւն մ'ընեմ։

— Դուք ուրիշ կին էք, ու չէ՞ք ուզեր որ ուրիշ մի իմ կինս լինի։

— Երբ զձեզ սիրեցի, ամուսնացած էի արդէն։

— Ո՞վ կ'ապահովէ զիս որ ընդ հուպ յաջորդ մի չի պիտի ունենամ։

— Կը նախասա՞էք զիս։

— Բնաւ ամենեւին։ Անձս այնքան անդիմադրելի չեմ համարիր մինչեւ հաւատալու համար թէ առաջին և վերջին տեղը գրաւած եմ ձեր սրտին մէջ։

— Իսկ եթէ հաւատայի՞ք։

— Ես ինքս լինելէ կը դադարէի, ուրացած կը լինէի բոլոր փորձառութիւնս կնոջ փոփոխամտութեան մասին։

— Մինթէ արբ առաւե՞լ հաստատամիտ են։

— Ուրեմն եթէ երկու սեռերն հաւասարապէս փոփոխամիտ են, երկուքն ալ իրարմէ կասկածելու իրաւունք ունին։

— Սակայն եթէ խոստանամ բոլոր կեանքս ձեզ նուիրելու՝ կը հրաժարի՞ք յայնժամ ամուսնանալու դիտաւորութենէն։

— Գուցէ ես ձեր քմահաճութեանց առարկայն եմ արդ. բայց ո՞վ կ'ապահովէ զիս անոր տեւողութեան վրայ։

— Ես։

— Դուք ուսկի՞ց կը քաղէք ձեր հաւատքը, Տիկի՛ն։

— Որտէս։

— Ինչ որ սիրտ կ'անուանէք դուք, անոր օրինաց գերին էք, առանց անոր օրէնք կարենալ կարդալու։ Նոյն դիւրութեամբ որ ինձ խոստում կ'ընէք՝ նոյն դիւրութեամբ ուրիշի եւս ըրած էք անշուշտ առանց զանոնք դրժելու խիղճ ընելու, ըսաւ երիտասարդն երկդիմի եղանակաւ։

Տիկին Աբգարեան շուտ հասկցաւ թէ երիտասարդն իւր նախորդ սիրային յարաբերութեանց վաղանցկութեանն տկնարկութիւն կ'ընէր, որով խնդիրը փոխելով յանկարծ, հարցուց։

— Ուրեմն խնդրածս չէ՞ք խոստանար։

— Ոչ։

— Եւ կ'ուզէք որ զձեզ սիրե՞մ։

— Կրնա՞ք դադրիլ արդեօք զիս սիրելէ։

— Ի՞նչ կայ անհնարին, պատասխանեց կինը վերջին աստիճանի դառնութեամբ։

— Ուրեմն ձեր սիրտը չէ այնքան գրաւուած որչափ կը յայտարարէիք։ Հետեւապէս մնացէք բարեաւ, Տիկին, ըսաւ, ոտք ելնելով ու մեկնելու պատրաստուելով։

Տիկին Աբգարեան այդ սպառնալեաց առջեւ իւր սրտին տկարութիւնն հաստատելով՝ սիրահարին ձեռքը բռնեց փութով, ու քովը նստեցընելով զնա, ըսաւ։

— Ես ոչինչ կը խնդրեմ ձեզմէ, կը գոհանամ միայն զձեզ սիրելով։

— Լաւ ուրեմն, պատասխանեց երիտասարդը յաղթական ձեւով։

Սիսակ նպատակին կը հասնէր վերջապէս։ Առանց ոչինչ խոստանալու իւր յարաբերութիւնք անփոփոխ կը մնային տիկնոջ հետ ցորչափ հարկաւոր դատէր։ Իւր տրիփը կորուսած էր սաստկութիւնն, հետեւապէս ամենայն դիւրութեամբ կրնար ջախջախել իւր յոգերը սիրուհւոյն հետ ի պահանջել հարկին՝ այսինքն եթէ ամուսնութեան խնդիրը կարգադրուէր։ Իսկ եթէ այդ կողմէն յոյսերն ի դերեւ ելանէին՝ Տիկնոջ հետ իւր յարաբերութիւնները շարունակելու արդելք չկար։

Երիտասարդն, իբր ճարտար ռազմագէտ, լաւ ըմբռնած էր թէ կանանց հետ բռնաւոր ու արհամարհոտ ձեւերով շատ առաւել յաջողելու յոյս կայ, քան թէ հպատակութեամբ ու արտասովոր սրտայուզութեամբ։

Ուստի Սիսակի խիստ եղանակը Տիկին Աբգարեանի նկատմամբ փոխանակ զայն իրմէ հեռացնելու՝ եւս առաւել ամրապնդեց անոր սրտին շղթաները։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Ներսէս թողուց ուրեմն Վոսփորի ափունքն ի տար երկիր ուղեւորելու համար, ու այդ հեռաւորութեամբ ուզեց արտաքսել ամեն յիշատակ սիրոյ, օտարանալ իւր անցելոյն հետ, ինքն լինելէ դադրիլ և ապա վերածնիլ։

Բայց խորհուրդ ընելը շատ առաւել դիւրին

է քան թէ անոր գործադրութիւնը կատարել, և զայդ շատ իսկ հաստատեց Ներսէս. զի հակառակ իւր անդուլ ճգանցն՝ Արաքսիայի պատկերը սրտէն ջնջելու, այդ պատկերն ամրապինդ կը կենար գրաւած տեղին մէջ։ Ի զուր Ներսէս տեսած նորանոր տեսարաններէն, ծովուն անհունութենէն, ճամբորդութեան բազմազբաղ դէպքերէն օգտելով՝ կ'աշխատէր անպատճառ մոռացն ու զգացմանցը տարբեր ուղղութիւն մի տալ. ի զուր կը մտածէր թէ խաբուած էր և մատնուած. կարծես թէ ներքին ձայն մի կը բողբէր իրեն դէմ անպարտ աղջկան դատը վարելով։

Վերջապէս Ներսէս հասաւ Մանչէսթըր։ Դրժբաղդութեանն առաջին օրէն իսկ կ'որոճար վաճառականութեան ձեռնարկին մասնաւոր ուղղութիւն մի տալ, ընդլայնել ըստ կարելւոյն գործողութեանցն ասպարէզը, յոգնեցնել միտքը, մաշեցնել զգացումները, միով բանիւ թաղել լիովին իւր անցեալն։ Առանձին էր սենեկին մէջ, առանձին էր յիշատակացն հետ, և որչափ ջանք կ'ընէր մոքէն հեռացնել իւր անցեալ երջանիկ օրերուն գաղափարը, նոյնչափ յանգէտս հոն կը վերադառնար, և անիծելով իւր դառնութեանց հեղինակը՝ կը պաշտէր զայն սակայն։

Այն ինչ տեղաւորուած էր վարձած սենեկին մէջ քանի մի ժամերէ ի վեր և ահա կը հասնի իրեն նամակ մի որ իրեն հետ ճամբորդած էր նոյն չոգեկառով։ Կը նայի գրին, կը ճանաչէ զայն, կը հասկնայ Արաքսիայէն լինելը, կը զարմանայ, դողդոջուն ձեռամբ կը բանայ պա-

հարանը, կ'ընթեռնու նամակը, սիրտը կը տը-
րոփէ, կը տկարանայ, պատրաստ է հոչակել
վիւր սէր, երբ յանկարծ աչացն առջեւ կը պատ-
կերանայ Արաքսիա որ կ'առաջնորդէր Սիսակի
գիշերուան մթութեան մէջ։

«Մատնութի՛ւն, սե՛ւ մատնութիւն» կը գո-
չէ, թուղթը կտոր կտոր ընելով։ Կը տեսնէ
նաեւ թէ աղջիկը թող թէ չէր ուզած լուսա-
բանել իւր գիշերային ժամադրութեան խնդի-
րը, այլ ամենափոքր ակնարկութիւն մ'ան-
գամ չէր ըրած այդ մասին։ Կասկածներն եւս
առաւել կը զօրանան, դառնութիւնը կը հսկա-
յանայ։

Երիտասարդին հաշտարար վայրկենական տը-
րամադրութիւնքը տխուր անդրադարձութիւն
մ'ունեցան, զի դառնութիւնը սեւ ատելութեան
գոյներ առաւ, և վիրաւորեալ սիրահարն իւր
արհամարհանքն ուզեց յայտնել աղջկան նամակն
անպատասխանի թողլով։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Մինչ Արաքսիայի երանութեան շէնքը կը կոր-
ծանէր, ընդհակառակն Վարդանոյշ սիրոյ ազ-
դեցութեամբ կը վերածնէր։

Սիսակ, ըստ իւր խոստման, գնացած էր յայ-
ցելութիւն օրիորդին որոշեալ օրն, ու ջանա-
ցած էր սրտագրաւ ձեւերովը ջնջել հետքերն
այն դառն վայրկեաններուն զորս պատճառած
էր իւր անտարբերութեամբը։

Վարդանոյշ պատկառելի սիրով սիրած էր միշտ գիւր մայր, առանց զայն հաղորդ ընելու երբէք իւր սրտին գաղտնեաց։ Բայց ստիպողական հարկի մ'առջեւ, այսինքն իւր պաշտելոյն պայմանաժամին առջեւ մինչեւ մէկ ամիս ամուսնութեան խնդիրը լուծելու, ոչ այլ ինչ կը մընար եթէ ոչ քաջութեամբ զինուիլ ու բանալ լիովին սիրտն առ իւր մայր։

Սէրը հրաշք կը գործէ. անով տկարը քաջ կը դառնայ, և երկչոտը՝ յանդուգն. և զայդ շուտ իսկ հաստատեց մեր սիրահարեալ կոյսը։

Կան շատ մայրեր որք կը կարծեն արթնցընել ու զայրացնել իրենց որդւոց զգացումները սրտի բնական պահանջմանց վրայ խօսելով, և մանաւանդ այդ մտերմութեամբ կը վախնան իրենց մայրական ազդեցութիւնը վտանգի մատնել։ Յատուկ որոշմամբ խոյս կուտան սիրոյ վերաբերող ամեն խնդիրներէ՝ հարկադրելով իրենց զաւակները գաղտագողի գործելու և մայրենի աչքէն ծածկելու նուիրական զգացում մի երբ իրենց սիրտը կ'սկսի խօսիլ։ Այսու եղանակաւ մայրն որ որդւոյն խորհրդակիցը պէտք էր լինել, նմա առաջնորդ կանգնիլ, ուղղել նորա զգացումներն ու քայլերը կենաց մէջ, ընդհակառակն կատարելապէս օտար կը մնայ իւր որդւոյն մտածութեանց ու զգացմանց։

Օր մի Տիկին Երանեան զարմացմամբ դիտեց թէ իւր դուստրն որ միշտ ազատ ու բնական ձեւով առ ինքն կ'երթար, ընդհակառակն կը մոտենար կարմրելով և շփոթելով առանց գիտնա-

լու թէ ինչպիսի՞ սկզբնաւորութիւն տայ իւր խօսքերուն։ Որչափ Վարդանուշի մայրն իւր զարմացումը կը յայտնէր այդ անորոշ դիրքի մասին, նոյնչափ կոյսը բառերը կը ծամծմէր։ Բայց ի վերջոյ սէրն յաղթելով երկչոտութեան՝ օրիորդը սկսաւ տակաւ առ տակաւ իւր խոստովանութիւնն ընել, յայտնել իւր սրտին վիճակն, հիւանդութեանը պատճառը, Սիսակի դրած պայմանները. և վերջապէս իմացնել որ եթէ մերժեն իրենց հաւանութիւնն իւր ամուսնութեան մասին Սիսակի հետ, ինքն պիտի համակերպէր այդ խիստ վճռոյն, բայց երբէք ուրիշի հետ չի պիտի ամուսնանար, և թէ իւր երիտասարդութիւնն արտասուաց պիտի նուիրէր. կը հաստատէր թէ այդ էր իւր անխախտ որոշումը։

Տիկին Երանեան գայթակղեալ դիրք մ'առաւ նկատելով թէ իւր աղջիկն այնպիսի համարձակութեամբ սիրոյ անմատչելի խնդրոյն վրայ կը խօսէր։ Բայց նկատելով որդւոյն յուզեալ վիճակը որ ամենայն անձկութեամբ կարծես մահու թէ կենաց վճռոյն կ'սպասէր, ի գութ շարժեցաւ, և յաղթելով իւր առաջին բուռն զգացման՝ մեղմ կերպիւ յայտնեց դստերն իւր դրժգոհութիւնը հաստատած գաղտագողի յօդերուն նկատմամբ, դատապարտեց այդ ընտրութիւնն, առարկելով թէ այդ տեսակ երիտասարդներն ոչ միայն անկարող էին կին մի պահելու և զայն երջանիկ ընելու, այլ թէ իրենք իսկ այլոց խընամոց պէտք ունէին կարեկցանք ապրելու համար։

Մինչեւ նոյն պահուն կոյսն ամենայն համբե-

թութեամբ մոխիկ ըրաւ։ Բայց երբ Տիկինը ակնարկելով երիտասարդուհեաց սիրային ցնորաց և անոնցմէ հետեւած թշուառութեանց՝ սոսկալի պատկեր մի ներկայեց աչացն Վարդանուշի, յորդորելով զնա հրաժեշտ տալու իւր սիրային խորհրդոց գործադրութենէն, յայնժամ աղջիկն այնպիսի յուսահատ պերճախօսութեամբ և զարմանալի կորովով իմն ու վճռողական կերպիւ յայտարարեց թէ ինքն Սիսակէ հեռացնել փորձելն կը ծառայէ միայն իւր կեանքը փշրելու՝ որ սարսափած մայրն ոչ եւս հակառակեցաւ այլ խոստացաւ ամուսնոյն ծանօթացնել իրաց վիճակը։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Օրերը, շաբաթները կ'անցնէին ու Արաքսիա ի զուր կ'սպասէր ակնկալած պատասխանին. նամակն ապահովագրած էր որով անպատճառ ձեռքն անցած էր այն։ Վշտահար կոյսը կը հետեւցնէր թէ ինքը մոռցուած էր Ներսէսէն, քանի որ և ոչ տող մի կ'ուղղէր իրեն. ապշած էր, տարակուսած էր, և չգիտէր ի՞նչ միջոց գործածել երիտասարդին դժգոհութեան պատճառն իմանալու համար։

Վերստին գրե՞լ անոր. ոչ, զայդ կը մերժէր իւր արժանապատուութիւնը. զի ինքն անմեղ լինելովն հանդերձ՝ խոնարհած էր մինչեւ յանցաւորի դիրք առնելու, և աշխատած էր իւր անձն արդարացնել նախկին նամակաւն, և ամեն ապահովութիւն տալ իւր անմեղութեան

նկատմամբ. իսկ ի փոխարէն և ոչ մէկ տող կ'ընդունէր։

Մտածեց, խորհուրդ խորհուրդի վրայ բարդեց, և ի վերջոյ տապալեց մտքին կանգնած շէնքը, զի անկարող էր հաշտեցնել ի միասին թէ՛ սրտին և թէ՛ արժանապատուութեան պահանջմունքը։ Ուրեմն մտադիր եղաւ համբերութեամբ սպասելու որ ժամանակը գիւր անմեղութիւն երեւան հանէ, եթէ սակայն Ներսէս՝ զինքն անարժան համարելով իւր սիրոյն, ուրիշի չ'ձօնէր գիւր զիրտ։

Սիրել, սիրուիլ և հալածուիլ առանց հալածանաց պատճառն գիտնալու, մարդուս վիճակուած դրից ծանրագոյններէն մին է։ Անորոշութիւն, կասկած և երկիւղ, ասոնք են յարակից պայմանքն այն անտանելի դիրքին, և այդ տանջանքներէ կը կրծուէր մարտիրոս կոյսը։

Արաքսիա չ'ունէր խորհրդակից մի զինքն առաջնորդելու իւր շփոթ տրամադրութեանց մէջ, և ոչ մէկը կար սրտին բեռը թեթեւցնելու համար։ Կը լռէր, կը տագնապէր առանց ծնողացն ոչինչ յայտնելու իւր դառն կացութեան վրայօք։

Բայց սրտի մարտիրոսութիւնը չէր բաւեր թշուառ աղջկան, հարկ էր նաեւ հայթհայթել ծնողացը միջոց ապրուստի։ Աշխատութեան գաղափարը, ընտանեացը օգտակար լինելու յոյսը կարծես փրկութեան խարիսխ մ'էր այն յուսահատութեան ովկէանին մէջ ուր ինքը կը ծփայր իբր խաղալիք բաղդի։

Վարդանոյշ ակամայ պատճառն եղած էր աղէտիցն Արաքսիայի, և սակայն սա աքանչելի մե-

ծանձնութեամբ ոչ միայն երբէք կասկած չէր տուած իւր բարեկամուհւոյն այդ մասին, այլ կ'ուզէր տակաւին անոր պաշտպան կանգնիլ Սիսակի զործած անհաւատարմութեանց դէմ բողքելով անգուլ։

ԳԼՈՒԽ Լ.Թ.

Սիսակ եկած էր զԱրաքսիան տեսնելու յետ իւր խոստացեալ այցելութեան։ Ցաւակցութիւն յայտնեց իւր ազգականին անակնկալ արձակմանը համար, առանց որ և է ուղղակի կամ անուղղակի բաժին մ'ունենալուն ակնարկութիւն ընելու տիկնոջ այդ որոշման մէջ։ Ընդհակառակը զանձն իւր անտեղեակ ձեւացուց Տիկին Աբգարեանի գրած նամակին ինչպէս և իւր արտաքսման պարագայից, իբր թէ համոզուած լինէր թէ տիկինն ոչ եւս պէտք ունէր հայ վարժուհւոյ, և թէ եւրոպացի կնոջ մի մոտիկ էր յանձնել որդւոցը դաստիարակութեան պաշտօնը։

Սիսակ անձնասէր էր կատարելապէս, թէեւ չար սիրտ չ'ունենար։ Եթէ կարենար որ և է ծառայութիւն մատուցանել խօսքով կամ անձնական աշխատութեամբ՝ զայդ կը կատարէր։ Բայց եթէ հարկ լինէր գործել սակաւ ինչ յոգնութեամբ՝ չեզոք և կամ կատարեալ անտարբեր դիրք մի կ'առնուր։

Ինքն պաշտպանած էր զԱրաքսիա՝ ընդդէմ Տիկին Աբգարեանի, և զայդ բաւական հատու-

ցում կը համարէր յանդէտս հասուցած չարեաց համար ազգականին։

Սիսակ զիւր անձ մինչեւ մէկ աստիճան պատճառ ճանաչելով վարժուհւոյն արձակման խընդրոյն մէջ, կերպով մի պարտուց ներքեւ կը մնար անոր նկատմամբ, և կը հարկադրուէր չափով մի փոխարինութիւն մ'ընել նոր ապրուստի միջոց մի փնտռելու աշխատելով։ Այդպիսի նեղութիւններ ստանձնելու համար ծնած չէր մեր երիտասարդը։

Իսկ Ներսէսի սիրային յարաբերութեանց վերայօք ոչինչ գիտէր Սիսակ, զի բնականապէս Տիկին Աբգարեանի շահուցն ընդդէմ էր այդ խոստովանութիւնը։ Նկատելով Արաքսիայի ցաւած կերպարանքը՝ զայդ տխրութիւն աղջկան նա՞ վերագրեց առանց պաշտօնի գտնուելու պարագային, և այդ նիւթին վրայ շուտով սահելով անցաւ, և ուրախ եղաւ երբ առանձին մընալով անձնուէր կոյսն հարցուց իրեն եթէ խօսքին հաւատարիմ եղա՞ծ էր և գնացա՞ծ յայցելութիւն Վարդանուշի։

Արաքսիա անոնց ուրախութիւն տեսութեան մանրամասնութիւններն իմանալով, գոհունակութեան զգացում մ'ունեցաւ իւր դժբաղդութեան մէջ։ զի ազնիւ հոգիներն ոչ այնչափ ինքզինքնուն համար կ'ապրին որչափ այլոց։

Բայց աղջիկը պահանջեց Սիսակէն որ իւր տեսութիւնները դադրեցնէ Տիկին Աբգարեանի հետ մինչեւ որ Երանեանց վերջնական որոշումն իմանար։

— Ես, կ'ըսէր նա, խիղճ կ'ընեմ քօղարկել

Վարդանուշէն քու մտերմական յարաբերութիւնթիւններդ այնպիսի ժամանակի մէջ ուր անոր ապագայն պիտի վճռուի։ Հետեւապէս իմ լռութիւնս արդարացնելու համար պէտք է որ վերջ տաս այցելութեանցդ առ Տիկին Արգարեան, և մանաւանդ կը պահանջեմ, յարեց, որ երդումն ընես բնաւ այդ տիկնոջ հետ չտեսնուելու եթէ երբէք բաղդակից լինիս Երանեանց դստեր։

Միսակ խոստացաւ կատարել այդ օրինաւոր պահանջումն եթէ երբէք իւր ամուսնութիւնը կատարուէր։ Իսկ մինչեւ ի լրումն Վարդանուշի տրուած մէկ ամսուան պայմանաժամին, իւր բացակայութիւնն արդարացնելու համար յաչս Տիկին Արգարեանի՝ օգուտ քաղեց առթէ մի որ շահաբեր լինելու կը խոստանար, ու մեկնեցաւ փութով Պոլսէն ամէ մի վերջը վերադառնալու դիտաւորութեամբ։ Եւ ստիպողական հարկ մ'առարկելով՝ հրաժեշտի նամակ մ'ուղղեց առ Տիկին Արգարեան, որուն մէջ իւր հաւատարմութիւնն առ նա կը յայտնէր, իւր վաղ վերադարձը, և իւր ցաւն առանց զինքը տեսնելու՝ մեկնելու պարտաւորեալ լինելուն։

Այս ձեւով եթէ Միսակ յաջողէր ամուսնանալու օրիորդ Երանեանի հետ, բաժանման ոկրկրնաւորութիւնն ըրած կը լինէր։ Իսկ եթէ չ'յաջողէր՝ խիստ բնական կերպիւ կը շարունակէր իւր այցելութիւններն տիկնոջ՝ առանց անոր որ և է կասկած մ'ապրելու իւր ունեցած խորհրդոց վրայօք։

ԳԼՈՒԽ Խ.

Երբ Տիկին Աբգարեան իւր սիրահարին հրաժեշտի նամակն ընդունեցաւ, մռնչեց վայրենաբար. և շուտ վերահասու լինելով թէ ուսկի՞ց կուգար իրեն այդ հարուածն, անձին խոստացաւ Արաքսիայի ջանքերն ապարդիւն թողլու Սիսակի և Վարդանուշի ամուսնութիւնն արգիլելով անպատճառ։

Զար մտքերն և անխիղճ սրտերը շատ նախանձախնդրութիւն չեն յայտներ իրենց վրիժառու խորհրդոց կատարման մասին. բաւական է որ յաջողին իրենց նպատակին հասնելու, ամեն միջոց լաւ է և պատուաւոր։

Տիկին Աբգարեան ոչ զոք սիրած էր այն յարատեւ եռանդեամբ որով համակուած էր Սիսակին համար։ Կը պաշտէր զերիտասարդն, և զայն չկորսնցնելու համար պատրաստ էր ամեն ինչ ի գործ դնել։ Երեք շաբաթներ անցած էին և Սիսակէն տակաւին լուր չէր ընդունած, և ոչ իսկ գիտէր անոր ուր գտնուիլը։ Հասկըցաւ թէ երիտասարդն իրմէ կը հեռանար։ Մըտածեց ուրեմն թէ առանց յապաղման պարտական էր գործել եթէ կ'ուզէր անձին պահել զիւր սիրահար։

Տարիներէ ի վեր Տիկին Աբգարեան տրամադրութեանը ներքեւ ունէր կին մի՝ որ թէեւ տանը մէջ չէր բնակեր այլ գրեթէ միշտ հոն կը գըտնուէր, ու տիկնոջ թէ՛ առտնին և թէ՛ արտաքին յանձնարարութիւնները կը կատարէր։

Այդ կինը ժամանակաւ Վարդանուշի դայ-

եակն եղած էր նախ, և յետոյ զայն տարիներով խնամած էր, որով միշտ գորովանօք կը խօսէր իւր մեծցուցած սիրելի մանկան վրայ որ գեղեցիկ երիտասարդուհի մ'եղած էր։ Փափաքանօք և անհուն երջանկութեամբ կ'երթար միշտ այցելութեան Երամեան ընտանեաց՝ ուր թուէր իրեն տեսնել յանձին Վարդանուշի մանուկն զոր խնամած էր երբեմն։ Այդ Իսկուհի անուանեալ կինն անկեղծաբար կը բաղձար իւր խնամած էակին բաղդաւոր լինելը, և աղօթիցը մէջ չէր մոռնար երբէք զինքն յիշել։

Տիկին Աբգարեանի խիստ ծանօթ էր 'ի լրոյ Երամեան ընտանիքը քանի որ Իսկուհիին խօսակցութեան մէջտեղ նիւթն էր այն. ուստի այդ Տիկինը զԻսկուհին որոշեց իբր գործիք իւր մեքենայութեանց։

Օր մի Տիկին Աբգարեան խորհրդաւոր ձեւ մ'առնելով իմացուց այդ կնոջ թէ իւր Վարդանոյշը մեծ վտանգի ենթարկուած էր չարաչար սիրելով երիտասարդ մի որ կը խաբէր զինքն, և որ ուրիշ աղջիկ մի սիրելուն հանդերձ մտադիր էր Վարդանուշի հետ ամուսնանալ մի միայն հարուստ լինելուն պատճառաւ։

Իսկուհին զայդ պրոյց լսելուն պէս սարսափեցաւ, և իւր առաջին մտածութիւնն եղաւ փրկել իւր դիւեցուցած արարածն այդպիսի մեծ փորձանքէ։

Բայց վայրկեան մի եռքը անդրադառնալով հարցուց.

— Տիկի՛ն, վստա՞հ էք արդեօք ձեր ըսածին վրայօք։

— Վստա՜հ, ի՞նչ կ'ըսես, Իսկո՛ւհի։

— Ո՞վ տուաւ այդ լուրը ձեզի, հաւատարմութեան արժանի՞ է տուողը։

— Երբ ես եմ հաստատողը քեզ ոչինչ կը մնայ խօսելու։

— Տիկի՛նս, պէտք է ամեն բան գիտնամ, ես ալ ընելիքս ունիմ։

— Ի՞նչ է ընելիքդ։

— Խօսիլ Վարդանուշիս, եղածն իմացնել, բայց պէտք ունիմ. . . , ըսաւ կինն ու կանգ առաւ, վախնալով որ տիկինը կրնայ նեղանալ։

— Ստոյգ տեղեկութեանց հարկ ունիս, կ'իմանամ, ըսաւ Տիրուհին, իբր թէ զկին նեղանալի վիճակէ մ'ազատելու բաղձանօք, մինչդեռ ինքն անհամբեր էր յառաջ վարել իւր խոստովանութիւնը։

— Այո՛, Տիկի՛նս, միտքս աղէկ հասկցաք։

— Ուստի կ'իմացնեմ քեզ թէ ես անձամբ տեղեկացայ ամեն բանի։

— Դո՞ւք, Տիկին,

— Այո՛ ես։

— Շնորհք կ'ընէ՞ք պատմելու, Տիկի՛ն։

— Ես անձամբ քաղեցի ամեն տեղեկութիւն, ես ականջովս լսեցի զամեն ինչ, դեռ կը տարակուսի՞ս դու։

— Երբ դուք գործին մէջ էք, ամեն բանի կը հաւատամ։

— Մտիկ ըրէ ուրեմն, քեզ ամեն ինչ պատմեմ։

— Խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, Տիկի՛ն։ ըսաւ Իսկուհին անձկութեամբ։

— Ես բնաւ շահ չ'ունիմ միջամտելու ինձ անծանօթ եղած աղջկան մի գործոց մէջ։ Բայց նախ մարդկութեան նուիրական պարտք մի կը համարիմ որ և է չարիք կամ դժբաղդութիւն խափանելն. երկրորդ զքեզ կը սիրեմ և չեմ ուզեր որ սիրտդ ցաւի զաւկի նման մեծցուցած արարածդ թշուառ տեսնելով, յարեց խորամանկ կինը։

— Աստուած վարձատրէ ձեր բարի սիրտը, Տիկի՛ն։

— Ես իմ վարձատրութիւնս կատարելիք բարի գործիս մէջ կը փնտռեմ միայն։

— Բայց ըսէք, Տիկի՛ն, ի՞նչ է անունն այն երիտասարդին որ կ'ուզէ խաբել Վարդանոյշս։

— Պատմեմ քեզ զամեն ինչ ուրեմն, Իսկո՛ւհի։

— Կ'ապաչեմ, Տիկի՛ն։

— Բազմիցս հանդիպեցար հոս երիտասարդի մի Պ. Սիսակ անուանեալ։

— Այո՛, Տիկի՛ն, գիտեմ որ անոր շատ պատիւ կ'ընէք։

— Իրօք այդ երիտասարդը կը մեծարէի վասն զի ամեն պատուոյ արժանի կը համարէի, և զինքը կ'ընդունէի վասն զի աղջիկ տալու դիտաւորութիւն չ'ունէի։

— Մեր երկու օրիորդները տղայ են. անոնց կարգուելու առեն չէ։

— Եթէ տղայ ալ չլինէին անոնք՝ չէի տար դարձեալ։ Վասն զի Պ. Սիսակ լաւ ամուսին լինելու համար ամեն պէտք եղած յատկութիւններէն զուրկ է։ Իրաւ է որ ընկերութեան մէջ

շատ վայելուչ կերպիւ կը վարուի, ու ինքն ուսեալ և խելացի անձ մ'է, և այդ էր պատճառն որ մասնաւոր պատուով կ'ընդունէի զինքը։

— Տէ՛ր Աստուած, հասկցա՞ծս է։

— Ի՞նչ հասկցար, Իսկո՛ւհի։

— Պ. Սիսա՞կն է Վարդանուշիս հաւնածը։

— Ոտուգապէս այն է։

— Վա՛յ ինձ, քանի որ կ'ըսէք, Տիկի՛ն, թէ աղէկ ամուսին չի կրնար ըլլալ։

— Իրօք աղէտք մ'է աղջկան մի համար սիրահարուիլ երիտասարդի մի որ ոչ այլ ինչ գիտէ բայց իւր հաճոյքը։ Պ. Սիսակ՝ ամուսնութեան երկրորդ օրն ապահովապէս իւր նորապըսակ հարսը պիտի թողու նորանոր ապօրինի զուարճութիւններ փնտռելու համար, թող թէ արդէն սիրահարութիւն մ'ալ ունի անբարոյական աղջկան մի հետ։

— Տիկի՛նս, ո՞վ է այդ չխպնած աղջիկը։

— Երբէք չեմ կրնար գուշակել անոր ով լինելը։

— Մտքէս բան մի չ'անցնիր, ո՞վ է ըսէք կ'աղաչեմ։

— Նոյն իսկ վարժուհին որուն յանձնած էի երկու որդւոցս դաստիարակութիւնը։

— Օրիորդ Արաքսիա՞ն։

— Ինքն իսկ։

— Խելքս տեղէն թռաւ։ Արաքսիան իմ Վարդանուշիս ընկերուհին է։

— Այդ պատճառ մ'աւելի է վերահասու լինելու համար այդ էակին չարութեան աստիճանին։ Զի բաւեր որ անպատուութիւնը տանս մէջ

կը մոցնէ, այլ և հրէշային մատնութիւն մ'ալ կ'ընէ բարեկամուհւոյ մի նկատմամբ։

— Որո՞ւն մոքէն կ'անցնէր որ այդ պարկեշտ աղջիկն այսչափ անամօթ է եղեր։

— Զգիտե՞ս արդեօք որ այդչափ համեստ երեւցողներն ամենէն մեծ կեղծաւորներն են։

— Իրաւ այնպէս է։ Բայց դուք, Տիկի՛ն, ի՞նչպէս եղածը չեղածը իմացաք։

— Մանրամասնաբար պատմեմ քեզ զամեն ինչ։

— Ա՛հ, Տիկի՛նս, պատմեցէ՛ք, պատմեցէ՛ք։

— Գիշեր մի, ուշ ժամանակ, մինչ ամենքը կը քնանային, ես արթուն էի։ Ոտքի ձայներ լսեցի յանկարծ. կասկածելով թէ գողեր մոտած էին մեր տունը՝ քաջութեամբ զինեալ տեղէս ելայ, և ամենայն զգուշութեամբ դուռս բանալով տեսայ զԱրաքսիան որ ճրագ մի բռնած սանդուղներէն վար կ'իջնար, ու քիչ մի ետքը վերը կ'ելնէր Պ. Սիսակին առաջնորդ կանգնելով։

— Վա՛յ անամօթ աղջիկ։

— Տեսայ մոտած սենեակնին, և ես գնացի ստուգելու թէ ի՞նչ կ'ընէին։ Լսածներէս ու տեսածներէս զզուած՝ ետ քաշուեցայ բուռն սրտմտութեամբ։ Թէեւ մտադիր եղայ նախներկայութեամբս չանթահարել զանոնք, բայց ապա խորհեցայ թէ ինձ նման տիկնոջ մի համար անճահ էր այդպիսի անվայել պատահարաց մէջ խառնուիլ. ու գայթակղութիւն չյարուցանելու համար լռեցի և սենեակս վերադարձայ առանց աղմկի։

— Վայլածն ալ այդ էր, Տիկին. անճառնի-նե՛ր։

— Բայց անհնար էր ինձ աչերս գոցել ցորչափ կ'զգայի որ այդ անպատիւ աղջիկը սիրահարին հետն էր։ Եթէ Պ. Սիսակ յանցանք կը գործէր տանս մէջ անպատուութիւն մոցնելով՝ միայն սա տեսակէտով կ'արդարանար որ ինքն երիտասարդ մ'է, և այր մարդը բաւական է որ զուարճանալու յոյս մ'ունենայ որպէս զի ամեն միջոց յարմար դատէ։

— Տիկի՛նս, Պ. Սիսակ թո՛ղ ուրիշ տեղ փնտրէր զուարճութիւնները. կը վայլէ՞ր որ տանկ բան մ'ընէր ձեր տանը մէջ։

— Եւ կը տեսնես, Իսկո՛ւհի, որ ինչ պատժելու համար իմացուցի իրեն թէ ոչ եւս կըրնամ հիւրընկալել զինքն։

— Ըսել է որ իմացուցիք Պ. Սիսակին որ եղածը գացածը գիտէք։

— Կրնայի՞ լռել արդեօք երբ խնդիրը տանս պատուոյն կը վերաբերէր, ըսաւ Տիկին Աբգարեան եղանակաւ մի որ կարծես թէ ինքն տիպար մ'էր առաքինութեան։

— Բայց, Տիկի՛ն, չըսիք որ ի՞նչպէս լմնցաւ ադոնց տեսութիւնն։

— Ինչպէս պատմեցի քեզ արդէն, սենեակս վերադարձայ. բայց կասկածելով որ տունն հրոյ ճարակ կրնայ լինել և մենք մէջը կ'այրինք անոնց գործելիք մէկ անխոհեմութենէն, գնացի վերատին այն սենեկին առջեւ ուր կը գտնուէին երկուքն, և՝ անոնց ձայնը լսելով կանգ առի դրան առջեւ և լսեցի ամբողջ խօսակցութիւնը

զզուանոք, զի վախցայ որ դաւադրութիւն մ'ալ չի պատրաստեն ընդդէմ մեզ, քանի որ այսպիսի անձինք ամեն բանի կարող են։

— Անանկ է, Տիկի՛ն, ամեն բան կ'ընեն ասանկ անօրէնները։

Բայց ի՞նչ կ'ըսէին իրարու, Տիկի՛նս։

— Կ'ուխտէին զիրար միշտ սիրել հաւատարմութեամբ. սակայն քանի որ երկուքն ալ աղքատ էին, անխղճմտաբար կը դաւակցէին ընդդէմ Վարդանուշիդ։

— Աստուած պատժէ երկուքն ալ։

— Արաքսիա պիտի միջամտէր համոզելու համար զՎարդանոյշ փութացնելու զիւր ամուսնութիւն Պ. Սիսակին հետ, նա մանաւանդ միայն ամիս մի միջոց պիտի տար անոր որպէս զի համոզէ զիւր ծնողք։ Յետ աւարտման այդ պայմանաժամին՝ յանուն Սիսակի պիտի սպառնար Արաքսիա թէ երիտասարդը պիտի լուծէր ամեն հաւատարմութեան խոստում։

— Խե՜ղճ Վարդանոյշս. գիտէի որ այդ օձ Արաքսիան անոր բարիքը կ'ուզէր։

— Ըսելիք չկայ, ըստ ամենայնի հաղուագիւտ բարեկամուհի մ'է, ըսաւ տան տիկինն հեգնութեամբ։ Երեւակայէ՛, Իսկո՛ւհի, Պ. Սիսակ Երանեանց աղջիկն պիտի առնու ի կնութիւն՝ անոր դրամովը զԱրաքսիան խնամելու համար։

— Աստուծմէ՛ գտնան։

— Արաքսիա իւր կողմանէ կը խոստանար երբէք ուրիշի հետ չ'ամուսնանալու։

— Մա՛հը վերցնէ այդ անճոռնի աղջիկը։

— Տես թէ ինչո՞ւ այդպէս փութով ճանբեցի զվարժուհին։

— Տիկի՛նս, քիչ մի հիւանդ ըլլալուս համար երկու շաբաթ է տունէս դուրս չելայ. իմացայ որ ձեր վարժուհին ճանբու դրած էք, բայց պատճառը չգիտէի։

— Իրօք բաւական օրերէ ի վեր զքեզ չեմ տեսած։

— Բայց, ապրի՛ս, Տիկինս, զիս չի մոռցաք ամենեւին։

— Հաւատարմութիւնդ ճանաչելով կը ջանամ միշտ վարձատրել զքեզ։

— Աստուած օրեր տայ ձեզի։

— Բայց լո՛ւր ինձ, Իսկո՛ւհի։ Ուրեմն անմիջապէս որ առաւօտն յաջորդեց այդ ամբոխալից գիշերուան՝ Արաքսիա մեկնեցաւ Վարդանուշին երթալու և յանուն Պ. Սիսակի անոր այցելութիւնը խոստանալու համար։ Լսածներէս հետեւցուցի թէ աղջիկը նեղը դնելու մտօք է որ երիտասարդը դադրեցուցած է այցելութիւնները տան Երանեանց, և իրօք առ այդ յաջողած է։ Ուստի Արաքսիա իբր միջնորդ պիտի ներկայանար՝ զՊ. Սիսակ Վարդանուշիդ վերադարձնելու համար։

— Այս ի՛նչ սատանայական խաղեր են։

— Բայց չգիտեմ թէ ի՛նչ դարձաւ երբ Արաքսիա Երանեանց գնաց յաջորդ օրը. սա չափս գիտեմ՝ որ երբ վարժուհին տունս եկաւ, նուաղելով անկաւ։

— Աստուած պատիժը կուտար այդ անիծուած աղջկան։

— Ես երբ առաւօտուն սենեկէս դուրս ելայ, վարժուհին նուաղումէն սթափած էր, որով դինքն անմիջապէս տունէս վանեցի։

— Տիկի՛նս, այս ի՞նչ բաներ են. խելքս գըլխէս գնաց։ Թողուցէք որ երթամ չուտ Երանեանց տունն ու ամեն բան իմացնեմ անոնց։

— Ես ընդհակառակն կը կարծեմ որ ծնողաց ոչինչ ըսելու ես, զի անոնք անտեղեակ են իրենց աղջկան սիրոյն, և գուցէ չարաչար վարուին անոր հետ և իւր անտանելի վիճակն առաւել ևս ծանրացնեն։

— Իրաւ ատանկ է, Տիկի՛ն։

— Գիտցածներդ միայն Վարդանուշին հաղորդէ։ Աղջիկը վերահասու լինելով սիրահարին ու բարեկամուհւոյն խաբէութեան, հրաժեշտ կուտայ անշուշտ Պ. Սիսակին հետ ամուսնանալու խորհրդէն, և առանց տարաձայնութեան չարիքը կը խափանի։

Հաւանեցաւ Իսկուհին, նա մանաւանդ խիստ խոհեմ գտաւ գործելու այդ եղանակը։

Տիկին Արդարեան չէր ուզեր սակայն բացարձակ դեր խաղալով իւր անունը թշնամեացը բերանը մատնել. ուստի պահանջեց վարձկան կնոջմէն որ Երանեանց դստեր միայն յայտնէ իւր անունն, այնու պայմանաւ որ Երիտասարդուհին իւր կողմանէ նոյն խորհրդապահութիւնը խոստանայ։ Մանաւանդ հակցուց կնոջ որ եթէ աղջիկը թոյլերանութիւն մ'ընէր իւր մասին, ինքն՝ Իսկուհին, պիտի տուժէր զայդ, տանը մէջ ոչ ևս մուտք գտնելով։

Այդ սոսկալի սպառնալիք մ'էր աղքատ կը-

նոջ համար, զի մեծաւ մասամբ Տիկին Աբգարեանի շնորհիւ կ'ապրէր նա. բայց Վարդանուշի արդահատական և աղնիւ զգացմանց վրայ կատարելապէս վստահ լինելով՝ ապահովեց զՏիկին՝ երիտասարդուհւոյն խորհրդապահութեան մասին, և ապա փութաց երթալ առ Վարդանոյշ, զայն բացարձակ աղէտքէ մի ազատելու դիտաւորութեամբ, ինչպէս որ անկեղծօրէն կը հաւատար նա։

ԳԼՈՒԽ ԼԹԱ.

Երեք շաբաթներ անցած էին ու տակաւին Արաքսիա լուր չէր առած Ներսէսէն. յայտնի էր որ նա պատասխանելու դիտաւորութիւն չ'ունէր։ Երիտասարդուհին կը հալէր, կը մաշէր ինքն իրեն. և իւր դժնդակ վիճակն առաւելեաս կը ծանրանար մօտակայ չքաւորութեան տեսարանով, քանի որ փոքրիկ դուստրն այն որ իւր խնայողութեան արդիւնքն էր, սպառելու մօտ էր։ Ի՞նչպէս կրնար յանձն առնուլ ականատես լինելու վերստին իւր ծնողաց զրկման ենթարկուելուն. մանաւանդ որ խեղճ հայրը հանգիստ գըտած էր նոյն օրէն որ Տիկին Վարսամեան զՆերսէս փեսայ ունենալու յոյսն ունենալով՝ զնա խայթելէ դադրած էր։ Ծերունին բաղում հաճոյքներ վայելած էր եւս իւր փեսայացուին ղըրկած ուտեստի այլ և այլ նուէրներով՝ որոնց նըկատմամբ Արաքսիա հակառակութիւն չէր ըրած, թէեւ ուժգին ընդդիմացած էր ո և է դրա-

մական օգնութիւն ընդունելու ծնողացը տան մատակարարութեան համար, իւր խոսնայրին կողմանէ։

Իսկ նոյն պահուն ոչ միայն զրկուած էին Վարսամեանք այդ նուէրներէն որք ծերոց համար կենաց գլխաւոր հաճոյքներէն մին են, այլ գուցէ հարկաւորն իսկ չ'ունենային ընդ հուպ։

Արտահար կոյսը կը պարտաւորէր՝ գոնէ որչափ ժամանակ որ կարելի էր, ծածկել ծնողքէն իրենց երազած գեղեցիկ ապագային ոչընչանալը։ Բայց եթէ այդ մասին առժամանակեայ դարման մի կը գտնէր, ոչ այնպէս էր նիւթական պիտոյից նկատմամբ։

Երբէք այնքան սիրելի և սփոփիչ չէր երեւցած Արաքսիայի աշխատութեան գաղափարն. անով մասամբ կը վերականգնէր և այժ կ'զգենոյր կենաց դժուարին դաշտին մէջ մարտընչելու՝ իբրեւ ճախորդութեան քաջ զինուոր։ Կը մտածէր թէ ո՞ր եղանակաւ հնարաւոր էր նոր աշխատութեան դուռ մի բանալ անձին, կը մտածէր, և նոյն պահուն ոչինչ կը ներկայանար աչացն առջեւ իբրեւ խարիսխ փրկութեան։

Որչափ յոյս, ո՞րչափ սէր փչրուած էին մէկ վայրկենի մէջ։ Ներսէս յանկարծ լքած էր զինքը. և ակնթարթի մէջ կորզած էին իրմէ երկու հրեշտակները զորս ա՛յնքան սիրած էր։ Ինքը ըստ ամենայնի անմեղ էր, և անշուշտ իբր յանցաւոր կը հանդիսանար թէ՛ Ներսէսի և թէ՛ փոքրիկ քոյրերուն առջեւ։

Ո՛հ, կը ձայնէր կոյսն դառնագին, հա՞րկ էր

ուրեմն երբեակ յօդեր սիրոյ կազմել, զանոնք մէկ օրուան մէջ կորսնցնելու համար։

Աղաւնին մանաւանդ մասնաւոր հրապոյր մ'ունէր իրեն համար, զի սիրոյ այլ և այլ յիշատակներ կը զարթուցանէր իւր յիշողութեան մէջ։ Միթէ անոր մաքուր ճակտին վրայ իւր ձեռքը չէր՞ միացուցած Ներսէսինին հետ։ Միթէ երիտասարդը չէ՞ր պատուիրած անոր սիրել զիւր վարժուհին բոլոր հոգւովը։ Զտեսնե՛լ իսկ տըղայքն որոնց այնքան համակրած էր։ Սիրոյ քայքայումն հոգւոյ զօրութեան քայքայումն նաեւ չի՞ նշանակեր արդեօք երբեմն։

Թռած երջանիկ օրերն իւր առջեւ կը ներկայանային, ու կոյսին հոգին կեղեքելով կը կենդանացնէին։ Անցեալն առաւել հեշտալի կը սահէր իւր առջեւէն, իսկ ներկայն սպառնալից և սեւադէմ կ'արձանանար հանդէպ իրեն։

Երբէք մարդ չէ վայելած իւր բարեբաստիկ ներկայն զգալու ամբողջ կարողութեամբը. զի կարծես երջանկութեամբ արբշիռ՝ սիրան ու միտքը զննելու, քննելու և ուսումնասիրելու հանգամանքը կը կորսնցնէ։ Բայց երբ սուգն յաջորդէ ուրախութեան, յայնժամ խուզարկու միտքը կ'ուզի զննել բոլոր մանրամասնութեամբը մէն մի երանաւէտ զգացում որ սրտին խլրտում և բաբախում պատճառած էր, և գիւտեր ընել այնպիսի դէպքերու վրայ որք անզգալի անցած էին երջանկութեան արագընթաց շրջանին մէջ։

Շուարած, վշտահար բայց ոչ վհատեալ, Արաքսիան երերածուփ էր կենաց ալեկոծութեան մէջ, երբ անձ մի որ մասնաւոր կերպիւ կը գը-

նահատէր զօրիորդն, կուգայ իմացնել անոր թէ պատուաւոր հայապգի տիկին մը՝ իւր խանգարեալ առողջութեան պատճառաւ՝ առ առաւելն երեք ամիս ճանրորդելու դիտաւորութիւն ունէր, և թէ խիստ գոհացուցիչ պայմաններ խոստանալով, վայելուչ ընկերուհի մի կը փնտռէր իւր ուղեւորութեան համար։

Արաքսիա մասնաւոր շնորհք մի բաղդին տեսաւ այդ անակնկալ պարագային մէջ, ու անմիջապէս հաճեցաւ ուղեկցելու սոյն տիկնոջ՝ զոր ի համբաւոյ կը ճանաչէր խիստ նպաստաւոր կերպիւ։

Տիկին Վարսամեան ոչ միայն նոյն յօժարութիւնը չէր յայտներ, այլ ընդհակառակն կը ջանար խափանել ուղեւորելու խորհուրդն, առարկելով իւր աղջկան թէ գուցէ տհաճոյ ինչ գործէր Ներսէսի նկատմամբ։

Բայց Արաքսիայի կամքն ամեն արգելից կը յաղթէր, և մանաւանդ քանի որ յաջողած էր Աբգարեանի որդւոյն նման նշանած մի ձեռք ձգել՝ կրկին յարգ ստացած էր իւր մօր առջեւ, որով Տիկին Վարսամեանի ընդդիմութեան ոգին շուտով կը նահանջէր աղջկանը տրամադրութեանց առջեւ։

Այդ առաջարկն լինելէ ութ օր վերջն՝ Արաքսիա մեկնեցաւ հայրենի տունէն Տիկին Հարթմանեանի հետ ճանրորդութիւնն սկսելու համար Եւրոպայի այլ և այլ կողմերը։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Տիկին Երանեան մօր մի ճարտար պերճախօսութեամբ յայտնած էր ամուսնոյն իրենց դըստեր սիրահարութիւնը Սիսակի համար, և հարկն զնա պսակելու անոր հետ։

Պ. Երանեան ընդդիմացած էր ուժգին, նեղացած, զայրացած, առաջարկի մ'առջեւ որ բոլոր իւր տեսութիւններն ի հիմանց կը քանդէր. զի ինքն մտադիր էր տալ զիւր դուստր ի հարանութիւն այն հարուստ երիտասարդին որ արդէն ներկայացած էր իբր փեսայացու։ Զոհել աղջիկն անձի մի որ ոչ դրամ ունէր և ոչ իսկ որոշ պաշտօն մի, զայդ յիմարութեան մեծագոյնը կը համարէր։

Եթէ խղճալի մայրը մէկ կողմանէ կը հաստատէր ամուսնոյն դիտողութեանց իրաւացի լինելն, միւս կողմանէ կը նշմարէր սոսկալի վըտանգն իրենց միակ որդին կորսնցնելու՝ նորա սիրոյն դէմ արգելք յարուցանելով։

Պ. Երանեան, յետ երկար ընդդիմութեան, ուրեմն համոզուեցաւ վերջապէս, և հաւանութիւնը տալով աղջկան ամուսնութեան, որոշեց օգնել Սիսակի, յառաջացնել զայն, և ըստ կարելւոյն անոր ապագայն հաստատել։

Ծնողաց հաճութիւնն ստանալով կարծես վարդանոյշ պիտի յիմարէր, եթէ երբէք երջանկութիւնը կարենար յիմարեցնել։ Ի՞նչ գեղեցիկ երազներ կ'ընէր. ամեն ինչ վարդագոյն և լոյս էր իրեն համար։ Արաքսիայի հետ կը խօսէր ապագային վրայ այն անձանձիր և անձնասէր ա-

ռատախօսութեամբ որ յատուկ է երջանիկ անձանց, առանց ի նկատ առնելու թէ աղջկան ճակատը տխրութեամբ կը վարագուրուէր մէն մի անգամ որ իւր մօտալուտ ամուսնութեան վրայ կը խօսէր։

Ոչ թէ Արաքսիա կարող էր որ և է նուաստ զգացում մ'ունենալ ի տես երանութեան իւր բարեկամուհւոյն, այլ կը յիշէր թէ ինքն եւս նոյն երազներն ըրած էր քիչ ժամանակ յառաջ, և թէ անհետացած էին անոնք իրականանալէ յառաջ։

Վարդանոյշ նշմարած էր արդարեւ Արաքսիայի տխրութիւնն որ անյայտ չէր կրնար անցնիլ իւր չափազանցութեան պատճառաւ իսկ։ Եւ երբ նա պատճառն ուզած էր հասկնալ՝ աղջիկը վերագրած էր դիւր ցաւ անգործութեանն, և զայդ հաւատացած էր Վարդանոյշ, թէեւ տարօրինակ թուէր իրեն այդպիսի ծայրայեղ վիշտ մի։ Բայց այնչափ մեծ էր վստահութիւնն իւր մտերմին վրայ որ բնաւ մոքէն չէր անցած ուրիշ պատճառ մ'ալ փնտռել։

Ուստի երբ մեկնեցաւ Արաքսիա՝ կոյսն երջանիկ թէ՝ ուրախացաւ և թէ՝ ցաւեցաւ։ Գո՛հ եղաւ, վասն զի իւր բարեկամուհին մտատանջութենէ կ'ազատէր նիւթական վիճակն ապահովելով։ տրտմեցաւ՝ որովհետեւ կը բաժնուէր այն միակ էակէն որուն առջեւ սանձարձակ ազատութեամբ իւր սիրտը կրնար բանալ։ Բայց մը-խիթարուելու համար ժպտուն յոյսն ունէր իբր ընկեր, և մօտակայ ակնկալութիւնն իմացնելու իւր Սիսակին թէ ոչ եւս արգելք կար իրենց մի-

ացման, թէ ապագայն իրենցն էր, թէ երանութեան աշխարհ մի կը պարզուէր իրենց առջեւ։

Շաբաթ մի եւս, կը մոռացէր գոհ կոյսն, և ահա իւր սիրելին կը վերադառնար անշուշտ, զի յայնժամ կը լրանար անոր դրած պայմանաժամը։ Բայց այդ շաբաթն ո՞րչափ երկարատեւ պիտի թուէր իրեն, մանաւանդ երբ ոչ եւս ունէր զիւր բարեկամուհին ակնկալութեան ժամերու անձկալից երկարութիւնն համառօտելու համար։

Ըսինք արդէն որ Վարդանոյշ մօրն հետ ընտանութեամբ չէր խօսեր սրտի խնդիրներու վրայ. ու բաց ի այս պարագայէն կոյսն թէեւ ծնողացը հաւանութիւնն ստացած էր իւր սիրային վէպին յաջողութեանն համար, այսու հանդերձ անհանգիստ կացութեան մէջ կը գտնուէր զի լաւ գիտէր թէ այդ հաւանութիւնը բռնազբօսիկ էր։

Մինչ Վարդանոյշ սենեկին մէջ առանձին էր՝ ու մտացը մէջ կը յեղյեղէր հաճելի տեսարաններ և պատրաստութիւններ, ահա Իսկուհին որ ներս կը մտնէ։ Կոյսն ցնծութեամբ կ՚ողջագուրէ զնա, զի անոր գորովագութ սիրտը մաս մի գիտէր յատկացնել անոնց որք իւր վրայ անկեղծօրէն կը գուրգուրային։

Աշնիւ հոգիներու հաճոյքն սիրել է, և պատրանքն անոնց համար մահու չափ դժնդակ է։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Պատշաճողական քանի մի խօսքերէ յետոյ Վարդանոյշ յատկապէս խորհրդաւոր ձեւով մ'իմացուց իւր դայեակին թէ իրեն ուրախաւորթ լուր մ'ունէր տալու։

Իսկուհի շուտ վերահասու եղաւ այդ լուրին տեսակին վրայ. և նկատելով այն մեծ զուարթութիւնն որ աղջկան դէմքին վրայ ծաւալած էր՝ ցաւեցաւ ստուգապէս զայն ջնջելու հարկին առջեւ։ Կը հասկնար կինն որ սոսկալի հարուած մի պիտի տար իւր պաշտած աղջկան, ու իւր սիրտը կը ճմլէր։ Բայց ներելի՞ էր իրեն դեղեւիլ արդեօք ծանր պարագայի մ'առջեւ ուր Վարդանուշի բաղդը վտանգի մատնուած էր. և առժամանակեայ ցաւ մի չպատճառելու համար, կրնա՞ր զաղջիկը թշուառութեան մատնել ցկեանս։ Ցիշեց թէ եկած էր զիւր սիրեցեալ էակ վտանգէ փրկելու համար, և պիտի խօսէր ապահովապէս։

Այս խորհրդածութիւնք չանթի արագութեամբ տեղի ունեցան կնոջ մտացը մէջ, որով Վարդանուշի դառնալով ըսաւ.

— Խօսէ՛ տեսնեմ, գաղտնիքդ ըսէ՛, աղջի՛կըս։

— Ձքեզ առանց տանջելու երանութեանս մասնակից ընեմ ուրեմն. զի գիտեմ, սիրելի՛ Իսկուհիս, որ իբր մայր վրաս կը գուրգուրաս։

— Այդ բանը աղէկ գիտես։

— Գուցէ մեղադրես զիս ընդ երկար պահած լինելուս համար գաղտնիքս քեզմէ. բայց

չուզեցի զքեզ մասնակից ընել անորոշ վիճակի մի, դառնութեամբ լի։

— Գիտես, աղջո՛ր աղջիկս, որ ես աղէկ ու գէշ օրերդ կը սիրեմ, ու քեզի հետ ինչ ըլլամ թող ըլլամ։

— Միշտ բարի ես, Իսկուհի՛ս։ Քու զգայուն սիրտդ լաւ ճանչցած լինելուս համար աւելորդ յուզումներէն ուզեցի խնայել զքեզ։

— Ա՛հ, աղջի՛կս, ինծի գէշ չընելու համար ինքզինքիդ գէշ ըրիր վախնամ։

— Ընդհակառակն, ամեն ինչ ի կատար հասուցի, յուսամ։

— Բացէն խօսէ նայիմ, աղջի՛կս։

— Ինչպէս մօրմէս նոյնպէս քեզմէ ծածկած էի, Իսկուհի՛ս, սիրոյ զգացումի որ կը տածեմ գրեթէ մէկ ու կէս տարիէ ի վեր աղնիւ և պատուական երիտասարդի մի համար՝ որուն միակ յանցանքն՝ յաչս աշխարհի գուցէ, հարուստ չինելն էր։

— Ամուսնած տար որ մինակ այդ ըլլար յանցանքը։

— Կը տարակուսի՞ս։

— Աղջիկներու համար ամեն երիտասարդ չի գտնուած է։

— Բայց դու ի՞նչպէս կրնաս դատապարտել անձ մի որ չես ճանչնար, նա մանաւանդ երբ ոչ իսկ գիտես անոր ով լինելը։ Միայն իմ Արաքսիաս տեղեակ էր դաղտնեացս, և երեք շաբաթէ ի վեր ծնողքս տեղեկութիւն ունեցան այդ մասին։ Մի՞ գուցէ տեսար մայրս, և եղածն ի՞մացար անկէ։

— Ո՛չ, աղջիկս, չիտակ քու քովդ եկայ։

— Ուրեմն բնաւ իրաւունք չունիս խոժոռադէմ հանդիսանալու երբ պաշտելի ընտրեալոյս վրայ կը խօսիմ։

— Ա՛հ, աղջի՛կս, չգիտես որ Սիսակդ ինչ կ'ուժենէ այնչափ ալ Արաքսիադ կ'ուժէ։

— Ի՞նչպէս գիտես դու թէ Սիսակն է սրտիս տէրը, և ինչո՞ւ անենպատ կերպիւ կը խօսիս անոր և Արաքսիային վրայ։

— Ես ալ գիտցածս գիտեմ։

— Ի՞նչ է գիտցածդ տեսնենք։ Հաւատա՛, Իսկուհի՛, որ եթէ դու չլինէիր՝ երբէք չպիտի ներէի որ չարախօսիս իմ երկու ընտրելագոյն սիրելեացս վրայ։

— Իրաւունք ունենա՞մ ալ՝ պիտի գէշ գան խօսքերս քեզի։

— Բայց անհնար է որ իրաւացի լինին։ Համարելով որ Սիսակի մասին սխալած լինիմ, բայց բարեկամուհւոյս նկատմամբ յուղայութիւն կը համարիմ ամենափոքրիկ կասկած մ'անգամ ունենալը։

— Եկու նայէ որ այդ երկու երեսով աղջիկը քեզ կը խաբէ, խե՛ղճ զաւակս։

— Ի՞նչ փաստ ունիս Արաքսիան մեղադրելու համար։

— Ի՞նչպէս ըսեմ քեզի։

— Շուտ խօսէ, կը պահանջեմ զայդ քեզմէ։

— Խօսք տուր, զաւա՛կս, որ սիրտդ թունդ չի պիտի ելնէ։

— Կը խոստանամ։

— Երդում ըրէ որ տիկնոջս տալու անունը ամենեւին բերնէդ չի պիտի հանես։

— Կ'երդնում առաջի երկնից։ Սակայն եթէ հարկը պահանջէ ի՞նչ ընեմ յայնժամ։

— Բերանդ գոց պահես։ Մտածէ՛ որ եթէ իս մատնե՛ս, տղաներուս հացը բերնէրնուն կը կտրես։

— Լաւ ուրեմն, կը խոստանամ լռելու։

— Երդում ըրէ։

— Կ'երդնում։

— Անանկ է նէ մտիկ ըրէ հիմա։ Քու սիրած Արաքսիադ սիրուհին է քու Սիսակիդ։

— Ո՜հ, ի՜նչ սոսկալի ամբաստանութիւն է այդ։

— Եկու տես որ եղածն ալ այս է։

— Ի՞նչ կ'ըսես, Իսկուհի՛, Արաքսիան ջանաց ամեն ինչ կարգադրել երբ Սիսակ թուէր ինձմէ հեռանալ, և կ'ուզե՞ս որ նա ինձ դէմ դաւակցի։

— Այո՛, գործդ կարգի դնելով իրեն գործը կը շտկէր, կ'իմանա՞ս։

— Ոչինչ կը հասկնամ, բացարձակապէս խօսէ։

— Արաքսիա գիշերով Սիսակը ներս առաւ Սրգարեաններուն տանը մէջ։

— Այո՛, տեղեակ եմ։ Այդ ժամադրութեան շարժառիթն էր իմ վրդովեալ սրտիս ապահովութիւն տալու անշահախնդիր բաղձանքը։

— Դուն այդպէս գիտցիր, խեղճ աղջիկ։ Այդ երկուքը չ'ամչնալով գիշերուան մէջ տէջ կ'ընէին։ Այդ խայտառակ Արաքսիան քու հաւնած աղջիկդ է, տե՛ս։

— Կը հայհոյես, Իսկուհի՛, լռէ՛։

— Չեմ կրնար լռել, պէտք է որ ամեն բան գիտնաս։

— Խեղճ բարեկամուհիս ամուսնութիւնս հաստատելու կ'աշխատի, և դու զայն իբր նեն-գաւոր կ'ուզես ներկայել։

— Եւ է։

— Ո՞վ կը վկայէ։

— Տիկին Արգարեանը, աւելի՞ն կ'ուզես։

— Տիկին Արգարեա՞նը։

— Հիմա հաւատացի՞ր։ Թէ կ'ուզես եկու քեզ այդ Տիկինին տանիմ, ու ամեն բան անոր բերնէն իմանաս։

— Այդ չի բաւեր ինձ տակաւին, մանրամասնաբար պատմէ գիտցածդ, զի կ'ըմբռնես անշուշտ որ Տիկին Արգարեանի տունը ես չեմ կրնար երթալ։

Յայնժամ Իսկուհին պատմեց բոլոր մանրամասնութեամբը զոր ինչ իմացած էր Տիկին Արգարեանէն։ Թէ Սիսակ կ'ուզէր իւր հետն ամուսնանալ մի միայն հարստութենէն օգտելու և Արաքսիայի հետ յարաբերութիւնները շարունակելու համար. Թէ Տիկին Արգարեան ունկնդիր եղած էր բոլոր իրենց խօսակցութեան, և ականատես իրենց անվայել վարմունքին. որովհետև այն իսկ հետեւեալ օրն՝ որ կը յաջորդէր այդ ամօթալից գիշերուան, Տիկինը վանած էր զիւր վարժուհին և պատուիրած էր Սիսակի ոչ եւս իւր տան մէջ ոտք կոխելու։

Վարդանոյշ բաւ չ'ունէր արտասանելու այդ-պիսի վճռողական տեղեկութիւններէ վերջը։

Մանաւանդ որ յիշեց այն տարտամ և բռնազբօսիկ պատճառաբանութիւնքն որոնցմով կը պատասխանէր Արաքսիա մէն մի անգամ որ հարցուցած էր անոր իւր յանկարծական մեկնելուն պատճառն Աբգարեանց տունէն։

Երանեանց վշտահար աղջիկը կը կարծէր ճըշդիւ ըմբռնել Արաքսիայի տխրութեան պատճառը, նա մանաւանդ երբ ապագայ երջանկութեանը վրայ կը խօսէր։ Կը մտածէր կոյսն թէ տարակուսելու իրաւունք ոչ եւս ունէր երբ Տիկին Աբգարեանի նման վկայ մի կար մէջ տեղ։

Վարդանոյշ ամեն կարեկցութեան արժանի էր. զի որչափ մօտ կարծեց ինքզինքն երջանկութեան, նոյնքան այդ հեռացաւ իրմէ։ Մէկ հարուածով երկու սէր կը ջախջախուէին, հաւատքը, յոյսը կը վշրուէին, և կը մնար դէմ յանդիման հրէշային մատնութեան մի հանդէպ։

Ի պահանջել հարկին Վարդանոյշ կրնար ըմբռնել անհաւատարմութեան օրինակ մ՝ Սիսակի կողմանէ, զի այդ անկարելի ինչ չէր երիտասարդի մի համար։ Բայց խաբուի՛լ բարեկամուհիէ մի զոր իրր քոյր նկատած էր միշտ, զայդ չէր ըմբռներ նա։

Վարդանոյշ ոչ լացաւ և ոչ ալ յուսահատութեան ցոյցեր տուաւ ի ներկայութեան այդ կնոջ. միայն թէ յայտնեց մտադիր լինելն խըզելու ամեն յոգ սիրոյ և բարեկամութեան եթէ իւր կասկածները ցրուելու չի յաջողէր։ Սակայն որոշեց ոչինչ յայտնել ծնողացն թէ՛ Սիսակի և թէ՛ Արաքսիայի նկատմամբ, քանի որ երկուքն ալ բացակայ էին, և մանաւանդ երբ Սիսակ զին-

քըն չէր խնդրած ի կնութիւն տակաւին։ Նոյն լուութիւնը պահանջեց Իսկուհիէն եւս այդ ցաւալի դէպքին վրայօք։

Երբ կոյսն առանձին մնաց սկսաւ լալ դառնագին իւր կարծած կրկին մատնութեան վրայ։ Ցուսահատութիւնը չափ չ'ունէր նախ, բայց ապա սկսաւ մտածել թէ գուցէ Իսկուհին սխալ հասկնալով կերպարանափոխ ընէր Տիկին Աբգարեանի խօսքերը. զի կասկածիլ սոյն Տիկինէն մտքէն անգամ չէր անցներ, քանի որ զայն աւելն յարգանաց արժանի կը համարէր, երբ մանաւանդ Արաքսիա երբէք չէր չարախօսած անոր վրայ։

Սակայն կասկածոտ անձանց յատուկ բերմամբ ուզեց այցելել ծնողաց Արաքսիայի, մտածելով թէ գուցէ անոնց խօսքերէն յաջողէր աղօտ լոյս մ'ստանալու պատահած մութ խնդրոյն վրայ։ Եւ իրօք անմիջապէս գնաց յայցելութիւն Վարսամեան ընտանեաց։

Տենդը գինքը գրաւած էր, քայլեց արագօրէն, հասաւ տան դրան առջեւ, ուժգին ցնցեց զանգակը, չուան մի քաշուեցաւ ներքնապէս, դուռը բացուեցաւ, ներս մտաւ աղջիկը փութով, դուռը գոցեց, վեր ելաւ, և տեսաւ որ Պ. Վարսամեան առանձին էր, զի կինը դուրս ելած էր։

Վարդանոյշ ուրախացաւ այդ դէպքէն յուսալով օգտիլ ծեր մարդուն պարզմտութենէն։ Բայց ի զուր հարց ու փորձ ըրաւ, ի զուր մանրամասնութեանց մէջ մտաւ, ոչինչ իմացաւ, ոչինչ հասկցաւ, եթէ ոչ Արաքսիայի իւր անկեղծ բարեկամուհին լինելը։

Վարդանոյշ կարծես սիրտ առաւ ծերունւոյն անկեղծ խօսակցութենէն, և ոտք ելնելով հըրաժեշտի ողջոյնը տուաւ նմա և մինչ կ'անցնէր Արաքսիայի սենեկին առջեւէն՝ գուցէ նախանձու գաղտնի դրդմամբ, ներս մտաւ առանց ի՛նչ որոնելը գիտնալու. գնաց մերձ խոնարհ գրասեղանին, նշմարեց անդ այլ և այլ գրեանք, ու անոնց մէջ տեղէն դիտեց թէ նամա՛լի մի ծայրը դուրս կ'ելնէր։ Սիրտ ի թունդ մօտեցուց դողդոջուն ձեռքերն անոր, բացաւ, կարդաց, և քիչ մնաց որ նուաղէր։

Այդ թուղթն Տիկին Աբգարեանի առ Արաքսիա գրած նամակն էր։ Կասկածանաց տեղի այլ եւս չէր մնար ուրեմն, մոռածեց հէգ աղջիկն, իւր դժբաղդութիւնը լիուլի հաստատուած էր։ Առաւ զայդ նամակ, գրպանը դրաւ, և դարձաւ ի տուն մահը հոգւոյն մէջ կրելով։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Երբ Իսկուհի հաղորդեց Տիկին Աբգարեանի իւր յաջողութիւնը Վարդանուշի քով՝ դրուժանկինը ցնծաց ի սրտէ։ Եթէ ուրիշներն իրեն վընասելու զբաղեալ էին՝ գոնէ ինքն անոնց ջանքն ապարդիւն կ'ընէր իրապէս կործանելով զանոնք։ Ուրիշներն իրմէ կը հեռացնէին իւր սիրահարն, և ինքն ուրիշներու սիրահարները կը հալածէր միոխադարձաբար։ Ինքը լքեալ էր, է՞ր ուրեմն ուրիշներն եւս չլքուէին, կը մոռածէր։

Զար հոգիները կը մխիթարուին այլոց թըշ-

ուառութեամբ ու աղէտքներ բարդելով կը հերքուին։ Ուստի Տիկին Արգարեան վայրենի զոհունակութիւն մի կ'զգար ցորչափ սիրոյ աւերներ կը գիրէր շուրջը։

Բայց էնչ որ գինքն անհունապէս կը բերկրեցնէր, մանաւանդ ապահովութիւնն էր Սիսակի շահախնդիր խորհուրդները կործանած լինելը։ Երիտասարդը զոհած էր գինքն իւր շահուց, բնական էր ուրեմն որ ինքն եւս զոհէր զնա իւր վրէժխնդրութեան։

Վրիժառութեան գործադրութիւնն այնպիսի սոսկալի և գազանային վայելք մի յինքն կը պարունակէ, որ այդ վայելքն ժամանակ կրնայ գերազանցուիլ որ և է ուրիշ բերկրալից զգացումէ։ Ուստի Տիկին Արգարեան կը յագենար վրիժառութեան պատճառած հաճութեամբն, և գինքը մաշեցնող տառապանաց մէջ դառն մխիթարութիւն մի կը վայելէր։

Այդ ժոխային սիրտքանքէ իսկ զուրկ էր Վարդանոյշ, զի առանց վրէժխնդիր խորհուրդներ կազմելու, ընկղմեցաւ յուսահատութեան անյատակ վհին մէջ։

Որ և է խորհուրդ որոճալը մտաց և սրտի դրաղում մ'է դարձեալ։ Բայց կատարեալ և լուռ համակերպութիւնը բաղդին անողոքելի հարուածոց առջեւ՝ կը նշանակէ յանձն առնուլ ճաշակելու մինչ ցմրուր և ամենայն խղճմտութեամբ ցաւոց բաժակին մէն մի դառնալից կաթիլը։ Թուէր Վարդանուշի թէ բնաւ փոյթ չէր իրեն նոյն վայրկենէն եթէ Արաքսիա կ'ամուսնանար կամ թէ չէր ամուսնանար Սիսակի հետ, քանի

որ կը կարծէր թէ երկուքն ալ իրեն համար ոչ եւս էին։

Թէեւ կոյսն հաստատ որոշում մի տուաւ՝ մի անգամ ընդ միշտ հալածել երիտասարդին յիշատակն իւր սրտէն, սակայն վաղ ընդ փոյթ զգաց թէ այդ որոշման գործադրութիւնը չէր ինչ այնքան դիւրին։ Ի զուր կը ճգնէր ջնջել զայդ պատկեր ի սպառ իւր հոգիէն, բայց նա կենդանի և չքնաղ կը հանդիսանար իւր առջեւ որպէս միշտ։

Սրտի բռնութեան հաւասարող ուրիշ բռնութիւն մի կա՞յ արդեօք։ Անձն այն որ հոգւոյ արտաքին արիութեամբն ի վեր քան զայդ զօրութիւն կը բարձրանայ՝ մարդկութեան մեծագոյն դիւցազուններէն մին է անշուշտ։

Սակայն չորրորդ շաբաթն՝ այսինքն Սիսակի յատկացուցած պայմանաժամը լրացաւ, և նա տակաւին չէր վերադարձած ի Պոլիս։ Զգիտէր կոյսն թէ ուրախանար կամ ցաւէր անոր չերեւալուն վրայօք։ Եթէ երիտասարդը վերադառնար՝ անշուշտ Երանեանց դուստրը մերժողական պատասխանաւն ամեն յարաբերութեանց վերջ պիտի տար իրեն և սիրահարին միջեւ, ու այդ մահու չափ ծանր կը թուէր իրեն, թէեւ ամրապինդ էր որոշմանը մէջ երբէք չներելու երիտասարդին։

Սիրտը զարմանալի հակասութիւններ ունի որոնց անկարելի է թափանցել։

Բայց եթէ յանդէտս կ'ուրախանար Վարդանոյշ երիտասարդին վերադարձին յապաղման վրայ՝ միւս կողմանէ դժոխքեր կասկած մի կուդար դինքը չարչարել։ կը խորհէր թէ գուցէ Սի-

սակ յաջողած էր Արաքսիայի ուղեկից լինելու։ Այդ մտածութիւնը զինքը մահու չափ կը չարչարէր երբ ողորմելի կոյսը կը կարծէր անտարբեր լինել երիտասարդի մասին։

Ո՞վ արդեօք կարողացած է մինչ իւր սրտին յատակն իջնել և թափանցել անոր իրական վիճակին։

ԳԼՈՒԽ ԽԵ.

Ներսէս Մանչէսթէրը կը գտնուէր միշտ, հոն բազմաղբաղ կեանք մի կ'անցուն էր, և անդուլ աշխատութեանց մէջ կը ճգնէր Արաքսիայի յիշատակը թաղել։ Գործողութիւններէ դուրս պարապոյ ժամերն ուսման կը նուիրէր. գիտութեանց անսահման դաշտին մէջ կը կորսուէր, կը հետախուզէր, կ'ուսումնասիրէր, կ'ուսանէր, և միաքը չարաչար յոգնեցնելով կը կարծէր սիրտն հիւծել, և մի անգամ ընդ միշտ անշարժութեան դատապարտել զայն։

Երիտասարդը կ'զգուշանար սակայն սրտին վիճակին վրայ որոշ գաղափար մ'ստանալէ։ Դատապարտած էր զայն առանց անոր դատը լսելու տրամադրութեան. ինք մահուան ենթարկած էր զիւր սիրտ իրօք։ բայց պատճա՞ռ մ'էր արդեօք որ իւր սիրտը չբողոքէր ու մեռնէր։

Ներսէս կը խաբուէր ինքզինքն ի սիրոյ բուժած համարելով. նոյն իսկ ճգունքն զոր կ'ընէր մտացն անընդհատ ճարակ մատուցանելու համար՝ ապացոյց մ'էր այն երկիւղին որով համակ-

ուած էր սրտին իշխանութեանն հպատակելու։

Արգարեանի որդին կը թղթակցէր իւր երկու փոքրիկ քոյրերուն հետ. այդ թղթակցութիւնը թէեւ հաճոյալից էր իրեն, վասն զի անկեղծ և սիրայորդ զգացմանց արտայայտութիւնը կը տեսնէր հոն, միւս կողմանէ իւր աննպաստ կողմն եւս ունէր. զի տղայք՝ որոնց սրտին մէջ վառ մնացած էր իրենց վարժուհւոյն գաղափարն, ա. մեն անգամ անոր վրայ կը խօսէին անմեղ հոգւոյ մի մասնաւոր գորովանօքն և խանդիւը։ Զյիշատակ անցեալ օրերու կը զարթուցանէին Ներսէսի մտաց մէջ, յիշատակելով այն բարեբաստ ժամանակն ուր իրենք երջանիկ կ'ապրէին երկու սիրելեաց ընկերութեամբ։

Երիտասարդ Արգարեանը կը յուզուէր ընթեռնլով զայդ տողեր, և այդ յուզումն առաւել արդահատական զգացում մի կը համարէր քոյրերուն նկատմամբ քան թէ վաղեմի համակրութեան մի հետքը։ Բայց սա ստոյգ է որ աղջոց նամակները միշտ տխրախառն գոհունակութիւն մի կ'ապդէին իրեն, որում կը յաջորդէր զգալի մելամաղձոտութիւն մի։

Ներսէս խոյս կուտար ընկերութենէ և ամեն երիտասարդական հեշտութիւններէ։ Զինքն իբր վայրենի անձ մի կը նկատէին ի Մանչէսթըր, թէեւ ամենուրեք իւր գործունէութիւնը կը գովէին և իւր յաջողակութիւնը՝ խորհրդոցն ու անոնց գործադրութեան մէջ։

Երիտասարդը կը յառաջադիմէր, ապագայն զգալի կերպիւ կը բարեոքէր, իւր անձնասիրութիւնը գոհ կը լինէր նկատելով զարգիւնքն աչ-

խաստութեան, բայց իւր սիրան օտար կը մնար այդ գոհունակութեան։ Քանի մ'ամիս առաջ փափաքող էր Ռոշիլտի հարստութեան. բայց նոյն պահուն սիրտը նպատակ չ'ունենալով՝ բաղդին խորթ զաւակը կը համարէր ինքզինքը։

Կեանքը կը նկատէր իբր բռնաւոր տէր մի որում ծառայելու պարտաւորած էր դասալիք չ'լինելու համար։ Թուէր իրեն թէ պիտի ոկսէր ապրիլ նոյն վայրկենէն որ մահուան զանգակն հնչէր ականջին։ Դառնութեամբ կը նայէր կեանց, որտին դատարկութենէն կը դանգատէր, երբ ընդհակառակն սիրայորդ էր այն. և երբ զիւր անձ մեռած կը համարէր սիրոյ համար, չ'գիտէր թէ կենդանութեամբ լի էր տակաւին։

Արաքսիա իւր կողմանէ կը տառապէր, զի կ'իմանար թէ ինքն թիւրիմացութեան խաղալի զոհն էր եղած։ Կը յուսար տակաւին, զի վստահ էր իւր սիրեցեալ անձին ազնիւ զգացմանց վրայ. բայց սոսկալի կասկած մի կը նեղէր զինքն. այն էր թէ գուցէ Ներսէս նուիրէր վերջապէս գիւր սէր ուրիշի, իւր անմեղութեան վրայ անտեղեակ մնալով։ Եւ թէ այդ դէպքը պատահէր, մը-տադիր էր նա ծնողացը նուիրել ամբողջ իւր կեանքն, առանց որ և է ուրիշ ամուսնութեան խորհուրդ ընելու։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Տիկին Հարթմանեան՝ որում կ'ուղեկցէր Արաքսիա, վայելչադեղ անձ մ'էր, ազնիւ հոգի մի, պատուակիր և զգայուն արարած մի։ Կը սիրէր

հոգւով չսիրեսին մի որ պարտադնցութիւնը քաղարկելու բնաւ փոյթ չէր ըներ։ Շնորհալի մանկամարդը չէր գանգատեր, այլ սիրտը կ'արիւնէր լալն և մարմինը կը վատթարանար զգալի կերպիւ. բժիշկներն յորդորած էին զբաղտաբեկ տիկինը ճանրորդութիւն մ'ընելու. նա հեռացած էր ամուսինէն՝ սէրն ու վիշտն հետը տանելով։

Տիկին Հարթմանեան և Արաքսիա կապուեցան իրարու այն համակրանքը որ տեղի կ'ունենայ երկու վշտահար հոգիներու միջեւ։ Երկուքն ալ իրենց տառապանց վրայօք խօսելէ կ'զգուշանային, բայց երկուքն ալ փոփոխակի իմացան թէ բախտին հալածեալի մի ընկերացած էին։

Յաւը լուռ սերճախօսութիւն մ'ունի զոր շուտ կ'ըմբռնէ ազահար սիրտ մի։ Ուստի երկու կանանց մէջ կարծես ազոյ համերաշխութիւնն հաստատուեցաւ, իրարու համար արդահատութիւն ունեցան, թէեւ իրենց գաղտնիքն իրարմէ պահեցին։

Ներսէսի դլխաւոր մայրաքաղաքաց կ'այցելէին մեր երկու երիտասարդուհիք, այլ և այլ առարկայներ կը տեսնէին, կը գնէին, կը զարմանային, բայց ամեն ինչ անոնց համար սեւով նկարուած էր կարծես։

Հասան Լոնտոն ու հո՛ն Արաքսիա մասնաւոր յուզմամբ գրաւուեցաւ գիտնալով իւր մերձաւորութիւնը Ներսէսի։ Կը խորհէր թէ բաղդը գուցէ զերիտասարդն իւր ճանրուն վրայ կը դընէր, և թէ ինքն ուղղակի առ այն երթալով կը յաջողէր ինքզինքն արդարացնելու։ Բայց ի զուր

շուրջը կը նայէր, ի զուր հոգին կը տրտմէր երբ հեռուէն իւր սպասած անձին նմանող մէկը կը նշմարէր. Ներսէս ոչ ուրեք էր, պատրա՞նք։

Բուռն անձկութենէ մղեալ՝ Արաքսիա վայրկեան մի յոժարութիւն ունեցաւ յայտնել Տիկին Հարթմանեանի իւր հոգւոյն գաղտնիքն, և խնդրել անկէ որ մինչեւ Մանչէսթըր ուղեւորին։ Վստահ էր որ իւր ազնուամիտ տիրուհին կը կատարէր իւր բաղձանքն, յենլով այն համերաշխութեան վրայ որ վշտակիր քոյր հոգիներու միջեւ կը տիրէ. բայց մտածեց թէ գուցէ Ներսէս ոչ եւս կը գտնուէր ի Մանչէսթըր. և եթէ էր տակաւին, երկիւղ զգաց հաշտութեան փորձն ապարդիւն մնալուն վրայօք, որով իւր արժանապատուութիւնը մեծ հարուած մի կ'ընդունէր տիկնոջ առջեւ։

Արժանապատուութեան վերաբերող փափուկ խնդիրներ կան, զորս մարդ ոչ միայն այլոց կը դժկամակի յայտնել, այլ եթէ կարելի լինէր անձէն իսկ կը ծածկէր։

Մինչ կը տատանէր Արաքսիա այդ առաջարկն ընելուն կամ չընելուն վրայ, ահա Տիկին Հարթմանեան որ հազիւ շարթուան մի այցելութենէ վերջը, Լոնտոնի հրաժեշտ տալու պիտաւորութիւնն յայտնեց, առարկելով սոյն մայրաքաղաքին չար ներգործութիւնն իւր առողջութեանը վրայ։

Ամեն յոյս մեռած էր ուրեմն Արաքսիայի համար. ու վայրկեան մի Ներսէսի հետ հաշտութեան յոյսն աչացը փայլելէն վերջը մթագնեցաւ վերստին։

Անգլիոյ մայրաքաղաքին մէջ ամեն ինչ ան-

գին դղրդում և կենդանութիւն էր։ բայց Արաքսիայի թուէր ընդ հակառակն թէ բոլորովին անմայութիւն էր իւր շուրջը։ Հեռի էր իրմէ իւր պաշտած անձն, որուվ զուրկ էր կենսական տարրէն։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Ցետ արձակման Արաքսիայի՝ աւելորդ համարեց Տիկին Աբգարեան հայ լեզուին ուսմունքն յառաջ վարել իւր որդւոց համար, քանի որ կը համարէր հայերէնն իբր մեռեալ բարբառ մի, որ օգտակար կրնար լինել միայն վարժապետի պաշտօնը վարելու սահմանուած անձանց, և ոչ թէ ընկերութեան մէջ փայլելու վիճակուած մեծատոհմ օրիորդաց։ զի ըստ Տիկին Աբգարեանի կը բաւէր հարուստ լինիլ տոհմային ցեղի մի բոլոր յաւակնութիւններն ունենալու համար։ Ուստի գաղղիացի դասատուի յանձնեց իւր երկու աղջկանց գաղղիերէն սորվեցնելու հոգն, ինչպէս գերման վարժուհւոյ մի զանոնք կրթելու և անոնց մօտ ասրելու պաշտօնն։

Գերմանուհին հասակաւոր աղջիկ մ'էր, անախորժ ու ցուրտ արարած մի, որ ոչ այլ ինչ գիտէր բայց մեքենայի ճշդութեամբ յառաջ վարել կեանքն, իբր թէ պարզ նիւթական գործիք մի լինէր այն։ Հագուելու, քայլելու, խօսելու և գործելու եղանակն, ամեն ինչ մէկ խօսքով, կարծես կարկինով չափած էր։ Երբէք չէր յայտներ յանկարծական բաղձանք մի, սէտք մի,

խնդութիւն մի, տխրութիւն մի։ Իւր կիրքերն այնպէս կարգադրած թուէր լինել որ միշտ չափաւորական ճշդութեամբ կը շարժէին առանց իրենց ընթացից մէջ անկանոն շարժում մ'ընելու։ Բաց ի դասախօսութեան ժամանակէն, բառերը խիստ սակաւաթիւ էին, և բերանը կը բանար միայն երբ հարկը պահանջէր, դիտողութիւն մ'ընելու և կամ պատուէր մի տալու համար։

Այդ հասակաւոր աղջիկն երբէք դորոշոյ բառ մի չ'ունէր տղայոց համար. կարծես զինուորական մ'էր որ զօրացն հպատակութեան և ճշդութեան ակնդէտ էր միայն։

Տարիքոտ աղջիկները դոգցես չեն ներեր ուրիշ կանանց իրենց ամուսնական և մայրական երանութիւնն, ու ինքզինքին արհամարհած համարելով ոչ մէկու մ'ուշադրութիւնն ու սէրը գրաւած չ'լինելնուն համար, իրենց դառնութիւնն ընկերութեան վրայ կը ժայթքեն, ու այնու եղանակաւ իրենց վրէժը կը լուծեն։

Յետ սրատագրաւ վարմունքին Արաքսիայի՝ դժուար էր տղայոց հաշտ աչօք նայիլ և առանց զգածուելու իրենց նոր վարժուհւոյն խիստ ձեւերուն։ Բայց խեղճ արարածները բնաւ համարձակութիւն չ'ունէին իրենց մօր դանդատ մ'ընելու գերման վարժուհւոյն խստութեան վերայօք, քանի որ մէն մի անգամ որ Տիկին Աբգարեան իւր դժգոհութիւնն ուզէր յայտնել մանկանց, կ'ըսէր. « Անշուշտ Արաքսիայի նման բնաւորութեամբ թոյլ վարժուհի մ'ունենալնուդ համար է որ անկիրթ եղաք։ »

Թող թէ Տիկին Աբգարեան անտարբեր էր գիտնալու թէ ո՛ր եղանակաւ կը վարուէր վարժուհին իւր զաւակացը հետ, այլ եթէ նոյն իսկ ճանաչէր խստութիւնն գերմանուհւոյն, գոհ կը լինէր մանաւանդ, զի այնպէս կը մտածէր թէ տղայք խարազանաւ կը կրթուին և ոչ թէ քաղցրութեամբ։ Մանաւանդ որ մասնաւոր գոհունակութիւն մ'ալ ունէր նոր վարժուհւոյն նըկատմամբ, այն էր անոր տգեղ և հասակաւոր լինելն, որով ի նա դարձեալ նախանձորդ մի դտնելու երկիւղէն ազատ էր։

Բայց Աղաւնի՝ իբր փափուկ տունկ որ պէտք ունի արեգական ջերմութեան, կը գունատէր ու թարմութիւնը կը կորսնցնէր այդ կնոջ սառած շունչին ներդործութեամբ։ Արաքսիայի սիրալիր և ջերմ մթնոլորտին շնորհիւ աղջիկն աճած էր և բարգաւաճած. այդ կենսատու մթնոլորտէն զրկուելով՝ գլուխը ծռած ակնկոր կը քայլէր կենաց մէջ։

Արմինէ թէեւ ցաւ կ'զդար Արաքսիայէն հեռանալուն՝ այսու հանդերձ ոչ իւր զուարթութիւնը կը կորսնցնէր, և ոչ ալ իւր առողջութեան վնաս կը հասցնէր։ Փոքրիկը կը համակերպէր ամեն վիճակի, կ'երգէր, կը խայտար, կը ցատքռտէր, որչափ որ կարելի էր խիստ հրամանատարութեան ներքեւ։

Զգայուն բնութիւնները քան զսովորական կազմութիւններն աւելի կ'զդան զամեն ինչ, և մանաւանդ վիշտը։ Ցաւը վայրենի ու դառն հաճոյքներ ունի որ զհոգին պեղելով կը հրճուեցընէ։ Տառապանքն ունի իւր բանաստեղծու-

թիւնն ինչպէս և ուրախութիւնը։ Մին աշնանային մութ դիշերուան եղերերգն է. միւսը գարնանային լուսազարդ և գեղեցկաբոյր առաւօտեան զուարթ երգն է։ Խաւարն ունի իւր խորախորհուրդ և մութ հեշտութիւնն, ինչպէս լոյսն ունի իւր սրտագրաւ և ուրախալից վայելքն։ Առաջինն առաւել դժուարըմբռնելի է, զի փափուկ և զգայուն հոգիներու առանձնաշնորհութիւնն է. մինչ միւսը ամենուն դիւրամատչելի է։

Աղաւնին կը մաշէր իւր նախկին վարժուհուոյն կարօտիւ. բայց ապահով էր թէ անհընար էր տեսնել զնա, քանի որ մայրը բացարձակ հակառակութեամբ կը խօսէր անոր դէմ։ Գո՞նէ եթէ եղբայրն ունենար. բայց անկէ ևս զուրկ էր։ Ուստի այդ կանխահաս մանուկն յինքըն ամփոփուելով՝ տառապանաց դպրոցին կ'աշակերտէր առանց ոչինչ յայտնելու քրոջն, որ իւր տարիքին սեղհական անտարբերութեամբը կ'ապրէր։

Աղաւնին հասուն աղջիկն էր որ կը մտածէր, կը խորհէր, կը ցաւէր ու կը համակրէր։ Արմինէն տղայութիւնն էր իւր անհոգութեամբն և աշխուժիւը. տղան չափահաս մտաց բարձրութեան չի հասնիր երբէք։ Հետեւապէս Աղաւնին կը թողուր իւր քրոջ խինդն, աղմուկն և գոհունակութիւնն, անձին վերապահելով կարօտն ու սուգը։

Մելամաղձոտութիւնը դրաւեց զԱղաւնին և հետզհետէ զօրանալով, տկարութիւնն յաջորդեց մելամաղձային այդ վիճակին, բայց վարժուհին

իւր խստութեանը մէջ ամփոփուելով տղուն կացութիւնը բնաւ չէր նշմարեր։ Իսկ Տիկին Աբդարեանի գալով ուշադրութիւն անդամ չէր ըներ։ Եւ երբ իւր տնուտինը, ճշմարիտ հօր մի անձկութեամբ, ահով կը յայտնէր զաւակին վրոտիլը, Տիկինը կը պատասխանէր թէ Աղաւնի ոչինչ ունէր, և թէ տղայք աչնան ժամանակ ենթարկուած են այլ և այլ թեթեւ անհանդստութեանց։

Աղաւնի եղբօրն ոչինչ գրած էր իւր վիճակին վրայօք, մտածելով թէ նա դառն կասկածանաց կրնար մատնուիլ։ Եւ սակայն Ներսէս միակ անձն էր որ զինքը կրնար հասկնալ ու իւր պէտքը լրացնել։ Այսպէս ուրեմն կը ցանուէին սերմունքն հիւծող հիւանդութեան մի որ աղիտաբեր պիտի լինէր չնորհալի մանկան։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Գրեթէ երեք ամիսներ յաջորդած էին Սիսակէն յատկացեալ պայմանաժամին, և երիտասարդը տակաւին վերադարձած չ'էր ի Պոլիս։ Ի՞նչ հանդիպած էր նմա։

Փոքր Ասիոյ կողմերը գաւառացի մը դատ մ'ունէր, ու այդ դատ գնացած էր շահիլ Սիսակ։

Գաւառացի Պ. Գրիգորը զիւր փաստաբան ընդունեց մասնաւոր մեծարանօք ու հիւրընկալեց զնա իւր տան մէջ, հաշուելով թէ մեծարանաց սաստկութիւնը կրնար նպաստել դրամ հատուցանելու մասին նուազ առատաձեռն լինելու։

Պ. Գրիգոր հասակաւոր այրի մարդ մ'էր որ իւր երրորդ կնոջմէն միայն զաւակ մ'ունեցած էր. բայց տղուն ծնունդը մօրը մահը պատճառած էր։

Պ. Գրիգոր իրեն հասակակից այրի քրոջը յանձնած էր որդւոյն խնամատարութեան պաշտօնն իւր տան մէջ. ու մանուկն աճեցաւ այնպիսի գեղով, որ շնորհաց իրր հրաշալիք կը ներկայանար երբ տասն և հինգ տարեկան էր՝ այսինքն նոյն ժամանակին ուր Սիսակ դինքը տեսաւ առաջին անգամ, գաւառացւոյն հիւրը լինելով։

Բազում վեհայացուներ խնդրած էին զօրիորդը ի կնութիւն, բայց Պ. Գրիգոր մերժած էր զամենքն ալ, մասնաւոր նպատակ ունենալով իւր դուստրը բաղդակից ընելու այնպիսի մարդու մի՝ որուն փայլուն վիճակէն ինքը կարենար մեծ շահեր ակնկալել։ Այդ մարդը միակ գլխաւոր նպատակ մ'ունէր երկրիս վրայ՝ այն էր ոսկի դիզել. փառք, պատիւ, արժանապատուութիւն, զամեն ինչ կը զոհէր իւր արծաթապաշտ ճաշակին։ Միշտ այլոց դէմ դատ բանալու առիթ կը փնտռէր, ու չկար որ և է միջոց զոր սրհամարհէր իրաւունք ստանալու համար։

Ահա բաւական մեծ գումար մի վտանգի ենթարկած էր նոյն պահուն, ու մեր գաւառացւոյն հակառակորդն ազդեցութեամբ զօրաւոր մարդ մի լինելով, Պ. Գրիգոր խոհեմութիւն համարեց յանձնել զիւր դատ սոլսեցի փաստաբանի մը ճարտարութեան, ու այդ նպատակաւ Պոլսոյ ծանօթներէն խնդրեց մի մասնագէտ՝ այնու

պայմանաւ սակայն որ պահանջումները չափաւոր լինէին։

Սիսակ յանձնարարուեցաւ ուրեմն Պ. Գրիգորի, ու ներկայացաւ նմա իբր օրինաւոր փաստաբան, ձեւերն առնելով անձի մի որ վստահ էր ըրածին վրայ, ու տեղեակ արուեստին ամենայն նրբութեանց։

Մեր փաստաբանն այն ինչ տեսաւ զերիտասարդուհին, չլացաւ անոր դեղեցկութենէն ու մըտադիր եղաւ գրաւելու զայն։ Դժուարին փորձ մի չէր անոր համար երբ դեղեցիկ սեռն որսալու արուեստին մէջ նշանաւոր հանդիսացած էր, նա մանաւանդ որ անմեղ աղջիկ մ՝ գլխէ հանելու վրայ էր խնդիրը։

Իրօք հազիւ երկու շաբաթներ անցած էին, ու անփորձ դեղանին սիրահարութեան ալեկոծութեան մէջ անկած էր արդէն։ Սիսակ խոստացաւ անոր հետն ամուսնանալ, ու յայտնեց թէ մանաւոր պատճառներու համար հարկադրած էր նշանտուութիւնն յետաձգելու։ Առանց դժուարութեան հաւատացուց աղջկան թէ ամեն ջանք պիտի ընէր փութացնելու իրենց ամուսնութիւնն, և թէ ընդ փոյթ յաջողելու համար իւր գաղտնապահութեան կը կարօտէր։

Անփորձ արարածն ոչ միայն խոստացաւ իրմէ պահանջուածն, այլ անխիղճ երիտասարդին սիրոյ թակարդին մէջ անկաւ ամբողջապէս։

Իսկ Սիսակ մոռցաւ թէ իւր պայմանաժամը լրացած էր ի Պոլիս. մոռցաւ իւր շահերն, ու այն բուռն եռանդեամբ և ծայրայեղութեամբ որ յատուկ էր իւր անսանձ բնաւորութեան,

սիրոյ աղմկալից կենաց մէջ թաւալեցաւ գլխիկոր։ Բայց ինչպէս ամէն կիրք որ չափազանց է՝ Սիսակի տրփանքը շատ շուտ սպառեցաւ։ Եւ երբ զգաց թէ իւր բաղձանքներն յագեցած էին, երկարաձգած դատը փութաց յաջողութեամբ աւարտել, և իրեն խոստացուած չափաւոր գումարը ստանալէն վերջը նոյն իսկ անոր ձեռքէն որուն ի փոխարէն աղջկանն անպատուութիւնը կը թողուր, ընդ փոյթ վերադարձի խոստմամբ ու յարատեւ սէր խոստանալով գեղանուոյն, մեկնեցաւ Սիսակ արտասուք և սուգ թողլով իւր քմահաճութեանց դիւրախաբ զոհին։

Անխիղճ մարդիկ կան որք սրտերու հետ կը խաղան ինչպէս տղայք իրենց խաղալիկներուն հետ, զորս քիչ ժամանակ վայելելէն վերջը, կը ջախջախեն մէկ կողմ նետելով, զնորանորս ստանալու ակնկալութեամբ։

Սիսակ այդ կարգի մարդկանց տխուր պատկերն էր. միայն իւր շահն և հաճոյքը կը ճանաչէր, անփոյթ այն աղետից զորս իւր քմահաճ և վաղանցուկ կիրքերը կրնային յարուցանել։ Իւր մէկ փոքրկենական հեշտութեանն համար մշտատեւ սրտասուաց աղբիւր մի բանալու բնաւ խիղճ չէր ըներ։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Առաւել քան երեք ամիսներ սահած էին երբ Արաքսիա վերադարձաւ ի Պոլիս յետ իւր ուղեւորութեանն յԵրոսպա, առանց իւր բարոյա-

կան վիճակը վոսիոխութիւն կրած և առանց մասնաւոր ուշադրութեան դէպք մի պատահած լինելու։

Արաքսիայի համար ամեն կարեւորութեան արժանի նիւթ յանձին Ներսէսի բովանդակուած էր. քանի որ անոր չէր հանդիպած, իւր ճանաչողութիւնն ոչ այլ ինչ նպատակ ունեցած կը լինէր եթէ ոչ ծնողացը նիւթական պիտոյքն հայթհայթած լինելու դոհունակութիւնն, և բարեկամուհի մի շահած լինելու գիտակցութիւնն յանձին ազնուասիրտ Տիկին Հարթմանեանի։

Արաքսիայի վերադարձին օրն իսկ Սիսակ պատահմամբ ի մայրաքաղաքս կուգար, քաջայոյս լինելով ծածկել սուտով մի յաչաց Վարդանուշի իւր երկար բացակայութեան պատճառը։

Մարդիկ կան որ ոչ միայն խաբէութեան մէջ ամօթ չեն տեսներ, այլ ընդհակառակն ճարպիկութիւն կը համարին այդ անարգ միջոցաւ յաջողիլ։

Իսկ Վարդանուշի գալով, վշտահար աղջիկն որ վիրաւորեալ էր իւր արժանապատուութեան մէջ, յուսաց դիւրաւ բուժիլ անարժան սիրոյ մարտիրոսութենէն։ Բայց նկատելով իւր անկարողութիւնը՝ ջնջելու զիւր հոգին գրաւող յիշատակը, ոկսաւ վնասիլ, հիւծիլ, տկարանալ, և վերջապէս այնպիսի յուսահատ կացութեան մէջ անկանիլ մինչեւ ամէն բժշկական ջանքերն ապարդիւն թողլու։

Պարոն և Տիկին Երանեան անհուն մտատանջութեան մատնուած էին, ու գորովագութ ծնողաց յատուկ սրտայուզութեամբ կը տանջուէ-

ին։ Իրենց դստեր հիւանդութիւնը Սիսակի բացակայութեան վերագրելով, մեծ անհամբերութեամբ անոր վերադարձին կը սպասէին։ Մանաւանդ որ ոչինչ գիտէին ո՛չ Սիսակի ուր գըտնուելուն վրայ, ո՛չ Իրենց դստեր դժդոհութեան մասին երիտասարդին նկատմամբ, և ո՛չ անոր հետ չ՝ամուսնանալու խորհրդոյն վրայ։

Վարդանոյշ ամեն ինչ ծածկած էր ծնողքէն հարկ եղած ժամանակն իմացուցնելու համար անոնց թէ ոչ եւս յոժարամիտ էր իւր փափաքած ամուսնութիւնն ի կատար հասցնելու, առանց սակայն յայտնելու անոնց այն մատնութիւնն որում զոհ եղած լինել կը կարծէր, զի կ՝ամչնար խոստովանելու թէ խաղալիկ եղած էր այն բարեկամուհւոյն իսկ զոր ոգւով չափ պաշտած էր, ինչպէս և այն սիրահարին որում ամէն ինչ զոհելու պատրաստ էր։

Սիրոն ունի իւր արժանապատուութիւնն, և պարտեալ կը թուի երբ պատրանաց կ՝ենթարկուի։

Բայց Վարդանուշին վիճակն օր աւուր այնպէս ծանրացաւ որ աղետալի վերջի մի սպասել կուտար։ Թէեւ անկողնոյ չ՝էր ծառայեր, սակայն գրեթէ անկարող էր նստարանէն վար իջնել առանձինն, ու նիհարութեան սոսկալի աստիճանի հասած էր։

Արաքսիա իւր կողմանէ կը շարունակէր ծածկել ծնողքէն ամուսնութեան յոյսերուն տապալումը, խնայելով անոնց ծերութեան։ մանաւանդ լսելով դիտնալով թէ հօրը մարտիրոսութիւնն անմիջապէս պիտի սկսէր, իւր կնոջը դառնութեան

նշաւակ լինելով, այդպիսի դժբախտ պատահարի մ'առթիւ։

Արաքսիա հարց ու փորձ ըրաւ Երանեան ընտանեաց ինչպէս և Սիսակի վրայօք։ Այս վերջնոյն բացակայութեանն երկարաձգուելու մասին զարմանք յայտնեց, ինչպէս և ցաւ՝ Վարդանուշի կացութեանը վրայ։ Իր վերադարձին հետեւեալ առաւօտուն գնաց փութով այցելելու զհիւանդ բարեկամուհին զոր կատարեալապէս կը սիրէր միշտ, թէեւ պատճառ էր իւր աղէտից, իբր մայր որ ներելով իրեն տագնապ հասցնող զաւկին, ներքնապէս կը ցաւի այլ լիովին կը պաշտէ զայն։

ԳԼՈՒԽ Ը.

Երբ Արաքսիա մտաւ Վարդանուշի սենեակն ուր նա առանձին էր նոյն միջոցին, սաստիկ սարսափեցաւ անոր դիմական փոփոխութենէն, և առ այն ընթանալով թեւատարած փորձեց գրկացը մէջ առնուլ զայն, երբ հիւանդ աղջկան խիստ շարժումն ու խոժոռ նայուածքը կասեցուց զինքը կեցած տեղին վրայ։

— Ի՞նչ է այդ դժգոհ ձեւդ, Վարդանո՛յշ, ըսաւ Արաքսիա կատակի եղանակաւ, դուրս երթալուս մոռցուեցա՞յ արդեօք։

Եւ երբ կրկին անգամ Արաքսիա մերձեցաւ հիւանդին զինքն ողջագուրելու համար, դառնացած աղջիկը նոյն դժգոհ կերպարանօք գլուխը ետ քաշեց առանց բնաւ կարենալ բառ

մ՝արտասանելու, այնչափ յուզեալ էր ի տես արարածին զոր կը կարծէր իւր երջանկութեան աւերիչը։

Բայց Արաքսիա նկատելով որ հիւանդն ոչ միայն կատակ չէր ըներ այլ ընդհակառակն խիստ զգածուած կը թուէր, հարցուց պատճառն այդ ցուրտ ընդունելութեան, ըսելով.

— Վարդանո՛յշ, զքեզ ոչ եւս կը ճանաչեմ սառնապատ ձեւերուդ ներքեւ։

Աղջկան կուրծքին խիստ զգալի ելեւէջներն ու լռութիւնը շատ իսկ կը յայտարարէին իւր ներքին վիճակին անձկութիւնը։

— Կը թախանձեմ քեզ, սիրելի՛ս, յարեց Արաքսիա աղերսագին, հանդարտէ՛ և պատմէ ինձ շուտ դժգոհութեանդ պատճառը։

Հիւանդը դառն ժպիտով մը միայն պատասխանեց։

— Վարդանո՛յշս, ըսաւ Արաքսիա, ի՞նչ ունիս, ի՞նչ եղար, ինչո՞ւ կը ծածկես ինձմէ ունեցածդ. միթէ ո՞չ եւս եմ քու բարեկամուհիդ։

Վարդանոյշ դառնալից նայուածք մ՝ուղղելով իւր ընկերուհւոյն և ձայնով մի որ սրտամաշութենէ կը դողար, դոչեց.

— Դո՞ւ, բարեկամուհի՞ս։

— Բայց ի՞նչ եմ եթէ ոչ մտերիմդ և քոյրդ։

— Դո՞ւ։

— Չ՝եմ հասկնար, խօսէ՛ բացարձակապէս։

— Խօսի՞մ։

— Այո՛, խօսէ՛, կը խնդրեմ։

— Կը ներեմ քեզ, ահա խոստովանութիւնս։

— Կը ներե՞ս, դոչեց Արաքսիա բարկու-

թեամբ կարմրելով, բայց դու ի՞նչ բանի կը նե-
բես արդեօք։

— Երջանկութեան բաժակիս կուլ տուած լինելուդ համար։

— Վարդանո՛յշ, խնդրեմ, որոշապէս խօսէ, ոչինչ կը հասկնամ։

— Հարցուր խղճիդ և այն կը պատասխանէ քեզ։

— Խղճի՞ս։

— Այո՛, խղճիդ։

— Գուցէ ուրիշ մ'իրաւունք ունենայ խղճիս դիմելու, բայց ոչ դու, Վարդանո՛յշ։

— Ոչ երբէք ուրիշի վնասեցիր որչափ ինձ։

— Գուցէ կը մեղադրե՞ս զիս շատ խղճովին քեզ ծառայած լինելուս համար։

— Խղճովի՞ն։

— Բայց դու կը մեղադրես զիս առանց յանցանքս յայտնելու, ուստի ես ոչ եւս կը պատասխանեմ քեզ. յանցաւորի դիրք մի կուտաս ինձ երբ յանցանքս գուցէ զքեզ շատ սիրելուս է։

— Զարմանալի սէր որ մահս կը պատճառէ սակայն։

— Ե՛ս, քեզ մա՞հ կուտամ. Վարդանո՛յշ, խօսէ, զի ընդհակառակն դու մահ կուտաս ինձ այս վայրկենիս։

— Կ'զգամ թէ կեանքը խոյս կուտայ ինձմէ և չ'եմ ուզեր մեռնիլ առելութիւնս հետս տանելով։

— Ո՛հ, խնդրեմ, բարեկամուհիս, յայտնէ ինձ զամեն ինչ, ոչ եւս կրնամ համբերել այդ խօսելու եղանակիդ։

— Արաքսիա, երջանկութիւնս յանիշտակեցիր, դիս խաբեցիր, բայց երջանիկ եղիր Սիսակիդ հետ։

— Ե՞ս երջանիկ լինիմ Սիսակին հետ. ի՞նչ կ'ուզես ըսել, ըսաւ Արաքսիա այլայուներով։

— Կ'ուզեմ ըսել որ մինչ դու ինձ համար աշխատիլ կը ձեւացնէիր, քու հաշուոյդ համար կը գործէիր։

— Ե՞ս։

— Այո՛, դու, զՍիսակ ինձ տալ կը ձեւացընէիր՝ զայն լաւ եւս քեզ պահելու դիտաւորութեամբ։

Արաքսիա ոչ եւս կարողանալով տակալ անիրաւ յանդիմանութեանց, գլուխն ձեռացը մէջ առաւ և սկսաւ լալ ողորմագին։

Նոյն միջոցին Տիկին Երանեան ներս մտնելով զարմացաւ այդ վիճակին մէջ տեսնելով զԱրաքսիա, և կասկածելով թէ Վարդանուշի վիճակն էր պատճառն այդ յուզման, ըսաւ այլայլութեամբ իմն զոր ի զուր կը ջանար ծածկել։

— Ինչո՞ւ կուլաս, Արաքսիա՛ս, Վարդանուշնիս՝ փա՛ռք երկնից, կարծածիդ չափ հիւանդ չէ, ու զայն բազկացը մէջ առնելով՝ բարի գալուստ մաղթեց անոր։ Եւ հիւանդին յուզեալ ձեւը նկատելով՝ ջանաց հանդարտեցնել զայն, և ապա ամենայն գգուշութեամբ իմացուց թէ Սիսակ եկած էր իրմէ լուր առնելու։

Վարդանոյշ կարծեաց պիտի նուաղէր այդ լուրը իմանալով, բայց Արաքսիա որ ոչինչ գիտէր երիտասարդի մասին, զայդ իբր երկնային շնորհք

հանարեց, և արտաքոյ կարգի այլայլութեամբ ըսաւ.

— Տիկի՛ն, հաճեցէք իմացնել Պ. Սիսակի որ անմիջապէս հոս գայ։

Վարդանոյշ անկարող էր դէմ դնել այդ հրաւէրին, մանաւանդ որ կը փափաքէր անհունապէս զերիտասարդը տեսնել կասկածներն հաստատելու կամ ցրուելու մտօք։

Բայց զգուշաւոր մայրը վախնալով որ Սիսակի ներկայութիւնը կրնար նոր յուզում պատճառել աղջկանը, տեղացը չէր շարժեր, այլ անձկանօք հիւանդին մօտ կեցած անոր երեսը կը նայէր։

Զայս դիտելով Վարդանոյշ՝ իւր մօրն անհամբերութեամբ ըսաւ.

— Մա՛յր իմ, հաճէ Պ. Սիսակի իմացնել որ Արաքսիա զինքը կը խնդրէ։

Վաղեմի վարժուհին լիովին զգաց այդ ակնարկութեան խստութիւնը, բայց ոչինչ պատասխանեց։

Հեռացաւ Տիկին Երանեան և յայնժամ Վարդանոյշ հարցուց.

— Խոստովանէ՛, Արաքսիա, միատե՞ղ համբորդեցիք։

— Ո՛հ, գոչեց դատապարտեալ կոյսն, որչա՛փ անիրաւ ես դու։ Ատոլ մեկնելէս ի վեր չեմ տեսած զինքն, և իւր վերադարձն անգամ կ՚անգիտանայի։

— Լա՛ւ, լա՛ւ։

— Բայց ըսէ, Վարդանոյշ, ո՞ր սատանն ազդեց քեզ այդ դժոխային կասկածներն, ի՞նչ է անունը։

— Այդ իմ գաղտնիքս է, պատասխանեց հիւանդը, մինչ ակնդէտ դրան՝ անհամբերութեամբ Սիսակին կը սպասէր, և յանկարծ Արաքսիայի դառնալով, ըսաւ նախանձու զգացմամբ.

— Գուցէ եկաւ զքեզ տեսնելու։

Եւ մինչ Արաքսիա՝ բուռն դառնութեամբ համակուած, իբր արհամարհեալ արժանապատուութեան պատ'էր կը հանդիսանար, դուռը բացուելով՝ Սիսակ ներս մտաւ։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Երիտասարդն ոչ նուազ քան զԱրաքսիա զարհուրեցաւ հիւանդ աղջկան այլակերպութիւնը նշմարելով, և խղճի խայթ մ'զգաց կասկածելով թէ իւր բացակայութիւնն եղած էր պատճառ այդ աղիտից։ Մօտեցաւ Սիսակ ձեռք տալու համար Վարդանուշի, բայց սա վոխանակ պիւր ձեռք կարկառելու՝ դէմքը դոյեց և սկսաւ լալ հեծկլտանօք։

— Սիսակ, գոչեց Արաքսիա, ուրախ եմ որ ժամանակին վերադարձար զիս տասկալի զրպարտութենէ մը ազատելու համար։

— Ի՞նչ զրպարտութիւն։

— Պատմէ նախ ի՞նչպէս հանդիպեցաւ որ այս առաւօտ դու եկար Երանեան ընտանեաց այցելելու։

— Խիստ բնական դրդմամբ, պատասխանեց երիտասարդն։ Երէկ իրիկուն Պոլիս հասայ յետ բացակայութեան մի որ դժբաղդաբար շատ

երկարեցաւ կնճռոտ դատի մի պատճառաւ։

Անշուշտ Միսակ կ'զգուշանար իւր վերադարձին յապաղման բուն պատճառը խոստովանել։

— Շարունակէ, ըսաւ Արաքսիա, անհուն վրդովմամբ, մինչ Վարդանոյշ կարծես Միսակին շրթունքներէն վար կախուած՝ կը փափաքէր ի սրտէ որ նա իւր դժոխքներ կասկածները կարենար ցրուել վերջնական կերպիւ։

— Այս առաւօտ, շարունակեց Միսակ, Արաքսիայի ուղղելով խօսքերը, ձեզ տեսութեան գնացի, և մայրդ տուաւ ինձ վերադարձիդ ուրախառիթ լուրն և օրիորդ Վարդանուշի հիւանդութեան գոյժը։ Բնականաբար մեծ անձկութիւն մ'զգացի, և անհամբերութեամբ համակուած փութացի անմիջապէս գալ՝ ես անձամբ տեղեկանալ օրիորդին կացութեան վերայօք։

— Եւ ի՞նչպէս եղաւ որ վեր ելար։

— Տիկին Երանեան տեսաւ զիս մինչ դրան առջեւ էի և հրաւիրեց զիս ներս մտնելու։

Արաքսիա նշանակութեամբ լի նայուածք մ'ուղղեց Վարդանուշի, նայուածք՝ որ թուէր կշտամբել զինքը կասկածանացն անիրաւութեան համար,

— Ձեմ հասկնար, ըսաւ Միսակ, ինչո՞ւ այս հարցուփորձը։

— Ո՛հ, Միսակ, գոչեց Արաքսիա, գիտես դու թէ որպիսի՛ սիրով լցուած է սիրտս Վարդանուշի համար, և ձայնը նուաղեցաւ յուզմանը սաստկութենէն։

— Եւ մինթէ տարակո՞յս ունի օրիորդ Վար-

դանոյշ այդ անուրանալի ճշմարտութեան վրայ, ըսաւ Սիսակ, հիւանդին նայելով։

Վարդանուշի բերանը կը լռէր, բայց իւր սիրտն ահագին բաբախմամբ կը խօսէր։

— Սիսակ, ըսաւ Արաքսիա, բարբառելու կարողութիւնը վերստանալով, ո՛չ միայն կը տարակուսի այլ գիս կը նախատէ մինչեւ իսկ զիւր թշնամին, զիւր նախանձորդն համարելով։

— Թշնամի՞ն, նախանձո՞ղը, ի՞նչ կ'ըսես, Արաքսիա՛, հարցուց Սիսակ զարմացմամբ։

— Այո՛, հաւատացուցած են իրեն թէ ես ղքեզ կը սիրեմ։

— Ո՜վ անօրէնութիւն։

— Թէ ես զինքը կը խաբեմ, և թէ իրեն համար աշխատել ձեւացնելով՝ իմ անձիս շահը ի նկատի կ'առնում միայն։

— Օրիորդ Վարդանոյշ, այդպիսի սոսկալի ենթադրութիւն մ'ընելու կարողացա՞ք անձի մի համար որ ձեզ կատարելապէս անձնուէր է, ըսաւ Սիսակ։

Վարդանոյշ կը լսէր, կը լռէր, կ'սպասէր, մինչ սիրտը կարծես պիտի դուրս ժայթքէր։ Բայց տակաւին իւր կասկածանաց անհիմն լինելուն վերայ փաստ մի չ'ունենալով, կարծիք մի չ'էր յայտներ ամենեւին։

— Ես, յարեց Արաքսիան, անունը կը խնդրեմ այն անօրէնին որ գիս թշնամանեց, և Վարդանոյշ կը յամառի ծածկել յինէն զայդ անուն։

— Ես խնայնեմ քեզ այդ անունն, ըսաւ Սիսակ, վստահ կերպիւ։

— Ուրեմն քանի որ գիտէք ո՛վ լինելն, ըսաւ

Վարդանոյշ, որ առաջին անգամ կը խօսէր, կը հաստատէք թէ անհիմն չ'են իմ կասկածներս։

— Ձեր կասկածները բոլորովին անտեղի են, օրիո՛րդ, և զանոնք ձեզ ազդողը Տիկին Աբգարեանն է։

Արաքսիա զարհուրմամբ կը հաստատէր թէ այդ կինն էր իւր գաղտնի թշնամին, քանի որ Վարդանոյշ հակառակը չէր ըսեր, և կը կասկածէր թէ նոյն անձն էր անշուշտ որ զՆերսէս հեռացուց իրմէն. իսկ Վարդանոյշ անհուն անձկութեամբ հարցուց.

— Տիկին Աբգարեան ի՞նչ շահ ունէր արատաւորելու զԱրաքսիան, և եթէ հիմնաւոր պատճառներ չ'ունենար, ի՞նչպէս կրնար ուղղել իւր վարժուհւոյն այս արհամարհոտ նամակն ըստ, անկողնոյն մերձ տուփէ մը թուղթ մի հանելով և զայն ներկայելով երկուքին։

Անմիջապէս որ տեսաւ զայդ և պարունակութիւնը կարդաց, Արաքսիա հարցուց զարմացմամբ Վարդանուշի թէ ի՞նչպէս զայդ ձեռք մը գելու յաջողած էր։

— Եղանակաւ իմն որ պատուաւոր չ'է, դիտե՛մ, ըսաւ Վարդանոյշ, բայց կասկածով մաշող հոգւոյ համար ամեն միջոց լաւ է, ուստի սենեակդ մտնելով տեսայ զայն և առի։

— Բնաւ գքեզ չեմ մեղադրեր, պատասխանեց վարժուհին։

— Այդքանը չի բաւեր ինձ, բացատրէ՛, ի՞նչ կը նշանակէ նամակս այս։

Նոյն պահուն Սիսակ փութաց պատասխանելու փոխանակ Արաքսիայի և ըսաւ.

— Օրիորդ, այդ նամակին մեկնութիւնը տալու հոգը ինձ կը պատկանի։

— Ինչո՞ւ ձեզ, պարոն, և ոչ օրիորդին։

— Վասն զի դժուարին խոստովանութիւն մ'ընել հարկ է ինձ ի սէր արդարութեան, խոստովանութիւն զոր վստահ եմ թէ օրիորդ Արաքսիա ոչ երբէք յանձն կ'առնու մատնութիւն մի չկատարելու համար։

— Պատրաստ եմ ամեն ինչ լսելու, ըսաւ հիւանդը։

— Տիկին Աբգարեան զիս կը սիրէր։ Ես, թէև զնոգիս ձեզ նուիրած էի և եմ, օգուտ քաղեցի երիտասարդական անկախութենէս, քանի որ ձեզի հետ ամուսնացած չէի։

Վարդանոյշ եթէ ցաւեցաւ այդ անհաւատարմութեան մասին, միւս կողմանէ եւս սիրտն սփոփեցաւ։

— Սակայն, հարցուց նա, ի՞նչպէս Տիկին Աբգարեան կրնար գիտնալ մեր յարաբերութիւններն և Արաքսիայի իմ խորհրդակիցս լինելն, եթէ դուք ձեր բոլոր գաղտնիքն յայտարարած չլինէիք իրեն՝ իբր ձեզ սիրելի անձի։

— Ես ոչինչ յայտնած էի իրեն, վասն զի բնաւ համարում չ'ունէի անոր վրայ, և եթէ կը ներէք ինձ խօսիլ ազատօրէն, կը նկատէի զայն իբր անարդ խաղալիք մի և ոչ թէ իբր արժանաւոր բարեկամուհի։

— Ուրեմն ի՞նչպէս տեղեակ էր ձեր գաղտնեաց։

— Նոյն գիշերն որ Արաքսիա ընդունեցաւ զիս Աբգարեան տան մէջ, մինչ կը կարծէին՝

մեր խօսակցութեան վկայ չ'ունենալ, կ'երեւայ թէ Տիկին Աբգարեան ունկնդիր եղած էր մեր ամեն բառերուն, և նկատելով որ Արաքսիա ջանադիր կը լինէր անհուն եռանդեամբ ձեր դատը վարելու սիրայօրդ սրտի մ'առջեւ որ անհամբեր էր իւր բաղդը միացնելու ձերինին, Տիկին Աբգարեան՝ ի վրէժխնդրութիւն Արաքսիայի ընթացքից՝ անմիջապէս արձակեց զայն հետեւեալ օրն իսկ։

— Ո՛վ անխիղճ կին, գոչեց Արաքսիա, եւս քան զեւս հաստատուելով թէ նա հեղինակն էր բոլոր իւր աղիտից։

— Ես չիտակը խօսելով, յարեց Սիսակ, ուրախացայ Արաքսիայի հեռանալուն վրայօք այնպիսի կնոջմէ, թէեւ ես իրեն բնաւ բան չխօսեցայ, և ոչ իսկ գիտցածս խնացուցի պարապ տեղը գինքը չ'վշտացնելու համար։

Վարդանոյշ իւր յանցանքը կը հասկնար, ու թէ՝ կը ցաւէր իւր բարեկամուհւոյն անիրաւած լինելուն, և թէ կ'արիւնէր հաստատելով Սիսակի անհաւատարմութիւնը, բայց ի՞նչ կրնար ըսել երբ արք ամեն ազատութիւն կը շնորհեն իրենց անձին, մանաւանդ երբ տակաւին ամուսնացած չ'են։

— Սակայն, հարցուց Վարդանոյշ հետաքրքրութեամբ, ի՞նչ պէտք ունի Տիկին Աբգարեան զԱրաքսիա արատաւորելու երբ կրնար ուրիշ նախանձորդ մի յարուցանել իմ առջեւս։

— Տիկին Աբգարեան ուզեց որ ես հրաժարիմ ձեզմէ անպատճառ, և զայդ մերժեցի կատարելապէս, զի զձեզ հաստատապէս կը սիրէի

և կը սիրեմ, ըսաւ խորամանկ երիտասարդը ձեռով մի որ կասկածանաց տեղի չէր տար։ Խոստացայ Արաքսիայի ոչ եւս յաճախել սոյն կնոջ, քանի որ ակնկալու էի պայմանաւոր ժամանակի մէջ ձեր վճիռն ընդունելու, և զայդ իմացաւ Տիկին Աբգարեան։

Ժպտեցաւ Վարդանոյշ ժպտով մի որ ցոլացուցին էր հոգւոյն բոլոր երջանկութեան, և զբղջմամբ ու խոր երախտագիտութեամբ խօսեցաւ բարեկամուհւոյն՝ և հաստատեց թէ մայրական գորովով մի գործած էր իւր նկատմամբ։

— Ես չ'ուզելով վերստին վերադառնալ ի տուն Տիկին Աբգարեանի, ըսաւ Սիսակ, ուխտեցի հաւատարիմ մնալ ձեզ և մեկնեցայ առանց հրաժեշտ առնելու անկէ։ Կ'երեւայ թէ այդ չար կինն որոշած էր իմ երջանկութեանս շէնքը քանդել, և վախնալով թէ Արաքսիա կը վերաշինէ զայն՝ ճգներ է ամեն միրկարար միջոց խափանել զայն հեռացնելով ձեզմէ։

— Խե՛ղճ, խե՛ղճ Արաքսիաս, կրկնեց Վարդանոյշ, և թեւերն բանալով, եկո՛ւ, եկո՛ւ, շընորհէ ինձ իմ ներումս, ըսաւ։

Զիրար գրկեցին երկու կոյսերն իրենց արտասուքը միացնելով, իսկ Սիսակ ոտք ելնելով և խնդրելով Վարդանուշի ձեռքը, ըսաւ.

— Փիչ մի յառաջ մերժեցիք զայն, իսկ արդ վերստին կը խնդրեմ երիտասարդական յանցանքիս թողութիւնը խնդրելով։

Վարդանոյշ երկնցուց իւր ձեռքը, մինչ բոլոր անձը կը դողար անհնարին յուզմամբ։

Եւ զայն առնելով ձեռացը մէջ, Սիսակ սի-

բայորդ նայուածքով և սրտառուչ եղանակաւ մի հարցուց.

— Օրիորդ, կրնա՞մ ձեր ձեռքն ընդ միշտ պահել իմ ձեռացս մէջ։

Աղջիկն շփոթած ու կարմրած մինչ ըսելիքն կորուսած էր, ահա դուռը բացուեցաւ և Տիկին Երանեան որ դուրսէն ամբողջ խօսակցու. թեան ունկնդիր եղած էր, ներս մտնելով ըսաւ.

— Այո՛, այդ ձեռքը այսուհետեւ իրր քուսեպհական ստացուածքդ կրնաս համարել, իմ և ամուսնոյս հաւանութեամբ, զաւա՛կս Սիսակ։

Վարդանոյշ գոհունակութեանն սաստկութենէն կարծես կը վերածնէր, մինչ Արաքսիա ուրախութեան արտասուք կը հոսէր։ Իսկ Սիսակ որ ամեն պարագայի համեմատ ձեւեր ունէր, արժանավայել եղանակաւ յայտնեց որ նոյն օրէն պիտի ապրէր օրիորդ Վարդանուշի երջանկութիւնն ապահովելու համար միայն՝ ձօնելով անոր ամբողջ իւր կեանքը։

Տիկին Երանեան երջանիկ էր աղջկանը դէմքին զարմանալի փոփոխութիւնը նշմարելով, և կը ցնծար մօր մի սրտով, վստահ լինելով թէ իւր սիրելի զաւակն ի կեանս պիտի վերադառնար։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Եթէ Վարդանոյշ հուսկ ուրեմն իւր սիրոյ յոյսերուն մօտակայ պսակմանը՝ վրայ կը ցնծար, Արաքսիա սրտին ծանրութեան սփոփանք կը գտնէր, մտածելով որ ապատօրէն կրնար իւր ան-

ձրն արդարացնել Ներսէսի առջեւ, Վարդանուշի յարաբերութեանց նկատմամբ ամեն պարագայները մանրամասնաբար իւր սիրահարին պատմելով, ինչպէս և հոն իւր խաղացած ամբողջ դերը, քանի որ երկու երիտասարդաց նշանտուութիւնն ամենուն յայտնուեցաւ։ Ուստի փութաց երկրորդ նամակն յղել ի Մանչէսթըր, բայց սա յետ սակաւաթիւ աւուրց ետ եկաւ պատճառաւն բացակայութեան Ներսէսի՝ առ որ ուղղեալ էր։ Այդ անակնկալ դէպքն ի խոր խոցեց զԱրաքսիան, բայց համբերութեան և համակերպութեան խիստ դպրոցին իւր հաւատարիմ աշակերտուհի՝ իւր ցաւն յինքն ամփոփելով տառապեցաւ լռելեայն ինչպէս յանցելումն։

Տիկին Հարթմանեան որ գնահատած էր ամեն ձիրքերն Արաքսիայի և մասնաւոր համակրութիւն մ'ունեցած էր նմա, առաջարկեց աղջկան իւր տան մէջ իւր կենսակից օրիորդ (1) հետն ապրելու։ Երիտասարդուհին խիստ գոհ էր այդպիսի պաշտօն մի վարելու իրեն սիրելի եղած պատուական տիկնոջ մօտ, մանաւանդ երբ ըստանալու նիւթական վարձատրութեամբն իւր ընտանեաց դիւրակեցութիւնը պիտի ապահովէր։ Ուստի փութաց իւր պաշտօնավարութիւնը ժամ յառաջ սկսել Տիկին Հարթմանեանի տան մէջ հաստատուելով։

Տիկին Հարթմանեանի ընտանիքը կը բաղկանար իրմէ և ամուսինէն։ Մինչ պատանուհի՝ կո-

(1) Dame de compagnie.

բուսած էր զիւր ծնողք, ժառանգելով անոնցմէ գեղեցիկ հարստութիւն մի։ Լաւ ուսում առած էր նա, միտքն ու սիրտն նոյնչափ մշակուած էին։ Գեղեցիկ էր, ազնիւ, զգայուն և երիտասարդ, կ'ապրէր ընդ հսկողութեամբ ծեր մօրաքրոջ մի երբ որբ մնաց։ Անթիւ փեսաներ ներկայացան, ոչ այնքան օրիորդին բարոյական և մտաւորական ձրից համար, որչափ հարստութեանն որ գլխաւոր հրապոյրն էր անոր։ Ամենքը մերժուեցան, և Պ. Հարթմանեանի վիճակուած էր օրիորդէն և մօրաքրոջմէն հաւնուելու բաղդը, ու իրօք զամեն ինչ ունէր գրաւելու համար. խելք, ուսում, ընկերական դիրք, հարստութիւն, դէմք համակրելի և վայելուչ ձեւեր։ Պ. Հարթմանեան սիրահարուեցաւ երիտասարդուհւոյն և բաղձանացը կատարման հասաւ հետն ամուսնանալով։

Երկու նորապսակ ամոլք երջանիկ էին կատարելապէս, և եթէ Տիկին Հարթմանեանի մօրաքրոջ մահը տեղի չ'ունենար, մանկամարդ կինը պիտի կարծէր զիւր անձ կատարեալ երջանկութեան անձնաւորութիւնը։

Բայց ինչպէս կը պատահի բոլոր այն երիտասարդաց որք նախ ազմկալից կենաց մէջ կը գլորին յախուռն կերպիւ, և յետոյ իրենց հեշտասէր կրից կատարելապէս գոհացում տալով՝ կը փորձեն ընտանեկան անդորրաւէտ կենաց մէջ երջանկութիւն մի փնտռել որ խոյս կուտայ իրենցմէ. այսպէս Պ. Հարթմանեան հագիւ վեց ամսէ ի վեր ամուսնացած էր երբ ձանձրացաւ ամուսնական կեանքէն, և բուռն եռանդեամբ

վերստին նետուեցաւ իւր նախկին մեղադրելի ընթացքին մէջ։

Մանկամարդ կինն որ հաղիւ հազ քսան տարեկան էր երբ՝ ամուսնացաւ և ամուսինն քսան և եօթն, միայն վեց ամսուան ամուսնական երանութիւն վայելեց, ապա դատապարտուեցաւ լքման և առանձնութեան։

Կարեվէր կինն փոխանակ ընկերութեան աղմկի մէջ մխիթարութիւն փնտռելու իւր ցաւոց՝ առանձնութեան մէջ ընդ հակառակն փակուեցաւ և դրոց մէջ որոնեց իւր տառապանաց սփոփանք։

Հաղիւ չորս տարիներ անցած էին և Տիկին Հարթմանեան յոգնած էր կեանքէն, վհատած, սիրոյ պատրանքը ճաշակած էր, բայց անկարող եղած փոխադարձ անտարբերութեամբ պատասխանել ամուսնոյն։ Մելամաղձային վիճակի մէջ անկաւ՝ յետ որոյ ճամբորդութիւն կատարեց ընկերութեամբ Արաքսիայի։

Երբ Պոլիս վերադառնալով արձակեց իւր ուղեւորութեան ընկերուհին՝ Տիկին Հարթմանեան սոսկալի դատարկութիւն մ'զգաց իւր շուրջը, զի պակսեցաւ հոգին այն որ քոյր էր իրենին՝ վշտին աղգականութեամբ։ Իրենց անխօս դաշնադրութեան մէջ իւր ցաւոց սփոփանք կը գտնար Տիկինն, և կը տեսնէր Արաքսիայի աչաց մէջ արդահատութեան և համակրանաց արտայայտութիւն մի որ սպեղանի մ'էր իւր վշտահար սրտին։

Ուստի յայտնեց ամուսնոյն դայդ աղջիկ իրեն ընկերուհի ունենալու բաղձանքն, և նա ծա-

փահարեց մանաւանդ այդ խորհրդոյն, զի նուազ խիզճ կ'ընէր յայնժամ ամբողջ գիշերներն իւր երիտասարդ կինը թողլու տան մէջ առանձին։ Ստոյգ է թէ ինչ որ դրամական խնդրոց կը վերաբերէր՝ Պ. Հարթմանեան խնայողութիւն չ'էր ըներ, այլ ընդհակառակն կը փութաքէր կնոջը կեանքը հաճելի ընել, զի ըստ ինքեան բարի սիրտ մ'ունէր։ Միայն թէ իրեն անհնար էր հրաժարիլ իւր քմահաճ և փոթորկալից վայելքներէ խաղի և կնորսութեան, երկու անտանելի մոլութիւնք՝ որոնց մին արդէն կը բաւէ մարդուս՝ և իրեն յարակից գտնուող անձանց թշուառութիւնն ընելու։ Երկու մոլութիւնք որ զմարդ օր քան զօր գերի կ'ընեն, և որչափ նա կարծէ խոյս տալ անոնցմէ, նոյնչափ աւելի իւր առջեւ բացուած վիհին մէջ անսանձ կը գահավիժէ։

ԳԼՈՒԽ ԾԳ.

Արաքսիա գոհ կացութեամբ պիտի ապրէր Տիկին Հարթմանեանի ընկերակցութեամբ անոր հետ մերթ ընթեռնլով, կարդացածին վրայ խորհելով և վիճելով, խօսակցելով մտերմութեամբ, շրջագայելով և տնական անշշուկ կեանքը վայելելով, եթէ վիճակին անորոշութիւնն և դառնալից կասկածներ չ'պաշարէին զինքը։

Տիկին Հարթմանեան լաւ կ'զգար թէ աղջիկն մեծ գաղտնիք մ'ունէր սրտին վրայ, բայց փափուկ զգացման ամեն ազնուականութեամբ զգուշացած էր որ և է ակնարկութիւն ընելէ այդ մասին։

Օր մի սակայն Արաքսիա ընտանեացն այցելութեան գնացած լինելով՝ ուզած էր իւր երջանիկ բարեկամուհւոյն հետ եւս տեսակցիլ. Վարդանոյշ շրջագայութեան գնացած էր մօրը հետ։ Ուստի նոյն պահուն որ տան դրան էն ներս չմտած կը պատրաստուէր մեկնելու՝ նշմարեց զԻսկուհին բակին մէկ անկիւնը նստած։ Թէեւ այդ կինն իրեն դէմ դաւակցած էր զինքը Սիսակի իրր սիրուհին ներկայելով Վարդանուշի, բայց անոր դէմ հակառակութիւն չ'ունէր. զի Վարդանոյշ հաւատացուցած էր թէ նա տգիտութեամբն գործիք եղած էր Տիկին Աբդարեանի, և թէ մինչեւ անգամ չէր ուզած նա հաւատալ թէ այդ տիկինը նենգութեան և նախանձու զգացմամբ հեղինակած էր Արաքսիայի մեղաւորութեան պատմութիւնն։

Ուստի անմիջապէս որ Արաքսիա նշմարեց զԻսկուհին՝ ներս մտաւ և մերձենալով այդ կնոջ, ամենայն անձկութեամբ հարցուց թէ ի՞նչպէս էր իւր սիրեցեալ Աղաւնին՝ որուն անձնական վիճակին վրայօք ցաւալի լուրեր կ'առնուր։ Որչա՜փ կը փափաքէր երիտասարդուհին հսկելայն գողտրիկ հրեշտակին վրայ որուն նկատմամբ մայրական գութ մի զգացած էր միշտ։ Բայց Աբգարեան դուռն իրեն համար անմատչելի էր, զի ապահով էր թէ Տիկինը զինքը կը վանէր եթէ նոյն իսկ զոհն ընէր առ իւր Աղաւնին սուրալու։ Ուստի Իսկուհին ձեւով մի որ բոլոր իւր հակակրութիւնը կը յայտնէր, քթին տակէն պատասխանեց թէ Աղաւնիի վիճակը ծանրը էր։

— Խե՜ղճ հրեշտակս, գոչեց Արաքսիա արտասուելով։

Բայց խնդրեմ, յարեց զգայուն աղջիկը, ըսէ ինձ, կը քայլէ՞ թէ անկողնոյ կը ծառայէ նա։

— Անկողնոյ մէջ է, պատասխանեց Իսկուհի, խրոխտ կերպարանօք։

— Ի՞նչ կ'ընէ, կը խօսի՞, կը ճանաչէ՞ իւր վիճակը, խնդրեմ, յայտնէ՛ ինձ զայդ ճշմարտօրէն։

Կինը սրտմտելով ըսաւ.

— Ինչո՞ւ կ'ուզես որ քեզմէ պահեմ, երբ դու վերջապէս օտարական մ'ես։

— Այո՛, օտարական եմ արեամբ բայց ոչ սրտով։ Կ'աղաչեմ ըսէ ինձ, ի՞նչ կ'ընէ, գիս կը հարցնէ՞ արդեօք երբեմն։

— Քեզ ինչո՞ւ պիտի հարցնէ, պատասխանեց կինն արհամարհանօք։ Զիւր եղբայր՝ գՊ. Ներսէս կը մնայէ շաբաթակ, և նա չի կրնար դալ շուտով, գի կ'ըսեն թէ անգլուհւոյ մի հետ ամուսնացեր է մօտերս։

Արաքսիա այս վերջին յայտնութիւնը Ներսէսի նկատմամբ լսելով շանթահար եղաւ, խօսքը բերնին մէջ խեղդուեցաւ, և իբր յիմար անմիջապէս բակը թողլով դռնէն դուրս ելաւ ու մեկնեցաւ։

Իսկուհին աղջկան ապուշ կտրիլը նկատելով՝ յիշեց որ Տիկին Աբգարեան ըսած էր իրեն թէ Արաքսիան իւր աչերը մինչեւ ցՆերսէս բարձրացընելու յանդգնած էր անգամ, և հաստատուեցաւ տիկնոջ յայտնութեան ստուգութեան վրայ, ինչպէս համոզուած էր Սիսակին վերաբերող խոստովանութեան նկատմամբ։

Ողորմելի Արաքսիա վերադարձաւ ուրեմն Տիկին Հարթմանեանի տունն, և հոն իւր խուցը մտնելով յուսահատութեամբ իւր սրտին կորուստը լացաւ։

Տիկին Հարթմանեան լսելով ընկերուհւոյն հեծկլտանքն իւր սենեկէն իսկ, փութացաց յոգնութիւն ազգկան, և խնդրեց անկէ որ ոչ եւս ծածկէ իրմէ այն գաղտնիքն որուն գոյութեան վրայ շատոնց ի վեր աներկբայ էր։

Ժամանակ կայ որ եթէ սիրտը խոստովանութեամբ չյորդէ ցաւոց լի բաժակէն, անհնար է իրեն առանց ծանր ճնշուտ տոկալ այդչափ բեռի։ Ուստի Արաքսիա պատմեց բոլոր իւր թշուառաւ անցքերը մի ըստ միոջէ, իւր սէրը Ներսէսի համար, Վարդանուշի դէպքերն, իւր մատուցած ծառայութիւնը բարեկամուհւոյն տառապանաց մէջ, իւր կրած տրաստանութիւնը Տիկին Աբգարեանի չարութեան պատճառաւ, և վերջապէս Ներսէսի ամուսնութիւնն որով ինքը կը մեռնէր ապագայ երանութեան համար։

ԳԼՈՒԽ ԾԴ.

Միսակի նշանտուութեան լուրն հասած էր ականջին ազգկան Պ. Գրիգորի՝ իբր ձայն բոթաբեր։ Երիտասարդուհին իմանալով վերջապէս թէ իւր սիրահարը զինքն կատարելապէս խաբած էր, խոստովանեցաւ զամեն ինչ իւր հօրաքրոջն և սա սարսափահար եղած զամեն ինչ պատմեց իւր եղբօրը։

Հայրը սոսկալի հարուած մ'ընդունեցաւ նը-կատելով թէ տանը պատիւն աղարտուած էր։ բայց իւր ցաւոց վերջ տալով՝ մոռացաւ ընդ փոյթ գործելով ստանալ զաւկին պատիւը, բռնաբարողէն խնդրելով որ և է հատուցում բարոյապէս թէ նիւթապէս՝ ուստի անմիջապէս թողուց հայրենիքը և արտորնաք ուղեւորեցաւ ի Պոլիս։

Պ. Գրիգոր վաղեմի բարեկամն լինելով Պ. Արգարեանի՝ այս վերջնոյն տունն օթեւանեցաւ ու յայտնեց անոր ինչպէս և տիկնոջն՝ իւր ճամբորդութեան շարժառիթը։ Կ'իմացնէր որոշապէս մտադիր լինելն կա՛մ զՍիսակ պարտաւորելու իւր դատեր հետ ամուսնանալու կամ 300 ոսկի տուժելու, և կամ անոր դէմ դատ բանալու։

Տիկին Արգարեան այս յայտնութեան առջեւ ցնծաց բոլոր հոգւովն։ Իմացած էր արդէն Իսկուհիէն իւր չար մեքենայութեանց ի դերեւ ելնելը, բայց երդուած էր նորանոր գժուարութիւնք յարուցանելով արգիլել անպատճառ ամուսնութիւնը Սիսակի։ Կը խորհէր շարունակ թէ որպիսի՛ եղանակաւ կրնար հասնիլ նպատակին, ու սոստիկ կը նեղանար յարմար եղանակ մի գըտած չլինելուն համար իւր ղէնքերը շարժելու ընդդէմ երիտասարդին։ Բայց ահա բազդը իրեն նպաստաւոր առիթ մի կը հայթհայթէր. ուսկից փութաց օգտիլ անմիջապէս։

Տիկին Արգարեան լաւ գիտէր թէ Սիսակ դըրամ չ'ունէր. նոյնչափ եւս համոզուած էր որ նա գաւառացի աղջկան մի հետ ամուսնանալու բնաւ հակամէտ չէր կրնար լինել քանի որ շահ

մի չ'ունէր հոն։ Լաւ կ'ըմբռնէր նաեւ թէ Սիսակ օգնութիւն չէր կրնար խնդրել իւր նշանածին ընտանիքէն եղելութեան մի համար որ իրեն համար բոլորովին աննպաստ էր։ Ուստի երիտասարդին ուրիշ միջոց չէր մնար բայց եթէ կամ զգաւառացի աղջիկն առնուլ ի կնութիւն, և կա՛մ դատաստանական խիստ պատժոց ենթարկուիլ։ Տիկինը ճանաչելով մեծամտութիւնը իւր նախկին սիրահարին՝ շուտ վերահասու կը լինէր թէ Սիսակ անել վիճակի մէջ կը գտնուէր եթէ յանձնառու չ'լինէր գաւառացւոյն հետ ամուսնանալու։ Այդ սիրամոլ կինը կ'ուզէր որ և է ամուսնութիւն արգիլել, և զերիտասարդը փրկելով կաշկանդել զայն վերստին իւր անձին։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Պ. Գրիգոր կանդնեցաւ Սիսակի առջեւ իրը վրիժառու ոգի մի որ նախանձախնդիր պատուոյ մասին, համար կը պահանջէր այն անպատուութեան համար զոր մոցուցած էր իւր տան մէջ ընդունած հիւրընկալութեան փոխարէն։

Նախ մեղապարտ երիտասարդն այլագունեցաւ և ջանաց ուրանալ իրեն վերագրուած յանցանքը։ Բայց երբ ամեն մանրամասնութիւն առնոր յիշեցուց վիրաւորեալ հայրն, անկարող եղաւ Սիսակ իւր պախարակելի ընթացքն այլ եւս ծածկելու։ Ուստի Պ. Գրիգոր հարկադրեց զնա անմիջապէս որոշելու երեք պայմանաց մէջէն այն՝ որ հաճելի կը թուէր իրեն։ այսինքն կամ իւր

դատեր հետ ամուսնանալ, կա՛մ երեք հարիւր ոսկի հատուցանել և կա՛մ ի դատ կոչուիլ։

Սիսակ յուսահատական վիճակի մէջ կը գտնուէր։ Եթէ այդ գայթակղական եղելութիւնն երեւան ելնէր, իւր ամուսնական խորհրդոց վերջ տալու էր Վարդանուշի հետ։ Կը մակաբերէր որ Երանեանի դուստրն իրեն չպիտի ներէր իւր երկրորդ անհաւատարմութիւնն, երբ ինքն մանաւանդ բերնովը խոստովանած էր թէ Տիկին Արգարեանէն հեռանալը պատշաճ դատած էր նոյն վայրկեանէն որ իրեն մէկ ամուսան պայմանաժամ դրած էր. և ահա ոչ միայն իւր պարտուցը դէմ գործած էր առաւել ծանր կերպիւ նոր սիրահարութիւն մ'ունենալովն, այլ և յայտնի էր թէ իւր վերադարձն յապաղեցուցած էր հեշտութեանց մէջ լողալու համար։

Ուստի այդ գայթակղալից դէպքը խեղդելու էր անպատճառ. բայց ի՞նչ եղանակաւ, քանի որ դրամ չ'ունէր, և ո՞ւսկից կրնար փոխառութիւն մ'ընել երբ վճարման մասին ապահովութիւն տալու միջոց չ'ունէր։

Գաւառացի՞ն առնուլ. այդ մտքէն իսկ չէր անցներ։ Ինքը զամէնքը կը ծաղրէր, և նշաւակելի՞ պիտի լինէր գաւառացի աղջկան մի թակարդին մէջ իյնալով։ Իսկ դատին գալով կը խորհէր թէ այդ հաւանականութիւնն իսկ հեռացնելու էր, քանի որ իւր խայտառակութիւնը հուչա՝ պիտի գտնէր։

Սիսակ կատարեալ խորհրդապահութիւն խնդրած էր Պ. Գրիգորէն և խոստացած՝ մինչեւ մէկ շաբաթ իւր վերջնական որոշումն յայտնելու։

Անհնարին տագնապաւ կը տատանէր մեր երիտասարդն. ի՞նչ որոշում ընել, ի՞նչ եղանակաւ խարեել նախատեալ հայր մի և ի կատար հասցնել իւր երազած ամուսնութիւնը Վարդանուշի հետ, ամուսնութիւն որով հանգիստ և ապահով ապագայ մի պիտի ունենար։ Կ'անիծէր նոյն միջոցին իւր կնորսութեան ձգտումներն, ինչպէս և կ'անիծէր իւր յաղթանակները կանացի աշխարհին մէջ։ Կը խոստանար անձին ապագային մէջ կանոնաւոր կեանք մը վարել, եթէ սակայն խոյս տար նոյն անգամ իւր վրայ ծանրացած ահեղ վտանգէն։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Այս մտատանջութեան մէջ կ'ալեկոծէր մեր կնասէր երիտասարդն, երբ ահա նամակ մի կ'ընդունի որուն պարունակութեանը տեղեկանալով՝ դիւրին է հասկնալ թէ ո՞վ էր անոր հեղինակն առանց ստորագրութիւնը կարդալու։

«Սիրեցեալ Սիսակ.

«Տեղեակ եմ ամբողջ սիրային պատմութեանդ ընդ դստեր Պ. Գրիգորի, որ իմ հիւրս է։ Գիտեմ նաեւ անոր առաջարկած երեք պայմանները որոնց և ոչ մին նպաստաւոր է քեզ համար։

«Վստահ եմ որ Նոր Բաբելոնիէդ որոց համար դիս ուրացար, ոչ երբէք պիտի հանին քեզմէ պահանջուած դումարը մատուցանելու, երբ իրենց աղջկան դէմ բացարձակ անհաւատարմութիւն ըրիր։ Ուստի հէն Բաբելոնո-հէդ պատրաստ

է՝ ուղած վայրկենիդ իսկ, երեք հարիւր ոսկի տրամադրութեանդ ներքեւ դնել, բայց այն պայմանաւ որ ամեն ամուսնական խորհրդոցդ վերջ պիտի տաս։ Այդ փոքրիկ գումարն իբր բարեկամական նուէր մի կրնաս համարել իմ կողմանէս։

«Եշանտուութիւնդ ոչնչացու Վարդանուշի հետ, խոստացիր Պ. Գրիգորի իւր խնդրած գումարն, և յետոյ եկուր ընդունիլ ինձմէ քու վարձատրութիւնդ։

«Միշտ քու անկեղծ և հաւատարիմ սիրուհիդ

«Տ. Ա.»

Տիկին Աբգարեանի խոստացած նպատն եթէ մէկ կողմէն զՍիսակ կ'ազատէր տհաճոյ դիրքէ մի գաւառացւոյն նկատմամբ, միւս կողմէն կ'ոչնչացնէր Սիսակի երազած ապագայն Պ. Երանեանի փեսայն լինելու։

Այնչա՛փ խռոված էր մեր անառակ երիտասարդն, այնչա՛փ մոացը խորհուրդք զիրար ջընջելով անկարող կ'ընէին - զինքն որ և է որոշում մի տալու՝ որ վերջապէս յիշեց թէ բարեկամուհի մ'ունէր որուն թէ՝ զգաստութեան վրայ վստահութիւն ունէր, և թէ՝ անոր աջակցութեանն՝ ի պահանջել հարկին իւր յոռի դատը վարելու Վարդանուշի առջեւ։ Այդ բարեկամուհին Արաքսիան էր։

Եւ իբր մարդ որ աչքատանջ տարուբերելով անորոշութեան ովկիանին մէջ, վերջապէս յուսադրող տախտակի հանդիպելով անոր կը պըլլուի իբր փրկութեան միջոց, նոյնպէս և Սիսակ

Արաքսիայի գաղափարին առջեւ շունչ առաւ ու անով արիացաւ սակաւ ինչ։

Մտածեց երիտասարդը թէ երբ ուզէր Տիկնոջ կրնար դիմել օժանդակութիւնը խնդրելու համար, և այդ իրր վերջին միջոց վերապահելով իւր անձին, զգուշացաւ որ և է պատասխան մի տալէ ընդունած նամակին, յառաջ քան Արաքսիայի հետ տեսակցելու և անոր հետ խորհրդածելու։ Ուստի երիտասարդը փութաց երթալ յայցելութիւն Արաքսիայի ի տան Տիկին Հարթմանեանի։

ԳԼՈՒԽ ԾԷ.

Աղաւնիի վիճակն օր քան զօր կը սաստկանար. խեղճ աղջիկը կ'զգար թէ մերձ էր ի մահ, և իւր ցաւը կը զօրանար այն գաղափարաւն թէ պիտի մեռնէր առանց իւր երկու սիրելիները տեսնելու, այսինքն զԱրաքսիան և զՆերսէս։

Տիկին Աբգարեան, որ մայր էր անուամբ այլ ոչ զգացմամբ, դերագոյն անձնուիրութեան օրինակ մ'եղած կը կարծէր օրը քանի մ'անգամ այցելելով իւր զաւկին, և ճարտար բժշկի մի հանապազօրեայ խնամոց յանձնելով զայն։ Մանաւանդ որ ձիրքերն եւս կը չափազանցէր դերման վարժուհւոյն, որուն խնամոց յանձնած էր զիւր դուստր։

Պ. Աբգարեան կը հալէր կը մաշէր զաւկին վհատեցուցիչ վիճակը նկատելով. կը մաշէր այո՛, ոչինչ կը խնայէր նորա համար, բայց ի՞նչ օգուտ, զաւկին վիճակն օր աւուր կը վատթարանար։

Արմինէ քրոջն հիւանդութեան պատճառաւ վայրիկ մի կը տխրէր, ապա իւր աշխոյժ բնաւորութիւնը կը յաղթանակէր, և փոքրիկ հիւանդը զուարթացնելու համար հազարումէկ խաղեր կ'ընէր՝ հակառակ գերման վարժուհւոյն խիստ ակնարկներուն որք կը հրաւիրէին զինքն հանգարտելու։ Արմինէի մտքէն երբէք չ'էր անցներ թէ իւր սիրեցեալ քոյրը կրնար մեռնիլ։

Տղայք կը կարծեն թէ մահն օտարաց համար է, և երբէք չ'են կրնար ըմբռնել թէ մահն իրենց մերձակայներուն եւս կրնայ մօտենալ։ Գեղեցի՛կ ցնորք մանկութեան։

Աղաւնի կը նայէր քրոջն ունեցած ապահովութեան վրայ իւր մասին և կ'ուրախանար, առանց բնաւ այս աշխարհէս իւր մեկնելուն վերայօք ակնարկութիւն մ'ընելու։ Այդ քնքոյշ արարածն երբէք տկարութիւն չ'էր ունեցած, զի մատաղ տիոցը մէջ յարբունս հասած էր։ Նա խաղալու և զբօսնելու համար ծնած չ'էր, ինչպէս ամեն մանուկ, այլ խորհելու, սիրելու, զգալու և տառապելու։

Օր մի երբ Աղաւնի զգաց թէ վիճակն յոռի էր.

— Ո՛հ, ըսաւ քրոջն, կը փափաքիմ եղբայրս տեսնել, և անոր ներկայութեամբը դոնէ քիչ մի ժամանակ մխիթարուիլ։

Արմինէ չ'ըմբռնելով անոր խօսքերուն ներքին իմաստն՝ այսինքն թէ կ'ուզէր հրաժեշտի վերջին ողջոյնը տալ Ներսէսի, ըսաւ.

— Գո՛յր, գրէ՛ մեր եղբօր, և վստահ եմ որ նա կուգայ։

— Գիտեմ որ կուգայ, զի այնչա՛փ զմեզ կը սիրէ։

— Ուրեմն գրէ՛ շուտ և կոչէ զայն քու քովդ, որչա՛փ ուրախ պիտի լինիմ զինքը տեսնելով։

— Կը փափաքէի ես եւս շատ իսկ, բայց ի՞նչպէս զինքն անհանգիստ ընեմ։

— Վատահ եղիր, Աղաւնի՛, որ մեր եղբայրը չպիտի՛ ներէ ինձ եթէ քու անզուսպ բաղձանքդ չ'հաղորդեմ իրեն։

— Ուրեմն կը յորդորե՞ս զիս իմ բաղձանքս յայտնելու իրեն։

— Ոչ միայն կը յորդորեմ այլ կ'ապահովեմ քեզ որ եթէ դու չգրես, ես քարտուղարութիւն պիտի ընեմ՝ քու անուամբդ զինքն հոս հրաւիրելով։

— Եւ սակայն գիտնայիր որչա՛փ մեծ է կարօտը։

— Հապա ի՞նչ. ես ալ քու պատճառաւդ կ'օգտիմ։

Արմինէ գրիչն ու թուղթը քրոջն անկողնին վրայ դնելով, մղեց զնա անյապաղ գրելու։

Հիւանդը դողդոջուն ձեռամբ գրիչն առաւ, և ամենայն դժուարութեամբ յաջողեցաւ այս միակ տողերը գրելու.

«Միրելիդ իմ եղբայր.

«Եկո՛ւ շուտ, կ'ուզեմ անգամ մի եւս զքեզ տեսնել, զի կ'զգամ թէ ժամանակս սուղ է։»

Տկար արարածն ոգեսպառ եղած՝ յանձնեց զթուղթն իւր քրոջ, որ անոր պարունակութեան վերահասու չլինելով՝ յանչափս ուրախա-

ցաւ զիւր եղբայր ընդ հուպ տեսնելու յուսով։

Արմինէ պահարանի մէջ դնելով նամակն յանձնեց սպասաւորին որ զայն թղթատարին յանձնէ ինչպէս սովոր էր գործելու. զի Տիկին Աբգարեան բնաւ փոյթ չէր ըներ թէ իւր գլուխերը իրենց եղբօրն հետ կը թղթակցին, և մանաւանդ անտարբեր էր գիտնալու անոնց գրութեանց իմաստն։ Հետեւապէս անհոգ մայրն անգիտացաւ հրաւէրն իւր աղջկան առ Ներսէս։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Միայակ գնաց ուրեմն Տիկին Հարթմանեանի տունն և հարցնել տուաւ Արաքսիայի եթէ ազա՞տ էր կինքն ընդունելու։

Աղջիկը կասկածեցաւ անմիջապէս թէ իւր աղգականը գուցէ կարեւոր խօսք մ'ընելու համար իրեն եկած էր ի տեսութիւն, քանի որ առաջին անգամ էր որ կ'այցելէր իրեն. փութաց ուրեմն ինքն անձամբ պատասխանել հարցման երիտասարդին, և անոր դէմքին նայելով շուտ հասկցաւ թէ մասնաւոր մտատանջութեան պատճառ մ'ունէր։

Արաքսիա տարաւ զինքն առանձին սենեակ մի, և մեծ անձկութեամբ հարցուց թէ ի՞նչ էր պատճառն իւր այլայեալ կերպարանքին։

— Գիտեմ, Արաքսի՛ա, ըսաւ երիտասարդն, որ բնաւ համարմանդ և արդահատութեանդ արժանի չեմ, և եթէ արդարանալու կէտ մ'ունիմ՝ իմ երիտասարդական հասակս է, ինչպէս և ե-

. ՝ քու համակրանացդ իրաւունք մ՚ունենալս կրնամ կարծել՝ Վարդանուշի համար ունեցած անձնուիրութիւնդ է։

— Այդ յառաջարանդ կատարելապէս ուելորդ է, պատասխանեց Արաքսիա, բուն եղելութեան դանք։

Յայնժամ Սիսակ պատմեց իւր յարաբերութիւնները գաւառացի աղջկան հետ և իւր յանցանքը թեթեւցնելու համար՝ երիտասարդուհւոյն գործածած հրապուրանաց վերագրեց իւր զբաւուիլն և անկէ հետեւած ծանր պարագայները։

— Ի՞նչ պարագայ, հարցուց Արաքսիա, դող ելնելով։

Յայնժամ Սիսակ յայտնեց իւր վրայ ծանրացող պայմաններն, ինչպէս և Տիկին Արգարեանի նամակն։

— Ի՞նչ պատասխանեցիր, ըսաւ աղջիկն երկիւղիւ։

— Ոչինչ տակաւին։

— Լո՛ւր ինձ, Սիսա՛կ, ոչ միայն իմ արգահատութեանս արժանի չ՚ես, այլ և ամենեւին արժանի չ՚ես Վարդանուշի նման աղջիկ մի ընկերակից ունենալու։

— Արաքսի՛ա, խնայէ ինձ, յանցանքս կը ճանաչեմ, բայց այս վերջինն է, կրնաս վստահիլ ինձ։

— Արդեօք քանի՞ անգամ նոյն ապօրինաւոր ընթացքին մէջ պիտի անկանիս դարձեալ։

— Երբէք, պատասխանեց Սիսակ, վստահութեամբ մի որով կ՚ուզէր նոյն ապահովութիւնն ազդել Արաքսիայի։

— Երանի թէ այդպէս լինէր ։

— Եւ պիտի լինի, կը խոստանամ քեզ։ Ե-բիտասարդ մի մինչեւ որ մի քանի անգամ փոր-ձանաց չ'հանդիպի, չ'զգաստանար։

— Դու կը կարծես զգաստացա՞ծ լինել։

— Մանր եղաւ ինձ այս վերջին դասը։

— Լո՛ւր ինձ, ըսաւ աղջիկը, մի կարծեր որ հաւատք ունիմ ի քեզ, և ապացոյցն այն է որ երբէք նպաստաւոր չ'եղայ Վարդանուշի ամուս-նութեանն ընդ քեզ։

— Զայդ գիտեմ արդէն։

— Հանդերձ այսու պիտի աշխատիմ՝ որչափ որ հնարաւոր է ինձ, օգնելու քեզ։

— Բիւր շնորհակալիք, սիրո՛ւն քոյրս։

— Շնորհակալ մի լինիր ինձ ի զուր, զի քեզ ծառայելու համար չ'եմ գործեր՝ այլ միայն այն հէք աղջկան որ դժբախտութիւնն ունեցաւ զքեզ յիմարաբար սիրելու։

— Ինչ որ ըսես կ'ընդունիմ, զի իրաւունքդ է զիս խստիւ կշտամբել. սակայն պիտի յայտ-նեմ քեզ որ անարժան չ'եմ ո՛չ քու բարութեան-ցըդ, և ո՛չ ալ Վարդանուշի ամուսնոյ անունը կրելու։

— Տա՛յր երկինք։

— Երկինք վկայ քեզ թէ պատուական ամու-սին մի պիտի լինիմ՝ կնոջս երջանկութիւնը մի-այն նպատակ ունենալով։

Արաքսիա թէեւ մեծ արժէք չ'էր ընծայեր երդման Սիսակի, բայց սա նոյն միջոցին այնպէս անկեղծ կ'երեւար՝ որ Արաքսիա նորա տրամա-դրութեանց վրայ չտարակուսեցաւ բոլորովին։

Ստոյգ է որ Սիսակ նոյն պահուն խիստ անկեղծօրէն կը խօսէր, բայց վստանգի մատնուած մարդու մի՛ չ տրամադրութիւնքն և ո՛չ ալ խոստումները մեծ բան կ՚արժեն։

Հանդերձ այսու Արաքսիա քիչ մի լուռ մընալէ և ուսածելէ վերջն ըսաւ.

— Մտադիր եմ վիճակդ Տիկին Հարթմանեանի յայտնել և անկէ խնդրել երեք հարիւր ոսկին։

— Կը յուսա՞ս որ յօժարի վճարելու այդ գումարը։

— Կը յուսամ։

— Ո՞վ վրկիչս դու, ինչպէ՞ս պիտի հատուցանեմ ընելու բարիքդ։

— Լաւ ամուսին մի լինելու խոստումամբ։

— Երդում ըրի քեզ արդէն պատուոյս վրայ։

— Ապա պէտք է պարտաւորիս մի տալ Տիկին Հարթմանեանի՝ պահանջած գումարիդ է փոխարէն։

— Պատրաստ եմ կատարելու ամէն պայման։

— Եւ եթէ կարելի լինի՝ առ առաւելն պիտի ջանամ ստանալ Տիկնոջմէն երկու տարուան միջոց մի, թէեւ այդ պայմանաժամէն շատ յառաջ կրնաս պարտքդ վճարել, քանի որ Պ. Երանեան դքեզ իւր գործողութեանց ընկեր ընելու մտադիր է։

— Ամէն ջանք պիտի ընեմ, վստահ եղիր։

— Ուստի կը յուսամ թէ Տիկին Հարթմանեանէ այդ գումարը կ՚ստանաս իմ երաշխաւորութեամբս։

— Ո՞վ անզոյգ աղջիկ, ըսաւ Սիսակ, անոր

ձեռքն համբուրելու փորձ փորձելով ի նշան երախտագիտութեան։

Բայց Արաքսիա ձեռքը քաշելով, ըսաւ.

— Այդպիսի արտաքին ցոյցերու թշնամի եմ, գիտես արդէն։

— Բայց այդ երախտապարտ սրտիս բերմունքն էր, ըսաւ Սիսակ, աչերուն մէջ արտօսր մի փայլեցնելով։

Երբ մարդս կը հանդիպի մէկու մի որ գինքն անխուսափելի վտանգէ կ'ազատէ՝ նոյն պահուն գոհունակութեան սաստկութենէն իւր անձնասիրութիւնն զգայնութեան կը փոխուի, մինչեւ ամենէն փափուկ սրտերու երախտագիտութիւնը զգալու չափ։

— Սա եւս աւելցնեմ քեզ, Սիսա՛կ, ըսաւ Արաքսիա, որ եթէ երբէք անիրաւութիւն յետ ամուսնութեանդ և անվճար թողուս պարտքդ առ Տիկին Հարթմանեան, եթէ սակայն ինչպէս կը յուսամ հանի զայդ գումար վճարելու, ե՛ս մինչեւ ցմերջ կենացս պիտի աշխատիմ հատուցանելու համար քու ստանձնած պարտքդ։

— Արաքսի՛ա, եթէ յանցաւոր եմ իրր երիտասարդ, սակայն պիս այդ չափ անպատիւ կարծելու իրաւունք տուած չեմ քեզ իրր մարդ, որպէս զի դու նախատինքն երեսիս նետես։

Արաքսիա չպատասխանեց, այլ ըսաւ միայն.

— Երբէք չ'եմ ներեր քեզ եթէ իմանամ թէ Տիկին Արգարեանի պատասխանած ես, կամ մոտէն ու հեռուէն որ և է յարաբերութիւն ունեցած ես հետը։

Սիսակ զայդ եւս պատուոյն վրայ խոստա-

ցաւ և կատարելապէս խոստումը պահեց։

— Ուրեմն վաղն առաւօտ եկո՛ւ հոս, ըսաւ աղջիկը, վերջնական պատասխանն ընդունելու համար։

Միասակ հրաժեշտ առնլով իւր աղդականէն մեկնեցաւ, մինչ աղնուասիրտ աղջիկն՝ իւր սրտին սուգը մէկ կողմ թողլով՝ գնաց Տիկին Հարթմանեանի փոխառութեան առաջարկն ընելու։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Ներսէս Վիէննա գնացած էր գործով երբ Արաքսիա իւր երրորդ նամակն ուղղեց առ նա, և այդ պատճառաւ էր որ թուղթն առ ինք վերադարձաւ։

Տակաւին ի մայրաքաղաքն Աւստրիոյ էր և կը պատրաստուէր ի Մանչէսթըր վերադառնալ երբ ձեռքն հասաւ Աղաւնիի երկտողը։

Ներսէս, որ մինչև նոյն ժամանակ կ'անդիտանար քրոջն ախտին ծանրութեան աստիճանը, սարսափեցաւ, մահու չափ ցաւեցաւ, և մտադիր եղաւ անմիջապէս ճամբայ ելնել թէեւ ուխտած էր ոչ եւս ոտք կոխել ի Պոլիս, մանաւանդ այցելել այն տան ուր անհուն երջանկութիւն վայելած էր, և ուր թողած էր իւր վաղամեռիկ բարեբաստութիւնը։

Ուստի նամակն ընդունելով երրորդ օրն իսկ ճամբայ ելաւ, և չորս օր վերջը կարողացաւ իւր փոքրիկ սիրեցեալ հիւանդը բաղնացը մէջ սեղ-

մել, զարհուրմամբ նկատելով սակայն տղուն աւերակացեալ դէմքն։

Աղաւնի չ'էր կրնար յագենալ ի տես իւր եղբօր։ կը նայէր անոր անհուն գորովանօք, կը սեղմէր սրտին վրայ անոր ձեռքերն և կ'ըսէր շարունակ։

— Եղբա՛յրս, չգիտես որչափ երախտագէտ եմ քեզ որ բաղձանացս մին կատարեցիր։

— Եւ որո՞նք են միւս բաղձանքներդ, քուրի՛կս։

— Պիտի խնդրեմ զայդ վաղն առաւօտ։

— Ինչո՞ւ ոչ այսօր։

— Վասն զի այսօր քու գաղափարաւդ և քեզմով միայն կ'ուզեմ զբաղիլ։

— Լաւ։

— Բայց դու չուտով երթալու դիտաւորութիւն ունի՞ս դարձեալ։

— Աղաւնի՛ս, կը կենամ ցորչափ պէտք ունենաս ինձ։

— Երկար ժամանակ քեզ չպիտի կարօտիմ, ըսաւ մանուկը գաղտնի հառաչանօք մի զոր նըշմարեց Ներսէս առանց սակայն դիտած լինելն յայտնելու։

Երիտասարդին սիրտը կ'արիւնէր, ու այդ սիրուն արարածն ազատելու համար չկար զոհ որ յանձն չ'առնուր կատարելու։ Եւ արդէն սկսած էր իւր առաջին զոհն՝ բնակելով վայրերուն մէջ որք իւր անցեալ երջանիկ օրերու յիշատակը կը զարթուցանէին իրեն։ և մինչ թմրած կը կարծէր Արաքսիայի գաղափարն՝ ահա կը զարթնուր զօրութեամբ մի որ զինքը ցաւցնելով կը զարմացընէր։

Տղուն յիշատակը յարակից էր իւր վարժուհ-ւոյն յիշատակին, զի Աղաւնի և Արաքսիա երկու էակներն էին զոր՝ յետ իւր մօր, քան զամենն ոք աւելի սիրած էր։ Դառնութեամբ կը մտածէր թէ ինքն դատապարտուած էր կորսընցնելու ինչ որ պաշտած էր։ Աւերակաց ոգի՛ն էր ուրեմն որ նախասահմանուած էր ողբալու փլատակաց վրայ։

Արմինէ Ներսէսի շուրջը կ'ոստնուր իբր թռչուն դայլայլելով, յայտնելու համար իւր ուրախութիւնն եղբօրը վերադարձին համար։ Բայց զուարթութեան ճիչերն անտանելի են ցաւով բեռնաւորած հոգւոյն համար. ու թէեւ սրտովին կը գուրգուրար Ներսէս փոքրիկ Արմինէի վրայ, սակայն լաւագոյն պիտի համարէր եթէ առանձին լինէր՝ այդ նուիրական հիւանդին մէն մի շունչը, մէն մի բառն և մէն մի բաղձանքը կատարելու։

Ստոյգ է որ գերման վարժուհին կը հեռանար երբ Ներսէս հիւանդին սենեակը կու գար, անոր և քրոջը մտերմական տեսութեան արգելք չլինելու համար. բայց նոյն իսկ Արմինէ կարծես աւելորդ կ'երեւար այն երկու հոգեմաչ էակաց ընդ մէջ որուն մին իւր վաղաժամ վերջին վրայ կը թուէր ողբալ, և միւսն՝ իւր անցեալ ինչպէս և ներկայ ադիտից վրայ։

Ցաւն զցաւ կ'որոնէ, զի ուրախութիւնը թուի թշնամալից նենգութիւն խաւարատատ վիճակի մի։

ԳԼՈՒԽ Կ.

Ներսէսի յանկարծական գալուստն իր բոթ հնչեց Տիկին Արգարեանի ականջին։ Այդ հրէշ մայրն՝ անտարբեր տղուն ծանր վիճակին, իր վատ մեքենայութեանց ու սիրահարական խորհրդոցն էր հետամուտ։

Ցաղոզած էր հաւատացնելու Իսկուհիին Ներսէսի ամուսնութիւնն՝ ոչպէս զի նա Երանեանց հաղորդելով զայդ լուր, մինչեւ Արաքսիայի հասնէր, վերջնական հարուածը տալով անոր յոյսերուն։ Բայց փոխանակ անուղղակի կերպիւ՝ Իսկուհին ուղղակի գուժած էր խեղճ Արաքսիայի ականջին՝ Ներսէսի անտեղի ամուսնութիւնն։

Երիտասարդին վերադարձն ի դերեւ կը հանէր բոլոր հաշիւները Տիկին Արգարեանի, և այդ տեղի կ'ունենար անմեղ արարածի մի միջոցաւ որ կարծես վրէժխնդիր կը կանգնէր անմեղութեան արդար դատին։

Տիկին Արգարեան ոչինչ գիտէր թէ հրաւիրանօք իւր դստերն եկած էր Ներսէս ի Պոլիս, և կ'անիծէր իւր շար հոգւոյն այդ ուղեւորութեան շարժառիթը։

Մանաւանդ որ տիկինը շարաչար կը տանջուէր նկատելով որ իւր առաջարկն առ Սիսակ երկու օրէ ի վեր անպատասխանի կը մնար։ Եթէ Սիսակ յաջողէր, կը մոռանէր նա, Պ. Գրիգորի դրամական պահանջումն առանց իւր միջամտութեան դոհացնելու, անշուշտ անոր ամուսնութիւնը կը կատարուէր Վարդանուշի հետ, զի կարող չէր արգիլելու զայն՝ Սիսակի և օրի-

որդ Գրիգորի միջեւ տեղի ունեցած գայթակղական դէպքն երեւան հանելով, քանի որ փաստ մի չունէր։ Միակ օրինաւոր վկայն որ իրեն կրնար օժանդակել Պ. Գրիգորն էր. և նա իւր տան պատուոյն համար պարտաւորեալ էր անշուշտ լռելու՝ եթէ խնդիրը վերջանար առանց որ և է աղմուկ յարուցանելու։

Եւ եթէ Սիսակի պոռկադրութիւնը կատարուէր՝ հետեւաբար ենթադրելու էր թէ Արքսիայինն եւս տեղի պիտի ունենար Ներսէսի հետ, զի այս վերջինն ամեն իրաւունք պիտի ունենար կասկածելու թէ Արքսիա գուցէ ի նպաստ իւր բարեկամուհւոյն գործած էր. կասկածէն մինչեւ ստուգութիւն քայլ մի կար միայն, և եթէ այդ քայլն առնոյր, բոլոր իւր լարած թակարդներն ապարդիւն կը մնային, և իւր հոգւով չափ ատած աղջիկն իրեն կրած անուանը կ՚ստանար։

Ներսէս չփոթելու համար միակ միջոց մի կար, այն էր օրիորդ Գրիգորի սիրահարութիւնն Սիսակի հետ՝ երեւան հանելով հաստատել տալ զայն կերպով մի Պ. Գրիգորէն, քանի որ տակաւին գործը վերջացած չ՚էր և մարդը Պոլիս կը գտնուէր։ Բայց այդ մատնութիւնն անկարող էր ընելու ցորչափ չ՚ընդունէր Սիսակի բացարձակ մերժումն իւր առաջարկած պրոմին վերաբերութեամբ. ուստի ուժանակեայ կերպիւ անգործութեան դատապարտուած էր Տիկին Արգարեան և այդ վիճակը մահաբեր էր կարծես իրեն համար, երբ ամեն վայրկեան իրաց վիճակը կրնար փոփոխիլ ի վնաս իրեն։

Նոյն իրիկունն դալատեան օրուան Ներսէսի

ի տան հայրենի, երիտասարդը գնաց ընդունելու հիւրերն որք եկած էին իրեն բարի գալուստ մաղթելու. նոյն սենեկին մէջ կային Պ. և Տիկին Արգարեան։ Այլ և այլ խօսակցութեան նիւթեր իրարու յաջորդելով, խնդիրն ինկաւ Սիսակի մօտալուտ ամուսնութեան վրայ, Վարդանուշի յարատեւութեան վրայ իւր սիրոյ զգացմանց մէջ, որով և պարտաւորութեանն անոր ծնողաց այդ ամուսնութեան համար վերջապէս իրենց հաւանութիւնը տալու։

Պ. Գրիգոր ներկայ էր այդ խօսակցութեան և բոլորովին լուռ կեցաւ։ Բնականապէս նոյնն ըրաւ Պ. Արգարեան. իսկ Տիկինն անկարող եղաւ որ և է աննպաստ ակնարկութիւն մ'ընել նոյն իսկ հեռուէն հեռու ի մասին օրիորդ Գրիգորի, որով կարենար ենթադրել տալ Ներսէսի թէ ինչպէս գաւառացի օրիորդին՝ նոյնպէս և Արաքսիայի հետ սիրահարական յարաբերութիւններ ունենալէ վերջը՝ Սիսակ օրիորդ Երանեանի հետ կ'ամուսնանար վերջապէս։

Բայց Ներսէս Վարդանուշի վերաբերեալ տեղեկութիւններն իմանալով, և լաւ ճանաչելով սերտ բարեկամութիւնն Արաքսիայի անոր համար, քանի որ զայդ բազմիցս յայտնած էր իրեն իւր սիրուհին, յուսադրող ուրախութեամբ համակուեցաւ, մոռանալով թէ ինքը գուցէ թիւրիմացութեան զոհ եղած էր, և թէ Արաքսիա կորուսեալ չ'էր իրեն համար։

Յուսահատ հոգի մի որ ի յոյս կը վերադառնայ կը կարծէ ոսկեզօծ երազի ներգործութեան ներքեւ լինել, և իրաց ստոյգ վիճակին վրայ ա-

պացոյց մի ստանալէն կը վախնայ իբր դառն զարթուէ մի։

Ներսէս կը վայելէր այդ յայտնութեամբ ներքին ցնծութիւն մի՝ որուն սաստկութենէն իսկ կը կասկածէր թէ վաղանցուկ պիտի լինէր։

Վիրաւոր հոգիները կասկածոտ են, և նոյն իսկ իրենց նպատաւոր հանդիսացած իրողութեանց մէջ բաղդին դաւադրութիւնը կը տեսնեն,

Ներսէս անհամբեր էր առանձնանալու խորհելու համար և առարկելով իւր ճամբորդութեան ազդած յոգնութիւններն՝ հրաման խնդրեց իւր հիւրերէն սենեակը քաշուելու։

Տիկին Աբգարեան որ ամեն ինչ դիտած էր՝ նշմարեց նախ գոհունակութեան շողն որով Ներսէսի դէմքը վայրկեան մի փայլած էր և ապա այդ գոհունակութեան տեղ անդրադարձութիւն մ'ունենալն։ Իւր հոգին կը մնչէր, կ'ուզէր հընարել ուրիշ չար միջոցներ միանգամ ընդ միշտ վերջնական կերպիւ հարուածը տալով Արաքսիայի բաղդին, և այդ նպատակին հասնելու համար մտադիր էր հետեւեալ օրն իսկ գրել Սիսակի անոր որոշումն իմանալու համար։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Ներսէս յառաջ քան իւր սենեակը քաշուելու գնաց այցելելու իւր սիրելի հիւանդին։ Աղաւնի արթուն էր, ըստ իւր սովորականին, զի շատ անգամ տքնութիւններ ունէր, և գիշերուան լռութեան և առանձնութեան մէջ միայնակ անքուն

կը հսկէր. յայնժամ կը մտածէր շատ նիւթերու վրայ և մանաւանդ ի մայրենի սիրոյ զուրկ լինելուն վրայ, և այդ զրկումը խիստ ծանր էր իւր զգայուն հոգւոյն։

Փոխարինութիւն մ'ունէր իւր քրոջը գորովոյն մէջ, բայց այն որոտող տղայական զգացումը բաւական չէր յագեցներ յինքն այն մեծ պէտքն զոր կ'զգար սիրելու և սիրուելու։ Կը փնտռէր ինչ որ ծանր և խորունկ էր, և զայդ կերպով մի գտած էր Ներսէսի և Արաքսիայի սիրոյն մէջ։ Բայց մին ինչպէս և միւսն հեռացած էին իրմէ, և ինքը մատնուած էր ի ձեռս օտարաց, անհոգ անձանց անտարբերութեան հանդիպած էր, այնպէս որ չէր համարձակեր արթնցնելու գիշերուան մէջ իւր քով հսկող աղախինն, եթէ խիստ տագնապեցուցիչ վիճակ մի զինքն չմղէր առ այդ։

Նոյն գիշեր Աղաւնի զեղբայրն իւր քով ունենալու գիտակցութեամբ ուրախ էր, գոհ անհունապէս. և այդ գոհունակութեան սաստկութենէն իսկ իւր ջղերը գրգռուած էին, որով անկարող էր ննջելու։

Ներսէս Աղաւնիին սենեակը մտաւ առանց ձայն հանելու և ամենայն զգուշութեամբ անոր անկողնին մօտեցաւ։ Մանուկը զեղբայր իւր տեսնելով՝ ըսաւ ցնծութեամբ.

— Ա՛հ, դո՞ւ ես, եղբա՛յրս։

— Ձեզ քնանար, քուրի՛կս։

— Այնչափ երջանիկ եմ դալստեանդ պատճառաւ որ անհնար է ինձ աչերս գոցել։

Ներսէս յուզուելով այդ արտայայտութենէն

ծռեցաւ տղուն մահճին վրայ և համբոյր մի տըւաւ փոքրիկ հիւանդին։

— Որչա՛փ ուրախ եմ, եղբա՛յրս, մտածելով թէ իմ հետս պիտի բնակիս ցորչափ պէտք ունենամ քեզի։

— Ապահով եղիր և գիտցիր թէ ամեն կամքերդ կատարելու պատրաստ եմ։

— Ամե՞նքը, հարցուց մանուկն, աղերսագին անոր նայելով։

— Ամենքն, Աղաւնի, և ինչ որ խնդրես։

— Լաւ ուրեմն. խոստացիր զԱրաքսիա տեսնելու տուիթ մի հայթհայթելու ինձ, ըսաւ եղբօրն, անոր ականջէն վար ցած ձայնիւ խօսելով, զի կը կասկածէր որ աղախինը կամ իւր քոյրն արթննալով առաջարկը կը լսէին։ Ոչ թէ Արմինէին վրայ վստահութիւն չունէր, այլ կը վախնար որ չափազանց աշխուժին մէջ թեթեւութեամբ կը մատնէր իւր գաղտնիքն և յայնժամ գիտէր որ իւր մայրն ամեն անողորմ պատերազմ յարուցանելու կարող էր, քանի որ նա արդիլած էր որ Արաքսիայի խօսքն անգամ ընենտան մէջ։

Ներսէսի թուեցաւ նոյն միջոցին որ Աղաւնի երկնառաք հրեշտակ մ'էր, զի ինքն եւս կը մըտածէր թէ ի՞նչպէս կրնար Արաքսիայի հետ տեսութիւն մ'ունենալ կասկածելի թուած խնդիր մի լուսաբանելու համար։ Ուստի ամենայն երանդեամբ պատասխանեց.

— Պատրաստ եմ կամքդ կատարելու։

— Եղբա՛յրս, օրհնեալ լինիս։

— Սակայն ո՞ւր կրնաս տեսակցիլ հետը, Աղաւնի՛ս։

— Այս տան մէջ անհնար է։

— Տարակոյս չկայ։ Ուրեմն ի՞նչպէս յաջողինք։

— Պատուիրած է բժիշկը կառքով երթալ շրջագայութեան. ես յօժարամիտ չէի այդ պատուէրը գործադրելու, պի աշխարհ իւր բոլոր աղմուկներով, ուրախութեան ցոյցերով ու կեանքովն առաւել ես տխրութիւնս կ'աւելցնէ. և քանի որ մայրս բնաւ հոգ չէր տաներ դուրս ելնելուս կամ չելնելուս, նախապատիւ կը համարէի տան մէջ փակուած մնալ։

— Հասկցայ, սիրո՛ւն հրեշտակս, կ'ուզես որ տեղ մի ժամադրութիւն ունենամ օրիորդ Արաքսիայի հետ։

Առաջին անգամն էր որ Ներսէս այդ անունը կը հնչէր, և սիրտը զօրաւոր բաբախում մ'ունեցաւ։

— Ճիշդ այդ է խնդրածս քեզմէ, եղբայրս։ Միայն թէ դուն ու ես տեղեակ լինինք այդ խորհրդին գործադրութեանը։ Կը փափաքէի որ քոյրս ես տեսնէր մեր սիրելի օրիորդը, բայց կը վախնամ որ չկարողանայ լռել։

— Իրաւունք ունիս, Աղաւնի՛ս։ Արմինէ աղջայ մ'է տակաւին, իսկ դու կարծես ծերացած ես տղայ լինելէ յառաջ։

— Որով և կեանքս վերջանալու վրայ է, ըսաւ աղջիկը, դառն ժպիտով մի։

— Եթէ չ'ես ուզեր զիս վիրաւորել, հալածէ այդ սոսկալի գաղափարներն. ես եւս զայդ

կը խնդրեմ քեզմէ իմ ընելու ծառայութեանս փոխարէն։

— Պիտի ջանամ, եղբայրս։

— Կ'ուզեմ որ յաջողիս մանաւանդ, կ'իմանա՞ս, եթէ չես ուզեր սիրտս ցաւցնել։

— Ես ընդհակառակն զքեզ երջանիկ տեսնելու կը փափաքիմ, եղբայրս։

— Եթէ դու գոհ և ուրախ լինիս, ես այնոյնը կը լինիմ։

— Սակայն, եղբայրս, կը փափաքիմ որ վաղն առաւօտ իսկ երթաս ի տեսութիւն մեր վարժուհւոյն, իմացնես իրեն թէ միշտ դինքը սիրած եմ, և թէ կը փափաքիմ դինքը տեսնել ժամ յառաջ։

Խեղճ աղջիկը կը վախնար որ դուցէ ժամանակ չ'ունենար այդ տեսութիւնն ընելու եթէ գործն երկարաձգուէր։ Եւ հիւանդաց յատուկ անհամբերութեամբ խնդրեց Ներսէսէն որ առաւօտուն գայ դինքն ողջունելու Արաքսիայի այցելութեան երթալէն վերջն, որով և անոր պատասխանն հաղորդէ իրեն։

Աղաւնիի անհամբերութիւնը կը համապատասխանէր Ներսէսի սրտին անձկութեան. եթէ կարելի լինէր երիտասարդին՝ գիշերուան մէջ իսկ պիտի դիմէր Արաքսիայի, անկէ ճշմարտութիւնը իմանալու համար։

Ուստի Ներսէս իմացաւ Աղաւնիէն թէ երիտասարդուհին Տիկին Հարթմանեանի տան մէջ կը բնակէր։

— Արդեօք կրնա՞ս դրուցել ինձ հասցէն Տիկին Հարթմանեանի, հարցուց Ներսէս։

— Այո, եղբայր։

— Բայց դու ամեն ինչ կ'իմանաս ուրեմն, հետաքրքի՛ր քուրիկ, գոչեց երիտասարդն ուրախութեամբ։

— Հետաքրքիր եմ ինձ սիրելի անձանց նըկատմամբ։

Ներսէս ուզածն իմանալէն վերջը քիչ մի եւս հիւանդին քով կեցաւ, խօսակցեցաւ անոր հետ, և երբ աղջիկն աչերը գոցեց՝ հեռացաւ անձայն առանց երկու քնացողներուն քունը վրդովելու, մնաւ իւր սենեակն, ու հազիւ հաղ կարողացաւ ննջել մէկ երկու ժամ, այնչափ յուսադրող և կասկածալից՝ միմեանց ներհակ գաղափարներ միտքը կ'զբաղեցնէին։

ԳԼՈՒԽ ԿԲ.

Առաւօտուն արշալուսին հետ ելաւ Ներսէս, մասնաւոր խնամքը զանձն իւր զարդարեց, և այլ և այլ բաներով աշխատեցաւ որպէս զի յաջողի երկու երեք ժամեր անցնելու՝ մինչեւ որ առաւօտեան վայելուչ ժամու մի կարենար ներկայանալ Տիկին Հարթմանեանի տունը։ Նոյն առաւօտ Արաքսիա եւս քան զսովորականն կանուխ ելած էր ընդունելու համար զՍիսակ։

Մեր երիտասարդն անհամբերութեամբ իմն զոր դիւրին է երեւակայել, ներկայացաւ Արաքսիայի, իմանալու համար, թէ յաջողա՞ծ էր գինքը փրկելու։ Աղջիկն ամեն ինչ ի կատար հասուցած էր։ ուստի Սիսակ ընդունեց անկէ

500 ոսկին՝ յանձնելով նմա պարտաւորական մը զոր անմիջապէս գրեց և ստորագրեց։ Ապա Սիսակ նախընթաց օրուան խոստումներն և բուռը շնորհակալիքն երկրորդելէ յետոյ, փութաց մեկնելու ժամ յառաջ Պ. Գրիգորի հետ իւր գործը կարգադրելու համար, վերջնական կերպիւ մի անգամ ընդ միշտ խոստանալով անձին ոչ եւս կնճռոտ պարագայներու մէջ գտնուիլ։

Մինչ Վարդանուշի նշանածը դուռը բացաւ դուրս ելնելու համար՝ երես տուս երես գտնուեցաւ Ներսէսի հետ։ Սա խիստ տնախորժ զգացում մ՚ունեցաւ նշմարելով զա՛յն որ իւր նախանձորդն համարած էր այնչափ ժամանակ, և նեղացաւ հաստատելով թէ նա այդքան կանուխ այցելած էր Արաքսիայի։

Սիսակ կ՚անդիտանար Ներսէսի վերադարձն, որով զարմանքն յայտնեց գինքը տեսնելուն վրայ։

Սիրահարները սովոր են կասկածանաց առարկայ տեսնել ամենէն պարզ պարագայի մէջ անգամ. ուստի Ներսէս այդ զարմանքը դըժգոհութեան ծածուկ զգացման մի վերագրելով՝ իւր անհանգստութիւնն և դառնութիւնը սաստկացաւ, և խօսքը կարճ կապելով հարցուց եթէ այդ տունը Տիկին Հարթմանեանի՞ն էր. և Սիսակէն հաստատական պատասխան մ՚ընդունելով՝ ներս մտաւ զօրիորդ Արաքսիան խընդրելով սպասաւորէ մի որ ներկայացաւ իրեն։

— Եթէ չեմ սխալիր օրիորդը սա խուցն է, ըսաւ, սենեակ մի մատնանիշ ընելով. բայց կը հաճի՞ք, պարո՛ն, ձեր անունն յայտնել որպէս զի ձեր այցելութիւնն իմացնեմ օրիորդին։

— Հարկ չկայ, ըսաւ Ներսէս, և արտասուոր սրտայուզութեամբ քայլեց դէպ այն կողմ ուր կը գտնուէր սրտին թագուհին։

Սենեակին դուռը բացաւ սպասաւորն ու Ներսէս քաշուեցաւ անմիջապէս, մինչ Ներսէս ներս մտնելով դէմ առ դէմ գտնուեցաւ աղջկան հետ։

Արաքսիա ոտքի վրայ էր, և քայլ մի ետ առնելով նստարանին վրայ անկաւ անխօս։

Ներսէս, ոչ նուազ յուզուած, կը նայէր անոր զոր այնչա՛փ սիրած էր, և զոր կը սիրէր տակաւին հակառակ իւր կամաց։ Բայց յաջողելով յաղթելու իւր յուզման, և չդիտնալով եթէ Արաքսիա յանցաւո՞ր էր թէ անմեղ, պաշտօնական ձեւով մի ըսաւ.

— Օրիո՛րդ, կուգամ նուիրական պարտք մը կատարելու։

— Պատրաստ եմ ունկնդիր լինելու ձեզ, պատասխանեց աղջիկն հանդարտութեամբ մի զոր կը ստէր իւր աղմկալից սիրտը։

— Կը փափաքիմ հաղորդել ձեզ դուցէ վերջին կամքն ողբացեալ Աղաւնիի, ըսաւ երիտասարդն յուզմամբ։

— Ո՛վ իմ պաշտելի Աղաւնիս, մրմնջեց օրիորդը, դու չմոռցա՞ր զիս գոնէ։ Բայց խնդրեմ այնչա՞փ անյոյս է ուրեմն այդ պաշտելի արարածին վիճակը։

— Դժբաղդաբար այնպէս կ'երեւի։

— Ո՛վ աղէտք։ Խնդրեմ, ի՞նչ կը պահանջէ Աղաւնիս։

— Կուզէ զձեզ տեսնել վերջին անգամ մի, ըսաւ Ներսէս նուաղեալ ձայնիւ։

Արաքսիա սկսաւ լալ յորդառատ։ Թէեւ սաստիկ զգածուեցաւ Աղաւնիի յայտնած փափաքէն, սակայն այդ լաւ պատրուակ մ'էր առանց ամաչելու և խոնարհելու, իւր արտասուաց հոսելու ազատութիւն տալու համար։

Ներսէս դժուարաւ կը յաղթէր իւր արտասուաց, և կը կարծէր գտնել վերսային զիւր սրտին հատորը։ Բայց Արաքսիա ընդհակառակն զայն ամուսնացած կարծելով զիւր կորուստը կուլար։

Օրիորդն սակաւ ինչ հարդարտելով, հարցուց.

— Ո՞ւր արդեօք հնարաւոր է ինձ տեսնել զԱղաւնին։

— Ոչ տանը մէջ։

— Այդ անհնար է արդէն, գիտեմ, զի դըժբաղդաբար թշնամութիւն յարուցած եմ ինձ դէմ առանց սակայն մէկու մի վնաս հասցնելու, եթէ ոչ իմ անձիս։

Ներսէս այնպէս յուզուած էր աղջկան անարուեստ և արտառուչ ձեւերէն որ անդիմադրելի բաղձանք մ'ունեցաւ անոր ուրն իմանալու։

— Այսի՞նքն, օրիո՛րդ, հարցուց։

— Գոհ եմ որ այսօր առիթ կ'ունենամ, թէեւ այսպէս ի տխուր պարագայի մի շնորհիւ, արդարացնել զանձն իմ ձեր առջեւ, զի վստահ եմ որ թիւրիմացութեան առարկայ եղած եմ։

— Երանի՛ թէ այնպէս լինէր, օրիո՛րդ, և ես յանցանքս, եթէ հարկ է, արեւամբս իսկ կը քաւեմ։

— Ի՞նչ հարկ, շատ ուշ է, պատասխանեց աղջիկն։

— Երբէք ուշ չէ արդարութեան համար իւր փրկարար պաշտօնն ի գործ դնելու։ Բայց կը խնդրեմ, օրիո՛րդ, խօսեցէք շուտ, և յայտնեցէք թէ ո՞ր թշնամութեանց կ'ակնարկէք։

— Ո՛հ, պատասխանեց, Տիկին Աբդարեանին կ'ակնարկեմ։

— Ի՞նչ ըրաւ նա ի վնաս ձեզի։

— Ի՞նչ ըրաւ, կ'ուզէ՞ք իմանալ, ուրեմն ունկընդիր եղէք։

— Անհամբեր եմ ամեն ինչ իմանալու։

— Ես երբէք չյայտնեցի ձեզ ի պատիւ ձեզ և ձեր հօր, թէ այդ տիկինը սիրահարեալ էր Պ. Սիսակի։

— Սիրահարեա՛լ, ի՞նչ կ'ըսէք։

— Այո՛, և այնպէս սիրահարեալ որ ամենէն անլուր անիրաւութիւնը գործելու փոյթ չ'ըրաւ։

— Ի՜նչ անիրաւութիւն, հարցուց երիտասարդն, ուրախութեան յուզմամբ մը զոր դիւրին էր ըմբռնել, զ'ի կը յուսար որ հասած էր վայրկեանն ամեն ինչ լուսաբանելու։ Բայց յանկարծ միտքն անկաւ դարձեալ գիշերային ժամադրութիւնն, ու ճակատը մթնցաւ։

— Սիսակի սիրահարուած էր նաեւ, յարեց աղջիկը, Վարդանոյշ բարեկամուհիս, և այդ ամուսնութիւնն արգիլելու համար ձեր մօրուն օգուտ քաղեց իմ և Սիսակի բացակայութենէն հաւատացնելու համար Վարդանուշի թէ ես գաղտնի յարաբերութիւններ ունէի իմ ազգականիս հետ, և թէ զինքն անօրինաբար կը խա-

բէի։ Եւ ո՞ գիտէ եթէ նոյնը չ'ըրաւ և ձեզ նը-կատմամբ։

— Սա տարբերութեամբ որ փոխանակ խօսքերու գործ ներկայացուց ինձ։

— Զեմ հասկնար։

— Գիշեր մի մինչ կը ննջէի, եկաւ գիս արթընցուց, տեղացս հանեց, և յորդորեց գիս ըսպասելու և հայելու։ Եւ երբ կ'ուզէի իմանալ թէ ի՞նչ կ'ուզէր ըսել, ահա տեսայ զձեզ որ գիշերուան մէջ ճրագ ի ձեռին սենեկէ մի դուրս կ'ելնէիք Սիսակին հետ առանձին։

— Ապիրա՛ տ կինն։

— Այս մասին յանցաւոր չեմ գտներ զինքը։

— Յանցաւոր չէ՞ք գտներ։ Ինչո՞ւ ուրեմն խօսակցութեանս ունկնդիր չ'ըրաւ զձեզ նաեւ, եթէ մասնաւոր նպատակ մի չ'ունէր զձեզ խաբելու։

— Այո՛, պատուիրեց ինձ դրանս առջեւէն չհեռանալու։

— Ես ձեզի պատճառն իմացնեմ. վասն զի եթէ ըսածներս դուք իմանայիք, մեղադրութեան տեղի չէր մնար, քանի որ պիտի լսէիք թէ ի նպաստ Վարդանուշի դատ կը վարէի, և առաւելն կայ՝ պիտի իմանայիք նաեւ Տիկին Աբգարեանի սիրահարութիւնը Սիսակի հետ։

— Այդ սոսկալի հրէշին խաղալի՞ք եղայ ուրեմն։

— Եւ ես անոր զոհը դժբախտաբար։

— Բայց խնդրեմ սա եւս յայտնեցէք ինձ թէ ի՞նչ պէտք ունէիք մութին զՍիսակ հիւրընկալելու։

— Վասն զի Վարդանոյշ անհնարին կասկածներէ և տառապանքներէ տանջուելով խնդրած էր ինձմէ որ անպատճառ հեռեւեալ առաւօտն իրեն լուր մի տամ Սիսակի խորհրդոց վրայ, եթէ չէի ուզեր որ մեռնի։ Ուրիշ միջոց չունէի բայց ժամադրութեան մի դիմելու խաւարի ժամանակ, Տիկին Արդարեանի կասկածները չգրգռելու համար։

— Ո՛վ իմ Արաքսիաս, կը գտնե՞մ զքեզ ուրեմն վերստին, ըսաւ Ներսէս, անհուն խանդիւ, և մերձենալով աղջկան ուզեց ձեռքերը համբուրել։

Վարժուհին ետ քաշուելով ըսաւ.

— Այդ իրաւունքն ոչ ես ունիք։

— Ոհ, արդեօք ուրիշի՞ խոստացար՝ սիրտդ, Արաքսի՛ա։

— Ես ո՛չ, բայց դուք քանի որ ամուսնացած էք, պէտք է որ հաւատարիմ մնաք ձեր կնոջ։

— Ե՛ս, ամուսնացա՛ծ, ո՞վ ըսաւ քեզ այդ սուտը։

— Ատուա՛ծ իմ, գոչեց աղջիկն, սո՞ւտ է ուրեմն։

— Կատարելապէս, Արաքսիաս, զի սիրտս՝ հակառակ բոլոր ջանքից, քուկդ մնաց, քուկդ է և պիտի լինի միշտ։

— Արդեօք կ'երդո՞ւիս, դու իմն ես վերջապէս, Ներսէ՛ս։

— Ո՛չ, երդում չ'է՝, այլ երկնային իրականութիւն։ Բայց յայտնէ ինձ, ո՞վ հաւատացուց քեզ թէ ես ամուսնացայ։

— Կ'իմանա՛ս, կ'իմանա՛ս։

— Ի՞նչ կայ։

— Դարձեալ Տիկին Արգարեանի նենգաւորութեան փաստ մի։

— Ձեմ հասկնար։

— Իսկուհին կամաւոր թէ ակամայ գործիքն եղած է Տիկին Արգարեանի. նա ըսաւ ինձ թէ դու ամուսնացեր ես անգլուհւոյ մի հետ։

— Խե՜ղճ հայրս, որպիսի՜ ճիւաղի ձեռք ինկած է։

— Ի՜նչ զարհուրելի կին։

— Բայց ներէ ինձ վերջին հարցումս մի, Արաքսիա։

— Խօսէ, ներսէ՛ս։

— Ի՞նչ պատճառաւ այս առաւօտ կանուխ Սիսակ այցելութեան եկած էր քեզ։

— Դարձեա՞լ կը կասկածիս։

— Ո՛չ, ո՛չ, բայց պարզ հետաքրքրութիւն մ'է։

Ի պատասխանի այդ հարցման՝ Արաքսիա գրպանէն երկու թուղթեր հանելով զանոնք երիտասարդին մատոյց. մին՝ նամակն էր Տիկին Արգարեանի առ Սիսակ՝ որով 300 ոսկի կ'առաջարկէր անոր. և միւսն պարտամուրհակն էր Սիսակի։

Առաւ զանոնք Ներսէս և հետզհետէ կարդալով, առաջինը խնդրեց Արաքսիայէն, և երկրորդը վերադարձնելով բացատրութիւն ուզեց կարդացածին վրայ։ Աղջիկը պատմեց օրիորդ Գրիգորի պարագայն, և իր միջամտութիւնն զՍիսակ ազատելու համար անել վիճակէ մի։

Ներսէս եւս քան զեւս հիանալով աղջկանը

վրայ, և սոսկալով այն անդառնալի կորստեան վրայ զոր պիտի ընէր նենգութեան խաղալիք լինելով, կ'օրհնէր զիւր Աղաւնին որ պատճառ եղած էր իւր կորուսեալ սիրելին իրեն վերադարձնելու։

Աղաւնիի անունը լսելով՝ Արաքսիա յիշեց երախտագիտութեամբ այն հրեշտակն զոր մուցած էր վայրիկ մի իւր անձն արդարացնելու համար, և հարցուց անձկութեամբ թէ ե՞րբ և ո՞ւր տեղի պիտի ունենար իրենց տեսութիւնը։

— Ե՞րբ, չ'գիտեմ, պատասխանեց Ներսէս. սակայն կրնամ հաստատել թէ նոյն իսկ հօրատան մէջ պիտի տեսնուիս քրոջս հետ։

— Հօ՞րդ տան մէջ, հարցուց Արաքսիա զարմանօք։

— Եթէ Տիկին Աբգարեան չ'ուզէր որ իւր դաւերը, խայտառակութիւններն և նամակներն երեւան հանեմ, պարտական է բնաւ ամենափոքրիկ դժուարութիւն չ'յարուցանելու քու այցելութեանդ մասին, ըսաւ Ներսէս եղանակաւ մի, որ յայտնի էր թէ խօսքերը կատակ չ'էին։

Երկու երիտասարդներն իրարու երկրորդելով յորդառատ և սիրալեր սրտերնուն ուխտերը, բաժնուեցան, Արաքսիա ընդ փոյթ Տիկին Հարթմանեանի աւետելու համար իւր երանութիւնն, և Ներսէս տուն վերադառնալու մտօք։

ԳԼՈՒԽ ԿԳ.

Անհամբերութեամբ կ'սպասէր Աղաւնի եղբօրը վերադարձին, իմանալու համար եթէ հանդիպա՞ծ էր Արաքսիայի, և եթէ հանդիպած՝ ի՞նչ հետեւանք ունեցած էր իւր առաջարկը։

Բայց երբ Ներսէս տեսնելէն ներս մտաւ, հիւանդն անմիջապէս իմացաւ որ նա ուրախաբեր մ'էր, ու քրոջն առջեւ ոչինչ յայտնելու համար աչերովն հարցուց ինչ որ կ'ուզէր հաստատապէս իմանալ։ Ներսէս մատենալով մանկան և զայն գրկացը մէջ առնելով՝ հոգեբուղխ համբոյր մի տուաւ անոր, ըսելով.

— Կամքդ պիտի կատարուի, ո՛վ դու իմ երջանկութեանս պատճառը։

Աղաւնի այդ խօսքերէն սա միայն հասկցաւ թէ պիտի տեսնէր վերջապէս զօրիորդն որուն տեսութեան կարօտ էր։

Ներսէս սակաւ ինչ երկու քոյրերուն հետ կենալէն վերջը, երբ ոտք ելաւ անոնցմէ հեռանալու համար, Արմինէ ուզեց խափանել ընթացքը հազար մանկական սատանութիւններով, մինչ Աղաւնի կշտամբալից ձեւով մ'ըսաւ.

— Եղբա՛յրս, այսչա՛փ անհամբեր ես ուրեմն զիս թողու։

— Հրեշտակս, պատասխանեց նա, ցաւ է ինձ թողուլ զքեզ այսչափ շուտ. բայց կարգադրելիք գործ մ'ունիմ, և անմիջապէս որ կատարեմ զայն, կուգամ քեզ և Արմինէի խիստ ուրախաւիմ լուր մի տալու։

— Իմացուր զայդ այժմէն, գոչեց Արմինէ։

— Ո՛չ, անկարելի է։

— Կ՚սպասենք, եղբա՛յրս, ըսաւ Աղաւնի, համակերպութեամբ։

— Կեցցե՛ս ուրեմն, իմ սիրո՛ւն փոքրիկս, ըսելով, համբոյր մի եւս տուաւ հիւանդին, ուրիշ մ՚ալ Արմինէին, և փութաց սենեկէն դուրս ելնելու։

Ներսէս հարցուց աղախնոյն եթէ Տիկինն արթընցած էր, և իմանալով որ նա իւր սենեակն էր, և թէ իւր հայրն եկեղեցի գնացած էր՝ կիրակի լինելով նոյն օրը, քայլեց դէպ ի խուց Տիկին Արգաբեանի, և հարցուց անոր եթէ ներելի էր ներս մտնել։

Տիկինն հաճեցաւ, սակայն մեծ սրտայուզութիւն մ՚զգաց նկատելով թէ ամուսնոյն որդին ոչ երբէք այդ պիսի քայլ մ՚առած էր մինչեւ նոյն օրն, և թէ կարեւոր պատճառ մ՚ունէր անշուշտ իւր սենեկին մէջ հետը խօսելու արտօնութիւնը խնդրելով։

Ներսէս սենեկէն ներս մտաւ ու դուռը գոցելով իմացուց թէ առանձին խօսակցութիւն մի կը խնդրէր։

— Կրնաք վստահ լինել, ըսաւ տիկինը, թէ ոչ ոք հոս կը մտնէ առանց հրամանիս, եթէ ոչ ամուսինս։

— Լաւ ուրեմն, ըսաւ երիտասարդն, և վայրկեան մի կանգ առնելով՝ սկսաւ այսպէս իւր խօսակցութիւնը.

Չգիտեմ ի՞նչ պատճառ ունիք, Տիկին, օրիորդ Արաքսիայի դէմ ատելութիւն ունենալու համար։

— Խնդրեմ, պատասխանեց գոռոզ կինն, երբէք զինքն ատելութեամբս չեմ պատուած, և դուք զարմանալու չէք այդ բանին վրայ։

— Դուք, Տիկի՛ն, ինչպէս և ես կ'երեւայ թէ թիւրիմացութեան զոհ եղած ենք։

— Կ'երեւայ թէ այդ խարդախ աղջիկն յաջողած է զձեզ կրկին անգամ խաբելու։

— Ես անձս և ոչ անգամ մի սխալած կը համարիմ որպէս զի երկրորդ անգամ սխալելէ զգուշանամ։

— Ես, յօգուտ ձեր, յայտնեցի այդ վարժուհոյն որպիսի՛ անբարոյական անձ լինելը, զի հասկցած էի որ թակարդ կը լարէր ձեզ, և ջանացի փրկել զձեզ։ Ես խղճովին պարտքս կատարեցի, իսկ եթէ դուք կը յամառիք անպատուութեան գիրկն անկանիլ՝ ես անպարտ եմ։

— Տիկին, յամառութիւնս այնչափ հեռու կը մղեմ մինչեւ անգամ յայտնելու ձեզ, այս միջոցիս իսկ, թէ օրիորդ Արաքսիա Վարսամեան իմ նշանածս է։

Տիկին Աբգարեան դեղնեցաւ իբրեւ զմահ, և պառնութեան ոտտակութենէն դոչեց.

— Ես երբէք այդ անպիտան վարժուհին իբր Տիկին Աբգարեան չ'եմ ճանաչեր։

— Ճանաչէք թէ ոչ, այդ փոյթ չ'է ինձ, միայն թէ կը պահանջեմ որ առաւել ակնածութեամբ խօսիք այսուհետեւ անձի մի վրայ որ քիչ ժամանակէն կինս պիտի լինի, և որ ամենայն պատուոյ արժանի է իւր բարի վարքովը։

— Դուք չ'էր կրնար փոխել իմ աննպատա

գաղափարս անոր վրայօք, և ոչ իսկ կրնաք արգիլել որ խօսիմ։

— Այո՛, Տիկին, կրնամ արգիլել։

— Ի՞նչ եղանակաւ արդեօք, հարցուց կինն, արհամարհոտ ժպիտով մը։

— Յայտնելով թէ ինչ որ զրուցեցիք օրիորդ Արաքսիայի վրայօք, պարզապէս զրպարտութիւն մ'էր։

— Ի՞նչ փաստերով արդեօք պիտի ապացուցանէք զայդ։

— Ի շնորհս այս նամակին, ըսաւ երիտասարդը գրպանէն հանելով Տիկնոջ նամակն առ Սիսակ, և զայն ցոյց տալով նմա։

Տիկին Արգարեան շանթահարելով լռեց առջի բերան, և ապա ուզեց ուրանալ թէ այդ գիրն ինքը գրած էր։

— Տիկին, ըսաւ երիտասարդն, ուրանալը բանի մի գոյութիւնը ջնջել չ'է, ահա ձեր գիրը, ամենքս ալ կը ճանաչենք, և եթէ յամառիք ուրանալու դրութեան մէջ մնալու, պիտի պարտաւորիմ նոյն իսկ Պ. Սիսակի դիմել ճշմարտութիւնն յայտնել տալու համար անոր։

Կինն հասկցաւ թէ Սիսակ բացարձակ թշնամի դարձած էր իրեն դէմ, քանի որ իւր նամակը թշնամեացը ձեռքը մատնած էր։

— Տիկին, ըսաւ Ներսէս, հայրս իրօք զձեզ պաշտած է մինչև ցարդ։ բայց կուրօրէն հաւատալով ի ձեզ, իւր անունն ամեն տեսակ անպատուութեան մատներ է։

Լուռ կը կենար սարսափած կինը։

— Սա ատոյգ է, յարեց Ներսէս, որ զձեզ

պաշտելովն հանդերձ եթէ իմանար թէ որպիսի՛ եղանակաւ գործածած էք ձեր վայելած ազատութիւնը, վայրկեան մ'իսկ զձեզ իւր յարկին ներքեւ չէր պահեր ապահովապէս. որով մէկ վայրկենի մէջ կը զրկուէիք բոլոր ձեր վայելած պատիւներէն իբր Տիկին Արգարեան, ու կենաց բոլոր մեծութիւններէն։

Տիկինն եւս քան զեւս կ'այլայլուէր, և անձը կը մաշէր նկատելով խոնարհ վիճակն որում ենթարկուած էր։

— Սակայն, տիկին, ըսաւ Ներսէս, ես հօրս ալեւորութեանը կ'ուզեմ խնայել, ինչպէս և տըղայոցն պատուոյն, վասն զի ընկերութեան մէջ շատ յանցանաց կը ներուի, բաւ է որ արտաքին ցոյցերն ըստ բաւականի լաւ պահպանուած լինին. բայց երբ այդ յանցանքն երեւան ելնելով մինչեւ գայթակղութեան կը հասնի յարուցած ազմուկն՝ յայնժամ ընկերութիւնն անխիղճ կերպիւ զդատապարտեալը կը զեղչէ իւր ծոցէն։

Տիկին Արգարեան լաւ գիտէր թէ իւր ամուսնոյն անունն իբր պաշտպանող քօղ կը տարածուէր իւր վրայ։

— Ուստի, Տիկի՛ն, ես կը լռեմ ձեր մասին՝ ինչպէս ըսի՝ հօրս և քոյրերուս խնայելու բաղձանօք, զի ձեր յանցանաց մրուրը մինչեւ այն անմեղ էակաց վրայ կրնայ ժայթքել։ Բայց եթէ զօրիորդ Արաքսիան, այսինքն իմ նշանածս, համարձակիք երբէք պախարակել և զրպարտել, յայնժամ ես եւս ի սէր այն արդարութեան զոր կը պարտիմ Արաքսիայի, պէտք է որ զամեն ինչ հօրս յայտնեմ. զի ներելի չ'է որ անմեղն Արաք-

սիա աւելի երկար ժամանակ անիրաւուի իւր պատուոյ մասին։

Տիկին Աբգարեան խնացաւ թէ ահագին սպառնալիք մի կը գոռար իւր գլխուն վերեւ, որուն գործադրութեան վրայօք բնաւ չէր տարակուսեր, զի լաւ կը ճանաչէր Ներսէսի բնաւորութիւնն։ Ուստի խորամանկ եղանակաւ մի ըսաւ.

— Քանի որ դուք պարիսպդ Արաքսիան ընտրեցիք իբր ձեր ապագայ կենակիցն, ոչ այլ ինչ կը մնայ ինձ եթէ ոչ ճանաչել զինքն այժմէն իբր մեր ընտանեաց անդամ։

— Բայց այս եւս կ'աւելցնեմ որ ես կը պահանջեմ թէ այսուհետեւ մեր անունն առաւել արժանապատուութեամբ կրէք, զի ես պիտի հրամայեմ ձեր վրայ, ըսաւ Ներսէս։

Տիկին Աբգարեան կը լռէր թէեւ, բայց հոգին կը գոռար։

— Հօրս տակաւին ոչինչ խօսած եմ ամուսնական խորհրդոցս մասին, ըսաւ երիտասարդը, զի կը փափաքէի նախ ընդ ձեզ խօսակցիլ այս նիւթին վրայ։ Բայց անմիջապէս որ նա եկեղեցիէն վերադառնայ, պիտի խնդրեմ իւր օրհնութիւնը։

Նոյն միջոցին Պ. Աբգարեանի ձայնը լսուելով՝ Ներսէս դուրս ելաւ Տիկնոջ խուցէն, գնաց հօրն ընդ առաջ, և ընդունուեցաւ անկէ՝ ինչպէս միշտ, սիրալիր եղանակաւ։

ԳԼՈՒԽ ԿԴ.

Պ. Արգարեան այցելութեան կ'երթար իւր հիւանդ դստեր, ուստի առաջարկեց Ներսէսի հետը երթալու. բայց սա ըսաւ իւր ծնողին։

— Հա՛յր իմ, նախ կը փափաքիմ ընդ քեզ առանձին խօսակցութիւն մ'ունենալ, և յետոյ միատեղ կ'երթանք Աղաւնին տեսնելու, եթէ կամիս։

— Լաւ, որդեա՛կս, պատասխանեց Պ. Արգարեան, և մտնելով անմիջապէս առաջին խուցին մէջ՝ որդին հետեւեցաւ անոր՝ սենեկին դուռը գոցեց, ու հանդէպ ծնողին նստելով ըսաւ.

— Հայր իմ, գիտեմ որ դու իմ երջանկութեանս նախանձախնդիր ես։

— Այդ բանին տարակոյս կա՞յ միթէ։

— Ուստի գտած լինելով այն էակը զոր ինձ բաղդակից ընելով կրնամ երջանկութիւնս ապահովել, կուզամ խնդրել ի քէն քու հաճութիւնդ ամուսնութեանս մասին։

— Ո՞վ է ընտրելիդ, տեսնենք, վստահ եմ որ անվայել ընտրութիւն մ'ըրած չ'ես։

— Օրիորդ Արաքսիան է։

— Գոհ եմ ընտրութենէդ, որդեա՛կ, դի ըստ ամենայնի լաւ աղջիկ մ'է այն, ըսաւ հայրը ցնծութեամբ։

— Ուրեմն հաճէ տալ ինձ քու օրհնութիւնդ։

— Որդեա՛կ, երջանիկ լեր բոլոր կենացդ մէջ, և հաստատուէ նոր ընտանեօքդ հանդերձ։

— Այսինքն, հա՛յր, իմ սիրելեացս թուոյն վրայ ուրիշ սիրելի մ՚ալ պիտի աւելցնեմ։

— Երթանք հաղորդել այդ լուրը Տիկին Աբգարեանի նաեւ, ըսաւ Պ. Աբգարեան, տեսակ մի անհանգստութեամբ, զի գիտէր արդէն որ իւր կինը բնաւ նպաստաւոր չ՚էր նմա։

— Աւելորդ է, հա՛յր, զի երբ իմացայ քու բացակայութիւնդ՝ փութացի նմա հաղորդել այդ լուրն։

— Որդեա՛կ, կ՚երեւայ որ սրտիդ անհամբերութիւնը խիստ մեծ էր, ըսաւ բարի հայրը խնդալով։ Բայց ի՞նչ ըսաւ կինս, հարցուց ապա նա անձկութեամբ։

— Իւր գոհունակութիւնն յայտնեց։

Թէեւ Պ. Աբգարեան զարմացաւ գոհունակութեան բառը լսելով, բայց չատ ուրախ եղաւ նկատելով թէ կինը բնաւ իւր տհաճութիւնը չ՚էր յայտնած։

Տիկին Աբգարեան ծածկած էր ամեն ինչ որ Արաքսիայի վերաբերութիւն ունէր. այսու հանդերձ անոր հետ և անոր վրայօք խօսելու եղանակէն յայտնի էր որ ինք մասնաւոր հակակրութիւն մ՚ունէր անոր դէմ։

Ներսէս յայնժամ հարցուց հօրը թէ ե՞րբ կըրնար նշանածն իրեն ներկայացնել ձեռքն համբուրելու համար։

Պ. Աբգարեան խիստ ուրախ էր իրօք իւր որդւոյն մտալուտ ամուսնութեան վրայ, հետեւապէս ըսաւ.

— Որդեա՛կ, բեր զայն երբ կ՚ուզես, և որչափ չուտ որ ուզես։

— Ցուսամ, հա՛յր, որ պիտի ներես միանգամայն օրիորդին մեր ուղեկցիլ իրեն, իսկ հայրը անկարող է շարժելու։

— Անտարակոյս, թող գայ։

— Արդ եթէ կամիս երթանք հա՛յր, քոյրերուս այցելելու։

— Եւ միանգամայն մնասակից ընել զանոնք մեր ուրախութեան, չի գիտեմ թէ որքա՞ն կը սիրէին զԱրաքսիան, և որչա՞փ իրենց դէմքը սգով վարագուրուած էր երբ մեկնեցաւ նա ատոր։ Երանի՛ թէ չմեկնէր, գուցէ Աղաւնիս չէր հիւանդանար։

Այս խօսքերն ըսելով զգածեալ հայրը խոր հառաչանք մ՚արձակեց։

Մտան աղջկանց խուցը։ Աղաւնի վերջին աստիճան տկար կը թուէր անկողնոյն մէջ։

— Որդեակը իմ, ըսաւ հայրը, կը բերեմ ձեզ լուր մի որով խիստ գոհ պիտի լինիք, վստահ եմ։

— Ապահովապէս, գոչեց Արմինէ, մեր եղբօր խոստացած լուրն է։

Իսկ Աղաւնի բերանաբաց բայց անխօս կ՚սպասէր որ եղելութիւնն իմանայ։

— Կ՚աւետեմ ձեզ ուրեմն թէ ձեր սիրեցեալ օրիորդ Արաքսիան մեր հարսը պիտի լինի։

— Ինչպէ՞ս, ըսաւ Աղաւնին ապշած, արդեօք մեր եղբօ՞ր հետ պիտի ամուսնանայ։

— Այո՛, զաւակս։

Արմինէ պոհունակութեան սաստկութենէն սկսաւ ոստնուլ և ձեռքերն իրարու բաբախել։ Իսկ Աղաւնի քիչ մնաց նուաղէր, ուրախութեան սաստկութենէն։

— Զլսի՞ քե՛զ, Ներսէ՛ս, որ յանչափս պիտի ուրախանան զաւակներս։

Երիտասարդին սիրտն յուզուեցաւ այդ անկեղծ սիրոյ արտայայտութեան առջեւ, մինչեւ իսկ աչքերը խոնաւելու աստիճան։

Երբ Աղաւնին հանդարտեցաւ, յայնժամ հարցուց իւր եղբօրը թէ ե՞րբ ուրեմն պիտի տեսնէր զիւր սիրելի օրիորդը։

— Հոս և որչափ շուտ կարելի է, քուրի՛կս։

— Աչխատէ եղբա՛յրս, որ այսօր իսկ գայ, զի թուի ինձ որ եթէ տեսնեմ զինքը պիտի բըժըշկուիմ։

— Ուրեմն, ըսաւ Պ. Արգարեան, դնա՛ Ներսէ՛ս և նշանածդ հոս բեր, թող Աղաւնիս կամքը շուտ կատարուի։

Մեծ ստիպման հարկ չկար մղելու համար զՆերսէս այդ պիսի յանձնարարութեամբ մի վազ զբաղելու։ Ուստի մեկնեցաւ որչափ կարելի էր ընդ փոյթ վերադառնալու խոստմամբ։

ԳԼՈՒԽ ԿԵ.

Ներսէս ընթացաւ վերատին ի տուն Տիկին Հարթմանեանի, և փութաց զամեն ինչ մանրամասնաբար հաղորդելու Արքսիայի։ Օրիորդին ուրախութեան չափը լի էր կարծես։ Բայց յիշելով որ Տիկին Հարթմանեան չէր ճանաչեր զերիտասարդը, խնդրեց որ ներկայացնէ զինքն Տիկնոջ։ և Ներսէս ոչ միայն ընդունեց այդ խիստ բնական առաջարկն, այլ մանաւանդ հարկաւոր համարեց զայն։

Տիկին Հարթմանեան գոհունակութիւն յայտնեց զՆերսէս տեսնելով, և մեծ գովութեամբ խօսեցաւ Արաքսիայի վրայօք, ու բոլոր ուրախութիւնն յայտնեց յաջողութեամբ պսակուելուն վրայ օրիորդին սէրը, որ, կը յարէր, Արաքսիա թշուառագոյն անձն եղած էր ինքը զինքն լքեալ կարծելով։

Ներսէս իւր բոլոր շնորհակալիքը յայտնելէն վերջն այն համակրութեան համար զոր ցոյց տըւած էր Արաքսիայի, հրաման խնդրեց Տիկնոջմէ աղատել զօրիորդն այն բարոյական երաշխաւորութենէն զոր ստանձնած էր Սիսակի դորձին մէջ, և 300 ոսկի հանելով գրպանէն մատոյց զանոնք Տիկնոջ։

Ապա խնդրեց տան տիրուհիէն որ նոյն վայրկենէն արձակէ զԱրաքսիան, որպէս զի նա կարողանայ պարապիլ մնացեալ ամուսնութեան պատրաստութեամբ։

Տիկինը գրկացը մէջ առնելով նշանած աղջիկը սրտին վրայ սեղմեց, ըսելով.

— Բարեկամուհի՛ս, քեզ կը պարտիմ շատ մի սիրուիչ վայրկեաններ. քու բացակայութիւնդ ինձ համար դառն կորուստ մի պիտի լինի, բայց ես սիրով կը համակերպիմ այդ հարկին, բաւ է որ դու երջանիկ լինիս։

Արաքսիա՝ իւր կողմանէ եռանդագին շնորհակալութեամբ՝ յայտնեց երախտագիտութիւնն այն ամեն վայելած համակրանաց ցոյցերուն համար, յետ որոյ արտորնօք պատրաստուելով կտրք մի նստաւ Ներսէսի հետ և հասաւ իւր ծնողաց տունը։

Երբ Վարսամեանք տեսան իրենց դուստրը Ներսէսին հետ, անբացատրելի ուրախութիւն մ'զգացին, զի թէեւ Արաքսիա ոչինչ ըսած էր, իրենք կասկած ունէին թէ գուցէ անախորժ դէպք մ' պատահած էր աղջկան և Ներսէսին միջեւ, և թէ Արաքսիա կը ծածկէր զայդ՝ խընայելով իրենց։

Երբ մանաւանդ իմացաւ Տիկին Վարսամեան թէ ինքն հրաւիրեալ էր նոյն միջոցին իսկ ի տուն Պ. Արգարեանի, կարծես թէ պ'ետի յիմարէր կինն ուրախութեան սատ'ութենէն. զիւր ամուսին կ'ողողէր իսկ նոյն միջոցին ամեն տեսակ հոգատարութեամբ և քաղցր բառերով։

Կը մտածէր Տիկինը թէ վերջապէս պիտի հըռչակէր ի լուր աշխարհի ատացած փեսայացուն։ Եւ մինչ գնաց պատրաստուելու գոնէ քիչ մի վայելուչ զգեստիւք ներկայանալու համար Արգարեան ընտանեաց, կը խորհէր թէ Երանեանք որչա՞փ արդեօք պիտի նախանձէին հաստատելով տարբերութիւնն ընդ մէջ իրենց բոկոտն փեսացուին և իւր հարուստ Ներսէսին։

Իսկ Արաքսիա կը վայելէր իւր երջանկութիւնը լիաթոք, և վարանմամբ կը մտածէր թէ իւր սիրելի Վարդանոյշ իրեն չափ բարեբաստիկ պիտի լինէ՞ր արդեօք։

Բնաւ ոխ չ'էր անուցաներ սրտին մէջ Տիկին Արգարեանի համար. ինքն երջանիկ էր և ամենուն կը ներէր։

Երեքը միատեղ կառք մտնելով հասան Արգարեանց տունը։

ԳԼՈՒԽ ԿԶ.

Երբ Տիկին Վարսամեան տեսաւ ճոխութիւնը տան Աբգարեանց, հիացաւ, սքանչացաւ, և կարծես գոհունակութենէն վրդացաւ, մտածելով թէ իւր աղջիկն այդպիսի փարթամ ընտանեաց պիտի վերաբերէր։

Պ. Աբգարեանի ընդունելութիւնը Տիկին Վարսամեանի մասին խիստ վայելուչ էր. իսկ զԱրաքսիան հայրական գորովով ընդունեց, զի այդ միջոցին իւր աւուրինը տակաւին ներկայ չէր սենեակին մէջ։

Բայց Տիկին Աբգարեանի հիւրընկալութիւնը ցուրտ էր և անտարբեր։ Իսկ Արաքսիա ամենայն արժանապատուութեամբ և պարզութեամբ վարուեցաւ այն կնոջ՝ հետ։

Ներսէս թուէր երջանիկ, երջանի՛կ՝ բառին ընդարձակագոյն առումով։ Մերթ ընդ մերթ գաղտագողի ակնարկ մի կ՚արձակէր Տիկին Աբգարեանի, և վերահասու կը լինէր թէ այդ կինը զիւր հոգին կը կրծէր, և թէ չարաչար կը տանջուէր այն հարկին առջև ճանաչելու զԱրաքսիան իւրը ընտանեաց անդամ։ Փոխանակ բացարձակ նախատելից ձեւերու՝ պարտական էր հանդուրժել անոր ներկայութեան իսկ զոր հոգւով կ՚ատէր, և այդ պարտականութիւնը զինքը կը մահացնէր։

Արաքսիա հանգիստ չէր իւր նստած տեղը. աչքերովն և շարժմամբը կը յայտնէր թէ անձկութիւն մ՚ունէր, թէ բան մի կ՚որոնէր։

Ներսէս որ կը հետամտէր ամեն շարժմանց

օրիորդին՝ հասկցաւ թէ նա անհամբեր էր այցելելու փոքրիկ հիւանդին։

Հետեւապէս քանի մի բառ փոխանակեն վերջը հօրը ականջին՝ սա օրիորդին առաջարկեց որ երթայ տղայոց սենեակը։

Հապիւ հազ տեսաւ Աղաւնի զԱրաքսիան և իսկոյն հալած թեւերը բանալով ընդդիմեց զայն անհուն կարօտիւ։

Աղջիկն ուրախութեան սաստկութենէն սակաւ ինչ վնասուեցաւ, և չէր ուզեր թողուլ ձեռքն իւր վաղեմի վարժուհւոյն զոր շարունակ շրթանցը կը տանէր, մինչ միւս ձեռքն Արմինէ բռնած էր և իւր ուրախութիւնն որոտալից կերպիւ կը յայտնէր։

Արաքսիա կատարելապէս զգածուած հիւանդին անտանելի կերպարանափոխութենէն, անկարող էր ի սկզբան բառ մ՚արտասանելու, և կը շատանար զաղջիկն որտին վրայ սեղմելով։ բայց ա՛յս երբ յուզումն հանդարտեցաւ սակաւիկ մի, ըսաւ։

— Կը գտնեմ զքեզ ուրեմն վերստին, ո՛վ իմ Աղաւնիս, դո՛ւ որ պատճառ ես այս վայրկենիս վայելած երջանկութեանս։

Տղան չ՚էր հասկնար թէ աղջիկը կ՚ակնարկէր այն հրաւէրին զոր ըրած էր եղբօրն Պոլիս գալու, և առանց ոչինչ հարցնելու կը վայելէր տեսութիւնն իւր սիրելի օրիորդին։

— Դու իմ հաւատ պիտի լինիս ուրեմն, ըսաւ Աղաւնի որտագին եղանակաւ։ Մեղք որ զքեզ վայելելու ժամանակ չ՚պիտի ունենամ, մրմնջեց զգայուն աղջիկն, մինչդեռ

լռիկ արտասուք աչերէն վար կը գլորէին։

— Ո՛հ, մի՛ այդպէս խօսիր, ըսաւ Արաքսիա, յուզմամբ մի զոր հազիւ կարող էր ծածկել. դու պիտի ապրիս երկարօրէն։

Ներսէս Արաքսիայի ետեւը կեցած աչերը կը սրբէր առանց բնաւ բառ մ՚արտասանելու. իսկ Արմինէ մտածելով թէ մօտալուտ հարսանիք մի պիտի ունենային, կ՚ուրախանար իւր յարուցած աղմկին մէջ, ու չէր լսեր հոգեմաշ խօսքերն իւր քրոջ։

Պ. Արգարեան հիւանդին խուցը մտաւ առաջնորդելով Տիկին Վարսամեանի, մինչ Տիկին Արգարեան կը վերադառնար իւր սենեակը՝ կըրած դառնութիւնը մարսելու համար հոն առանձին։

Աղաւնի ժպտեցաւ Տիկին Վարսամեանի, և ապա հօրը դառնալով ըսաւ.

— Հա՛յր իմ, որչա՛փ երջանիկ եմ տեսնելով իմ սիրեցեալ օրիորդս, կարծես թէ կը վերածընիմ։

— Աղջի՛կս, պատասխանեց հայրը, կը խնդրենք օրիորդէն որ ամեն օր գայ զքեզ տեսնէ։ Ցաւսամ թէ Տիկին Վարսամեան ընդդիմութիւն չընէր առ այդ։

— Ընդհակառակն, շատ ուրախ կը լինիմ, պատասխանեց Տիկինն որ չ՚գիտէր ինչպէս վարուիլ այդպիսի մեծափարթամ անձի հանդիսաւորութիւնը վայելելու համար։

— Ուստի պիտի գա՞ք, օրիորդ, հարցուց Աղաւնին, աղերսալից նայուածք մի արձակելով անոր։

— Կը տարակուսի՞ս արդեօք, հրեշտակս։

— Ո՛հ, շնորհակալ եմ, օրիորդ, բաւական հիւանդը նուազեալ ձայնիւ։

— Հայր, ձայնեց անուշ աղջիկն, խնդիրը մի եւս։

— Խօսէ՛, զաւա՛կս։

— Կը փափաքէի, որ մօտ օրերս կատարուի ամուսնութիւնն իմ եղբօրս, մի մերժերինձ զայդ։

— Լաւ, զաւա՛կս, պատասխանեց հայրը, մինչեւ հոգւոյն խորը վիշտ զգալով, զի կարծեց հասկնալ թէ աղջիկն կ'իմանար իւր մօտալուտ վերջն։

— Ուրեմն, կը խոստանա՞ս, հարցուց։

— Քեզ ի՞նչ կրնամ մերժել։

— Շնորհակալ եմ, հայրիկս։

— Բայց, բաւական Պ. Աբգարեան, չ'բաւեր քեզ իմ հաւանութիւնս միայն։ Պէտք է որ ստանաս նաեւ Տիկին Վարսամեանի, ինչպէս և երկու նշանածներուն հաւանութիւնը։

Եւ այս երկու վերջնոց նայելով՝ մանաւոր ժպտով մի ժպտեցաւ։ Տիկին Վարսամեան որ ամէն ժամանակ պատրաստ էր համակարծիք գտնուելու իւր ապագայ մեծատուն խնամեայն հետ, այս պարագայիս մէջ մանաւանդ փութաց իւր հաւանութիւնը կրկին եռանդեամբ տալու։

Ներսէսի հաճութիւնն ստանալը դժուար ինչ չ'էր, քանի որ իւր նիւթական վիճակը տարիէ մ'ի վեր խիստ զգալապէս բարւոքած էր, մանաւանդ իւր մէկ մօրեղբօրը թողած հարստութիւնը ժառանգելով. ուստի այդ ամուսնութիւնն անմիջապէս կատարելու բնաւ արգելք չկար։

Իսկ Արաքսիայի հաւանութիւնն ստանալու ոչ ոք փոյթ ըրաւ։ Կոյսը կարծես ոսկեզօծ երազ մի կը տեսնէր որ զիւր դէմք կը պայծառացնէր։

Որոշուեցաւ հետեւապէս որ երկու շաբաթէն տեղի ունենայ ամուսնութիւնը Ներսէսի, թէեւ այդ կարճ պայմանաժամն իսկ երկար կը թուէր Աղաւնիի։ Բայց Արաքսիայի մասին այլ եւ այլ պատրաստութիւններ զլեսուց վերաբերեալ, ժամանակի կը կարօտէին, որով դժուար ինչ էր, առուել փութացնել հարսանիքը։

Աւելորդ է ըսել թէ Ներսէս ունեցաւ մատակարարութեան հոգն օժտին իւր սիրեցեալ Արաքսիայի։

Վերջապէս Տիկին Վարսամեան իւր աղջկան հետ հրաժեշտ առաւ Արգարեան ընտանիքէն։ Եւ երբ մեկնելու վայրկենին ուզեց բարեւել զտան տիկինն՝ սա իւր սենեակը փակուած էր, և պատասխան ղրկեց՝ թէ գլխու ցաւն պատճառաւ անկարող էր թողուլ զ'ուր խուց։

Տիկին Արգարեան կը մխիթարուէր մինչեւ վերջին վայրկեանն իսկ իւր անտարբերութիւնն յայտնելով Արաքսիայի և իւր մօր՝ և շարաշար կը յուզուէր այն առ երեւոյթս քաղաքավարական ընդունելութեան համար զոր հարկադրեցաւ ի գործ դնել։

ԳԼՈՒԽ ԿԷ.

Միսակ արձակած էր զՊ. Գրիգոր անոր զբաստական պահանջմանց գործադրութեամբն, որով ինքգինքն ապատ համարելով ամեն վտանգէ,

ջանադիր էր անձնուիրութեամբն ջնջելու յանձին Վարդանուշի ամեն հետք ցաւոց։

Սա եւս կը վայելէր իւր երջանկութիւնն, երիտասարդական սիրալիր հոգւոյ մ'ի բոլոր ստատկութեամբը։

Բայց երբ իմացաւ նշանախօսութիւնն իւր մտերմին ընդ Ներսէսի, ուրախութիւնը չափ չ'ունեցաւ։

Արդէն փոքրիկ կասկած մ'ունեցած էր թէ Արաքսիա անտարբեր չ'էր երիտասարդ Աբգարեանի նկատմամբ, բայց երբէք չ'էր ուղած կասկածն ստուգել որ և իցէ հարցմամբ, քանի որ իւր բարեկամուհին կատարեալ լռութիւն պահած էր այդ մասին։

Արաքսիա ներկայացուց Վարդանուշի զիւր խօսնայր, որ շուտով հին բարեկամի մը կերպարանքն առաւ անոր առջեւ։

Օր մի երբ երեքը սենեկի մէջ առանձին նըստած էին, Երանեանի դուստրը կը պատմէր իւր ցաւագին արկածներն որք զինք մահուան դուռը տարած էին, առանց սակայն բնաւ Տիկին Աբգարեանի անունը տալու ի պատիւ Ներսէսի հետ ունեցած ազգականութեան, և կը յարէր թէ ինք անօրէնութիւնն ունեցած էր կասկածելու նոյն իսկ Արաքսիայէն, երբ սա ժրաջան կերպիւ աշխատած էր զիւր երջանկութիւնն ապահովելու Մխսակի հետ։

— Դուցէ պարոգայ մի կայ որ կ'անգիտանաք, ըսաւ Ներսէս։

— Ո՞րն է, հարցուց Վարդանոյշ։

— Այն է իմ դժբախտութիւնս՝ ձեզ նը-

ման զոհ լինելով նուաստ և անօրէն մեքենայութեանց։

— Ի՞նչ կերպիւ, հարցուց Վարդանոյշ։

— Ձիշդ, իբր ձեզ, այս առաքինի Արաքսիայէն կասկածելով։

— Խնդրեմ բացատրութիւն տուէք։

— Մինչ Արաքսիա ձեզ ի նպաստ կը գործէր՝ այն անձն իսկ որ ձեզ ուզեց թշնամանք հասցընել, յաջողեցաւ հաւատացնելու ինձ եւս թէ Արաքսիա դրուժան մ'էր, և թէ կը մատնէր մեր սէրը զՊ. Սիսակ սիրելով։ Եւ ես յանժամ յուսահատութեան սաստկութենէն թողուցի Պոլիս և հեռացայ։

— Ո՛վ իմ պաշտելի Արաքսիա՛, գոչեց Վարդանոյշ, և ասկայն երբէք գանգատ մի չ'ըրիր, ոչինչ խնացուցիր ինձ, և առանձին հանդուրժեցիր ցաւոցդ սաստկութեան։

— Ի՞նչ հարկ կար, Վարդանոյշ, զքեզ եւս տանջելու, ըսաւ Արաքսիա։

— Բայց ես էի հեղինակը տառապանացդ, որով և բնական էր որ մաս մ'ունենայի իմ յառաջ բերած դժբաղդութենէս։

— Կը տեսնե՞ս, Վարդանո՛յշ, որ ամեն ինչ յաջողութեամբ վերջացաւ։

— Ինչպէ՞ս արդեօք պիտի կարենամ փոխարինել բոլոր բարիքդ ինձ նկատմամբ։

— Պարզապէս զիս սիրելովդ։

— Արաքսիա՛ս, նոր բան ստացած չ'պիտի լինիս։ Բայց ցաւօք կը նկատեմ որ զիս միշտ անարժան կը համարիս գաղտնիքդ բաժին մ'ունենալու։

— Ի՞նչ բանի կ'ակնարկես, բարեկամուհի՛ս։

— Պ. Ներսէսի խօսելու եղանակէն իմացայ որ ձեր սիրահարութիւնը նոր բան չ'է։

— Իրօք տարուան մի խնդիր է։

— Եւ սակայն զամեն ինչ ծածկեցիր ինձմէ։

— Յանցանքն իմս չ'է, ես խիղճ ըրի այդպէս գործելու, հաւատա՛ ինձ։

— Ուրե՞մն։

— Օրիո՛րդ, յարեց Ներսէս, ե՛ս խնդրած էի զայդ Արաքսիայէն, և եթէ յանցաւոր մի կայ, ես եմ։

— Կ'ըմբռնեմ. զիս չ'ճանաչելով, ձեր վստահութեան արժանի չդատեցիք զիս։

— Ես ալ իմ պատճառներս ունէի, օրիո՛րդ, այդ լռութիւնը խնդրելու համար։

— Սակայն նկատեցէք որ եթէ այնչափ խորհրդապահ չ'լինէիք, թէ՛ ձեզ և թէ՛ ինձ մեծ աղէտներ կը խնայէիք։

— Առաւելութիւնն ունեցանք, օրիորդ, վէպի նիւթ մի հայթհայթելու, ըսաւ Ներսէս ժպտելով։

— Սակայն հաւատացէք, պարո՛ն, թէ նախապատիւ կը համարէի որ ուրիշներ մատակարարէին վէպի նիւթը քան թէ մենք։ Աւելի հեշտին է հանդիսական լինելը քան թէ տխուր թատերախաղի մի հերոսները։

— Կենաց բնին վրայ ոչ ոք կրնայ գիտնալ թէ ո՞ր դերը խաղալու սահմանեալ է, օրիո՛րդ։

— Ինչպէս, զոր օրինակ մենք՝ մինչ ողբերգակ էինք, յաջողեցանք այդ դերը լաւագունին հետ փոխելու, ըսաւ Վարդանոյշ։

— Մաղթելով սակայն, յարեց Արաքսիա խնդալով, որ կատակերգութեամբ չ'վերջանան մեր դերերը։

Մինչ այսպէս կը խօսէին, սպասաւորը նամակ մի բերաւ տուաւ Վարդանուշի։

Կոյսը բացաւ և երբ կը կարդար զայն, դէմքն այլայլուեցաւ։

— Ի՞նչ կայ, հարցուց Արաքսիա այլայլելով։

— Ա՛ռ և կարդա՛, ըսաւ յուզեալ աղջիկը։

Յետ կարդալուն՝ Արաքսիա գոչեց.

— Ճիշդ ահա կատակերգութիւնն որում կ'ակնարկէի։

— Ի՞նչ կը նշանակէ Սիսակի վերագրուած յանցանքը, հարցուց Վարդանոյշ անձկութեամբ։

— Զե՞ս հասկնար թէ վերջին ճիգն է թշնամւոյն զքեզ նպատակիդ չ'հասցնելու համար, բարեկամուհի՛ս։

— Եւ ես արդեօք չ'ե՞մ կարող իմանալ պարունակութիւնը նամակին, ըսաւ Ներսէս, կատակի եղանակաւ։

— Ահաւասիկ թուղթն, ա՛ռ, կարդա՛, գոչեց Արաքսիա իւր նշանածին, նշանակութեամբ մի նայուածք մ'ուղղելով։

Ներսէս աչքէ անցնելով զայն խնդաց, և արհամարհանօք նամակը մէկ կողմ նետելով, ըսաւ.

— Յայտնի է որ ձեր թշնամին վերջին ճիգամբ ուզած է ձեր ձեռքէն յափշտակել զՊ. Սիսակ, ապօրինաւոր յարաբերութիւններ վերագրելով գաւառացի աղջկան մի հետ։

— Բայց այսպիսի գրպարտութիւն մի ի՞նչ-

պէս կրնայ լինել, հարցուց Վարդանոյշ, տագնապալից եղանակաւ։

— Շատ շուտ մոռցաք, օրիո՛րդ, թէ նոյնչափ ծանր մեղադրանաց ենթարկեցաւ նոյն իսկ Արաքսիան, որ առաքինութեան տիպար է։

— Այսինքն կ'ուզէք ըսել թէ Սիսակ օրինակելի անձ մի լինելէ հեռու է։

— Դիտաւորութիւնս այդ ըսել չէր Պ. Սիսակի մասին։ Սակայն պատասխանեմ ձեր խօսքերուն։

Ընկերութիւնը չի խնդրէր այր մարդէն այն առաքինութիւնը զոր կը պահանջէ ձեր սեռէն, օրիո՛րդ։

— Այսինքն, ըսաւ Արաքսիա, ընկերութիւնը կը պահանջէ մեզմէ անարատ սիրտ և անարատ կեանք, փոխադարձաբար ընդունելու համար աղարտեալ հոգի և բարք։

— Իրաւացի է ցաստուծդ, Արաքսի՛ա, ըսաւ Ներսէս, այդ անհաւասարութեան առջեւ։

— Եւ սակայն այդ խոստովանութեամբդ հանդերձ, դո՛ւ առաջինն ես նախանձախնդիր լինելու այրական իրաւանցդ, Ներսէ՛ս։

— Տե՛ս ինչ է։ Դարաւոր նախապաշարմամբ լցուած են մեր սիրտն ու միտքը։ Թէեւ բանականութիւնն և արդարութիւնը կը բողոքեն, հանդերձ այսու դժուարին է արմատախիլ ընել մէկէն ի մէկ այն դաղափարներն որով անած ենք։

— Վասն զի անոնք նպաստաւոր են ձեզ։

— Գուցէ մարդս որչափ ալ արդարասէր լինի, միշտ անձնասէր կը մնայ։

— Ո՞ւր է ուրեմն ձեր արդարասիրութիւնը, քանի որ անձնասիրութիւնը դայն կը չեզոքացնէ։

Վարդանուշի միտքը թուէր այլուր լինել։ Զայդ դիտելով Արաքսիա ըսաւ.

— Վարդանո՛յշ, ապահով եմ որ միտքդ այդ անճոռնի նամակաւ զբաղեալ է։

— Զ'դիտեմ ինչո՞ւ, պատասխանեց նա, մակաբերելով հանդերձ որ նոր դաւ մ'է ինձ դէմ, յուզուեցայ առաւել քան զոր կ'ուզէի։

Արաքսիա թուղթն անոր ձեռքէն առնելով կտոր կտոր ըրաւ, ըսելով.

— Խոստացի՛ր ոչինչ ըսել Միսակի այս նամակին վրայօք։

— Կը խոստանամ քանի որ կը խնդրես, բարեկամուհիս։

Յայնժամ Ներսէս այսպէս խօսեցաւ։

— Օրիո՛րդ, շատ դիւրին էր ինձ ապահովապէս երեւան հանել թէ այս նամակն ուղղեալ է ձեզ այն անօրէն անձէն որ հեղինակած է բոլոր մեր անցեալ աղէտքը։ Բայց ի՞նչ օգուտ որ այդ անարժան անձն հօրս անունը կը կրէ, և թէ ալեւոր հայրս ողջ ողջ սպաննել է եթէ իմացնեմ իրեն կնոջը բոլոր անպատիւ գործերը։

— Ո՛չ, ո՛չ, գոչեց Վարդանոյշ, ի՞նչ պէտք այլոց թշուառութիւն պատճառել մեր շահուց համար։

— Մանաւանդ ինչ որ կը վերաբերի Տիկին Արգարեանի գործոց՝ պէտք է որ գաղտնի մնայ՝ Արգարեան անուան պատիւը պահելու համար, յարեց Արաքսիա։

— Կը փափաքէի այդ կնոջ հատուցանել

ըրած չարիքը թէ՛ ամուսնոյն անուան և թէ՛ զաւակացը պատուոյն. բայց անգործութեան դատապարտեալ եմ զօրաւոր նկատմանց առջեւ, ըստաւ Ներսէս վշտանալով։

— Ներսէ՛ս, գոչեց Արաքսիա, թո՛ղ որ իրերն իրենց ընթացքը շարունակեն, վստահ եղիր որ ամեն ոք իւր սերմանածը կը քաղէ։

Նոյն միջոցին Սիսակ սենեկէն ներս մտնելով ուրախ և զուարթ կերպարանքով՝ ցրուեց Վարդանուշի տխրութեան յետին հետքերն. և երբէք երիտասարդուհին ապագային մէջ չ'գիտցաւ թէ այդ գաւառական գայթակղական դէպքը տեղի ունեցած էր իրօք։

Տիկին Արգարեան՝ հեղինակն առ Վարդանոյշ ուղղեալ նամակին՝ փորձեց վերջին փորձով մի թունաւորել աղջկան երանութիւնը, եթէ նոյն իսկ չ'յաջողէր անոր ամուսնութեան արգելք կանգնելով ձերբակաերել վերստին զիւր սիրահար։

ԳԼՈՒԽ ԿԸ.

Կիրակի առաւօտ մ'էր, Պ. Արգարեանի տան սպասաւորաց մէջ մեծ շարժում մի կար, զի Երեկոյեան ճաշի և պսակի պատրաստութիւն կը լինէր։

Տիկին Արգարեան իւր սենեկին մէջ փակուած, դառնութեանը սատակութենէն արտասուք կը թափէր։ Ուրե՞մն այդ անպիտան վարժուհին Արդարեանց անունը պիտի կրէր հակա-

ռակ բոլոր ճգանցն, և մանաւա՛նդ պսակի հանդէսը տանը մէջ պիտի կատարուէր, կը խորհէր նա։

Արգիլե՛լ այդ հանդէսը. բայց ի՞նչ կրնար առարկել երբ Ներսէս իւր ամուսնոյն զաւակն էր վերջապէս, և երբ յանձին երիտասարդին ահաւոր թշնամի մ՚ունէր. մանաւանդ որ իւր գըրած նամակն առ Սիսակ Ներսէսի ձեռաց մէջ էր։ Ուրեմն եթէ բացարձակ ընդդիմութիւն մ՚ընէր՝ իւր ամուսնոյն որդին կրնար իրեն դէմ վրէժը լուծել զինքը թշնամանելով հօրն առջեւ վերջապէս։ Մինչեւ նոյն միջոցին լիակատար իշխանութիւն ունեցած էր ամուսնոյն վրայ։ Բայց Պ. Արգարեան զինքն իբր կին առաքինի նկատած էր միշտ, և տիկինն լաւ համոզուած էր որ եթէ իւր անցեալ ամեն ընթացից տեղեկանար իւր այրն, ինքն ոչ միայն իւր բոլոր ազդեցութիւնը կը կորսնցնէր մէկ վայրկենի մէջ, այլ ծանրագոյն հետեւանքներ եւս յառաջ կուգային։ Ուստի հարկ էր տիկնոջ լռել, և թոյլ տալ որ պըսակի խորհուրդը տան մէջ իսկ տեղի ունենայ։

Որչա՛փ անտանելի է վրէժխնդիր և չար հոգւոյ մի հաստատել գիւր գինաթափ լինելն։ Վըրէժխնդրութիւնը զհոգին վեր ի վայր կը տապալէ, կը յուզէ, կը փոթորկէ, կը մղէ գործելու. և երբ այդ բուռն տրամադրութեան մէջ լինելով հոգին յանկարծ արգելք կը գտնէ սաստիկ կրիցը գործադրութեան մասին, կը խլրտի յայնժամ ինքզինքը կրծելու համար միայն, և անկարողութեան առջեւ վհատելով կը յուսահատի։

Մտածեց Ներսէսի մտքուն որ հիւանդութիւն մ'առարկելով ներկայ չ'գտնուի ո՛չ հացկերոյթի և ո՛չ ալ պսակի արարողութեան։ Բայց ապա իւր սրտնուութիւնն և նախանձը զԱրաքսիան ներկայացին աչացն իրր դշխոյ նոյն գիշերուան։ Թողո՛ւլ ուրեմն ամեն յաղթանակ իւր ոսոխին, ո՛չ, ո՛չ։

Ուզեց գոնէ իւր ներկայութեամբը թունաւորել հարսին ուրախութիւնը, զի այդ վատհոգի կինը կը կարծէր թէ երիտասարդուհին զինքը բոլոր զօրութեամբն ատելու էր։ Չէր կրնար ըմբռնել թէ աղնիւ սրտերու համար համբոյր մի կայ անյիշաչարութեան մէջ, քանի որ ամեն ոք ուրիշներն ինքզինքէն կը դատէ և չ'կրնար հասկընալ ինչ որ ինքը չ'զգար։

Ուրեմն այս գաղափարէն ոգեւորեալ, ելաւ տեղէն Տիկին Արգարեան, և զարդարուեցաւ անբացատրելի շքեղութեամբ զարդուց և ադամանդից, ջանադիր լինելով նսեմացնել զիւր ոսոխ բացարձակ առաւելութեամբ իւր պերճանաց։

Երեկոյեան դէմ հասաւ Վարսամեան ընտանիքն Արգարեանց տունը։ Հարսը շլացուցիչ գեղեցկութեամբ կը փայլէր սպիտակ հարսանեաց զգեստուց և պարզութեանը մէջ։ Զայդ հաստատելով տան տիկինը՝ շրթունքները կրծեց, ու չորս կողմը նայեցաւ հարսին ըրած տպաւորութիւնն իմանալու համար։ կատղելով հաստատեց թէ ամենքն հիացման մէջ էին։

Հանդիսականաց թիւը խիստ սահմանաւոր էր Աղաւնիի հիւանդութեան պատճառաւ, զի որդեակը հայրը կը փափաքէր որդւոյն միայն հան-

դէսը տօնել, առանց միւսին որ և է անհանգստութիւն պատճառելու։

Աղաւնի երկայն նստարանի մէջ տարածուած էր սպիտակ զգեստներով, և թուէր լինել մօտալուտ հարսնցուն մահուան իւր դալուկ և հալած այտերովն՝ որոնց վրայ տխուր զուարթութիւն մի կը տարածէին իւր գոհ բայց նուաղուն աչքերը։

Պ. Վարսամեան անդամալոյծ վիճակին պատճառաւ նոյնպէս հանգիստ բազմոցի վրայ նստած էր. խեղճ մարդն աչաց խոնաւիլը կ'զգար շարունակ՝ հաստատելով այդ շլացուցիչ բաղդն որուն հասած էր իւր դուստրը։

Տիկին Աբգարեան իւր դրացի երիտասարդին դառնալով, ըսաւ.

— Կարծես թէ հիւանդանոցի մէջ ենք, անկողինները միայն պակաս են։

— Սակայն, ըսաւ երիտասարդը, ձեր շքեղութիւնն և հարսին սքանչելի շնորհքները կը բաւեն յիշեցնելու համար մեզ թէ գեղեցիկ երեկոյթի մը հրաւիրեալ ենք։

Տան տիկինը դառնացաւ նկատելով թէ Արաքսիա մեծ մաս մ'ունէր այդ ողբալից խօսքերէն, և վրէժն առաւ անոր մայրը ծաղրելով.

— Հարսին մօրը նայեցէք, ըսաւ, կարծես թէ պիտի պայթի, այնչափ ուռեր է գոհունակութենէն. ծաղրելի՛ կին։

Երիտասարդը ժպտեցաւ առանց բան մ'ըսելու։

— Բայց, յարեց տան տիկինն, հարկաւ այդ չտես և անշուք կնոջ համար երբէք կը թուի մեր ընտանեաց հետ խնամութիւն ունենալը. մտա-

ծեցէք որ իւր դուստրը թոշակաւոր աղջիկ մ'էր տանս մէջ, վարժուհի մ'էր վերջապէս։

Երիտասարդը շուտ հասկցաւ թէ տիկինը դառնութեան ներգործութեամբ կը խօսէր, և քանի որ Ներսէս իւր բարեկամն էր, զգուշացաւ Վարսամեան ընտանեաց նկատմամբ աննըպատշաստ դատողութիւն մ'ընելէ՝ տիկնոջ հաճելի լինելու նպատակաւ. ուստի հեռացաւ անկէ ամենայն վայելչութեամբ։

Կոչունքը տեղի ունեցաւ ոչ զարմանալի կենդանութեամբ։ Աղաւնիի ցաւալի վիճակն ինչպէս և տան տիկնոջ դժգոհ կերպարանքն կարծես ամենուն վրայ խոր ներգործեցին։ Բայց ոչինչ կրնար խափանել հարսին ու փեսին հանդարտ գոհունակութիւնը։

Ցաւարտ պսակին ամենքը ցրուեցան, և Ներսէս զիւր նորապսակ հարսը տարաւ առժամանակեայ կերպիւ պատրաստուած փոքրիկ վայելուչ յարկին մէջ, մինչեւ որ պատրաստուէր իրեն յատկացեալ գեղեցիկ տունն ուր պիտի փոխադրուէր կնոջը ծնողաց հետ, ինչպէս խոստացած էր արդէն ի սկզբան։

Նորապսակ Տիկին Ներսէսի լուսաւոր երանութիւնը ստուեր մ'ունեցաւ նոյն գիշեր, նախ Աղաւնիին անյոյս հիւանդութեան պատճառաւ, յետոյ Վարդանուշի և Տիկին Հարթմանեանի բացակայութեան համար։

Վարդանոյշ բնականապէս մուտք չէր կրնար ունենալ այդ տան մէջ։ Իսկ Տիկին Հարթմանեան չէր ուզեր երբէք վերաբերութիւն ունենալ Տիկին Աբգարեանի հետ, որուն անպատիւ գործոց

ու մեքենայութեանց տեղեկացաւ երբ Արաքսիան ինքզինքը բոլորովին լքեալ համարելով Ներսէսէն, պարտաւորեցաւ զամեն ինչ պատմել անոր։ և կրկին առթով մնացածն իմացաւ փրկելու համար զՍիսակ գաւառացւոյն ձեռքէն, երբ իւր գործակցութիւնն հարկաւոր եղաւ։

Երկու շաբաթ վերջն յետ ամուսնութեան Ներսէսի, տեղի ունեցաւ Սիսակի սպակաղրութեան հանդէսը։

Արաքսիայի և Վարդանուշի երջանկութիւնը չափ չէր ճանաչեր։ Վերջապէս երկուքն եւս փոթորիկներու մէջէն անցնելէ յետոյ կը հասնէին սիրոյ նաւահանգիստը։

ԳԼՈՒԽ ԿԹ.

Ինչպէս խոստացած էր հարսն Պ. Աբգարեանի, ամեն օր կ'երթար այցելութեան Աղաւնիի՝ որուն վիճակն օր աւուր աւելի սպառնացող դիրք մի կ'առնէր։

Արաքսիա կը հսկէր անոր վրայ իբր ճշմարիտ մօր մի խանդաղատանօք, մինչ բուն մայրը կը շատանար օրուան մէջ քանի մ'այցելութիւններ ընելով։

Ամիս մ'անցած էր հարսանեաց օրէն ի վեր, երբ յանկարծ Աղաւնիի վրայ չարագուշակ վնասողական նշաններ երեւան եկան։

Օր մի մանաւանդ մօտալուտ վախճանի մի տարակոյս չէր մնար, Ներսէսի հարսը փոքրիկ տառապելոյն մահճին քով նստած էր ձեռքին մէջ

ունենալով մանկան ձեռքն, երբ զգաց թէ հիւանդը իւր ձեռքը կը սեղմէր տակաւին իրեն մնացած ուժովը։

Արաքսիա տեղէն ելնելով ծռեցաւ դէպի հիւանդն հարցնելու համար եթէ բանի մի կը կարօտէր։

— Ո՛չ, ըսաւ, բան չ'եմ ուզեր, միայն թէ երջանիկ եմ որ դու պիտի աչերս գոցես փոխանակ գերմանուհւոյն զոր՝ ցաւով կը խոստովանիմ, երբէք չկարողացայ սիրել, թէեւ ջանացի իրեն համակրելու։

Նոյն միջոցին սենեկին մէկ անկիւնը նստած ձեռագործով մի կ'զբաղէր ծեր աղջիկն, Արմինէի վրայ հսկելով միշտ զօրաւորի սովորական ճշդութեամբ։

— Սիրեցեա՛ք հարսս, մրմնջեց հիւանդը, փափաքելի էր ինձ ապատ լինել ամեն օտար ներկայութենէ, և շրջապատուիլ միայն իմ սիրեցեալներով։

— Լա՛ւ, սիրո՛ւն Աղաւնիս, ըստ կամացդ ամեն ինչ կը տնօրինեմ։

Եւ զայս ըսելով Արաքսիա խնդրեց վարժուհիէն որ ուրիշ սենեկի մէջ վարէ իւր հըսկողութեան պաշտօնն Արմինէի վրայ, առարկելով թէ հիւանդն լռութեան պէտք ունէր։

Մինչ Արմինէ սենեկէն դուրս ելնելու կը պատրաստուէր գերմանուհւոյն հետ, Աղաւնի քովը կանչեց իւր քոյրն և ամենայն դորովով կրկին և կրկին անգամ համբուրելէն վերջն՝ արձակեց զայն արտասուալից աչօք։

Դիտեց զայդ նորապսակ կինն և իւր աչքէն հոսած լեղի չիթը սրբեց։

Երբ առանձին մնաց հիւանդն իւր հարսին հետ, ըսաւ.

— Խօսէ՛, որպէս զի ձայնդ լսեմ։

— Ի՞նչ կ՚ուզես որ պատմեմ քեզ, Աղաւնի՛։

— Փոյթ չ՚է լնձ այդ, բաւ է որ ձայնդ լսեմ։

Հարբուրեց զնա մանկամարդ կինն ի պատասխանի։

— Ահա վերջապէս մեռնելու ժամանակս ունեցայ մեծագոյն մխիթարութիւնը այն է զքեզ և եղբայրս տեսնել։

— Ինչո՞ւ, հրեշտակս, այդպիսի տխուր դաղափարներ ունիս։

— Ի՞նչ օգուտ ճշմարտութեան առջեւ կոյր լինել։

Զե՞ս մտածեր որ հոգիս կը յօշոտես։

— Լաւագոյն է ուրեմն որ նախապատրաստուիս մեր բաժանման։

— Ո՛չ երբէք, պիտի ապրիս որպէս զի վայելենք զքեզ։

— Կը փափաքէի ապրիլ, այո՛, բայց ի՛նչ օգուտ։ Եթէ ապրէի, ոչ եւս քեզմէ ու եղբօրմէս բաժնուելու կը դատապարտուէի, և ոչ եւս զուրկ կը մնայի ի սիրոյ, զի հաւատա՛ ինձ որ հոգիս չի կրնար սնանիլ առանց դորովոյ։

— Վասն զի դու՝ իբր ամեն ազնիւ հոգի, բարձր սնունդի կը կարօտէիր։

— Ցաւալի է ինձ թողուլ իմ պատուական հայրս զի գիտեմ որ սաստիկ պիտի զգածուի։

Սիրած է դիս միշտ և ես երախտապարտ եմ ա-
նոր, բայց հոր մի դգացումը չի բաւէր լեցնե-
լու սիրատենչ սրտի մի պէտքը այն պատճառաւ
որ յարաբերութիւններն քիչ են ընդ մէջ հօր և
իւր զաւկին, առաջնոյն հանապազօրեայ բացա-
կայութեանց և գործոց պատճառաւ։

Կանկ առաւ փափուկ էակն խօսելէն յոգնե-
լով, և ապա շարունակեց նորէն՝ քիչ մ'ոյժ ըս-
տանալով։

— Մայրս ջանացած է մեր ամեն պէտքերն
հոգալ. շնորհակալ եմ իրմէ։ Իսկ քուրիկս իմ
սակաւամեայ սիրուն ընկերուհիս եղած է։ Գի-
տեմ որ ես իրեն դատարկութիւն մի պիտի թո-
ղում, զոր կը խնդրեմ քեզմէ լեցնել քու սիրովդ
ու խնամքովդ։

— Վստա՛հ լեր, պաշտելի Աղաւնիս, ըսաւ
Արաքսիա հեծկլտանօք։

— Արդ, ըսաւ հիւանդն, թոյլ տուր ինձ
հանգուրել զքեզ, կրկին և կրկին անգամ յանձ-
նելով քեզ՝ եղբօրս երջանկութիւնն և հօրս աշ-
խորութիւնը։

Բացաւ թեւերն և Արաքսիա գլուխը անոր
կուրծքին վրայ դնելով սկսաւ լալ յորդառատ։

— Կը փափաքէի տեսնել իմ հայրս. բայց
ծանր պիտի թուէր անոր այս իմ վերջին վայր-
կենիս տեսարանը։ Մատո՛ նմա բոլոր իմ սէրս,
ինչպէս և քուրիկիս բոլոր սիրտս։

— Ո՞ւր է եղբայրս, հարցուց, նա բաւական
ուժով է մահուանս վկայ լինելու համար։

Նոյն միջոցին Ներսէս սենեկէն ներս կը մըտ-
նէր։

— Մօտեցի՛ր ինձ, եղբայրս սիրեցեալ։ Քեզ կը յանձնեմ իմ հարսս երջանիկ ընելու պարտքը։ սիրէ զայն ինձ համար եւս, և յիշեցէք զիս երբեմն զի զձեզ շատ սիրած եմ։

Ներսէս գրկեց իւր փոքրիկ քոյրն և համբուրեց զայն մեծ գորովանօք առանց կարենալ պատասխանելու։

— Եղբա՛յրս, խոստացիր խնդրածս։

— Կը խոստանամ, ըսաւ երիտասարդը, հազիւ իմանալի եղանակաւ՝ այնչափ մեծ էր իւր յուզումը։

Նոյն միջոցին ներս մտաւ նաեւ Տիկին Սբ. գարեան որ ի նշան ազգ իւր սենեկին մէջ փակուած էր։

Օրհասական աղջիկն տեսնելով զմայրն, ըսաւ։

— Մա՛յր, տուր ինձ համբուրել քու ձեռքդդ, զի վերջին մնաս բարեաւն է այս։

Տիկինը մօտեցաւ իւր որդւոյն՝ համբուրեց ինքն եւս զնա, և պատճառելով իւր ջղաձգութիւնը՝ քաշուեցաւ դարձեալ իւր սենեկին մէջ իբր թէ անկարող ականատես լինելու որդւոյն մահուան, ուստի աղջկանը վերջին վայրկեաններուն վրայ հսկելու պաշտօնն անտարբերներու թողուց ըստ իւր բացատրութեան, որք կ'ըսէր, ոչինչ զգալով՝ կարող են այդպիսի տխուր պաշտօններ լաւ կատարել։

Յետին ճգամբ մի հիւանդն խնացուց Արաբ. սիայի որ իրեն մօտենայ։ Մանկամարդ կինը տրղուն գլուխը վերցնելով թեւին վրայ կոթընցուց։ օրհասական էակն նայեցաւ իւր եղբօր նուաղուն աչօք, յետին նայուածք մ'ալ ուղ-

ղեց առ Արաքսիա և ապա շունչն աւանդեց։

Արաքսիա սրտին վրայ կը սեղմէր տակաւին էա՛ն այն որ ոչ եւս էր, այնքան զայն կորուսած լինելու գաղափարն անհնարին կը թուէր իրեն։

Բայց Ներսէս հեռացնելով զայն այդ սրբազան նշխարէն ցոյց տուաւ ողորմելի հայրն որ կը մօտենար և որ ամեն մխիթարութեան կը կարօտէր։

Երեքը միատեղ խառնեցին իրենց սուգը, երեքը միատեղ լացին այն անշունչ մարմնոյն վրայ, երբ Արմինէ սենեկէն ներս վազելով տղու մի անզուսպ ցաւով եկաւ ողբալու իւր քրոջն, իւր ընտերուհւոյն վրայ։

Սայրը միայն հեռու էր, զի կ'առարկէր իւր զգացման անչափութիւնն, և իւր անկարողութիւնը հանդիսական լինելու իւր զաւկին անշունչ մարմնոյն։

ԳԼՈՒԽ Հ.

Արաքսիա Բերայի ընտրելագոյն փողոցի գեղեցիկ տուներէն միոյն մէջ հաստատուած էր հետն ունենալով հայրն ու մայրը։ Կը վայելէր ոչ միայն անբիծ և մշտատեւ սիրոյ ամուսնական երանութիւնն, այլ այն անբացատրելի գոհունակութիւնն ունէր նկատելով թէ իւր ծնողաց կեանքը թշուառութենէ ի բարեբաստութիւն փոխարկած էր։

Վարդանոյշ եւս երջանիկ էր Սիսակին հետ. մեր երիտասարդն թէեւ ամեն ջանք կ'ընէր իբրեւ զՆերսէս հաւատարիմ ամուսին լինելու, այլ մերթ ընդ մերթ չեղելով անձին գծած ա-

ռաքինութեան խիստ ընթացքէն՝ խիղճ ընելու առիթներ կ'ունենար։

Ստոյգ է որ անընդհատ յարաբերութիւններ ունենալէ կ'զգուշանար, բայց ամանց շնորհուած թոյլտուութիւններէն զեղծանելով՝ իւր քմահաճ բնութեան նոր սնունդներ կը հայթհայթէր։

Սակայն իւր ի պատիւ խոստովանելու ենք որ լաւ աշխատաւոր մ'եղաւ որով կարողացաւ մէկ տարուան միջոցի մէջ 300 ոսկւոյ պարտքը հատուցանել Ներսէսին։

Տիկին Աբգարեան իւր սեւ զգեստուց շնորհիւ ջանաց վշտահար ձեւ մ'առնուլ վերստին զՄիսակ երբ առիթն գնա առաքուբերէր։ բայց Վարդանուշի ամուսինը քաջութիւն ունեցաւ հեռու կենալու այդ կնոջմէն։

Տարի մի բոլորած էր ամուսնութեան օրէն ի վեր Ներսէսի, և եթէ մեր երիտասարդ փեսին ամեն ինչ կը յաջողէր ոչ միայն բարոյական այլ և նիւթական կենաց մասին, նոյնպէս չէր Պ. Աբգարեանի նկատմամբ։

Տիկին Աբգարեանի շռայլութիւնքը բաւական մեծ հարուած տուած էին ամուսնոյն հարստութեան։ Եթէ սա համաձակէր մերթ ընդ մերթ դիտողութիւն ընել կնոջն՝ չափաւորութեամբ մխած դրամոց մասին, կինն անմիջապէս կատաղի ձեւ մ'առնելով կը պատասխանէր որ եթէ հասակաւոր մարդու մի հետ ամուսնանալու յանձնառու եղած էր՝ գոնէ ճոխութեամբ ապրելու փոխարինութիւնն ունենալու էր։

Մարդը կը լռէր հառաչելով և կը ջանար նոր միջոցներ գտնել կնոջը պահանջմանց հասնելու

համար։ Հետեւապէս իւր սովորական զգուշաւորութիւնը մէկ կողմ թողլով յանդուգն ձեռնարկներ ըրաւ, յառաջացաւ եւս քան զեւս, այնպէս որ Փարիզու սեղանաւորաց աղետալի կորստեան առթիւ ինքն եւս եղաւ այդ անթիւ զոհերուն մին, և մէկ աւուր մէջ կորոյս հարստութիւնը, հարկադրուելով բոլոր իւր գոյքերն վաճառել կրած վնասները գոցելու համար։

Ներսէս փութաց յօգնութիւն իւր հօր յայտնելով նմա թէ տրամադրութեանը ներքեւ կը դնէր բոլոր իւր ունեցածն։

Արաքսիա ոչ միայն սրտովն կը ցաւէր աներջոջը կրած անդարմանելի կորստեան վրայ, այլ կ'ողբար անկեղծապէս իւր ոսոխին վրայ՝ այսինքն Տիկին Արգարեանի, մտածելով թէ խիստ անտանելի վիճակ մ'էր մեծամիտ կնոջ մի համար ընկերական սանդուղքն վար դլորիլը։

Տիկին Արգարեան, որ վարժ էր խնկարկու և շողոքորթ անձանց բանակ մի տեսնելու շուրջն ու ամեն պատիւ և մեծարանք ընդունելու՝ ցորչափ հարուստ էր և ճոխ կեանք կը վարէր, տեսաւ յանկարծ այդ բանակին անյայտ լինելն իբր մոգական իմն զօրութեամբ։

Կանայք առ երեսս չէին դադրեր ներբողելէ նորա վարքը, մինչ ներքնապէս շատերը կը հառաչէին մինչեւ նոյն ժամանակ Տիկին Արգարեանի վարած կենաց և անոր ստացած պատիւներուն վրայ։

Արք բարձրագոչ հռչակեցին թէ նա շռայլութեամբը պատճառ եղած էր ամուսնոյն դըժբախտութեան, և ամեն այր օգուտ քաղեց այդ

առթէն իւր կնոջ խնայողութեան և տնտեսագիտութեան դաս մի տալու համար։

Իսկ երիտասարդք որք պաշտողի դեր խաղացած էին՝ արհամարհանօք կը խօսէին անոր թեթեւ բարուց վրայօք և ոմանք կը պարծենային նաեւ անտեղի շնորհքներ վայելած լինելնուն վրայ։ Քանի մի խղճմտաւոր և պատուաւոր անձինք միայն ոչ իրօք յառաջացած էին Տիկնոջ մտերմութեան մէջ լուռ կեցան. և եթէ զինքը չ'պաշտպանեցին՝ զէթ լռելու քաջութիւնն ունեցան մեղադրանաց այդ ընդհանուր քառսին մէջ։

Տիկին Աբգարեանի գոռոզութիւնը թէ սաստկապէս հարուածեցաւ, այսու հանդերձ ոչինչ յայտնեց, և այդ պարսաւանաց աշխարհին մէջ մնաց միշտ սէգ և գոռոզ։

Պ. Աբգարեան իւր ունեցած ձախորդութենէն քանի մ'ամիս վերջը յանկարծամահ կը լինէր պարտքեր թողուլ։

Երբէք ներկայանալով իւր հարուածն իմացաւ անոր որ թէ՝ իրեն և թէ՝ կնոջը պարտքն էր ամենայն կերպիւ նպաստել հօրն այրուոյն և անոր զաւկին. ուստի խնդրեց այրի տիկնոջմէն որ յայտնէ իրեն թէ ինչ եղանակաւ պէտք էին վարուիլ իրենց նկատմամբ։

Պ. Աբգարեանի այրին պատասխանեց թէ քանի որ իրենք յօժարամիտ էին օգնելու իւր դստեր՝ իրենց կը թողուր բոլորովին անոր հոգատարութիւնը, իւր ձախորդութիւնն յառաջ բերելով։

— Այսինքն, Տիկին, ըսաւ Ներսէս, կուտաք ինձ հօր մի կատարեալ իրաւունքը քրոջս վրայ, մինչեւ վերջը։

— Կատարելապէս, քանի որ կը կամիք, և յոգուտ զաւկիս, ըսաւ կեղծաւոր եղանակաւ մի։

— Զայդ կ'ընդունիմ, զի վստահ եմ որ կինս մօր մի խնամք պիտի մատակարարէ նմա, ըսաւ Ելիսէս։

— Ես եւս գիտնալով զայդ աղջիկս ձեզ կը թողում, ըսաւ կեղծաւոր հրէշ մայրը։

— Բայց ձեզի համար ի՞նչ կրնանք ընել, հարցուց երիտասարդն, եղանակաւ մի որ կը յայտնէր թէ կ'ուզէր անյիշաչար լինել հօրն այրոյն համար։

— Ես, պատասխանեց, դուռոզ կինն, ոչինչ կրնամ ընդունիլ ձեզմէ երբ մտածեմ թէ ձեր կինն իմ քովս վարժուհի էր։

— Եւ սակայն խորհեցէք միանգամայն թէ այն անձն որ չ'ամաչեց աշխատելու՝ գնահատուելու ինձմէ. հասաւ մինչեւ ձեր երբեմն վայելած ընկերային բարձրութեան աստիճանին։ Կը տեսնէք որ թեմն թէ աշխատիլը կ'ազնուացնէ։ Տիկին, լաւ համոզուեցէք այդ բանին վրայ։

— Եթէ աշխատութիւնը կ'ազնուացնէ ըստ ձեզ, ընդհակառակ թագաւորել կուտայ, և ես կ'ուզեմ թագաւորել։

— Սա տարբերութեամբ, Տիկի՛ն, որ աշխատութիւնը կը բարձրացնէ մինչեւ ցմերջ կեանց, մինչդեռ ձերինին նման գահակալութիւնը նուաստ և ամօթալից անկմամբ կը վերջանայ։

առթէն իւր կնոջ խնայողութեան և տնտեսագիտութեան դաս մի տալու համար։

Իսկ երիտասարդք որք պաշտողի դեր խաղացած էին՝ արհամարհանօք կը խօսէին անոր թեթեւ բարուց վրայօք և ամանք կը պարծենային նաեւ անտեղի շնորհքներ վայելած լինելնուն վրայ։ Քանի մի խղճմտաւոր և պատուաւոր անձինք միայն ոչք իրօք յառաջացած էին Տիկնոջ մտերմութեան մէջ լուռ կեցան. և եթէ զինքը չ'պաշտպանեցին՝ զէթ լռելու քաջութիւնն ունեցան մեղադրանաց այդ ընդհանուր քաոսին մէջ։

Տիկին Արգարեանի գոռոզութիւնը թէ սաստկապէս հարուածեցաւ, այսու հանդերձ ոչինչ յայտնեց, և այդ պարսաւանաց աշխարհին մէջ մնաց միշտ սէգ և գոռոզ։

Պ. Արգարեան իւր ունեցած ձախորդութենէն քանի մ'ամիս վերջը յանկարծամահ կը լինէր պարտքեր թողուլ։

Երբէք ներկայանալով իւր հարուին խնացուց անոր որ թէ՝ իրեն և թէ՝ կնոջը պարտքն էր ամենայն կերպիւ նպաստել հօրն այրուոյն և անոր զաւկին. ուստի խնդրեց այրի տիկնոջմէն որ յայտնէ իրեն թէ ի՞նչ եղանակաւ պէտք էին վարուիլ իրենց նկատմամբ։

Պ. Արգարեանի այրին պատասխանեց թէ քանի որ իրենք յօժարամիտ էին օգնելու իւր դստեր՝ իրենց կը թողուր բոլորովին անոր հոգատարութիւնը, իւր ձախորդութիւնն յառաջ բերելով։

— Այսինքն, Տիկին, ըսաւ Ներսէս, կուտաք ինձ հօր մի կատարեալ իրաւունքը քրոջս վրայ, մինչեւ վերջը։

— Կատարելապէս, քանի որ կը կամիք, և յօդուտ զաւկիս, ըսաւ կեղծաւոր եղանակաւ մի։

— Զայդ կ'ընդունիմ, զի վստահ եմ որ կինս մօր մի խնամք պիտի մատակարարէ նմա, ըսաւ Ենրոէս։

— Ես եւս գիտնալով զայդ աղջիկս ձեզ կը թողում, ըսաւ կեղծաւոր հրէշ մայրը։

— Բայց ձեզի համար ի՞նչ կրնանք ընել, հարցուց երիտասարդն, եղանակաւ մի որ կը յայտներ թէ կ'ուզէր անյիշաչար լինել հօրն այրոյն համար։

— Ես, պատասխանեց, գոռոզ կինն, ոչինչ կրնամ ընդունիլ ձեզմէ երբ մտածեմ թէ ձեր կինն իմ քովս վարժուհի էր։

— Եւ սակայն խորհեցէք միանգամայն թէ այն անձն որ չ'ամաչեց աշխատելու՝ գնահատուելու իրմէ։ Հասաւ մինչեւ ձեր երբեմն վայելած ընկերային բարձրութեան աստիճանին։ Կը տեսնէք որ թեմն թէ աշխատիլը կ'աղնուացնէ։ Տիկին, լաւ համոզուեցէք այդ բանին վրայ։

— Եթէ աշխատութիւնը կ'աղնուացնէ ըստ ձեզ, ընդունիմ թագաւորել կուտայ, և ես կ'ուզեմ թագաւորել։

— Սա տարբերութեամբ, Տիկի՛ն, որ աշխատութիւնը կը բարձրացնէ մինչեւ ցվերջ կեանց, մինչդեռ ձերինին նման գահակալութիւնը նաւասատ և ամօթալից անկմամբ կը վերջանայ։

ՎԵՐՋ

18578
18579
18580

<< Ազգային գրադարան
NL0375254

<< Ազգային գրադարան
NL0375253

<< Ազգային գրադարան
NL0375252